Universitäts- und Landesbibliothek Bonn

Astowacabanakan gitowt'iwnnerę

Têr-Mik'elean, Aršak

Vaġaršapat, 1893

urn:nbn:de:hbz:5:1-12542

Visual Library

Goussen

3584

Ա. ՏԷՐՄԻՔԵԼԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ուսումն վարդապետութեան
խրատէ յուղղութիւն...»

Ս. Գրիգոր Լուսաւորիչ.
(Յառաջ. 73).

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ
1893

Goussen 3584

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ № 1.

Gaussen
3584
A. Ter-Mikhelean, Theolog. Studien?
Astouacabanakan gitouthiun

Ա. ՏԷՐ-ՄԻՔԷԼԵԱՆ.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ուսումն վարդապետութեան
խրատէ յուղղութիւն . . . . »։
Ս. Գրիգոր Լուսաւորիչ։
(Յաճախ. 73).

(Արտատպած «Արարատ» ամսագրից):

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ.
1893

3584

ՀԻՔԱՓԵՆԵՔ

ԱՄԵՆ· Տ· ՏԵՂԱԿԱԼԻ

ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՑՈՑ·

ՅԱՌԱՋԱԲԱՆ.

Քաղաքակրթուած աշխարհի այժմեան գիտութիւնները պատահաբար չեն յառաջ եկել, դոքա բոլորն եւս մարդկութեան յառաջադիմական ձգտումների արդիւնքներն են։ Այդ յառաջադիմական ձգտումները յառաջանում են մարդու մէջ՝ արտաքին աշխարհն և նորանից ստացած տպաւորութիւնները, մարդկութեան անցեալն ու ներկան, իւր մարմինն ու հոգին ճանաչելու պահանջից, վասն զի այդ ամենը գիտենալով միայն կարող է մարդը հասկանալ իւր կեանքի խնդիրն, գուշակել իւր ապագան և յուսալ իւր ձգտումների լաւագոյն բաւարարութիւնն ստանալու։ Ճանաչողութեան բոլոր յառաջադիմութիւնք հաստատուած լինելով երկու աղբիւրների վրայ, այն է՝ բանականութեան կամ հոգու և փորձի, մարդ չէ կարող դոցանից օգտուել, եթէ նա դոցա էութիւնը չճանաչէ։ Բայց որովհետև փորձն եւս չկարէ օգուտ տալ, եթէ մարդի հոգին իւր ստեղծագործող զօրութիւնը չզարգացնէ և նորա հոսանքները չբանայ, ուստի ամենայն յառաջադիմութեան նախընթաց պիտի լինի դեռ մեր հոգու կամ բանականութեան զարգացումն և ծաւալումը։ Վասնորոյ ճանաչել մարդի հոգին և նորա բոլոր կարողութիւնները հիմնական տեղ է բռնում բոլորի համար, որոնք կամենում են գիտնական ճանապարհով ընթանալ, այլև նոցա համար, որոնք փափագում են քաղաքակրթութեան պտուղները վայելել և ոչ թէ խոպան հող լինել լուսաւոր սերմերի առաջ,

Արդ՝ թէ կրթելու նպատակով զբաղեցնենք մարդկային միտքը միմիայն արտաքին աշխարհով, նոյնքան միակողմանի կլինի զարգացումն, որչափ եթէ միայն մեր ներքին հոգեկան աշխարհի մէջ սուզենք նորա մտածողութիւնները։ «Հայեցողութիւններն

առանց գաղափարների կոյր են, գաղափարներն առանց հայեցողութիւնների — դատարկ, ասում է Կանտ, վասնորոյ և ճանաչողութիւն կլինի միայն դոցա միացմամբ։ Ճիշտ այդպէս և մարդի արտաքին աշխարհը ներքին աշխարհի հետ պէտք է միութիւն կազմէ, կամ միայար ընթանայ, որպէս զի մարդ չերկպառակուի։ Կեդրոնացրէք յառաջադիմութիւնը միայն արտաքին աշխարհի գիտութեան մէջ և դուք կքանդէք կաւերէք մարդկանց հոգևոր խաղաղութիւնը, երջանկութիւնը, բարոյական ամբողջ կազմակերպութիւնն և հիմնաքարը. ուղղեցէք նորա բոլոր մտածողութիւնները միայն դէպի նորա հոգևոր կեանքը, կտրեցէք նորան արտաքին աշխարհի ճանաչողութիւնից, և դուք կկսեղդէք նորան նախապաշարմունքների մէջ, դարձնելով մէկ խաղալիք բնութեան իրարանցման մէջ։ Փիլիսոփայութեան պատմութիւնը պարզ ապացոյց է, թէ ինչպիսի տատանմունքների է ենթարկուել մարդկութիւնը, հին Յունաց Թալէս փիլիսոփայից սկսեալ (Քրիստոսից 640 տարի առաջ) մինչև այժմ։ Ամբողջ այդ ընթացքում ծայրայեղութիւնների ենք հանդիպում, որոնց մէջ հաստատուած են սկզբունքներ՝ կամ հոգու աշխարհից և կամ մարմնի շրջակայութիւնից վերցրած և կամ թէ առ առաւելն ձգտումներ են երևան գալիս դոցա հաշտեցնելու. թող հէնց օրինակ լինին նիւթապաշտութիւնն ու հոգեպաշտութիւնը։ (матеріализмъ, спиритуализмъ)։ Այդ բոլոր ծայրայեղութիւնները տանում են մեզ առ մի եզրակացութիւն, որ միշտ ճշմարիտ կմնայ, այն է՝ ջանալ երկուութիւն չյառաջացնել մարդի ներքին աշխարհում, չաւերել նորա երջանկութիւնն, որ կարէ լինել՝ միայն նորա մէջ միութիւն հաստատելով, և ձգտել՝ տալ մարդկութեան այնպիսի կրթութիւն, որ հաստատուած լինի մարդկային յառաջադիմութեան կամ քաղաքակրթութեան ամբողջութեան վրայ և խոյս տալ միակողմանիութիւնից։ Այդպէս միայն կարող է ուսումը կրթութիւն լինել և նորա բարձր նպատակին համապատասխանել. շեշտում եմ կրթութիւնը, զի մանկավարժութեան հայրն Հերբարտ (+1841) չէ ուզում ճանաչել ուսումն՝ որ չէ կրթում։

Մարդկային յառաջադիմութեան մի արդիւնք են և այժմեան աստուածաբանական գիտութիւններն, որոնց սկզբունքներն ու արմատները նոյն իսկ մարդի հոգու մէջ են, այնտեղ են ծնուել, այնտեղից ծաւալուել և զարգացել, վասնորոյ և նորա արդիւնքը՝ նորանով պէտք է ըմբռնել։ Եւ եթէ լաւ նայենք, կտեսնենք՝ որ ինչպէս գիտնական ճշմարտութիւնների հասնել կարելի է միայն բանական ճանաչողութեամբ, այսինքն գտնելով համաձայնութիւն մեր հոգու օրէնքների և գիտութեան հետազօտութեան հետ, ապա թէ ոչ նոյն իսկ արտաքին աշխարհի գոյութիւնը կժխտուի, նոյնպէս և այստեղ բանականութեան օրէնքներն են կազմում հիմնաքար։ Այս այնպիսի սկզբունք է, որի դէմ չի կարող դաւաճանել ոչ մի գիտութիւն՝ առանց փլուելու։ Դորա վրայ է հաստատուած իւրաքանչիւր գիտութեան հիմունքը։ Վասնորոյ և եթէ մարդկային բանականութեան յառաջադիմութեան յարակից չէ ընթանում մի գիտութիւն, նա կորցնում է իւր նշանակութիւնը, վասն զի այն ժամանակ մարդ չէ ունենում այդ գիտութեան արտայայտութիւնների բովանդակութեան հասկացողութիւնը, եթէ բարձր է լինում նորանից, արհամարհում է անհամբերութեամբ և նեղսրտութեամբ, եթէ ցածր —, նայում է դորա բարձրութեան գագնուողի վրայ ատելութեամբ և ինքնասիրութեամբ։ Աստուածաբանական գիտութեան զարգացման այդ դրութիւններից են յառաջանում այն մոլորութիւններն, որոնց աղբիւրն էս ընդհանուր առմամբ կարէինք ոգիութիւնը կոչել՝ — լինին այդ մոլորութիւնները նիւթապաշտութիւն, հոգեպաշտութիւն, անհաւատութիւն, սնոտիապաշտութիւն, սահմանականութիւն (детерминизмъ) թէ անսահմանականութիւն (индетерминизмъ) ճգնականութիւն (стоицизмъ) թէ անբարոյականութիւն, և թէ առհասարակ մարդի աստուածային էութեան դրժող որ և իցէ տղմասիրութիւն։ Վասնորոյ քաղաքակրթութեան պահանջ անող ժողովրդի բարոյական անպայման պարտականութիւնն է իւր արժանաւոր տեղում պահել մարդկային յառաջադիմութեան արդիւնք՝ իւրաքանչիւր գիտութեան զարգացումն ու հեղինակութիւնն, եթէ չէ կամենում շեղուիլ՝

իւր գոյութիւնը պայմանաւորող ճանապարհից, թէ չէ կամենում փորել իւր հաստատութեան հիմունքները, թերևս լոկ մորակի տակ կառավարուելու ճանապարհի վրայ ոտք դնելով։

Հայ ժողովուրդի մէջ անյայտ չեն այս գիտողութիւններին մօտիկ գաղափարներ և հայեցողութիւններ։ Կ. Պոլսից սկսեալ մինչև Կովկասի խորին անկիւնները լսում են կարևորութեան ձայներ՝ չթողնելու ժողովուրդը քաղաքակրթութեան շաւղից շեղուելու. եկեղեցին՝ կրթութեան և մարդկային սրտի խաղաղութեանց այդ հզօր հաստիչը պէտք է կենդանանայ, չպէտք է թոյլ տայ անհատին՝ կախուելու բնութեան ճղուղից և պտտուելու նորա անողոք ճախարակի մէջ. նա պէտք է ցոյց տայ անհատին որ նա ազատ էակ է, պատկեր Աստուծոյ, նա պէտքէ ներշնչէ Հայի համոզմունքի մէջ Հայաստանեայց եկեղեցու անսասան սկզբունքն, որ Հայոց վարդապետութեան կոթողն է. «Որդիք Աստուծոյ լիցուք, և Աստուածք սիրով»[1] նա պէտք է լինի կըրթարան՝ որ «ծնանի և աստուածս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս Աստուծոյ Քրիստոսի»[2]։

Անշուշտ ամենքը կկոստոփանեն այս։ Բայց ինչպէս կարէ նա իրագործել այդ, եթէ իւր գիտութեան, որ է նորա միակ միջոցը, կատարեալ ծաւալ և զարգացումն չտայ. թող տայ, կասեն ամենքը։ Սակայն ի՞նչ է այդ գիտութիւնը, զորան պէտք է համառօտակի պատասխանէ մեր այս գրութիւնն, որ պահանջւում է գրեթէ ամենուրեք։ Այդ հարցը տրուեց ինձ նախապէս ի Կ. Պոլիս քանի մի շրջաններում, մանաւանդ խմբագրութիւնների մէջ, որոնց՝ այլ և շատ ուրիշների՝ պատասխանն է այս

Ա. ՏԷՐ ՄԻՔԵԼԵԱՆ.

19 Դեկտեմ. 1892.
Վաղարշապատ.

---

1 Ցաճախապատում. Վենետիկ, 1838. էջ 16. Սարկաւագ Վարդապետ. Աղօթք. Սոփերք Հայկ. IV. 31. Ս. Ներսէս Շնորհալի. Ընդհանրական. Ս. Էջմիածին 1868. էջ 74.

2 Ս. Գրիգոր Նարեկացի. մատենագրութիւն. գլ. ԺԵ. էջ. 201.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ։

1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵԱՑՔ.

Նախ քան մի գիտութիւն սովորելը, հարկաւոր է ծանօթ լինել գոնէ նորա բաղկացուցիչ մասերին, որպէս զի գիտենանք թէ որտեղից պէտք է սկսել, ի՞նչ ունինք ուսանելու, որոնք են շահագրգռական և թէ որն է վերջը։ Ամեն գիտութիւն ունի այդպիսի մի ուղեցոյց, որից կարէ իւրաքանչիւր ուսանող անհրաժեշտ ծանօթութիւն ստանալ, նախ քան գործի ձեռնարկելը։ Այդ ուղեցոյցը կոչւում է եւրոպական լեզուով «Էնցիկլոպէդիա», որ թարգմանաբար կհնչի Հայոց լեզուում «Համաբանութիւն»։ Այսպիսով կարէ լինել բոլոր գիտութիւնների համաբանութիւն, որպէս և իւրաքանչիւր գիտութեան, ըստ որում աստուածաբանութեան համաբանութիւնն էլ մի մաս է ընդհանուր համաբանութեան[1]։ Նա տալիս է այդ գիտութեան առարկաների հիմունքների և բանակարգի ծանօթութիւնն, և ձգտում է այդ գիտութեան նպատակը պարզել, ինչպէս որ գոյութիւն ունի այդ՝ իւր այժմեան զարգացման մէջ։ Եւ քանի որ իւրաքանչիւր զարգացած մարդից պահանջւում է ծանօթ լինել մարդկային յառաջադիմութեան մտաւոր արդիւնքներին կամ գէնքերին, որոնց-

---

[1] Խիստ տարածուած են համաբանական բառարաններ, որպէս Allgemeine Encyklopädie der Wissenschaften und Künste von Ersch und Gruber. այլ և Մայերի, Բրօկհաուզի Հերցոգի և այլոց հռչակաւոր աշխատութիւնները։

ցով միայն իւրաքանչիւր ոք կարէ կռուել անխելք մոլորութիւնների դէմ, այլ և հասարակական խօսակցութիւնների ժամանակ վայրի վերոյ դատողութիւններից հեռու լինել լրջութեամբ, ուստի և այս համաբանութիւնը պիտի տայ այն տեղեկութիւններն, որոնք բացարձակապէս պակասում են մեր ժողովրդի մէջ։ Այդ պակասութեան մնասը նկատելի կլինի մանաւանդ, երբ յիշենք որ մենք ունինք ուսանողական կարգ և ս, որ անպատճառ պէտք է ունենայ ծանօթութիւն իւրաքանչիւր գիտութեան ընդհանուր բանակարգի և կազմի, որպէս զի նորա առաջ պատկերանայ գիտութեան աշխարհն և դաչուտ մարդկանց շաղակրատանքի հողմակոծութեան տակ չկորցնէ իւր գլուխն, և փոխանակ իւր հոգևոր տրամադրութեան ձայնին լսելու, դառնայ ուրիշի մտաւոր այլանդակութեան շինուածքը։ Այս ծանօթութեան անհրաժեշտութիւնն էր պատճառ, որ Շլայէրմախերի (1768+1834) մի փոքրիկ գրուածքն [1] իբրև ուղեցոյց աստուածաբանական ուսման, մեծ տարածութիւն գտաւ և անչափ օգտակար եղաւ նոյն իսկ գիտնականներին. և այսօր գերմանական բոլոր համալսարաններում քարոզւում է լսել աստուածաբանական համաբանութիւնը թէ ուսման սկզբում և թէ վերջին վերջում։

Սխոլաստիկութեան ծովը թափելով իւր հոսանքները նաև ի Հայաստան, անպատճառ պէտք է մեռելութեան հոտով շշմեցնէր Հայոց, որից յետոյ անշուշտ կսպիտաքուէր մարդ իւր անհատական ամրութիւնից և հասարակութիւնն իւր յատակի հաստատութիւնից։ Աստուածաբանութիւնը նոյնացաւ ապա սխոլաստիկութեան հետ և հետևանքը հասկանալի կլինի։ Կարճատես մարդկանց մէջ յառաջացած տրամադրութիւնն առթեց մի ուղղութեան, այն է՝ դէպի գործնականութիւն։ Բայց ո՞ւր է այդ գործնականութիւնը. գոյութիւն ունի այդ, թէ լոկ բանդագուշանք

---

1 Kurze Dapstellung des theol. Studiums zum Behufe einleitender Vorlesunsgen. Berlin 1830. *Իսկ նորագոյն և ամենից տարածուածն է արդէն* **12** *անգամ հրատարակուած՝* K. R. Hagenbach's Encyklopädie und Methodologie der theologischen Wissenschaften, Leipzig. 1889.

է։ Հէնց այդ գործնականութիւն պոռացողները չե՞ն կատարեալ անգործնականները, հասարակութեան արիւնը ծծող և մահ պատրաստող եսապաշտները։ Ահա քեզ վիճակ, որ պէտք է ծնէ ծայրայեղութիւններ — կեղծ բարեպաշտութեան կամ անմիտ ճգնականութեան, խելակորոյս հաճոյասիրութեան կամ բաջաղական աշխարհացիութեան, որոնք փոեցրին հին Յունաստանը։

Քրիստոնէութիւնն առում է այդ բոլոր ծայրահեղութիւնները. նա պահանջում է գործնական մարդիկ, որոնք պիտի լինին գործով իւրեանց բարձրութեան վրայ և բարձրացնեն ազգութիւնը. չնայեն կեանքի վրայ՝ իբրև ապուշ մանուկներ, այլ իբրև լուրջ բանականներ, տեսնող իւրեանց կեանքի մէջ իրագործելու խընդիր։ Ո՞ր գիտութիւն չէ ունեցել և իւր դպրոցական իմաստակութիւնը. կամ ո՞ր գիտութիւնն է այժմ էլ ասա կամ անգ զերծ դորանից. և մի՞թէ ընկաւ նորա արժէքը։ Ո՛չ. նորա արժէքը կընկնի ամբոխի աչքում, երբ իւր տեղը կանգնած չլինի, երբ իւրաքանչիւր անհատ չճանաչէ իւր կոչումն, այլ հացթուխի տեղ կոշկակարը նստի, ուսուցչի տեղ վաճառականը, հոգևորականի տեղ ռամիկը։ Ցա՛յտ է որ այդպիսի ժամանակ գիտութեան հեռևողի անհրաժեշտութիւնը չի երևալ կոշկակարների, ռամիկների և այլոց ստուար խմբի մէջ, երբ մարդիկ միայն գործի ինչութեան են ուշ դարձնում և ոչ որպիսութեան։ Սակայն կոշկակարը կարէ միշտ կոշկակար մնալ, հացթուխը՝ հացթուխ, անհրաժեշտ է ուսուցող՝ որ կարենայ գտնել անհատի երակն և իւր խօսքի գիպող զարկով բաղխէ, կրթէ ժողովուրդը, բարձրացնէ բնական իրարանցումից դէպի իւր գերական (իդէալ)։ Ահա այս հանրական գործունէութեան պաշտօնեան պարտ է դուրս գալ Հայաստանեայց եկեղեցու գիտութեան գաւթից և եթ։

Ո՞ւմ չէ յայտնի՝ որ հին ժամանակ Հայաստանի ամենանշանաւոր անձինք եկեղեցու լուսով էին կրթուել. արքայական և ազնուական գործիչները միայն եկեղեցական ուսումն ստանալով էին ազգի սիւներ դառնում և ժողովրդին բաւարարութիւն տալիս։ Եկեղեցական լինել, գիտնական և թէ պետական գրեթէ նոյնա-

նիշ էին դարձել, վասն զի դոքա իրարից տարբեր չէին։ Ս. Լուսաւորչի ամբողջ ցեղը, Մամիկոնեան տունը լինին մեզ օրինակ, և հէնց այն տունն է աննշան դեր կատարել, որում եկեղեցական լոյսը դժուարաւ էր ներս թափանցել։ Միայն եկեղեցին է եղել՝ որ իւր ուսումը հաւասարապէս բաշխել է թէ իշխանին թէ գեղջուկին։ Եւ եթէ ամբողջ պատմութիւնը թերթենք, կըտեսնենք որ Հայոց մէջ հէնց ամենագիտնական և պետական հռչակ վայելող անձինքն էին, որոնք ամենից թունդ էին նուիրուած եկեղեցական ուսման։

Դարերի ընթացքում ժողովրդի որբութիւնը, բարոյական կեանքն և նորա ապագան պահեց, պահպանեց եկեղեցու լոյսն, և ոչ թէ անկենդան և հրամայող օրէնքն, կամ սերնդէ սերունդ փոփոխուող արհեստը։ Եկեղեցու լոյսն է եղել, որ ամեն անկիւն է մտել և ամեն սիրտ, որ մեծերին նոյնքան դիւրամատչելի է եղել, որքան տղաներին, որ գիտուններին նոյնքան օգնել է, որքան խակերին հասունցրել։ Հայոց եկեղեցու վարդապետի մէջ մարմնացած են եղել՝ ամենայն որ ինչ պէտք էր ժողովրդի յառաջադիմութեան հիմնաքար կազմելու։ Միայն նորա առաջ է որ ամբողջ մարդկութիւնը մէկ գերակայ ունի ձգտելու, ամբողջ ազգը մէկ և եթ, որի ճանապարհի վրայ պէտք է գտնուի իւրաքանչիւր ազգային անհատ...։ Խօսք ու գրիչը միայն կարեցել են ազգի ձեռք բերածը ժառանգական դարձնել և այս է եղել թէ իշխան աստուածաբանների և թէ աստուածաբան իշխանների հատոգմունքը։

Մինչդեռ հրէութիւնն իւր օրէնքով մեքենայ էր դարձնում իւր ժողովուրդը, մինչդեռ տեթանոսութիւնը խելացնոր էր դարձնում արուեստի և մինչդեռ Հայաստանը դոցա շփոթութիւնն էր, ահա քրիստոնէական ուսումը միայն ներշնչում է նորան ինքնուրոյնութիւն, ինքն իւր մէջ իւրով յառաջադիմելու։

Կաց յաւիտեան, ասում է քրիստոնէութեան լոյսը, կաց դու միշտ, աստուածային շողը քո մէջ քոյապէս արդիւնաւորելով։ Սակայն վայ այն օրին, երբ քո սիրտն ապառաժ դառնայ այդ ճառագայթների ներքոյ։ Այդ եղել է և կլինի, երբ աստուածա-

բանական գիտութիւնները չեն բռնել իւրեանց արժանաւոր տեղն և չեն զարգանալ ըստ կարելւոյն։ Վասնորոյ աստուածաբանութեան էութիւնը, նորա հիմունքները, բանակարգն և նպատակը պէտք է որոշ լինին, որպէս զի լուծուին տարակոյսներն անհրաժեշտապէս և միայն թեթեւասոլիկ մոնթերի համար մնայ Ս. Գրքի խօսքը՝ թէ. «որ ձգէ քար երկնապող, ի գլուխ իւր ընկենու». Սիրաք. Իէ, 28։

2.

ԿՐՕՆ.

Կրօնը մարդի հոգու ամբողջ էութեան մէջ է. նա ոչ զգացմունք է առանձին, ոչ գիտելութիւն մասնաւորապէս, այլ մի զգացմունք է՝ որ մեր գիտաստութեան հետ բռնում է մեր ամբողջ հոգեկան աշխարհն և ապա իւր պայծառութիւնը կամքի զօրութեամբ ծաւալում արտաքին աշխարհի մէջ։ Կրօնն է մարդի անձնական էութեան հաղորդակցութիւնն Աստուծոյ հետ, որի զօրութիւնից է կախուած նորա էութեան կատարելութիւնը։

Ո՛չ միակողմանի ծանօթութիւններն և ո՛չ մտաւոր պաշարը չեն կարող մարդի մէջ կրօնական ջերմեռանդութիւն ներշնչել, այլ միայն երբ նայէ նա ինքն իւր վրայ, հասկանայ իւր էութիւնը, խնդիրն և նպատակը։ Այդ հայեցողութիւնից է՝ որ բղխում է բարոյականութիւն, կենդանացնում հաստատակութիւնն, ըստ որում կրօնն է բարոյականութեան աղբիւրը։ Կրօնական զգացմունքն է՝ որ միացնում է մեզ Աստուծոյ հետ, և ապա ծագում է ճշմարիտ սէրն և ամենայն առաքինութիւն, որ չի կարող առաքինութիւն լինել, եթէ չէ հաստատուած Աստուծոյ սիրոյ վրայ։ Հաւատարութեան և եղբայրութեան հիմնաքարն է՝ լինել պատկեր Աստուծոյ և այնպէս ճանաչել ընկերին. որտեղ չկայ այդ հիմունքն, այնտեղ է որ ամենաբարձր առաքինութիւնների ձայներն են հնչում, սակայն ինքեանք գոյութիւն չունին։ Այդ չէ պատճառն, որ կեանքի մէջ իրար հետ հակադիր հանդիպում են—հաւատարութեան գաղափար, բայց և թալան ու

բռնութիւն, սկզբունքի հաւատարմութիւն, բայց և շնորհապարտութիւն ու երախտագրժութիւն, ճշմարտութեան քարոզ, բայց և սուտ բարեկամի պաշտումն և այլն և այլն։ Կրօնական երկիւղածութիւնը պէտք է առնէ դոցա առաջը, նա է այդպէսների աւերիչը։

Արդ կրօնն իւր ուղղութեան մէջ չէ հասնում իւր կատարելութեան, երբ չենք բանում մեր մտքերն և չենք ջանում տեսնել այն՝ ինչ որ զգում ենք. այն ժամանակ աստուածային զօրութիւնն ևս չէ կենդանացնում մեզ, զի իւր տեղը չէ գտնում։ Միայն երբ մեր մտքերը պարզ են, հասկանում ենք և ըմբռնում մեր գերական, ապա թէ կարենք նորա պատկերը լինել, մինչդեռ յաճախ ընդհակառակն է պատահում։

«Իւրաքանչիւր ոք, որպէս ինքն է, այնպէս է և իւր Աստուածը։ Վասնորոյ և Աստուած այդպէս յաճախ ծաղր եղաւ»։

Աստում է Գեօթէ։ Այդ է պատճառն, որ Հայոց հին վարդապետները շարունակ պահանջում են բաց պահել մտաւոր աչքերը, քննել, զննել, և ճանաչել լաւը, բարին և գերակայականը։ «Բաջիմաց լեր, մանր քննեա՝ սրատես լեր մտօք առաւել քան աչօք»[1]։ Մտաւոր աչքով պիտի ճանաչենք Նորան, յորում հաստատուած է մեր կենդանութիւնն ու զօրութիւնն, և ապա նայենք Նորան իբրև հայելու վրայ, և տեսնենք մեզ։ Այստեղ է որ խղճմտանք, միտք և կամք միացած գործում են. միտքն իբրև լուսաւորող, իսկ խիղճն իբրև զօրացնող. զգացմունքով է որ պիտի դիմենք դէպի Աստուած, մտքով ճանաչենք և կամքով գործենք որպէս Նա. վասնորոյ և «երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն»[2]։ և այնուհետև միութիւնը պատրաստ է — «տեսեալ ուրուք զԱստուած, անդէն ի նոյն միացաւ ի նմա»[3]։

Կրօնը կեանքի գարկերակն է, ուսոի և ուսուցչի պարտքն է, զարթեցնել կրթուողի հոգին, զգացմունքը, պարզել լուսաւորել

---

1 Եղիշէ, Մատենագրութիւն. Վենետիկ 1838. էջ. 319.

2 Մատթ. Ե, 8.

3 Եղիշէ, անդ. էջ. 326.

միտքը, ճանաչողութիւնն, և ապա բարոյական ազդմամբ լարել նորա խիղճ ու կամքը մարդկային կեանքի գործունէութեան մէջ աստուածային գեր կատարելու [1]։

3.

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԴՊՐՈՑ.

Կրօնը բղխելով հոգուց և իւր առանձնայատկութիւններն ստանալով նորանից, պատկանում է իւրաքանչիւր անհատի և միանգամայն սեփական ժողովրդի։ Համայնական կրօնը հոգեբանական հետևանք է այն ազգին, որին նա պատկանում է. միայն այդպէս լինելով կարէ իւր ծաւալումն ունենալ և կեանքի էականը լինել։ Կրօնն իւր սեփական զարգացումն ստանալով, որպէս հաղորդակցութիւն է Աստուծոյ հետ, այնպէս և նմանների մէջ, որով և կառուցւում է անձեռնմխելի միութիւն։ Դժբախտ է ազգը, որ չունի իւր հոգուն հետ ձուլուած կրօնը։ Ինչպէս որ եկեղեցին և դպրոցը, միութիւն են կազմում, այնպէս և եկեղեցականներն ու աշխարհականները. մէկը պաշտօնեայ է գերակայի, բարոյականութեան, նա ուխտած նուիրուած է աստուածային կամաց, շարունակ յիշեցնող ժողովրդի և կրթող ու դաստիարակող. միւսը գերակայի ձգտողն է, կրթուող դաստիարակուողն է, որ չի կարող լինել առանց երդուեալ վարիչների, որպէս և վերջինները չկարեն լինել առանց հօտի. ժողովուրդն է տալիս իւր հովիւը, նա է ընտրում իւր միջից իւր դաստիարակը, վանորոյ և երբէք իրարից չեն կարող բաժնուիլ և առանձին առանձին գոյութիւն ունենալ, այլ եկեղեցականները ժողովրդի երդուեալ գործակալներն են։ Եւ նա եկեղեցականների մէջ, որ բարձր է աստիճանով, նա է որ առաւելագոյն պարտիքներ ունի։

Յայտ է որ մեր դպրոցներն, որոնք պէտք է բարոյական — գործնական ընաւորութիւններ տան, կամ կարճ, մարդիկ կրթեն, այդ մարդիկ են՝ որոնք թէ եկեղեցական և թէ աշխարհական

---

1 Hagenbach. անդ. էջ. 33.

պէտք է լինեն. այդ է՝ որ հաստատում է դոցա միութեան սկզբունք. ըստ որում և դպրոցի գիտութիւնը չպէտք է բնաւ միակողմանի լինի, որպէս զի նորա միութիւնը հաստատ մնայ և միևնոյն աղբիւրից ելնեն հասարակութեան ճշմարիտ տարրերը։ Որտեղ եկեղեցականն հրամայող է, և ոչ խրատող, սարսեցնող է և ոչ սատող, բռնահարող է և ոչ կրթող, պատգամախօս է և ոչ դաստիարակող, այնտեղ ժխտւում է Հայաստանեայց եկեղեցու սկզբունքն, այնտեղ կյառաջանայ թունդ հակասութիւն, որ պատճառ կլինի թէ տգիտութեան և խաւարի, թէ թիւրիմացութեան և աղմուկի։

Եկեղեցու հովանու ներքոյ պէտք է լոյսը թագաւորէ և խաւարը հալածուի, միևնոյն ճառագայթի տակ պէտք է փայլեն եկեղեցականներն ու աշխարհականներն։

4.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ։

Եթէ պատմական հայեացք ձգենք մի գիտութեան վրայ, կըտեսնենք որ յաճախ նորա անունը պատրում է մեզ և անծանօթ գոլով՝ այդ մի բառից այլ ինչ ենք հետևցնում, քան թէ սովորաբար հասկացւում է. այդպէս են շատ գիտնական բառերը (terminus technicus)։ Ջորոր. բնաբանցութիւն կամ մետաֆիզիկա բառերը բնաւ այն չեն արտայայտում, ինչ որ այդ գիտութիւնը բովանդակում է։ Այսպէս և աստուածաբանութիւն չպէտք է հասկացուի՝ «գիտութիւն Աստուծոյ մասին», որ բնաւ չէ, այլ այդ մի ընդհանուր անուն է, որի տակ կայ նոյնքան պատմութիւն, որքան իմաստասիրութիւն, մինչև անգամ բնագիտութիւն, իրաւաբանութիւն, այլև լեզուագիտութիւն, ընկերաբանութիւն (соціалогія) և այլն։ Հին ժամանակ աստուածաբան էին կոչում նոքա, որոնք աստուածների էութեան և պատմութեան մասին տեղեկութիւն էին տալիս, իսկ քրիստոնէութեան առաջին դարերում նոքա, որոնք երրորդութեան վրայ էին խօսում։ այսպէս և նոր կտակարանի մէջ կարդում ենք. «յայտ-

նութիւն Յովհաննու առաքելոյ և աստուածաբան աւետարանչի», նոյնպէս և հին եկեղեցու վարդապետներից ոմանք յայտնի են «աստուածաբան» անունով, մանաւանդ Գրիգոր Նազեանց (330+390), որոնց ժամանակներն աստուածաբանական ուսումը գրեթէ բոլորովին ջատագովական և կռուաբանական ուղղութիւն ունէր։

Երբ արևմուտքում մարդկային գաղափարների հաստատութիւնը սասանւում էր, յառաջացաւ դպրոցական (սխոլաստիկ) ուղղութիւն, որ ջանում էր ամենայն ինչ ապահովել, լոկ մտաւոր բանավարութեան ոյժ տալով, որով մեկնութիւնն ու պատմութիւնը կորցրին իւրեանց ոյժը։ Արիստոտէլն էր՝ որ կենդանացնում էր դոցա և ահա ելան մի շարք անձինք, մանաւանդ Թոմաս Աքուինացին (1227+1274), որոնք ամենայն ինչ դաւանական չափով չափեցին, և ինչ որ այդ չափից դուրս էր՝ դառնում էր վիճաբանութեան կռուան։ Սակայն ոչ մի անխոհեմ ծայրայեղութիւն չի կարող մնալ անխափան և իւր ընթացքով առանց խոչի գնալ և ահա միւստիկներն էին (խորհրդականներ), որոնք քրիստոնէական կեանքի և մտածողութեան վերածնութիւնն իրրև միակ պահանջ յառաջացրին, վերածնութիւն նոյն իսկ ի ներքուստ, որպէս զի ժամանակաւոր և արհեստական չլինի։ Սա մի նախապատրաստութիւն էր, որի վրայ հաստատուելով երևան եկան ԺԵ. դարում մարդասէրներն, որոնք մարդկային գիտութիւններն իւրեանց անկեալ վիճակից բարձրացրին. պատմութիւն, լեզուաբանութիւն, քննաբանութիւն յառաջ անցան, և ահա հիմք պատրաստեցին հռոմէական ազոլաստիկական բռնութիւնը խորտակելու։ Կրօնական վերանորոգութիւնը ծնունդ էր այդ ձգտման, ըստ որում պահանջւում էր դառնալ դէպի քրիստոնէական եկեղեցու սրբութիւնը, թոթափել այն ամենն՝ ինչ որ լոկ մարդկային հրամանների ներքոյ բուսել և աճել էր, արմատախիլ անել այն որոմներն ու ժանգառներն, որոնք խաւարի մէջ աճել էին քրիստոնէական լոյսից դուրս։ Ս. Գրքի և հին եկեղեցիների ուսումնասիրութիւնն յառաջ անցնելով վերանորոգիչների գործունէութեան մէջ, ճանապարհ բացաւ քրիստո-

նէական պարզութեան զարգացման։ Ահա սորանով միջոց տուին փիլիսոփայութեան և բոլոր գիտութիւններին մտնելու քրիստոնէութեան շրջանի մէջ և իւրեանց հետազօտութիւնն անվախ վարելու։ Գիտութիւնների այդ յեղյեղուկ վիճակում զուտեց մարդկային միտքը, իւր ամբողջ հոգուն սեփական մի տարբ, սեփական կրօնը ճանաչելով, որի զօրութեան հաւասար դեռ ոչինչ չէ ծնել մարդկութիւնը։ Կապակցող մասերն են նորա մէջ ոչ միայն զգացմունքն ու գաղափարներն, այլ և հոգու իւրաքանչիւր ընդհանրական արտայայտութիւն—ազգային կամ ազգին հոգեկից՝ սկզբունքներն ու բարոյքը։ Այստեղ է որ սէրը ստանում է իւր ընդարձակութիւնն, երբ միութեան հիմնաքարը ներշնչում է՝ թէ ինքնազոհութեան պատրաստականութեան վրայ է հաստատուած ճշմարիտ սէրը։ Համայնական միութիւնն է, որ ներկայացնում է մեզ միութիւն նախնեաց, ներկաների և ապագայ սերունդների, յորում և է հայրենասէրի էական համոզմունքն, այն է՝ ազգի յաւիտենականութիւնը։

Մինչդեռ հոգու և նորանից բղխած սեփականութիւնը կապում է իւր համայնքն ի մի և կազմում եկեղեցի, այդ եկեղեցին ևս հետևցնում է պահանջ՝ ազգայինը, սեփականը պաշտպանելու, աղնուացնելու և վերացնելու, որպէս զի ժողովուրդն ևս իւրից ստանայ իւր հոգուն յարմար ոնունդը։ Ահա և կրօնն և իւր հետ պայմանաւորուած բոլոր հանգամանքները դառնում են գիտնական մշակման առարկայ, նիւթ ուսումնասիրութեան և նորա բարձրութիւնը պատճառ տարածման։ Որչափ հոգևոր է մի կրօն, նոյնքան տրամադիր կլինի գիտութեան, վասն զի բարձրութեան և հոգևորութեան չափով է՝ որ համապատասխանում է մարդկային էութեան և գիտութիւնը դոյն էութեան արդիւնք լինելով, պիտի յարուի նորա հետ։ Հայոց եկեղեցին թերևս բախտի բերմամբ հեռու մնալով նորադիր բարդ ու հարթ խնդիրներից, իւրացրել է ամենայն ինչ որ քրիստոնէութեան էութեան է պատկանում, ծայրայեղ ազատամտութեան սկզբունքի վրայ հաստատուելով դէպի ուրիշ եկեղեցիները։ Սակայն նա ձուլուած իւր ժողովրդի հոգու հետ

և միուած իւր պատմութեամբ, չէ դարձել բնաւ անհատների մենաշնորհ, այլ հիմնուին պատկանում է իւր ժողովրդին։ Նա տարբերութիւն չէ դրել իւր սիրողների մէջ և ջահը պահել է ամենայետ ընկած անկիւններում լուսաւորելու համար։ Վանորոյ և այն ամենն, ինչ որ իւր ժողովուրդը կծնէ լոյսի շողերի տակ, նա կարէ անդրադառնալ եկեղեցու բովը, մաքրուիլ զտուիլ և ծառայել ազգին։ Գիտութիւն և աստուածային շնորհ — ահա փեսան ու հարսը՝ բազմած Հայաստանեայց եկեղեցու սուրբ գահաւորակի վրայ, որոնց ժառանգները պէտք է ջահընկալներ լինին լուսաւորութեան. մարդկութիւն և աստուածութիւն՝ — ահա այն կայծաքարն ու կայծահանն, որոնց կայծահարելով պէտք է վառուին Հայոց ճրագները...։

Վանորոյ և Հայաստանեայց եկեղեցի և դպրոց գոյութիւն չունին առանձին առանձին. դոքա կազմում են վեհագոյն միութիւն։ Եկեղեցու գաւթում է դպրոցը, դպրոցը պարտ է տալ եկեղեցու զաւակներ. նա պէտք է կրթէ, բայց նորանից պէտք է ելնեն կրթողներ, սերմանողներ և հնձողներ. նա պէտք է տայ մարդիկ բառի բուն նշանակութեամբ, որպէս զի նոցանից ելնեն և եկեղեցու պաշտօնեաները, հասարակութեան միթարները։ Հէնց այդ չէ ասում՝ «դպրոց» բառը. «դպիր» որից և դպրոց, այլ և «դպրութիւն». ահա գաղափարներ, որոնք եկեղեցու գմբէթի տակ են պտտում։ Ճիշտական դպրոցից սկսեալ մինչև ճեմարանն — այդ ուսումնարանների արմատները՝ եկեղեցու մէջ են սնում։ Վանորոյ և բոլոր գիտութիւններն իւրեանց համաչափութեամբ պէտք է եկեղեցու լոյսի շուրջը հաստատուին, այսինքն տան այն պտուղներն, որոնք ելնում են յիշեալ սնունդից բողբոջեալ ծաղիկներից, որպէս զի այդ պտուղները վերատին ծառայեն իւրեանց սննդատու արմատների փայրը ծաղկեցնելու։ Որտեղ այդ սնունդը կատարելապէս մշակուելով չըհասնի իւր նպատակին, այնտեղը կչորանայ և կչորացնէ ծառի դալար ճիւղերն ևս. այնտեղ կյառաջանայ չորութեան փոշի և այդ փոշին է՝ որ թոմթափելու պահանջ է ներշնչում, մինչդեռ այն՝ որ ծնել է ազգն եկեղեցու և նորա դպրոցի ձեռակերպու-

թեան մէջ, այդ եղել է հոգեբանական—պատմական հետևութեամբ և պէտք է չկորցնէ իւր ճանապարհն, եթէ ուզում է հասնել իւր սկզբնաւորութեան նպատակին։ Այս պահանջը բղխում է հէնց հոգևոր դպրոցի գաղափարից, մանաւանդ որ ուսումն ուսում չէ, եթէ բարոյականի և ինքնաճանաչութեան կողմի հիմունք կազմողը կաղում է։ Այս պահանջը պատմական է։ «Մի ազգի համար միայն այն է լաւ, ասում է Գեօթէ Ֆրանսիական յեղափոխութեան մասին խօսելիս, ինչ որ նորա սեփական միջոցից և նորա ընդհանուր կարիքից է գուրս եկել. առանց մի ուրիշին պատկանելու։ Չի ինչ որ մի ազգի՝ իւր որոշ հասակի մէջ բարերար անունդ կարէ լինել, դառնում է գուցէ մի ուրիշի համար թոյն։ Բոլոր փորձերն՝ որևիցէ օտարերկրեայ նորոգութիւն մուցնելու, որի կարիքը ազգի խորին միջուկի մէջ չէ արմատ բռնել, ախմախական են և բոլոր մոռացրեալ այդ տեսակի յեղափոխութիւններն անհետևանք. զի նոքա առանց Աստուծոյ են, որ հեռու է կենում այդպիսի վայր ի վերոյ գործերից (Pfuscherei)։ Իսկ եթէ կայ ճշմարիտ կարիք ազգի մէջ այդպիսի մի վերանորոգութեան, այն ժամանակ Աստուած նորա հետ է և նա կյաջողուի։ Այդ երևում է Քրիստոսի և նորա առաջին հետևողների վրայ, զի Սիրոյ նոր վարդապետութեան երևիլն ազգերի մէջ կարիք էր[1]...» և մարդկային էութիւնը գտաւ իւր երջանկութեան հիմնաքարը զուտ քրիստոնէականութեան մէջ։ Եւ ահա մի շարք փիլիսոփաներ (իմաստասէր) մանաւանդ Կանտ (1724—1804), Ֆիխտէ (1762—1814) Շելլինգ (1775—1854), Հեգել (1770—1831) և Շլայէրմախեր (1868—1834), մեծամեծ աշխատանքներ նուիրեցին քրիստոնէութեան, եկեղեցուն կամ աստուածաբանական հարցերին։ Բնական աստուածաբանութիւն, տեղական աստուածաբանութիւն, տեսական աստուածաբանութիւնն գլուխուեցան անդառնալի. սխոլաստիկների վայր ի վերոյ հարցերն ու վէճերը կորան անհետ. դաւանաբանութիւնը տաշուեց հա-

---

1 Gespräch mit Göthe, von I. P. Eckermann. Leipzig. III 4 Ian. 1824. Տես և Fichte, Reden I, II, III.

կագիտական կարկատաններից, և ամբողջ աստուածաբանութեան շինութիւնը հաստատուեց փիլիսոփայական և պատմական հետազօտութեան վրայ։ Այսօր աստուածաբանութիւնը բովանդակում է իւր մէջ այն ամեն ծանօթութիւններն, որոնք վերաբերում են եկեղեցական—բարոյական կեանքի։ Նա աւանդւում է գերմանական բոլոր 20 համալսարաններում և նորա դրօշակիրներն են հազարաւոր գիտնականներ իւրեանց անթիւ գրութիւններով և ամսագրներով։

Ահա ուշադրութեան շրջան Հայաստանեայց եկեղեցու համար։ Ս. Գրիգոր Լուսաւորչից սկսեալ երկար դարեր քրիստոնէական պարզութիւնը պաշտելի եղաւ Հայոց եկեղեցում։ Նորա վարդապետութեան ամենահին աղբիւրի հեղինակութիւնը հեռու է ինքնախրոխտ հրամաններից. «գրել ձեզ և ուսուցանել կամիմ եղբարք, զորս ի Քրիստոս աւետարանաւն ծնայ 1», այս է նորա սկզբունքը։ Նորա համար չկայ այլ հեղինակութիւն, քան Ս. Գիրքը. գորանով պէտք է առաջնորդուէին իւր յաջորդներն, որոնք բոլորն էլ Ս. Գրքով պէտք է ուսուցանէին և ոչ անձնական սաստով։ «Գիրք են մեր վարդապետք, և ի ձեռն նոցա զյաւիտենից զլոյսն ընկալցուք, և նոքօք վարեսցուք յաշխարհի 2...» Նա է այն չափն, որ սահմանում է ամբողջ եկեղեցու հիմունքը, վարչական որոշ կազմակերպութեան գործունէութեամբ։ Ս. Գրիգոր Լուսաւորչից պատրաստուեցան Դ.—Ե. դարերն, որոնք տուին Սահակ—Մեսրոպեան գործունէութեան խարիսխները։ Ս. Գրքով կրթուեցան նոցա ուսման մունետիկներն և ըստ այնմ մշակներ եղան ճշմարտութեան այգուն։ Նոցա յաջորդ սերունդները դարեր շարունակ ոգի առան այդ շրջանից, անդադար աչքի առաջ ունենալով Ս. Գրիգոր Լուսաւորչին և նորա որդոց, և ահա տեսնում ենք որ նոյն իսկ միջին դարերում Ս. Գրքի չափի տակ է ընթանում այդ շրջանի երաշխաւորութիւնը։

Սակայն Հայոց միջին դարաշրջանն ելնում է հայկական մթնո-

---

1 Յաճախապատում։ էջ. 161.

2 Անդ էջ. 131.

լորտից. նա անունդ չէ առանում իւր խոր արմատներից և արևմտեան խաւարը գալիս է նորան ոտուերարկելու։ Ահա և սխոլաստիկութեան շրջուլները կպչում են նոցա. Հայաստանեայց եկեղեցու ժայռերն ալեկոծութեան են ենթարկւում բայց ալեկոծութեան, որից ոչ թէ մաքրւում զտւում են, այլ ժանգոտւում և տղմարմատ մամուռ գոյացնում, որի անունդն անպակաս մընաց...։

Աւասիկ՝ Հայաստանեայց եկեղեցու աստուածաբանութեան էական խնդիրը։ Նա իւրացնելով գիտնական բանակարգ և հաստատելով փիլիսոփայական ճշմարիտ սկզբունքների լոյս, պէտք է պատմական հետազօտութեան և զարգացման մէջ գտնէ իւր գործունէութեան հիմնաքարը, ճանաչէ Հայոց եկեղեցու անցեալն և իւրով ի ներքուստ՝ իւր մէջ փառի և զարգանայ իւրական յերաժնութեամբ։

«Ինչպէս որ առհասարակ, ասում է Բանկէ հռչակաւոր պատմաբանը, չկայ մարդկային գործունէութիւն ճշմարիտ հոգևոր նշանակութեամբ, որ ծագած չլինի փոքր ի շատէ գիտասու յ բաբերութիւնից Աստուծոյ և աստուածային իրերի հետ, այնպէս և ոչ անկարելի է մտածել մի ժեծ՝ իւր անուան արժանաւոր ազգ, որի քաղաքական կեանքը կրօնական գաղափարներից չշարժուած և չբարձրացրուած լինի և որ անդադրում չզբաղուի այդոքիկ (կրօնական գաղափարները) զարգացնելու և նոցա հասցնելու ընդհանուր վաւերական արտայայտութեան և հրապարակական յառաջադրութեան»։

5.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Իւրաքանչիւր գիտութեան որպէս և աստուածաբանութեան ուսումնասիրութիւնը պահանջում է որոշ զարգացում կամ նախապատրաստութիւն, որ ստացւում է միջնակարգ ուսումնարանում։ Սակայն աստուածաբանութիւնը գիտնական զբաղմունք դարձնելու համար՝ անհրաժեշտ է ունենալ և այլ գիտութիւն-

1 Werke, 4 Aufl. Leipzig 1867. I, էջ. 3.

ներից բաւարար հիմնաքար։ Թէ լեզուաբանութիւն և թէ պատմութիւն, թէ ուսողութիւն (математика) և թէ բնական գիտութիւններն են այն աստիճաններն, որոնցով կարելի է բարձրանալ և մտնել այդ գիտութեան շրջանի մէջ։ Աստուածաբանութիւնը կարէ համեմատուիլ իրաւաբանութեան հետ, ըստ որում երկուսն ևս բարոյական հիմունքի վրայ են հաստատուած, թէև իրաւաբանութեան էական սկզբունքները մտնում են ուղղակի աստուածաբանութեան մէջ։ Վասնորոյ այդ երկու գիտութիւնների համար պահանջւում է օրինաւոր զարգացումն մանաւանդ մարդկային պատմութեան, անցեալ և ներկայ քաղաքակրթութեան և դասական ժամանակների։ Բայց այդ պահանջն առաւել ևս ծանրանում է աստուածաբանի վրայ։

Աստուածաբանը չի կարող իւր կոչման համապատասխանել առանց լեզուաբանութեան, որ կրթում է նորա հոգին, վարժեցնում և աղդու է կացնում նորա լեզուն, որպէս զի թէ նորա գրիչն ընթերցողի խելքն ու միտքը կաշկանդէ և թէ նորա խօսքը բռնէ՝ շարժէ՝ մորմոքեցնէ՝ ոգևորէ լսողի սիրտը, նորան եռանդ ներշնչէ մարդկապէս ապրելու։ Հարկաւ բաւ չէ մայրենի լեզուն, այլ պէտք է գիտենալ և օտարներից նշանաւորներն, որպէս և ասում է Գեօթէ՝ «ով օտար լեզուներ չգիտէ, ոչինչ չգիտէ իւր լեզուից»[1]։ Իսկ Հայոց գրաբար դասական լեզուն բարձրագոյն տեղը պէտք է բռնէ այդ ուսումնասիրութեան մէջ, վասն զի այդ է որ զարգացնում է մեր լեզուական ճաշակը, կազդուրում է մեր արտայայտական ոյժը, հարստացնում է կամ մշակում մեր լեզուական ձիրքը, վերջապէս սրամտագրում է մեզ նախնեաց հոգով ներշնչուելու։ Եթէ այս ուսումնասիրութիւնը միակողմանի լինի, նոյնքան վնասակար կդառնայ և թշնամիներ կյարուցանէ, որքան եթէ նորա գործածութիւնը չափաւորութեան սահմանն անցնէ։ Իսկ եթէ գիտենանք թէ այդ քանի օգտակար կլինի՝ եկեղեցու էութիւնն և նորա հարազատը ճանաչելու համար, հաւատացած կլինինք, որ մի օր գրաբարն ու հին մատենագրութիւնը կնզովուին Հայաստանեայց եկեղեցու պար-

---

[1] Göthe's sämmtliche Werke Leipzig (Reclam jun.) III. էջ 98.

զութեան թշնամիներից, որպէս երբեմն հերձուած էր համարում յունարէնը Հռոմէական աշխարհում։

Գրաբարի՝ որպէս և հին լեզուների՝ ուսումը միջոց կտայ և հին պատմութեան ուսումնասիրութեան, զի անպայման անհրաժեշտութիւն է աստուածաբանութեան համար՝ գիտենալ և ճանաչել հեթանոսութեան ժամանակներն, ինչպէս և քրիստոնէութեան առաջին դարերը. վասնորոյ և առանց դոցա անհաստատ կլինի քրիստոնէութեան էութեան ճանաչողութիւնը։ Բայց քանի՞ և անհրաժեշտ է ճանաչել Հայոց ազգի և Հայաստանեայց եկեղեցու պատմութիւնն, այդ նկատելի կլինի, երբ ուշադրութիւն դարձնենք դորա բացակայութիւնից յառաջացած վայր ի վերոյ դատողութիւնների վրայ։ Պէտք է հին պատմութեամբ կրթուինք, որ կարենանք հասկանալ ապագան՝ մեր պատմական զգացումը վարժեցնելով և դիւրալուր դարձնելով ժամանակի ոգու ըմբռնման համար։ Պատմութիւն ասելով և այս չպէտք է հասկանանք դատարկ և խառնաշփոթ կամ չոր ու ցամաք պատումներ զանազան դէպքերի, այլ քննական պատմութիւն, պատճառի և պատճառականութեան, սկզբունքի, հիմունքի և կատարածի ճանաչողութիւն, ամբողջ պատմական ընթացքի, և ժամանակի կաղմի հայեցողութիւն։ Առանց այս պատրաստութեան՝ ոչ միայն աստուածաբանութեան անմատչելի կլինի մարդ, այլ նոյն իսկ կեանքի գործունէութեան[1]։

Պատմութեան մէջ է մնում և մարդկութեան քաղաքակրթ-

---

1 «Մերն են այն գանձերն, որոնց վերջապէս հասցրել են մեզ՝ աշխատութիւն և հանճար, բանականութիւն և փորձ աշխարհի երկար տարիքի մէջ։ Պատմութիւնից միայն կսովորէք ճանաչել այն բարիքների արժանիքն, որոնց սովորութիւնն և հաստատուն սեփականութիւնն այնքան հեշտութեամբ խլում են մեր շնորհակալիքը. թանգագին, քաղցր բարիքներ, որոնց կպած է լաւագոյնների և ազնուագոյնների արիւնն, որոնք ծանր աշխատութեամբ պիտի ձեռք բերուէին այնքան սերունդների միջոցով։ Եւ ո՞վ ձեզնից, որի մի պարզ հոգու կից է զգացող սիրտ, կարէ այդ բարձր պարտիքը յիշել, առանց որ մի խաղաղ իղձ նորա մէջ չշարժուէր, եկող սերունդին պարտիք թողնելու, որ նա անցեալից այլևս կրել չէ կարող։ Մի ազնիւ պահանջ պարտ է մեր մէջ վառուիլ, ճշմարտութեան, բա-

թութեան յառաջադիմութիւնն, ուստի և բնական գիտութիւն-ներն անհուսալի են աստուածաբանութեան ուսումնասիրութեան համար։ Կան և կարծողներ, որ իբր թէ բնական գիտութիւնների զարգացումը վնասում է նորան, բայց չարաչար սխալ-ւում են, զի ոչ թէ բնական գիտութիւնների յառաջադիմութիւնից է հետևում վնասն, այլ նորա վայր ի վերոյ ըմբռնելուց և աստուածաբանութիւնը չհասկանալուց։ Բնական գիտութիւն-ների մէջ եղած հետազօտութիւններն ոչինչ չունին հաստատ ընդունուած, որոնք մերժուած լինէին աստուածաբանութիւնից, այլ ընդհակառակն՝ առանց նոցա տեսութիւններն նախապրելու, չկարէ աստուածաբանութիւնն իւր տեսութիւնները բանաձևել։ Եւ եթէ ս. Գրքի ընթերցանութիւնը թիւրիմացութիւն է պատ-ճառում, այդ ևս միայն ոչ ամբողջական այլ կիսատ պատ կար-գալուց է լինում։ Առաւել ևս աստուածաբանութիւնը [1] չի կա-րող խախուտ հիմունքների վրայ հաստատուելով, իւր գիտական յօրինուածքը պահպանել գիտական հայեցողութեան ներքոյ [2]։

բոյականութեան և ազատութեան աւանդի վրայ, որ մենք նախնիքներից ստացել ենք և առատապէս աւելցնելով պէտք է հետագաներին տանք, այլ և դնենք մեր միջոցներից մի նպաստ, և այդ անանցական շղթայի վրայ, որ մարդկային բոլոր սերունդների մէջ պտտում է, մերթուցիկ գոյութիւնն ամրացնել։ Որչափ էլ զանազան լինի այն վիճակն, որ ձեզ սպասում է քաղաքացիական հասարակութեան մէջ—փոքր ինչ նաւավարել կարէք և դուք ամենքդ։ Իւրաքանչիւր վաստակի համար անմահութեան ճանապարհը բաց է, առ ճշմարիտ անմահութիւն եմ ասում, յորում գործն ապրում է և յառաջ շտապում։ Եթէ նոյն իսկ նորա սկզբնապատճառի անունը յետ մնալու լինի»։ Շիլլեր. Ճեմարանական ճառ տիեզերական պատմութեան վրայ. Werke 10. էջ. 212։

1. Բոնի համալսարանի հին-կաթոլիկ՝ անուանի պրոֆեսոր՝ Ռէուշ ունի մի գրուած ս. Գրքի արարչագործութեան պատմութեան մասին, որի թարգմանութիւնը շուտով կհրատարակենք։ Արդէն ստացել եմ մի նամակ, որով թոյլատրում է թարգմանութիւնն և մեծ յարգանքով է խօսում Հայաստանեայց ս. եկեղեցու մասին։ Այդ գեղեցիկ նամակի թարգմանութիւնն ևս կկարդան ընթերցողները։

2. «Թող հոգևոր քաղաքակրթութիւնը միշտ յառաջադիմէ, թող բնական գիտութիւնները մշտական լայնարձակ ծաւալով և խորութեամբ

Լիզուի և պատմութեան զարգացումը պահանջում է գեղ. և արտայայտելու և արդիւնաւորելու փարժութիւն, դի բառակոն չէ հասկանալ, այլ պէտք է և հասկացածը պոռաւորել՝ լինի այդ գրչով թէ խօսքով։ Որքան այժ և ս պարունակէ իւր մէջ մարդ. երբ նորա մեքենան չէ բռնում՝ նա դատապարտուած է թէ ասուածային շնորհի և թէ հասարակութեան առաջ։ Ուստի արդիւնաբեր լինելու համար հարկաւոր է և գեղարուեստական վարժութիւն, մանաւանդ երգեցողութեան, ռեմիրատացութեան և գրութեան մէջ։ Աւելացնենք և այն դիրքն, որ ունի ասուածարանը հասարակութեան նկատմամբ, կտեսնենք որ մանկավարժութիւնն ու փայլուչ կենցաղավարութեան գիտակութիւնը պարտաւորիչ են նորա համար. նա պէտք է շարունակ կրթուի և կրթել կարենայ։

6.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆԸ ՓԻԼԻՆՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ։

Աստուածաբանութիւնը չի կարող իմացութեան և պատմու-

աՀեն և մարդկային հոգին բացուի, որքան կուզէ,—քրիստոնէութեան բարձրութիւնից և բարոյական քաղաքակրթութիւնից, որպէս այդ աւետարանի մէջ փայլում է, չեն անցնիլ»։ Գեսթէ, Gespräch III.

Բնական գիտութիւնների հռչակաւոր ներկայացուցիչ տիեզերագէտ և աստղագէտ ֆրանսիացին Կամիլ Ֆլամարիոնն է հէնց որ անուանում է անաստուածութիւնը յիմարութիւն «l'atheisme absolu ne peut être qu'une folie nominale» յարձակւում է „le chaos de l'hypothèse matérialiste"-ի վրայ, և կոչում է առ Աստուած սքանչացած. „Et quel nom donner á ceux qui vous ont nié, á ceux qui ne croient pas en vous, á ceux qui vivent hors de votre pansée, á ceux qui n'ont jamais senti votre présence, ô Pére de la nature!" „Dieu dans la nature" քան և չորսերորդ տպագրութիւն. Paris. էջ. 547. իսկ էջ. 548. Et tandis que la nature s'était reconnue devant Dieu pour saluer la mission de l'un de ses astres fidéles, tandis que tous les êtres s'étaient communiqué leurs prieres, et que le flot grondant des mers unissait á la brise du soir son action de grâces à la fin de ce beau jour; tandis que l'oeuvre créée, unanime et recueillie, s'était offerte au Créateur; la créature douée d'une âme immortelle et responsable,—l'être privilégié de la création,—le représentant de la pensée,—l'Homme, vivait á côté, insouciant de ces splendeurs, ayant des yeux pour ne pas voir, des oreilles pour ne pas entendre, semblant ignorer

թեան բազմատարբեր նիւթերից կարևոր օգուտը քաղել, եթէ օգնութեան չհասնէ փիլիսոփայութիւնն (իմաստասիրութիւնն) որ գրեթէ գլխաւոր դերն է կատարում։ Դա է որ այդ նիւթերը գնում է մարդկային գիտասութեան բարձրագոյն միութեան համերաշխութեան մէջ, մշակում է յաւիտենական ճշմարտութեան գաղափարն և մարդկային հոգու առաջ նորա մտաւոր գրութիւններին համաձայն հայեցողութիւն դարձնում։ Եթէ եղել է ժամանակ, որ փիլիսոփայութիւնն ատել են, այդ եղել է միայն ոչ թէ իմաստասիրութեան էութեան՝ այլ իմաստակութեան վերաբերմամբ։ Այդ իմաստակութեան չափն անցցրին հէնց սխոլաստիկներն, իւրեանց բռնազբօսումները սրողելու համար։ Այդ թիւրիմացութիւնների[1] մէջ էր սուզուել Լութեր, որ թունդ յարձակւում էր իմաստասիրութեան, գիտութեան վայրերի և բանականութեան վրայ, գոցա աւերիչ համարելով աստուածաբանութեան և բարոյականութեան։ Իսկ Հռոմէական եկեղեցում մինչև անգամ այժմ Թոմմաս Աքուինացուց գուրս իմաստասիրութիւն ինչ բացէ ի բաց արգելուած է։

Մինչդեռ իմաստասիրութիւնն այդպիսի անկեալ վիճակի մէջ էր, հարկ կար մի զարկի, բայց այդ զարկը պէտք է ուժեղ լինէր, որ կարենար գործ կատարել, զի Հռոմի թշնամի էր մարդկային մտքի ազատ ընթացքին, մարդկային բանականութեան խորհելուն, նա ատում էր ճշմարտութիւնն և ճշմարտութեան անփոփոխելի սկզբունքը։ Նոր իմաստասիրութեան հիմունքը միայն մի է. գտրում ձայն տուացաւ։ Ֆրանսիական գիտնականներից էր՝ որ ելաւ իմաստասիրութեան անձնուէր խորհողը՝ Ռընէ Դեկարտ (Ռընատուս Կարտեզիուս. 1566—1650) և իւր դէմ յարոյց Հռոմայ խաւարաբեր յարձակմունքը։ Այնուհետև մի շարք իմաստասէրներ շարունակ նոյն իսկ Գերմանիայում հաղածուեցան, սակայն շատ չանցաւ, երևեցաւ կանա, խորտակեց սխոլաստիկ իմաս-

---

cette universelle harmonie au sein de la quelle il devrait trouver son bonheur et sa gloire.

1. «Ընդհանուր գաղափարներն և խորին մթութիւններն են, որոնք սոսկալի անբախտութիւն յառաջացնելու ճանապարհի վրայ են», ասում է Գեօթէ։

տակութիւնն և զարկ տուաւ գիտնական հիմունքների անհրաժեշտութեան։ Թէև Կանտ աստուածաբանութեան միայն բարոյականին ոյժ տուաւ, սակայն նորա քննաբանութիւնները հող պատրաստեցին և շարժառիթ եղան յառաջադիմութեան։ Նորանից յետոյ եկան իմաստասէրներ, որոնց ծառայութիւնները հիմնական հիմունքներ եղան աստուածաբանութեան մէջ։ Այսպէս Ֆիխտէի իդէալականութեան (идеализмъ), Շելլինգի բացարձակի, այլ և Հեգելի ներաբնակ (immanent) հոգու վարդապետութիւնը բարձր տեղ բռնեցին իմաստասիրութեան մէջ։ Եղան և այնպէսներն, որոնք հակառակ խօսեցան և կամ փիլիսոփայութիւնն ու աստուածաբանութիւնն իրարից որոշեցին (Շլայէրմախէր), բայց անյաջող, փիլիսոփայականն անհրաժեշտ էր աստուածաբանութեան մէջ և բացուեց։ Նորա գաղափարների յեղյեղուելուց յառաջացաւ թէ անաստուածութիւն և թէ երկրայամտութիւն (скептицизмъ), որի կրօնական կողմը այլանդակուելով, ծնուեց կենսազուրկ և յուսահատ տրամադրութեան հետևանք յուռեռութիւնը (пессимизмъ) Շոպենհաուէրի (1788—1860), որ իսկապէս բուդդայականութիւն է և մինչև այժմ էլ արմատ է գտնում տկար հոգիների մէջ։

Այս բոլոր ընթացքը բերաւ այն համոզման, որ փիլիսոփայութիւնն ոչ միայն անհրաժեշտ է աստուածաբանութեան մէջ, այլ անխուսափելի նախապատրաստութիւն։ Եւ մինչդեռ Գերմանիայում գանգատուում էին թէ ուրիշ առարկաներով պարապողները, մանաւանդ բժիշկները, բնաւ տեղեկութիւն չունին փիլիսոփայութիւնից, աստուածաբանների վրայ անպայման պահանջ են դնում այդ առարկայի ուսումնասիրութիւնը։ Եւ իրաւ, եթէ մեր հոգին պարզ գաղափար չունենայ ինքեան վրայ, եթէ չպիտի կարենայ օրինապէս մտածել ամենայն մտածողութեան վերջին հիմունքների վրայ, ի՞նչ կարէ նա ասանալ մի առարկայից, որ այդ պայմանների վրայ է հաստատուած։ Եւ մի՞թէ կարէ փիլիսոփայութեան Սոկրատեան հիմունքը՝ «ծանիր զքեզ»[1] երբ և

---

1. Նոյն իսկ Դեկարտ ասում է cogito ergo sum—մտածում եմ, ուրեմն կամ գրութիւնից, յարելով Օգոստինոսին։

ինչ կորցնել իւր բարձրագոյն նշանակութիւնը։ Բա՛ւ լիցի. հէնց դորա պակասութիւնից է յառաջանում ամենայն այլանդակութիւն։ Միայն ինքնաճանաչողութիւնն է հաստատութիւն իւրաքանչիւր ճանաչողութեան։ Չկայ գիտութիւն առանց ենթադրութիւնների. բնական գիտութիւնների ենթադրութիւններն ամենից շատ են և հէնց այդ ենթադրութիւններն, եթէ ոչ աւելի, պատկանում են էապէս փիլիսոփայութեան շրջանին։ Բայց և ճանաչել այն՝ որ ենթադրութիւն չէ, դարձեալ փիլիսոփայութեան մշակած և ընդունած հունով է ընթանում, որ առարկայական գոյն ունի, ապա թէ ոչ, բնաւ և մի ճանաչողութիւն չկարէր ապահովութիւն ունենալ։ Իսկ քայլ առ քայլ իմաստասիրութիւն սովորելով, մենք սովորում ենք իմաստասիրել, ըստ Կանտի, և այդ հիմնաքար է ամեն ուսումնասիրութեան։ Փիլիսոփայութեան պակասութիւնից է որ սխոլաստիկութիւնը գործ է գտնում, որ մարդիկ յաճախ դատողութիւն են անում, առանց ինքեանք իսկ հասկանալու որոշապէս, և մեծ բառերով ու նախադասութիւններով այլոց կուրացնում։ Այդ է պատճառն, որ համոզմունքն ու գաղափարն էս հաստատուն չեն մնում մարդկանց մէջ, և ուրիշինն էս չեն հասկանում։ Վասն զի չկայ պարզ հայեցողութեամբ գաղափար և համոզմունք իւրացնել կամ կազմել։ Փիլիսոփայութեան պակասութիւնից է, որ յաճախ փիլիսոփայական գաղափարներն ու արտայայտութիւնները չհասկանալով, դատարկ են համարում, ըստ որում փոխանակ Ջանալ ըմբռնելու, անձին կուրութիւնը համարում են լաւագոյն. վասնորոյ և իշխում են դոցա վրայ միայն բառեր, որոնք ամեն օր լսելով՝ կարծել են տալիս թէ հասկանալի են, մինչդեռ բացատրութիւն պահանջուած ժամանակ կաղում և դժգոհում են։ Եթէ լաւ նայենք, կտեսնենք որ մեր ժողովրդի մէջ գրեթէ մեծ մասամբ միայն բառերի և գաղափարների թիւրիմացութիւնից է վէճ յառաջանում, գոգցես նոյն վիճակի մէջ լինէինք (նոյն իսկ ամեն յառաջադիմութեամբ), որպէս Գերմանիան, Ֆրանսիան 30—50 տարի առաջ...[2]։

1. „Empêchez une nouvelles scolastique de naître. S'entends par lá les embuches de mots, dans lesquels l'instinct de la vie réelle, de la vérité politique

Եւ այսպէս էլ կլինի, քանի որ մեր ուսուցող ու կրթողներն ոչ թէ մոռացել են սովորցնում՝ այլ մոռացածն, և վայ նորան՝ ով կկամենայ ինքն մոռացել տուեալ մոռացածի վրայ։

Արդէն յիշուեցաւ, որ փիլիսոփայութիւնը միայն խօսում է տուեալների վրայ և ոչ թէ նոր ինչ է տալիս. նա մշակում է գաղափարներ, մանաւանդ աստուածաբանութեան մէջ, որտեղ նա յաճախ պատմական տուեալների հետ գործ ունի և այդտեղ հետազօտութեամբ է զբաղւում և հետամուտ լինում դոցա օրինական ճանաչողութեան, որով նա նպաստաւոր է հանդիսանում և բնաւ ինքնուրոյն տեղ չէ բռնում այդտեղ։ Վասնորոյ և Գեոթէն քրիստոնէական կրօնն ամենայն փիլիսոփայութիւնից բարձր է համարում՝, թէև այդ չէ ժխտում փիլիսոփայութեան կարեւորութիւնն աստուածաբանութեան մէջ։ Հարկաւ փիլիսոփայութիւն ասելով, չենք հասկանում որ և իցէ թերամտութիւն կամ ծայրայեղութիւն, այլ ճշմարիտ մտածողութիւն, որ ճանաչելով փիլիսոփայութեան բոլոր արդիւնքներն և ուղղութիւններն, ըմբռնելով մարդի հոգին ու մարմինը, վերահասու լինելով նորա արտաքին և ներքին աշխարհին, գիտէ տալ իւրաքանչիւրին իւր տեղն և գտնել նոցա անժխտելի ներդաշնակութիւնը բացարձակի օրինապահութեան մէջ։ Աստուածաբանն ոչ միայն այդ ծայրայեղութիւնները կամ փիլիսոփայութեան միակողմանիութիւնները պէտք է ուսումնասիրած լինի, այլ և լաւ իւրացրած ունենայ փիլիսոփայական առարկաներն, որպէս տրամաբանութիւն,

---

est sacrifié a une logomachie puérile qui n'a que, l'apparence et point de corps. Combien d'âmes droites sont déja dupes de cette scolastique et s'y embarassent á plaisir! Combien surtout d'âmes serviles s'abritent aujourd'hui sous ce masque!" Edgar Quinet, Revolution religieuse au 19. siècle. 1857. p. 113. (առ Հագենբախի)։

1. «Քրիստոնէական կրօնն գործ չունի փիլիսոփայութեան մէջ։ Նա ինքն ըստ ինքեան մի հզօր էութիւն է, որով սուղուած և տանջուող մարդկութիւնն ժամանակ առ ժամանակ նոր ի նորոյ ջանալով ելել է։ Երբ մենք նորա այդ ներգործութիւնը խոստովանում ենք, նա բարձր է ամենայն փիլիսոփայութիւնից և նորանից ներցուկի կարօտ չէ»։

հոգեբանութիւն, բարոյաբանութիւն, (բարոյական փիլիսոփայութիւն) կրօնի փիլիսոփայութիւն, բնագանցութիւն, մինչև անգամ մարդաբանութիւն և այլն։ Եւ եթէ կարձ արտայայտելու լինինք, կտեսնենք, որ այս բոլորն ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ՝ ճանաչել զինքն և ոչ-ինքն, ներքին և արտաքին աշխարհն, և ապա թէ կարէ աստուածաբանութեան գործն իւր ուսումնասիրութեան կատարելութեան հասնելու ձգտել և օգտակար լինել նոցա, որոնք միակողմանիութեան մէջ տակ են անում, լինի այդ միակողմանիութիւնը «կրօնական» թէ «հակակրօնական», ապա թէ կարող է նա կռուել իսկական խաւարամտութեան դէմ, խաւարամտութեան՝ որ կեղծին ու մոլարին ընթացք է տալիս։[1]

7.

ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐՈՀՈՒՄԸ։

Իւրաքանչիւր գիտութեան բնոյթից ծագումն են որոշ ճիւղաւորութիւններ, որոնք և ներփակում են իւրեանց մէջ համատեսակ առարկաներ։ Ըստ այդմ աստուածաբանութեան մէջ ևս որոշւում են չորս գլխաւոր շրջաններ, որոնք են՝ մեկնական, պատմական, բանակարգական (սիստեմատիքական) և գործնական աստուածաբանութիւն։ Այդ տրոհումը բղխում է նոյն իսկ այդ գիտութեան բնոյթից, վասն զի հատատուելով քրիստոնէական պատմական հիմքի վրայ, պարտաւորւում է պատմական հետախուզութեամբ ուսումնասիրել քրիստոնէութեան ակբիւրը, հիմնադրութիւնն և աճումն ու զարգացումը մինչև մեր օրերը, մշակում է այդ տուեալը մեր հոգևոր բոլի մէջ, տալով նորան արժանի արտայայտութիւն ու յօրինուածք, և ապա այդ բոլորը պարզ և որոշ կապակցելով, հետևցնում է հատատուն հիմունքներ և սկզբունքներ գործունէութեան համար, սկզբունքից գործ, համոզմունքից արդիւնաւորումն, տեսութիւնից գործնականութիւն պահանջելով։

---

1. Այդ է բուն խաւարամտութիւնն ըստ գեօթէի։

Քանի որ աստուածաբանութիւնը գործ ունի պատմական տուեալի հետ, յայտ է՝ որ պատմութեան ուսումնասիրութիւնը նախընթաց կլինի։ Սակայն այդ ուսումնասիրութիւնը հաստատում է աղբիւրների ճանաչողութեան վրայ և թէ վերջինների ընդարձակութիւնն ի նկատի ունենանք, կտեսնենք որ պէտք կայ բաժնելու դոցա բուն պատմութեան հետամտութիւնից և չխառնել նորա հետ, թէև չէ կարելի պատմութեան խելամուտ լինել, առանց աղբիւրները հասկանալու։ Այսպէս ուրեմն մեկնութիւնն, որ հիմնական աղբիւրների (ս. Գրքի) վայելուչ ուսումնասիրութիւն է, և պատմութիւնն, որ քրիստոնէութեան գարաւոր կեանքի ամփոփումն է, տալիս են նիւթ բանակարգականի մշակելու համար և ապա վերջինի արդիւնքն է ստանում իւր կենսական գործադրութիւնն, այնպէս որ գործնական աստուածաբանութիւնը փայլում է իբրև պսակ աստուածաբանութեան։ Նորա մէջ է միայն լոյսի և ճշմարտութեան զէնքը գործունէութեան մէջ մտնում այդ գիտութեան բարձր նպատակը գործադրելու համար՝ աշխարհը մերձեցնելու այն պատկերին, որի տիպարը գտնում ենք քրիստոնէութեան աղբիւրի մէջ նախագծուած։ Հարկաւ՝ գործնական աստուածաբանութիւնը յարաժամ յենուելով նախընթացների վրայ չէ շատանում, այլ որքան յառաջ ընթանայ, նոյնքան պէտք է վերցնէ կեանքից և ս իւր զէնքը, վասն որոյ և եթէ որոշ չափով կարենք աստուածաբանութեան սկիզբ՝ մեկնութիւնը համարել, պարտաւոր ենք ասելու, որ վերջը չկայ բնաւ։ „Вѣкъ живи, вѣкъ учись“ առաւել և ս աստուածաբանին է ասուած։

8.

Ա. Մեկնական աստուածաբանութիւն եւ նորա առարկան։

Մեկնական աստուածաբանութիւն զբաղւում է աստուածաբանութեան աղբիւրի ուսումնասիրութեամբ, ըստ որում այն ամենն՝ ինչ վերաբերում է առ այդ, պատկանում է սոյն բաժնին, այն է՝ թէ մեկնելու արուեստը, (մեկնաբանութիւն) և թէ

առ հասարակ բոլոր օգնական գիտութիւններն, որոնց ծանօթութիւնն անհրաժեշտ է մեկնաբանին։ Այստեղ միակ նպատակն է ճանաչել ս. Գիրքն, որպէս զի յետոյ կարելի լինի հեշտութեամբ հանել նորանից այն ամենն՝ ինչ որ պէտք է թէ պատմական, թէ բանակարգական և թէ նոյն իսկ գործնական աստուածաբանութեան համար։ Գրեթէ նոյն կերպով ենք վարուում կամ պարտ ենք վարուել ամենայն առարկայի ուսումնասիրութեան ժամանակ, եթէ այդ հիմնաւոր և հաստատուն պէտք է լինի. նախ պէտք է ըստ ամենայնի ճանաչել աղբիւրն, ապա թէ նորանից օգտուել սեփական գործի համար, այլ և չափել ուրիշի աստծը ս. Գրքի հետ համեմատելով, որ կարենանք ամեն ինչ գիտաստութեամբ գիտենալ և ոչ մեքենայաբար սովորութեամբ կամ պատահական հեղինակութեան խոնարհուելով։

Ս. Գիրքը՝ մեկնական աստուածաբանութեան առարկան՝ ոչ թէ մէկ միայար գրուածք է, այլ ժողովածու է կրօնական—պատմական գրուածքների, զանազան ժամանակներից և զանազան հեղինակներից աւանդուած։ Դոցա միապաղաղ ուղղութիւն տուողն է Աստուծոյ խօսքը կամ աստուածային յայտնութիւնն, որ և է միակ կապը բոլոր պատմութիւնների, վասն որոյ և քրիստոնէական եկեղեցում ժողովուել է և ընդունուել (այսինքն՝ կանոնական համարուել) եկեղեցական նպատակի համար, ուստի և այդ է քրիստոնէական հաւատքի և կեանքի ուղղութիւն շնորհում։ Եթէ յիշեալ հանգամանքներին աւելացնենք և այն, որ կան նաև ս. Գրքի հաւաքածուից դուրս հեղինակութիւններ, որոնք մերժուած են եկեղեցուց՝ իբրև անհարազատ, այն ժամանակ պարզ կլինի մեզ համար, որ մեկնական աստուածաբանութիւնը պարտ է մեզ ճանապարհ բանալ՝ թէ գաղափար ունենալու ս. Գրքի վրայ և թէ լաւ ճանաչելու նորա գիտնական արժէքը։ Հարկաւ՝ տեսնելով ս. Գրքի մէջ զուտ պատմական հանգամանքների յառաջադրութիւն, չպէտք է մոռանանք նորա կրօնական բնաւորութիւնը, վասն որոյ և պէտքէ վերաբերուենք լրջութեամբ, թէպէտ և որոշ չափով նոյնն է պահանջում իւրաքանչիւր գիրք ընթերցելու ժամանակ։ Պէտք է միշտ

ի նկատի ունենալ՝ որ ս. Գիրքը երկնքից չէ իջել, չէր էլ կարող իջնել, վասն զի մարդկանց համար է, ըստ որում և մարդկապէս պէտք է տայ աստուածայինը, մարդկային խօսքերով, մարդկային մտապատկերներով և արտայայտութիւններով, որոնք պայմանաւորուած են ժամանակի, հեղինակների, հայեցողութիւնների, տեսակէտների և հանգամանքների հետ։ Այդ է պատճառն, որ այդ հին գրութիւնը խիստ մօտիկ է մեր բոլորի սրտերին, այլ և մեծապէս շահագրգռում է գիտնական հետազօտութիւնները։

Այստեղ ներկայանում՝ բացում է մեր առաջ աստուածային յայտնութեան մի մեծ շրջան, որ ներփակում է իւր մէջ բարձրագոյն վեհութեան նշոյլի տակ զարգացող մարդկութիւնն իւր ամենաստոր աստիճանից մինչև այժմեան հսկայական դիրքը։ Նորա ներգործութեան տակ և ս պիտի դիմէ մարդկութիւնն իւր կատարելութեան, քանի որ գիտատ կը լինի թէ ի՞նչ էր և ի՞նչ դարձաւ։ Վասն որոյ և սրբազան երկիւղածութեամբ պէտք է նայենք դորա վրայ, որ մեր կրթիչ դաստիարակ պիտի լինի՝ մարդկութեան հոգու աճման մի ամբողջ հասակի պատկեր տալով մեզ՝ աստուածային զօրութեան սկզբունքի վերայ հաստատուած։

Չհասկանալ ս. Գրքի արժանիքն և ձգել է նորա ճշմարիտ էութեան, երբ Հռովմէական եկեղեցին ասում է, որ իբր թէ ս. Հոգու մեքենայական յաւաջաւորութեամբ են շարժուել այն գրիչներն կամ ձեռքերն, որոնք գրոշմել են այդ ժողովածուի գրութիւնը։ Այդ գաղափարն՝ որ արտայայտւում է «ներշնչումն» [Inspiration] նորահնար բառով, իսպառ մերժելի է, մինչդեռ Հայաստանեայց եկեղեցու հինաւուրց սկզբունքն է թէ աստուածային փրկարար յայտնութեան քարոզիչները ս. Հոգովն է՝ («տուն տալով») որ արդիւնաբերել են աստուածային բանն, աստուածային շնորհը։ Վասնորոյ այդ յայտնութիւնն արտայայտում է զանազան հանգամանքների մէջ և իբրև գործիչ ընդդէմ ժողովրդական անբարոյականութեան ու ծիսապաշտութեան։ Այդ զուտ հիմունքի վրայ հաստատուելով է, որ ս. Գիրքը, չնայելով իւր նիւթական արտաքին փոփոխութեանց՝ ագէտ գրչակների

թիւրութեամբ՝ մնում է և կմնայ միշտ հիմնաքար Աստուծոյ արքայութեան իրականանալուն մարդկութեան մէջ։

Եւ ահա Հայաստանեայց եկեղեցու հեղինակաւոր չափն է այդ, որին հետ սերտ հաւատարմութեամբ պէտք է յարատևէ, միշտ յիշելով ս. Գրիգոր Լուսաւորչի խօսքը թէ՝ «ատեան կազմեաց աստուածային խրատուց ս. Գրովք ի լուսաւորութիւն ամենայն անձին [1]»։ Այս սկզբունքի վրայ է հաստատուած ճշմարիտ քրիստոնէութեան ամբողջ կազմութիւնն, ըստ որում և շեղումն ու խաւարն այն ժամանակ է յառաջանում, երբ այդ աստուածային շաւիղը մոռացուելով, շեղջակուսումեն բաբելոնեան ամբարտակներ, որոնք կարօտում են միայն նիւթական բուռն պաշտպանութեան, այլ լոյսի մի շողի հարուածի ներքոյ ցնդում։ Մարդկութեան պատմութիւնը, մանաւանդ քրիստոնէութեան գործունէութիւնն իւր որոշ շաւղի մէջ պարզապէս ցոյց է տալիս տեսնելու և հասկանալու ուշ ունեցողին, թէ յառաջադիմութեան և կատարելագործութեան ինչպիսի ուժեղ ընթացքներ են եղել մարդկութեան այդ բարձրագոյն դաստիարակի սկզբունքների զարկերից [2]։ Այդ է յաւէտ մարդկութեան գերակայի գաղափարական շրջակայութեան իրական տեսարանը [3]։

---

1 Ցաճախ. էջ. 52. տես և 63. 16. 5. 6. 40. 96. 181. ևլն։

2 Ճշմարիտ հաստատութիւնների էական պայմաններն են տևական և անփոփոխելի սկզբունքներն, որոնք որքան յաւիտենական են, նոյնքան մշտական է նորա վրայ հիմնադրուածը։ Դորա ապացոյց է ոչ միայն քրիստոնէութիւնն, որ վայր ի վերոյ թիւն տանել չի կարող, այլ նոյն իսկ մի փոքրիկ պատմական շրջան, որպէս Հայոցը։ Ենթարկելով պատահական փոփոխութիւններին, ս. Գրիգոր Լուսաւորչի ոգին տիրեց դարեր շարունակ և գոնէ ժամանակ առ ժամանակ ուժգին և ցնցիչ արձագանք տուաւ և կտայ։

«Գաղափարներն, որոնք աշխարհը շարժման մէջ պիտի դնեն, ասում է Բանկէ, յայտնւում են միշտ նախապէս այս ու այն առաջնակարգ հոգիների մէջ»։ «Ոչ թէ կատարեալ անպայմանութեան մէջ են երևում գաղափարներն աշխարհում։ Նոցա յառաջանալու ժամանակակէտը (մոմենտ) տիրապետում է նոցա գոյութիւնն ընդ միշտ. և այդպէս նոքա ապրում են ինչպէս որ կեանք են առել»։

3 Ս. Գրքի ժողովածուից դուրս կան այլ և այլ անհարազատ գրուած-

9.

ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԸ։

Քրիստոնէութեան միակ վարդապետարանն է Նոր Կտակարանն, որից պիտի ստանայ անմիջապէս անձնիւր քրիստոնեայ և իւրաքանչիւր քրիստոնէական հայեցողութիւն իւր վճիռը։ Սակայն Հին Կտակարանն ևս անհրաժեշտ առարկայ է ուսումնասիրութեան, վասն զի Նոր Կտակարանի միաստուածութեան գաղափարի և փրկագործութեան տնօրինութեան արմատները Հին Կտակարանի շրջանում են ստացել իւրեանց սնունդը կամ հանգոյցը։ Հին Կտակարանը ներկայացնում է մեզ այն կեանքն, որի մէջ աստուածային անմիջական ներգործութիւնը մարդկութեան փրկութեան համար զգալի կարիք է դառնում և պահանջ։ Աւելացնենք դորա վրայ նաև, որ Հին Կտակարանն այնպիսի մասեր ևս պարունակում է աստուածային յայտնութեան մերձաւորագոյն հիւսուածքով, որոնք իւրեանց վերջ կրօնական ընաւորութեամբ վարդապետական բարձր նշանակութիւն ունին քրիստոնեայի համար, մանաւանդ որ Հին Կտակարանի ոչ միայն պատկերացման եղանակն, այլ և լեզուական նրբութիւնները մեծ և թերևս գլխաւոր դեր են խաղում Նորի մէջ[1]։ Վասն որոյ և Նոր Կտակարանի ուսումնասիրութեան նախապատրաստութիւնը պէտք է լինի Հին Կտակարանով։ Բայց Հին Կտակարանն ինքն

ներ, որոնք ընդհանուր առմամբ կոչւում են պարականոն կամ տարականոն այսինքն՝ կանոնից դուրս (apocryph.)։ Այսպէս. «Կտակ Շմաւոնի», «Կտակ Ղևեայ» «Թուղթ Բառնաբայ» և այլն։ Տես. և Հ. Զարբհանալեան Մատենադարան Հայկական Թարգմ. 1889. էջ 180. Այդ անվաւերական գրուածներից են այն քաղուածներն, որոնք տարածուած են ժողովրդի մէջ «Գիրք որ կոչի ժողովածու» ասուած գրքով, տպեալ ի Կ. Պոլիս 3 դ անգամ։ Բայց և եկեղեցում կարգացուել են երկրորդական գրուածներ, որոնք փոքր ի շատէ օգտակար կարէին լինել ունկնդրաց։ Զորօր. «Թուղթ կիւրեղ եպիսկոպոսի». Ճաշոց էջ.368. Եսայեայ մահը. 560. Հանգիստ երանելւոյն Յովհ. 755 և այլն։

[1] Տես և. Hagenbach. անդ՝ էջ. 130.

ըստ ինքեան և իւր բարոյական իմաստասիրութիւններով ու հայրենասիրութեամբ, ժողովրդական կեանքով, նիստ ու կացով և աստուածակոչ անձանց կրթիչ գործունէութեամբ՝ ոչ միայն ուսումնական տէսակէտից շահագրգռական է, այլ և իբրև այդ ասպիճանի մէջ միակ և աննման, կրթիչ նշանակութիւն ունի՝ որպէս մարդկութեան հեռաւոր բայց բարձրագիր անցեալի ամփոփեալ պատկեր։

Ամբողջ Հին Կտակարանի մէջ ժողովուած են եբրայական կեանքի արդիւնք՝ պատմական, մարգարէական և բանաստեղծական գրուածներ, որոնցից ամենանորն և Քրիստոսից դարեր առաջ է հեղինակուել։ Եւ ահա այդ հնագոյն ժամանակից բանում է մեր առաջ մի բուրաստան՝ որի անուշահոտութիւնները վայելում ենք ըստ ամենայնի։ Թող բաժնեն այդ գրուածները զանազան տեսակների, ըստ Հրէից արդեօք՝ օրէնք (թօրահ), մարգարէք (նբիիմ) և սրբագիրներ (քրթուբիմ։ Hagiograph։) թէ ըստ ոմանց՝ պատմական, մարգարէական և բանաստեղծական, և կամ թէ աստուածպետական - պատմական, աստուածպետական - ոգեւորեալ և բանաստեղծական-վարդապետական[1], ոչ մէկն և դիպող չի լինիլ. կարական բաժանումների տեղիք չկայ այդ գեղեցկահիւս պատկերի մէջ, որտեղ քայլ առ քայլ խօսում է մարդկային հոգին իւր բազմակողմանի ելևէջներին հանդիպելով։ «Արդարև, ասում է Հերդեր, մի նուրբ թել է, որ ս. Գրքի՝ մանաւանդ Հին և Նոր Կտակարանի այն տեղերով է անցնում, որոնց մէջ նկար, գործ, պատմութիւն ու բանաստեղծութիւն խառնւում են։ Կոպիտ ձեռքերը հազիւ կարենան հետամտել նորան, իսկ զարգացնել բնաւ և ոչ, առանց պառակտելու և շփոթելու, առանց ցաւեցնելու բանաստեղծութիւնները կամ պատմութիւնն, որոնց նա ի մի ամբողջ է հիւսում։ Այդ միահիւս կապակցութիւնն է հիմունք, որի շաւիղը բռնելով մարդկութիւնը պիտի կրթէ այդ ծաղկոցի մէջ իւր մանկութիւնն և ստանայ իւր հասակը։

---

1 Hagenbacp. անդ· 133

10.

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Հին Կտակարանի հորիզոնը դարերի ընդարձակ շրջանով է ներփակւում և միայն լրացած ժամանակի վերջակէտում ստանում իւր թագն ու պսակը։ Նոր Կտակարանն է այդ պսակակիրն, որի հովանու տակ գործունէութեան մէջ մեզ պատկերանում է միայն մի սերունդ։ Այնտեղ ժողովուրդն նախապատրաստւում է դիմելով դէպի իւր ակնկալածն, այստեղ ամենայն ինչ իւր կատարումն է ստանում Քրիստոսի անձնաւորութեան շուրջ։ Այնտեղ ձգտում է ժողովուրդն Աստուծոյ ժողովուրդ դառնալու. այստեղ Աստուծոյ Որդին հիմնադրում է Աստուծոյ արքայութիւնն և իւր անուան ներքոյ իւր համայնքը։ Այստեղ աստուածութիւնն է մեր մէջ և մարդ ազատւում է իւր մեղսական ծանր կապանքներից և անելանելի անկումից հզօր օգնութեամբ և ստանում իւր աստուածանալու խարիսխը հաւատքի, ըստ որում սիրոյ և յոյսի պայծառութեան մէջ։

Աստուածային սէրն այլ ևս չէ սահմանափակւում մի խումբ ժողովրդի մէջ, նա երևալով իւր ամբողջ վեհութեամբ՝ տարածւում է հանուր մարդկութեան վրայ. նա փրկութիւնն է մարդկութեան։ Ներկան ու ապագան այստեղ են իրար գրկախառնում։ Այստեղ «Աստուած յերկիր խոնարհեցաւ և զմարդիկ յերկինս վերացոյց [1]». տիեզերական մի վեհ խորհուրդ իրագործուեցաւ, զի «միաբանեցին երկինք և երկիր ի մահու միածնին Աստուծոյ [2]». աստ մարդացաւ Աստուած և մարդն աստուածացաւ։ Մինչդեռ մարդկանց միայն ոյժ ու բռնութիւնն էր միացնում, այստեղ խոնարհութիւնը. հսկայ էր պէտք ժողովելու համար, սպանութիւնն էր միջոց անհնազանդներին սարսեցնելու համար. այստեղ ընկնում է հովիւն և ժողովւում է նորա հօտը. խաչահան է լինում և ամենքը հնազանդւում են. թաղւում է և նորա

---

1 Ագաթանգ. Թիֆլիս 1882. էջ. 392

2 Եղիշէ. անդ. էջ. 286.

համայնքն է կազմում յարուցեալի շողերի ներքոյ։ Աստ է վերածնութիւն անձի ի պատկեր Աստուծոյ, ժողովրդի՝ ի սեփականութիւն նորա, մարդկութեան՝ յարքայութիւն գերակային։

Ամբողջ Նոր Կտակարանը վերհութիւն է արտաշնչում։ Նորա պատմական կտորների հետ հիւսուած է վսեմաթռիչ վարդապետութիւնն, որ իբրև գրութիւն՝ իւր գեղեցկութեան բովանդակութեամբ, գուշակում է նորա կենդանի խօսքի գերակատարը։ Նա ներփակում է իւր մէջ բարոյաբանական մի ամբողջ բանակարգ՝ մարդկութեան իբրև պարգև աննման։ Մի համեմատական հայեացք ամբողջ Նոր Կտակարանի և պարականոն «Յայտնութեան 1» վրայ՝ մեծաբարբառ վկայութիւն կլինի առաջնի բաքանչելի բարձրութեան, որից յանկարծ իջնում է դիտող հայեացքը դէպի խորութեան յատակը։ Նոր Կտակարանը մարդկութեան բարձրագոյն ներկայացուցչի կտակարանն է. նա իւրաքանչիւրի աւետարանն է և երջանկութեան աւետաբեր 2։

11.

ՄԵԿՆՈՒԹԵԱՆ ՕԳՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ.

ա. Հիմնական լեզուները.

Ս. Գրքի ընդարձակութիւնն ի նկատի ունենալով, անշուշտ կարիք պէտք է ունենանք և միջոցների. դորա են հիմնական լեզուներն, իրաբանական ծանօթութիւնք այն է՝ հնաբանութիւն և աշխարհագրութիւն, նոյնպէս և ս. Գրքի գրուածների ծագման, ժամանակի և այլ պարագաների տեսութիւն, որ է քննաբանութեան գործը։ Իսկ մեկնութեան գործին անմիջապէս սերտ կապուած

---

1 Հայոց միջին դարերի (Ներսէս Լամբրոնեցու) թարգմանութիւն է։

2 Հանրայայտ է, որ Նոր Կտակարանի բարոյականը սկզբից ի վեր շարունակ վերհագոյն բարձրութեան արժանիք է վայելել։ Գիտնականները մեծ յարգանքով են խօսում դորա վրայ, ըստ որում մարդկութեան պատմութեան մէջ չկայ՝ դորան գոյզն ինչ նման կամ մօտիկ բարոյաբանական բանակարգ (սիստեմ)։

է մեկնաբանութիւնն, որ է մեկնութեան վարժութիւնը կամ գիտնական արուեստը [Hermeneutik]:

Լեզուական նախապատրաստութիւնն առաջին տեղն է բռնում: Հին Կտակարանի հիմնական լեզուն է եբրայեցերէնն, իսկ Նորինը — յունարէնը:

Եբրայեցերէնն անհրաժեշտ է մանաւանդ նորան, որ կամենում է գիտնական ուսումնասիրութեան առարկայ դարձնել ս. Գիրքը, ոչ միայն այն պատճառով, որ Հին Կտակարանն եբրայեցերէն է, այլ և զի Նորն էլ ըստ եբրայեցերէնի ոճին է գրուած և կամ նախապէս եբրայեցերէն խօսուած կամ մտածուած: Լեզուաբանական շահով իսկ եբրայեցերէնը հետաքննական է, վանորոյ և գերմանական բոլոր գեմնազիաներում աւանդւում է բաւականաչափ: Այդ լեզուն ուսումնասիրողք առանձին հաճոյք են զգում ընթերցանութիւնից, այնպէս որ Հերդեր ասում է. «Իրաւացի են ասել՝ թէ եբրայեցիք խմում են աղբիւրից, Յոյներն՝ աղբիւրից հոսող ջրից. իսկ լատինք՝ ճահիճներից: Եբրայական լեզուն լաւագոյն և մաքրագոյնն է, զի չէ մուրում և ունի իւր սեփական գոյնը: Նա միւսների առաջ պարզ է, բայց վեհափառ և տիրական . . . .[1]»

Ուրիշ սեմիտական լեզուների նման գրւում է աջից ձախ և մեծ մասամբ եռատառ արմատական բառեր ունի. նորա քերականական փոփոխութիւնք, մինչև անգամ խոնարհումն ու հոլովումը բոլորովին առանձնայատուկ են և նմանութիւն չունին այլ լեզուներին:

Ինչպէս որ առաջ կարծում էին թէ եբրայեցերէնը մարդկային առաջին լեզուն է եղած (Հայք հայերէնն էին համարում առաջինը), եղան նաև ասողներ՝ որ միայն Հռոմէական եկեղեցու մէջ կարէ լինել եբրայական լեզուի ուղիղ քերականութիւն: Հռոմէական եկեղեցու բռնապետական հրամանն, որ իբրև թէ լատին թարգմանութիւնն է միայն «ներշնչուած[2]», չկարէր ան-

---

1 Hagenbach. էջ. 139.

2 Տես. Տրիդենտեան ժողովի գործերը և Iud. le Plat Monumentorum ad

հետևանք մնալ և ահա ձգտումն յառաջացաւ լատինը բնագրով քննադատելու։ Վասնորոյ և բնագրի [1] ուսումնասիրութիւնը նոր ժամանակներս սկսուեց։ Հին հայերը սակաւ էին ուշադրութիւն դարձնում եբրայականին, եօթանասնից թարգմանութիւնն էր գլխաւոր տեղ բռնում։ Լաւ ուշադրութիւն դարձնելով Ե. դարի պատմագրների տեղեկութեան, կտեսնենք որ Մեսրոպ իւր աշակերտների հետ Պաղեստին գնալով՝ անշուշտ եբրայեցերէն պէտք է ուսումնասիրած լինի, մանաւանդ որ ասորերէն իմացողը սովորելու դժուարութիւն չունէր։ Նաև Հայոց թարգմանութիւնն արուած է ասորի և յոյն թարգմանութեանց և եբրայեցերէն բնագրի համեմատութեամբ, ըստ որում կան այնպիսի կտորներ նորա մէջ, որի համաձայն մինչև անգամ եբրայեցերէնն ուղղելի է։ Իսկ տարբերութիւնք թէ եօթանասնից թարգմանութիւնից և թէ եբրայական բնագրից խիստ շատ են։

Ե. դարից անցնելով՝ յայտնի է որ Գրիգոր Տղան եբրայեցերէն գիտէր, թերևս նորա ընկերներն ևս անմաս չեն մնացած այդ պատրաստութիւնից։ Այստեղից արդէն պարզ երևում է, որ եբրայեցերէնի կարևորութիւնն Հայոց մէջ միշտ զգացուել է և ըստ կարելւոյն զբաղմունքի նիւթ դարձել։ Մինչին դարերում գլխաւորապէս Հրէաների մէջ էր շարժումն յառաջացել իւրեանց լեզուի ուսումնասիրութեան, այն ևս հիւսիսային Ափրիկէում, և ի Սպանիա և ի Ֆրանսիա, որտեղից դուրս եկան և նշանաւոր եբրայագէտներ, որպէս Եոնա բեն Գաննախ, Աբեն Եզրա և այլք։ Գտնուեցան դոցա հետ և այնպիսիք որոնք ապացուցին՝ թէ բնագրի ձայնաւորանիշները [2] յետին ժամանակի աւելացումներ

---

historiam concilii Tridentini collect. Lovanii 1783. 4 III. 395. ու Bellarmin de verbo Dei 2 գլ. 10:

1 Եբրայական բնագրի լաւագոյն հրատարակութիւնն է ՀաՀնինը. լաւ է և բիբլիական ընկերութեան տպագրութիւնը. կայ և ռսերէն թարգմանութեամբ հանդերձ։

2. Եբրայեցերէնը ձայնաւորներ չունի և հեշտ ընթերցանութեան համար ապա սկսել են ստորև կէտերով և գծիկներով նշանակել այդ հընչիւնները։

են, ըստ որում և Հրէաներից հալածուեցան։ Սակայն և այնպէս ԺԴ—ԺԵ· դարերում Եւրոպայի հրէաները զարկ տուին այդ լեզուի հետազօտութեան, մինչև որ գերման վերանորոգիչների համար մաքառման զէնք դարձաւ Հռովմայ դէմ։ Բէուխլինից (ԺԶ· դար) յետոյ բազմացան եբրայագէտներն և անցեալ դարում արևելեան լեզուները նոյնպէս ուշադրութեան արժանացան, մանաւանդ այնոքիկ, որոնք այդ լեզուի ցեղին են պատկանում և բացատրութեան միջոց կարէին լինել։ Մեր դարի հռչակաւոր եբրայագէտն է Գեզենիուս (+1842), որի քերականութիւնն [1] քսանուհինգերորդ տպագրութեամբ լոյս ընծայեց Հալլէի համալսարանի նշանաւոր եբրայագէտն Կաուչ։ Այժմ իւրաքանչիւր համալսարանում կան այդ լեզուի համար 3—4 դասախօսներ։ Նշանաւոր գիտնականները գիտեն այդ լեզուի ուսումնասիրութեան համար գոնէ ասորերէն ու արաբերէն ևս։

Գալով Նոր Կտակարանին՝ նկատելի է, որ թէ աւետարաններն և թէ թղթերն ոչ թէ բուն դասական յունարէն են գրուած, այլ ժողովրդական բարբառի ձևակերպութիւնն է դորա մէջ մարմնացած։ Այդ բարբառը զարգացել է Աղեքսանդրիայի շրջանում և քրիստոնէական գոյն ստացել՝ եբրայաբանական ներկի տակ, այնպէս որ նոյն իսկ դասական յունարէնի բառերը յիրարկւում են, բայց յաճախ այլ մաքով։ Սակայն զանազան գրութիւնք տարբեր ոճեր ունին, այսպէս Ղուկասի աւետարանն և եբրայեցոց թուղթը բաւական ազատ են եբրայաբանութիւններից, Մատթէոսի աւետարանն ընդհակառակն։ Մի ժամանակ դեռ ևս չէին ուզում ընդունել որ այդպիսի ոճ է տիրապետում Նոր Կտակում, չկարենալով այդ համաձայնեցնել մեքենական «ներշնչման» [2] տե-

---

1 Hebräische grammatik. Leipzig 1889: Ունի և բառարան 11· տպագրութեամբ 1890· Նորերս հրատարակեց մի նոր բառարան առաւել ամփոփ՝ Ենայի համալսարանի պրոֆեսոր Զիգֆրիդ։

2 Հռովմէական եկեղեցին իւր բռնապետական խաւարն ապահովելու համար է, որ շարունակ արգելում էր աշխարհականաց նոյն իսկ կարդալ ս· Գիրքը· այսպէս Գրիգոր Թ· (1229), Կղեմէս ԺԱ· (1713) և այլք։ Պիոս Է· ուղղակի չէ թոյլատրում որ և իցէ թարգմանութիւն կարդալու՝ առանց իւր աթոռի համաձայնութեան։ Շատերը թունդ հակառակել են

սութեան հետ, սակայն շուտով այդ նախապաշարմունքը խորտակուեց և Ենայի համալսարանի դասախօս Գլասիուս (+1656) առաջին անգամ տուաւ Նոր Կտակի լեզուական առանձնայատկութեանց հաւաքածու։

Այսպէս ուրեմն ս. Գրքի ուսումնասիրութեան միջոցներն ընդարձակուած են և Հայոց եկեղեցին լիակատար ազատութիւն է տալիս և պատուիրում նորանով և միայն նորանով կրթուելու, այդ հրաշահիւս բուրաստանի ծաղկանց մէջ շրջելով՝ անձի կատարելագործութեան վրայ խորհելու և ապա գործելու . . .։

12.

Բ. ՀՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՅ։

Մի գիրք հասկանալու համար դեռ բաւական չէ գիտենալ միայն լեզուն, այլ անհրաժեշտ է նաև նիւթի նախապատրաստութիւն ունենալ։ Եւ ահա մինչդեռ բառեր ու ոճեր բացատրելու համար հերիք է մեզ քերականութիւնը, նիւթի համար կարևոր է ճանաչել թէ բնական և պատմական և թէ աշխարհագրական ու

նաև բիբլիական ընկերութեանց գործունէութեան։ Իսկ ս. Գրքի խրթնութեանց բացատրութիւնը միայն եկեղեցականաց վերապահելով, քահանաներին գլխաւոր տեղն են տալիս բերանացի առաւել՝ քան թէ ս. Գրքով կրթելու ժողովուրդը։ Կան բողոքական աղանդներ ևս՝ որ նման տեսութիւն ունին ս. Գրքի ընթերցանութեան մասին, որպէս Երերեան (Quäker) կոչուածներն, որոնց հիմնադիրն է մի անգլիացի կօշկակար Գէորգ Ֆոկս (†1690)։ Վենետկի Մխիթարեանք որոշած ունին թէ ո՛ր հասակում և ս. Գրքի ո՛ր մասը կարեն իւրեանց եկեղեցականք կարդալ։ Այս բոլորը հարկաւ յառաջանում է ս. Գրքի վրայ թիւր և վայր ի վերոյ հայեացք ու վարդապետութիւն ունենալուց, հակառակ առաքելոց դարին և վարդապետութեան . . . .։

1 Այժմ առաջին տեղն է բռնում Վիների գիտնական քերականութիւնը՝ Grammatik des neutestamentl. Sprachidioms, als sichere grundlage der neutestamentl. Exegese, որի 8դ հրատարակութիւնը հոգում է այժմ Ենայի համալսարանի դասախօս Շմիդել։ Դորա հետ անհրաժեշտ ձեռնարկէ Lexicon graeco—Latinum in libros novi testamenti auctore C. L. W. Grimm. Lipsiae 1888. Իսկ Նոր Կտակարանի բնագրի հրատարակութեանց մէջ առաջնակարգ են Տիշենդորֆի բազմատեսակ տպագրութիւնք՝ մանրազնին փոխայլակներով (վարիանդ)։

քաղաքական, միմեանց գրական և անտեսական յարաբերութիւնք։ Հրէից ազգի պատմութիւնն ևս անհրաժեշտ է ուսումնասիրել նախ քան մեկնութեան շրջանի մէջ մտնելը, սակայն այդ մասին խօսելու ենք պատմական աստուածաբանութեան մէջ։ Այստեղ միայն ի նկատ պէտք է առնենք բուն իրաւաբանական ծանօթութիւններն, որոնք սովորաբար տրւում են ս. Գրոց հնաբանութեան մէջ միասին։ Ամբողջ հրէական և նորա հարևան երկրներն այլ և ժողովրդի նիստ ու կացը, բարոյքն ու կեանքն, որոնք ս. Գրքի հորիզոնի մէջ են, նիւթ են կազմում այդ առարկայի։ Եւ եթէ, քանի մի կողմնակի աղբիւրներից զատ, ս. Գրքի հնաբանութեան աղբիւրն է դարձեալ նոյն ինքն ս. Գիրքն, այդ ևս ունի իւր լաւ կողմն, վասն զի նա թէ միջոց է և թէ նպատակ ուսումնասիրութեան։ Սակայն իբրև աղբիւր նեցուկ են ս. Գրքին նաև Յովսեպոս Ֆլաւիոս փարիսեցին, որ մի հրէայ քահանայի որդի էր և ծնուել է Քրիստոսի 37 թուին։ Նա ականատես է եղած նոյն իսկ հրէական պատերազմին (66-ին) և ունի գրած ոչ միայն գորա պատմութիւնն և ուրիշ երկեր, այլ և թողել է իւր ազգի պատմութիւնն մինչև Ներոնի վերջին տարիները «Հնաբանութիւն Հրէից» խորագրով։[1] Ապա նպաստաւոր տեղեկութիւններ են տալիս նաև արևմտեան գրողներ, ինչպէս՝ Հերոդոտ (484 – 406 Քրիստոսից առաջ) իւր պատմութեամբ՝ որ ինն գիրք ունի, Ստրաբոն (66 Քրիստոսից առաջ՝ մինչև 24՝— յետոյ) իւր աշխարհագրութեամբ, այլ և Պտոլոմէոս, Դիո Կասիոս, մանաւանդ Պլինիոս երէցն (23 —)՝ իւր բնապատմութեամբ և այլք։ Առաւել ևս նշանաւոր է Եւսեբիոս Կեսարացին (+340), որ գրաւ առաջին հիմունքը ս. Գրոց աշխարհագրութեան՝ իւր տեղագրութեամբ։ Դոցա հետ կարեն յիշարկուիլ նաև զանազան

---

1. Գիրք պատմութեանց Յովսեպոսի Երրայեցւոյ արարեալ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս և աւերման Երուսաղէմի, թարգմ. ի լատին. բարբառոյ ի Հայոց լեզու ի ձեռն ուրումն Իլավացւոյ Ստեփաննոսի Բանին Աստուծոյ սպասաւորի . . . . Միաբանի Քրիստոսաէջ սրբոյ Գահիս... Ս. Էջմիածնի 1787.

ուխտագնացների գրութիւնք, որոնց առաջելախառն օրինակներ ունինք Դ. դարից սկսեալ[1]։

Քանի որ հնաբանութեան նիւթն է ոչ միայն ժողովրդի կեանքն, այլ և նորա երկիրը, պարզ է որ առաջին տեղը պէտք է բռնէ նորա մէջ՝

ա. Ս. Գրոց աշխարհագրութիւնը, գլխաւորապէս Պաղեստինն իւր զբաղմունք դարձնելով։ Այդ երկրի հնագոյն անունն է Քանան, որ Քամից է ստացել իւր ծագումը (Ծն. ժ. 6)։ Պաղեստին անուամբ հասկանում ենք Յորդանանի, Միջերկրական ծովի և Լիբանանի մէջ եղած երկիրն, որ այլապէս կոչւում է նաև «երկիր Յուդայ», լայն մտքով «Հրէաստան» և այլն։ Պաղեստինի հարևան երկրներն ևս այդ աշխարհագրութեան մէջ են մտնում, ինչպէս Արաբատեան երկիրը, Միջագետք, Ասորեստան, Պարսկաստան, Արաբիան, Եգիպտոս և այլն։ Իսկ Նոր Կտակի աշխարհագրութիւնն առաւել հեռուն է գնում՝ մինչև իսկ Փոքր Ասիայ, Յունաստան, Մակեդոնիա և Իտալիա։ Հարկաւ տեղագրութիւնն (Topographie), մանաւանդ նշանաւոր վայրերի նկարագրութիւնն առանձին ուշադրութեան պէտք է առնուի։ Նոյնպէս և բնութիւնն ինքն, Պաղեստինի երկրաբանական օդաբանական հանգամանքներն, որոնք ժողովրդի հոգեկան կեանքի նկատմամբ էական դեր են կատարում, կարևոր տեղ պէտք է բռնեն[2]։ Իսկ ապա դորա հետ կապւում է և ժողովրդի կեանքը։

բ. Ս. Գրոց ազգագրութիւն (etnagraphie), որ պէտք է նկարագրէ ժողովրդի ցեղական բնաւորութիւնը, բարոյքն ու սովո-

---

1. Տես և К. д-ръ Гейке, Святая земля и Библія. Описаніе Палестины и нравъ ея обывателей, съ рисунками; пер. съ англ. Спб. 1893. Եբրեմ և լեզուի համար Штейнбергъ. Полный курсъ еврейской грамматики для систематич. изученія языка ветхаго завѣта, его исторій, этимологіи и синтаксиса. Вильно. 1871. և բառարան Вильно. 1878.

2. Անհրաժեշտ ձեռնարկ է համաբարբառը (բառարան գոյականների և բայերի). կայ միայն Նոր Կտակինը՝ Զմիւռնիայ 1848, իսկ ամբողջ ս. Գրքի՝—ապւում է Երուսաղէմում և լոյս են տեսել արդէն քանի մի տետրեր։

բութիւններն, այն ևս ոչ միայն արևելքի՝ այլ առհասարակ հին աշխարհի։ Երկրագործութիւն, որս, անասնաբուծութիւն, ձրկնորսութիւն, որոնք ներփակում են իւրեանց մէջ ժողովրդի յարաբերութիւնը դէպի բնութիւնը. նոյնպէս և բնակարան, զարդ, զգեստ, սպասք, սնունդ, արհեստ, ճանապարհորդութիւն և այլն, այսինքն այն ամենն, ինչ որ ձեռք է առնում մարդ իւր կարիքները հոգալու համար։ Այնուհետև մարդկանց յարաբերութիւնն իրար հետ՝ պտակ, անային և հասարակական կամ ընկերական կեանք, առևտուր, սարկութիւն, հիւրասիրութիւն, բարեկամութիւն, պատերազմ կամ յարաբերութիւն օտարաց հետ և այլ այդպիսի մանրամասնութիւնները բանում են մեր առաջ անցած գնացած ժամանակի կենդանի տեսարանը։

գ. Ժողովրդի ներքին յարաբերութիւնների մէջ մեծ տեղ է բռնում այն վերաբերմունքն, որ նա ունի դէպի սրբութիւնները։ Հին ժամանակի կրօնների սրբութիւնք նոյնպէս դեր ունին այստեղ, մանաւանդ համեմատութեան համար, առաւել ևս այնոքիկ, որոնք յիշւում են նոյն իսկ ս. Գրքում։ Դոցա հետ սերտ կապուած են աստուածապաշտութեան վայրերն, ինչպէս տաճար, վերջերում ժողովարան և այլն. աստուածպաշտութեան ժամանակներ և աստուածպետական անձինք, որպէս դատաւոր, մարգարէ, քահանայ, Ղևտացի և այլն. աստուածպաշտական ծէսեր ու գործողութիւններ, այն է՝ զոհ, թլփատութիւն և այլն։ Քանի որ օտար կրօնների սրբութիւնք ևս Հրէից մէջ ուշադրութեան են առնուել՝ յաճախ ջերմապէս, յայտ է ուրեմն որ զանազան բազմաստուածեան պաշտամունքներ ևս մտնում են այս տեսութեան մէջ՝ ինչպէս եգիպտական անասնապաշտութիւնը, Բահաղ, Մոլոք, Աստարտ, նաև կախարդութիւններ և այլն։ Նոր կրտակարանը կապում է իւր տեսութիւնը նաև յունական առասպելների հետ, ուստի դոքա ևս դուրս չպէտք է մնան։

դ. Սրբութիւնների և իրար վերաբերմունքի նկատմամբ ուշադրութեան պէտք է առնուի նաև ս. Գրոց իրաւաբանութիւնն ու քաղաքականութիւն, համեմատութեան մէջ դնելով դոցա ուրիշ ազգերի իրաւաբանական հաստատութեանց ու կազմակեր-

պութիւնների հետ։ Այս մասը գրեթէ նոյնանում է սրբութիւնների շրջանի հետ, վասն զի աստուածպետական աշխարհում սրբութեան ու պաշտամունքի շրջանի մէջ են պտտւում բոլոր օրէնքները։ Սրբութիւններից ու պաշտամունքներից անբաժան են։

Ե. Գիտութիւն և արուեստ, ոչ միայն Հրէաների, այլ և նոցա հետ ընդհարուող ազգերի։ Ս. Գրքի բանաստեղծական մասերի հետ՝ հայեացք պէտք է ձգել և Հրէաների բանաստեղծական և շեշտական արուեստի վրայ, մանաւանդ որ այդ առանձնապէս հետաքննական է իւրաքանչիւրի համար։ Իսկ Հրէից աստուածաբանութիւնն և դորա վերջին ժամանակների զարգացումը Փարիսեցոց և Սադուկեցոց մէջ և Աղէքսանդրիայի Փիլոնեան փիլիսոփայութիւնն իսկապէս պատկանում են Հին Կտակի դասանանքի պատմութեան, թէ և աւելորդ չի լինիլ այստեղ ևս հակիրճ յիշատակութեան տալ։ Բայց այստեղ օգնական է գալիս մի ուրիշ աղբիւր՝ որ է Թալմուդը (=վարդապետութիւն), որ մի ժողովածու է Հրէական զանազան աւանդութիւնների և իւր երկու մասով (Միշնա և Գեմարա) ծագել է հետզհետէ և կազմուել Բաբելոնի և Տիբերիասի Հրէական հակաքրիստոնէական դպրոցների ներգործութեան տակ (մեծ Թալմուդ՝ խմբագրուած շուրջ 550 ին և փոքրը՝—շուրջ 350)։ [1]

Այսպիսով հնարանութիւնը ցրուած նիւթ ունենալով, պահանջ է յառաջացնում՝ ջանալ այդ բոլորն ի մի կապել և իբրև մի տեսարան բանալ ընթերցողի առաջ։ Այս առաւել հեշտ է Հայոց դպրոցում, վասն զի Հայոց հնարանութեան պակասութեան պատճառով, մանաւանդ որ Հայք գրացի արևելեան ազգ են և յաճախ ունին նման հնարանական նիւթեր, կարելի է ամբողջ ընթացքում կապել Հայոց անցեալ կեանքի և պատմական տեղեկութիւնների հետ։ Այս հնարանութիւնն աւանդուելով դպրոցական Դ. կամ Ե. դասարանում՝ կնպաստէ ուշադրութիւն զարթեցնել աշակերտների մէջ դէպի հնարանական հետազօտու-

---

1 Տես. և Hagenbach անգ. էջ 149—152։

թիւնք կեանքի մէջ և հասկանալու հնարաւորական սովորութիւնք, ըստ որում և ուսածը կարէ իբրև ծրագիր ծառայել։

Ազգի ճշմարիտ կեանքը չի կարելի այլապէս ներկայացնել մեզ՝ եթէ ոչ նոյն իսկ հնարաւորութեամբ. այդ է անհրաժեշտ նպաստ՝ պատմութիւնը լաւ հասկանալու համար, վասն զի գրեթէ միայն նա է տալիս մեզ ժողովրդի ներքին կեանքի տեսարանը։ Պատմական սոսկական դէպքերի և պատահարների վրայ յենուելով՝ չենք կարող ուղիղ պատմական դատողութիւնների եզրակացութեան գալ, մինչդեռ պատմութիւնը գլխաւորապէս արտաքին յարաբերութեանց մէջ է պտտում՝ որի հիմունքները հետևանք են ներքին կեանքի կապակցութեան։ 1

13.

Գ. ՔՆՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՔԻ։

Կարդալ և հասկանալ ս. Գիրքը, մանաւանդ յիրարկել իբրև աղբիւր աստուածաբանական հարցերի՝ չէ կարելի, եթէ քննաբանօրէն չճանաչենք նորա գրուածների որպիսութիւնը, հեղինակներին և գրութեան պարագաներն և այլն։ Գիտենք որ ս. Գրքի բաղկացուցիչ գրուածները զանազան ժամանակ և զանա-

---

1 Քանի որ օտար գրականութիւնից Ֆրանսերէնն է առաւել մեծ շրջանի մատչելի, յիշենք քանի մի գրքեր հնարաւորութեան ուսումնասիրութեան համար. A. Driou, Iérusalem et la Terre sainte. Limoges 1877. Guèrin, Description gèographique, historique et archèologique de la Palestine. Paris 1880.—La terre sainte, son histoire, ses sauvenirs ses sites, ses menuments. Paris 1882. Pierotti, la Bible et la Palestine au xix. siècle. Nîmes, 1882. Al. Berthoud, la poèsie de la Bible, Lausannt 1880. Բառարան՝ E. Spol Dictionnaire de la Bible ou explication de tous les noms propres hist. et gèogr. de l'ancien et du nov. test, Paris 1878. Rabbinowicz, Lègislation civile du Talmud. Paris 1873. Թերևս և՝ Reusens. Manùel dárchèologie chrètienne. Paris 1890. Ռուսերէն. Верховскій. Библейкій словарь, содержащій библейскую пропедевтику, исторію, географію, древности, хронологію и пр. Спб. 1876. Петровъ. Библейск. атласъ и библейскій историко—геогр. словарь. Спб. 1872. Ճանապարհորդութիւններ ունի Успенскій, сочиненія. 4 тома. Спб. 1856.

զան յարաբերութիւնների մէջ են ծագել, սակայն այդ դեռ բաւական չէ. պէտք է նաև որոշել այդ ամենն ըստ կարելւոյն մանրամասնօրէն, ապա թէ ոչ կխառնենք էականը՝ երկրորդականի, պատմական պատահարները՝ բարոյական կարգի, ժամանակաւոր ուղղիչ օրէնքներն՝ աստուածային պատուիրանների, առակաւոր նկարագրութիւններն՝ իսկական պատկերների հետ, և հէնց այդ շփոթութիւններն են՝ որ մեծամեծ թիւրիմացութիւնների պատճառ են լինում։

Քննաբանութեան մէջ ունինք երկու գործ. մէկ ս. Գրոց ամբողջ հաւաքածուի հետազօտէ ժողովման, գրչագրերի, թարգմանութեանց, տպագրութեանց ծանօթութիւն, մէկ ևս հետազօտել իւրաքանչիւր գրուածի ժամանակը, տեղն ու գրութեան պարագայք, հեղինակի անձնաւորութիւնը, նորա գրութեան նպատակն ու ծրագիրն, այլ և ոճն և արտայայտութեան եղանակը, — հանգամանքներ, որոնց անյայտութեան մէջ կանյայտանայ նաև գրուածի էութիւնը։ Ամբողջ քննաբանութիւնը թէ բնականաբար և թէ հեշտութեան համար երկու շրջան է անցնում՝ այն է Հին Կտակի և Նոր Կտակի ուրոյն ուրոյն։

«Քննաբանութիւն» բառը թերևս շատերի համար արտայայտիչ չլինի այս գիտութեան բուն գաղափարին, սակայն ճիշդ համապատասխան անուն ևս գտնել դժուար է առհասարակ։ Յունական հին գրողներից վերցնելով «ներածութիւն»[1] (исагогика՝ «էյ. սագոգէ») անունը՝ յիրարկեցին և գերման գիտնականները, բայց թէ որքան որոշ է այդ բառի մէջ յիշեալ գիտութեան գաղափարն՝ ակներև է. վասն զի ներածութեան մէջ կարէ ամենայն նախապատրաստութիւն մտնել բոլորովին կարևորութեամբ։ Եղան և այնպէսներն, որոնք մերժելով այդ անունը, կոչեցին «Պատմութիւն սուրբ Գրոց Հին և Նոր Կտակարանի»[2], սակայն սոյն կոչման տակ ևս այդ գիտութեան շրջանը խիստ լայնանում է։

---

1. Կայ և ռուերէն մի թարգմանութիւն՝ Герике. Введеніе въ новозавѣтныя книги свящ. писанія. Перев. съ нѣм. подъ ред. архим. Михаила. Москва 1869.

2. Ցիշելի է և Историческое обозрѣніе свящ. книгъ нов. завѣта. Спб 1878.

Ինչպէս և իցէ՝ ոչինչ մեզ չէ խանգարում «Քննաբանութիւն» կոչելու յիշեալ առարկան, ջանալով հանդերձ՝ որ պատմական քննաբանութեան գաղափարը ճշգրիտ պահպանուի, ընդ նմին չոր ու ցամաք չդառնայ, այլ գրուածների ժամանակակից պատմութեան հիմնական տեղեկութիւններով համեմուի։ Նայելով աշակերտների նախընթաց ուսման՝ քննաբանութեան պատմական մասն ևս կարէ հաստատուիլ կամ ընդարձակուիլ։ Իսկ միայն Սրբազան պատմութիւնից յետոյ քննաբանութեան զանազան շրջանների մէջ ամփոփուած պատմական տեղեկութիւններն առիթ կտան պատմական ուղիղ հայեացք ձգելու Եբրայեցիների կեանքի ամբողջ ընթացքի վրայ։ Միայն այդպէս է կարելի ուղիղ հայեցակէտ ձեռք բերել սուրբ Գրքի ամբողջութեան նկատմամբ՝ մեկնութեան առպարիզում հաստատուն քայլերով ընթանալու համար։ Դորան նպաստում է ոչ միայն այն հանգամանքն, որ Հին Կտակարանի գրուածները զանազան ժամանակ են գրուած, այլ և այն որ ժամանակի ընթացքում են գումարուել և ամենաուշը՝ գերութիւնից անմիջապէս յետոյ վերջնականապէս ժողովուել։ Նոյնպէս և Նոր Կտակարանը հետզհետէ կազմուեց, սկսուելով Պօղոս առաքեալի թղթերից, ըստ որում և ապա եկեղեցիները հետամուտ եղան և ի մի ժողովեցին այն գրքերն, որոնց նկատմամբ ոչինչ տարակոյս չունէին և որոնք քրիստոնէական ճշմարտութեան ու գաղափարների դրոշմէին կրում։

Բայց քանի որ դարեր են անցել այն ժամանակուանից ի վեր, քաջայայտ է՝ որ այսօր քննաբանութիւնը պէտք է պատմական տուեալներից ելնելով, քննէ երկիւղածարար և ճանաչէ գիտատութեամբ Ս. Գրքի բոլոր մասերի հարազատութիւնն։ Նա պէտք է ջանայ գրչակների թիւրիմացութիւնից յառաջացած փոփոխութիւնք և կամ ապաշնորհ մարդկանց դիտմամբ աղջատածները՝ թէ կան՝ վերաստուգել։ Հարկաւ՝ ոչ մի քննութիւն չկարէ հաստատուիլ կամայականութեան վրայ, այլ պատմական տուեալներն ու գիտնական հետազօտութեան հիմնաւոր սկզբունքները պէտք է լինին անդրդուելի հիմնաքար դորա համար։ Երբ մէկ ընթերցուածքի աղաւաղուած լինելը կամ գրուածքի ոչ այս

այլ միւս գրողին, ոչ այս՝ այլ միւս մարգարէին պատկանելը պարզորոշ ապացուցուի, մեզ համար ոչ մի կորուստ չի լինիլ, սակայն առաւել սիրով կվերաբերուինք դէպի մեր աղբիւրը։

Երբ իմանում ենք թէ ամբողջ ս. Գիրքը կամ նորա այս ու այն գրուածքը զանազան ժամանակում գրուած աղբիւրներից է, դորանով չէ վնասւում մեր երկիւղածութիւնն նորա նկատմամբ. եթէ Ծն. Դ. 13 կարդում ենք՝ «Եւ ասէ Կայէն ցՏէր Աստուած. մեծ է պատիժ իմ քան զթողուլդ զիս». իսկ ըստ բնագրին պէտք է լինի՝ . . . «անտանելի են ինձ հետևանք յանցանաց իմոց». եթէ Ծն. Ա. 2. «Երկիր էր աներևոյթ և անպատրաստ» է, իսկ բնագրի մէջ՝ (թոհու վաբոհու), «թոհ և բոհ (=անձև (անրևոյթ) ու դատարկ), եթէ երեմ. ԺԷ, 2. «յիշեսցեն որդիք նոցա զմեղանս իւրեանց» է և պէտք է լինի «զսեղանս». և լն. այդ բնաւ չէ ի՛ջեցնում մեր յարգանքը դէպի Հայոց գեղեցիկ թարգմանութիւնը, զի միւս կողմից և ս գտնում ենք, որ եօթանասնից թարգմանութեան մէջ պակասում է 1. թագ. ԺԳ, 1, իսկ բնագիրը դիւրահասկանալի չէ, մինչդեռ Հայոցը տալիս է ուղիղ իմաստ. Ժ, 3. բնագրի և եօթանասնից թարգմանութեան մէջ թարոր է, իսկ Հայոցն ուղիղ է՝ «կաղնի Դերոմրայ» և պէտք է նոյն իսկ բնագիրն ուղղել, ԺԴ, 1. (մանաւանդ) թարգմանուած է LXX ի (= եօթանասնից թարգմանութիւնը) մէջ Մեսսաբ, որ միտք չունի,

---

1) Ուստի և Գեօթէն, որի գաղափարն է «Ես համոզուած եմ, որ ս. Գիրքն առաւել կգեղեցկանայ (մեր առաջ), որքան աւելի հասկանանք. այսինքն որքան առաւել խելամուտ ենք լինում և տեսնում, թէ իւրաքանչիւր բառ, որ մենք ընդհանրապէս ենք ըմբռնում և մասնաւորապէս մեզ վերաբերում, ըստ որոշ հանգամանաց, ժամանակի և տեղական յարաբերութեանց մի սեփական, մասնաւոր, անմիջապէս անհատական վերաբերմունք է ունեցել. Դպրոցների այլ և այլ տխմարութեանց մէջ ոչ մէկն ինձ այնպէս ծիծաղելի չէ երևում, որչափ հին գրութեանց, հին երկերի վրայ վէճը. Մի՞թէ հեղինակը կամ գրութիւնն է, որից սքանչանում ենք կամ որ նախատում. միշտ այն հեղինակն է և եթ, որ ունինք մեր առաջ. ինչ գործ ունինք անուանց հետ, երբ մէկ մտքի գործ ենք մեկնում»։

իսկ Հայոցն է՝ կիրճ։ Քննաբանութիւնը խիստ տարաձայնում է Ցովելի մարգարէութեան ժամանակի վրայ, մինչդեռ Հայոց թարգմանութեան մէջ տեսնում ենք մի վերնագիր, որ չկայ բնագրի մէջ. «Պատգամ Ցեռան որ եղև առ Ցովել Բաթուէլի յաւուրս Եզեկեայ», և լն. և լն [1]։ Մինչև այժմ ասել են՝ Հայոց թարգմանութիւնն ըստ LXX-ի է արուած, որ սխալ է և թիւրիմացութիւն, LXX-ն պէտք է սրբագրել Հայոց թարգմանութեան համեմատութեամբ և տարբերութիւնք անչափ են գոյա մէջ [2]։ Ակներև է՝ որ այս հետաքննական հետազօտութիւնը պէտք է կատարէ քննաբանութիւնը, ծանօթացնելով մեզ այդ գրուածների բոլոր հանգամանքները։

Քննաբանութիւնը յիրարկում է իւր այդ նպատակի համար ներքին և արտաքին միջոցներ. արտաքին՝ համեմատելով գրչագրներն ու բնագիրն իրար հետ և վերականգնելով հնագոյնն և ընդհանուրը. ներքին՝ ընտրելով այն ընթերցուածքն, որ համապատասխանում է խօսքի ընթացքին։ Նոյն երկու միջոցներով է յառաջ գնում, ի նկատի առնելով բովանդակութիւնը, նոյն հեղինակի միւս գրուածները, ներքին կապակցութիւն, պատմական յարաբերութեանց համաձայնութիւնը, ժամանակի լեզուն ու ոճերը, ներքին և արտաքին սահմանութիւնն ու ներդաշնակութիւնը։ Դոքա են այն սկզբունքներն, որոնք հիմունք են կազմում քննաբանական հարազատութեան և անհարազատութեան, աղաւաղման և անաղճատութեան պատգութիւն տալ։

Սակայն քննաբանութիւնն իւր բոլոր գործունէութեան մէջ պէտք է միշտ զգոյշ ընթանայ, երկիւղածութեամբ և լրջութեամբ վարուէ, տան անգամ չափելով՝ մէկ կարէ, առանց

---

1) Հին Հայք ևս ունեցել են քննաբանական հետամտութիւն, որպէս տեսնում ենք Թէոդորոս Քռթենաւորի ճառից «ընդէմ Մայրագոմեցոյն». Վենետիկ. 1833 էջ. 154։

2) Լաւագոյն հրատարակութիւնը Հայոց թարգմանութեան՝ (Արսէն Բագրատունու) Վենետիկ 1860. ճակատին կարդում ենք՝ «ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոց և յոյն բնագրաց», որ անյատակ սուտ է։

հիմնաւորութեան ոչինչ չդաւէ, այդ ժամանակ եւս գրուածքի այս ու այն կէտի հակառակ լինելը ս. Գրքի աստուածային ոգուն՝ որի զգայողութիւնը պէտք է նախապէս կրթութեամբ սեփականացրած լինել՝ շարժառիթ կլինի քննաբանին հետամուտ լինել հատածի արժէքը ճանաչելու։ Երբ չունի քննաբանն այդ լրջութիւնն ու երկիւղածութիւնն, որով քննւում է գրեթէ իւրաքանչիւր գիրք, այն ժամանակ միայն նորա տեսութիւնները լծակից կլինին խելակորոյս կամայականութեան և կարճատեսութեան, որոնց խաւարաշող քողի տակ մնողն իւր հետևորդներով հանդերձ՝ մի օր ճշմարտութեան ճանաչողներին հանդիպելով՝ կկուրանայ։

14.

Ը. ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Քննաբանութիւնը չի կարելի յառաջ վարել առանց նոյն իսկ ս. Գիրքը կարդալու և մեկնելու. վասն զի, որպէս տեսանք, մեծ նշանակութիւն ունի ծանօթ լինել գրուածքի ոգուն և էութեան, ապա թէ կարենք քննական հայեացք ձգել նորա վրայ և կամ ճանաչել ուրիշի քննական դատողութեան արժէքը։ Վասնորոյ և մեկնութիւնն ու քննաբանութիւնը սերտ կապուած են իրար հետ, ընդ նմին և մեկնաբանութիւնն է նախագուռն ս. Գրքի հետազօտութեան և հասկանալուն։

Մեկնաբանութիւնը տալիս է այն հիմունքներն, որոնց համաձայն պէտք է մեկնել իւրաքանչիւր գիրք և մասնաւորապէս ս. Գիրքն՝ ըստ իւր առանձնայատկութիւնների. ըմբռնել միմիայն բառերն ու քերականական ոճերը դեռ բաւ չէ մի հեղինակի մտածութիւնները հասկանալու համար։ Որչափ և գրողը լաւ և ճշգագոյն արտայայտէ իւր մտքերն, այնու հանդերձ նա չկարէ այնպէս դրօշմել, որ իւրաքանչիւր ոք կարենայ իսկոյն և եթ հասկանալ։ Մինչև անգամ մարդկանց կենդանի խօսքը հասկանալու համար անհրաժեշտ է վարժուած լինել. այլ և մարդկային գործերի արտաքին երևոյթից ուղղապէս հետևցնել և ըմ-

բռնել գործողի մտադրութիւնը՝ խիստ դժուար է և հենց հասարակական գործիչների մեծամասնութիւնը յաճախ այդպիսի դէպքերում թիւրիմացութիւնների զոհ են դառնում։ Վասնորոյ և ամենայն գրուածք մեծագոյն զգուշութեամբ պէտք է ջանալ հասկանալու, որպէս զի արևագարկ սևի փայլը սպիտակի տեղ չընդունենք։ Այդ պահանջը շատ մեծ է ս. Գիրքը հասկանալու համար, որի իւրաքանչիւր կտորը կապուած է ժամանակի կարիքների և պարագաների, անհատական զգացմունքների և տեսութիւնների հետ, և ուղղուած է ի բարօրութիւն հասարակութեան և ազգի։ Մեկնողը կամ նոյն իսկ ընթերցողը պէտք է՝ այսպէս ասած՝ մտնէ գրողի մթնոլորտի մէջ, նորա հետ ապրի և շնչէ, զգայակցէ և ցաւակցէ և գիտակից լինի նորան. միայն այդպէս կարէ նա խելամուտ լինել այն վսեմութեան, որ սաւառնում է այդ սրբաշունչ գրքի իւրաքանչիւր յօդուածից։ Այդ շաւիղը պէտք է մեզ ցոյց տայ մեկնաբանութիւնն, որ փիլիսոփայական և լեզուաբանական արուեստ է։ Նորա սկզբունքները տրամաբանական, պատմական և հոգեբանական են, որոնք հեռու պէտք է լինին ամենայն կամայականութիւններից և չպէտք է սէր ունենան դէպի բացառութիւններն, որպէս հռոմէական մեկնաբանութեան ախտն է, այլ պարտ են տալ հիմունքներ, որոնք ծառայեն իւրաքանչիւր գիրք հասկանալու համար և։ Միայն այդպիսի գիտական՝ մշտական եղանակով կարէ մեկնաբանութիւնն իւր իրական տեղն ունենալ[1]։ Այդպէս և օգ-

---

1. Հարկաւ քննաբանական և մեկնաբանական գործը պէտք է կատարուի ըստ կարելոյն ուղիղ տպագրութեան վրայ։ Հին կտակի բնագիրը Հրէական ժողովարաններում աւանդուելով, անցաւ մեր ձեռքը Տիբերիասի դպրոցի (Զ. դարից) Հրէայ ուսումնականների (մազորեթների) մանրազնին համեմատութեամբ, որոնք ձայնաւորները դրին և գրքերի բառերն անգամ թուելով նշանակեցին վերջերում։ Այդ Մազորա կոչուած բնագրի ամենահին օրինակները Ծ. դարից առաջ չեն անցնում։ Կան շատ հին օրինակներ եօթանասնից թարգմանութեան և լատիներէնի (Վուլգատա՝ Հիրոնիմոսի թարգմանած)։ Բոլոր օրինակներից ամենանշանաւորն է և կատարեալ՝ Սինայեան կոչուածն, որ Դ. դարի կէսերից է։ Պէտք չկայ ասա

տակար կլինի այդ վարժութիւնը նաև ուրիշ գրքեր հասկանալու համար։ Սակայն մեկնաբանութիւնը վարժութիւն միայն լինելով, չպէտք է առանձին վերացաբար աւանդուի, այլ նոյն, իսկ մեկնութեան ընթացքում, ըստ որում թէ ժամանակը խնայուած կլինի և թէ կրկնակի օգուտ կտայ մի և նոյն գործը նոյն այն մարդկանց, որոնք գիտաստութիւն ունին՝ թէ հասկանալու համար հարկաւոր է վարժութիւն և կրթութիւն[1]։

15.

Մ Ե Կ Ն Ո Ի Թ Ի Ւ Ն։

Նախընթաց նախապատրաստութիւններն արդիւնաւորում են իւրեանց տուած յաջողակութիւնը մեկնութեան մէջ։ Մեկնութիւնը կարևոր է եղել միշտ և գրերէ ամենայն գրքի հասկանալու համար, բաւական է՝ եթէ այդ գիրքը մեծամասնութեան դիւրամատչելի չէ՝ որոշ նախապատրաստութիւն պահանջելով։

յիշել այն անթիւ գիտնականներն, որոնք զբաղուել են վերջին դարերում ս. Գրքի ուսումնասիրութեամբ, միայն նկատենք, որ գերման անխոնջ խուզակ Տիշենդորֆ († 1874) իւր ամբողջ կեանքը նուիրեց գրչագրներ որոնելու և համեմատելու շնորհաշատ գործին և տուաւ բազմաթիւ հրատարակութիւններ մանրամասն փոխայլակներով։

1. Եօթանասնից թարգմանութեան ամենամատչելի և յարմար տպագրութիւնն է՝ Vetus Testamentum graece juxta LXX interpretes Տիշենդորֆի. Գ-դ. տպագրութիւն, Lipsiae 1875. Լաւագոյն հրատարակութիւն է Լոնդոնինն, որ դեռ չէ վերջացած։ Նոր Կտակարան ևս՝ Novum testamentum graece recensionis Tischendorfianae ultimae textum... Illustravit Oscar de Gebhardt. Lipsiae. 1884. Ռուսերէն՝ Библія или священныя книги Ветхаго и Новаго завѣтовъ. Русскій пер., исполненный святѣйшимъ правительствующимъ синодомъ. Роскошное иллюстрированное изд. съ 230 рисунк. Г. Доре.

Հայերէն ս. Գրքի առաջին տպագրութիւնն եղել է ս. Էջմիածնից ամենայն Հայոց կաթուղիկոսի հնօրինութեամբ... «Հրամանաւ Վեհափառին Տեառն Յակոբայ Հայոց կաթուղիկոսի գլխակարգեալ և հնատեալ . . . . Նուաստիս ումեմն բանի Տեառն սպասաւորի Ոսկանի Երևանցւոյ, ՅԱմբասերտամ, ներտպարանում սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրավարի, ի թուում Փրկչին 1666. իսկ Հայոց ՌՃԺԵ»։ Կովկասում տարածուած է Պետերբուրգի տպագրութիւնն, որ քննական արժէք չունի։

Մեկնութիւնը (exégèse, ἐξήγησις) Հայոց եկեղեցական հայրերի մէջ զանազան ուղղութիւններ է ունեցել, որոնց մէջ կարենք տարբերել՝ վերծանութիւն և բուն մեկնութիւն։ Առաջինն աւաւել են. թակայական և յարմար բացայայտութիւնների տրամադիր բնաւորութիւն է ունեցել՝ որպէս տեսնում ենք Մամբրէ Վերծանողի գրուածներից, մինչդեռ երկրորդը՝ լոկ բացատրական ընթացք է բռնել, թէև այդ կարական կերպով որոշել չի լինիլ։ Վերծանութեան մէջ քարոզիչը սովորաբար համարեա թէ մոռնում է հեղինակի դրութեան շրջանն և նորա փոխարէն ջատագովում և ընդարձակօրէն յառաջադրում աւանդուած գաղափարները։ Բայց մեկնութեան մէջ նա արտայայտում է միևնոյնն ուրիշ խօսքերով, ուրիշ ոճերով, որպէս զի մատչելի դարձնէ ունկնդիրներին կամ ընթերցողներին այն գրուածքն, որ այլապէս խրթնութիւնների ենթակայ է՝ որոշ նախապատրաստութիւն չգտնելով օգտուել կամեցողների մտաւոր աշխարհում։ Մեկնողը վերջացնում է իւր գործն, երբ բացատրում է հեղինակի արտայայտութեան իմաստը. նա մոռնում է վերծանութեան շրջանի մէջ, երբ ուզում է ցոյց տալ այդ գաղափարի նշանակութիւնը, ջատագովել նորա ճշմարտութիւնն, ուղղել զանազան խնդիրների վրայ. երբ հետամտում է այդ գաղափարների ծագման պատճառների, շարժառիթների և նպատակի հետքերին, երբ գնում է այդ բոլորը ժամանակի, տեղի, հանգամանքների և շրջապատողների կապակցութեան մէջ, ապով այդ ամենը վերստին պատճառաբանական կարգով գոգցես իբրև սեփական ինչ։ Թէ որչափ հետաքննական է և գրաւիչ վերծանութիւնը՝ նկատելի կլինի, երբ այդ քարոզի նիւթ դառնայ և կենդանի կերպով պատկերացնէ ունկնդիրների առաջ ս. Գրքի սատծները, սաւառնել տալով նոցա մտքերը գերակայականի ամբիչ շրջանում։ Վանորոյ և այստեղ՝ այլ և մեկնութեան մէջ՝ Հայոց կարճաբան և պարզաբան հին հայրերի գրաւիչ վերծանութիւնները [1] կարեն գեղեցիկ համեմներ տալ։

---

1. Կան տպագրուած Մամբրէ Վերծանողինը՝ Վենետիկ 1833. Եղիշէինն

Մեկնութեան մէջ ձգտում ենք հասկանալ գրողի մտքերը, ճիշդ այնպիսի համակրանքով, ինչպիսին պարտաւոր ենք տածել դէպի իւրաքանչիւր լուրջ գրութիւն, առանց միամիտ մանկան հասակի մէջ վերադառնալու, որ ժամացոյցի հետ այնպէս է խաղում՝ ինչպէս իւր խաղալիկի և կամ կրակն այնպէս է ճանկում՝ ինչպէս արմաւը։ Բայց ս. Գրքի մեկնութեան միջոցին երկիւղածութիւն և ս պահանջւում է խելահաս մարդից։ Կրօնական մի գրքուածք հասկանալու համար պէտք է կրօնական խելամտութիւն ունենալ, զգացմունքով խոպանացած չլինել. բարոյական սկզբունքներից անուն դատանալու համար պէտք է մեկնողի մարդկային էութիւնը մացառների մէջ խեղդած կամ տիղմի մէջ սուզած չլինել. պէտք է ճշմարիտ մարդ լինել՝ բարձր մարդկայինն, որ աստուածայինի հետ յերիւրւում է և կամ դիմում առ այդ, ըմբռնել՝ իւրացնել կարենալու համար։ Բանաստեղծութեան ամենալաւ հասկացողը բանաստեղծն է [1] և ոչ թէ հոգեպէս հողմակոծուածը. գիտնականն է պաշտում գիտութիւնն և ոչ թէ պորտաբոյծ ժամանակաւորը։ Ի՞նչ կհասկանայ մարդ մի օտար ընտանիքի նամակից. ոչինչ։ Վասնորոյ և քրիստոնէական հոգու այդ բարձրագոյն ճաճանչների ցոլացումն կտայ միայն իրական կատարելութեան գիտող՝ քրիստոնէական մթնոլորտում շնչող քրիստոնեան և ոչ թէ նա, որ մարմինը գգուող կերակուրից զատ ուրիշ ոչինչ չէ տեսնում։ Մեկնողը պէտք է հասկանայ, ըզգայ և խոստովանէ իւր մեկնելիքն և ասա նոյն զգացմունքներին և գաղափարներին արտայայտութիւն տայ բնականաբար, որպէս զի նման հոգեկան եղանակների զարկ տայ և այլոց մէջ։ Նա պէտք է կարենայ ընդունել գրուածքի ոգին իւր մէջ և այնպէս

իւր մատենագրութեան մէջ. ս. Գրիգոր Նարեկացունը՝ նոյնպէս։ Մեկնութիւն գործոց առաքելոց. Վենետիկ 1840. Ն. Շնորհալի, մեկնութիւն աւետարանին Մատթէոսի Կ. Պոլիս 1825. Իգնատիոս Վարդապետ, Մեկն. Ղուկասու. Կ. Պոլիս 1824. Սարգիս Շնորհալի, Մեկն. Կաթուղիկեայց. Կ. Պոլիս 1743. և այլն։

1 Տես և Hagenbach. անդ՝ էջ 196։

կենդանութիւն տայ իւր խօսքին։ Դորանից կհետևի այն, որ քանիցս և ս. Գիրքը, նորանոր օգուտներ կունենայ, նորանոր բարձր գաղափարների շարժառիթ կտանայ։

Մեկնութեան հիմնական շաւղով ընթացք է բացւում նաև քարոզի համար, որի մէջ անշուշտ պէտք է պահպանել գիտնական ճշմարտութիւնն [1] և ապա դարձնել ս. Գրքի ասածները դէպի ներկայ հանգամանքներն ու իրողութիւնները։ Ծեքել ու բռնազբօսել [2] ս. Գրքի խօսքերը՝ թէպէտ հէնց բարի նպատակով՝ բացարձակապէս արդելւում է ճշմարտութիւն սիրողներին։

Առհասարակ ս. Գրքի հասկանալի մասերի պարզ ընթերցումն պէտք է վարժութեան միջոց լինի և ապա մեկնութեան ժամանակ ս. Գիրքն օտար ինչ չլինի։ Քանի որ բնագրի լեզուներին ծանօթ չեն Հայոց դպրոցներում, խիստ օգտակար կարեն լինել և գրաբարի թարգմանելը կամ համեմատելը զանազան օտար թարգմանութիւնների հետ, գեղեցիկ կտորների սերտելը, գրուածների և յօդուածների բաղդատութիւնն և այլն։ Այնուհետև պէտք է ջանալ մեկնութիւնն ըստ կարելւոյն կարճ անել, որպէս զի ս. Գրքի խօսքերն անփոփուն իւրաքանչիւրի մտքում։ [3] Մեկնութիւնն

---

1 Շատ օգտակար ձեռնարկներ կարեն լինել աւետարանների համար Գոդէ'ի (Godet) գեղեցիկ մեկնութիւնները գոնէ Ֆրանսերէն գիտեցողների համար։

2 Այդ Հռովմէական արուեստն է. զորօր. մէկը հիմնուելով 1 Յով. Բ, 16-ի վրայ, ասում է որ գժոխքը երեք դռներ ունի՝ մէկը մարմնաւոր և անամօթ մարդկանց համար, միւսը ժլատների, երրորդը՝ հպարտների։

3 Հին ժամանակ կար և այլաբանական մեկնութիւն, որ սկիզբն առաւ Աղեքսանդրիայում և ձգտում էր ամեն ինչի մէջ մի այլաբանական իմաստ ևս գտնել։ Դորա զարգացման զարկ տուաւ Օրիգինէս († 254) քրիստոնեայ աշխարհում, որ հինմնադրեց եռակի իմաստի տեսութիւն՝ ըստ մարդկային մարմնի, հոգու և ոգու։ այն է՝ տառական, բարոյական և հոգևոր։ սակայն այդ շատ էլ ընդհանրութիւն չգտաւ։ որպէս օրինակ Յովհան Ոսկեբերանի մեկնութիւնների մէջ։ Սակայն Հռովմայ եկեղեցում այդ այլ կերպարանք ստացաւ. Հիրոնիմոս († 420)։ և Ամբրոսիոսից († 397) շատ առաջ գնաց Օգոստինոսը († 430)։ ոյժ տալով այլաբանականին։ այնպէս որ հետզհետէ եկեղեցու հայեացքները գերակշռեցին և Հռովմ Գրիգոր Մեծից († 604) յետոյ իւր գաղափարները ս. Գրքի գլխին կապեց։

ընդհանրապէս եթէ սովորողն ինքն գանէ ուսուցողի օգնութեամբ՝ այդ է՝ որ ճշմարիտ վարժութիւն կլինի բոլորովին անկատելի կերպով։ Զմոռանալով թէ քանի առատ և բազմակողմանի են բարոյական գաղափարները ս. Գրքի մէջ, չենք կարող ժխտել՝ որ այդ թանգագին գանձարանն իւրաքանչիւրի այբուբէնը պէտք է լինի, ըստ որում և մեկնութիւնը պարտէ ըստ ամենայնի անհրաժեշտ տեղ բռնել կրթութեան գործի մէջ։ Նորա լուսաբանութիւնը լուսոյ երկարատև շողեր կցոլացնեն՝ ում մէջ բացուած է բարոյականութեան գէթ փոքրիկ մի հայելի։

Բ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

16.

ԻՍՐԱՅԷԼԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ։

—

Մեկնութեան հետ սերտ կապուած է պատմական աստուածաբանութիւնը, վասնզի այն առարկաներն ու գիտելիքներն, որոնք առաջնին նախապատրաստութիւն պէտք է լինին, երկրորդի շըր-

---

Միջնադարեան մեկնիչների գործը ոչ թէ ս. գիրքը մեկնելն էր, այլ Հռովմայ հայեացքներին համաձայնեցնելը։ Փոքր ինչ ուշ միայն՝ բնագրներն ուսումնասիրելով հակահռովմէական ուղղութիւն սկսուեց և ս. Գիրքը յառաջ անցաւ հակառակ Հռովմայ վարդապետների գրութիւնների։ Այժմ մինչդեռ Գերմանիայում պատմական-լեզուաբանական հիմունքի վրայ է ընթանում մեկնութիւնը, Հռովմայ գործն է իւր գարևոր հայրերի կարծիքները թուել այս ու այն կէտի նկատմամբ և նոցա իրար հետ համաձայնեցնել։ Նորա կարծիքով Հռովմէական եկեղեցուց դուրս ոչ ս. Գիրք կայ, ոչ ուղիղ մեկնութիւն։

Հայոց մէջ յայտնի են իբրև առաւել պարզ վերծանողներ՝ Մամբրէ, Եղիշէ, Գրիգոր Արշարունի, Ստեփաննոս Սիւնեցի, Խոսրովիկ, Խոսրով Անձրևացի, Ասողիկ և այլն։ Միջնադարեան մեկնիչները շեղւում են նախնեաց պարզութիւններից, վարակուելով արևմտեան հոսանքից։ Ս. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութիւնից սկսեալ՝ նախնեաց մէջ չէ ճանաչուել ս. Գրքի պարզ լուսաբանելուց զատ այլ ինչ։

ջանի մէջ են մնում, որպէս հնարանութիւն, Իսրայէլացոց պատմութիւն ևն. միւս կողմից ս. Գիրքը մասամբ աղբիւր է պատմական աստուածաբանութեան։ Այսպէս ուրեմն այդ երկու բաժիններն իրարից բոլորովին զատել չի լինիլ։ Պատմական աստուածաբանութեան մէջ առաջին տեղը բռնում է Իսրայէլացոց պատմութիւնն, որ նախապէս անհրաժեշտ է թէ ս. Գիրքը հասկանալու և քննելու և թէ այդ ճիւղի հիմնաքար կազմելու համար։

Իսրայէլացիք սկսում են իւրեանց պատմութիւնը նոյն իսկ նախամարդից և հասցնում են Քրիստոսի մօտաւոր ժամանակները։ Այդտեղ ուրեմն տրոհւում են բնականաբար քանի մի շրջաններ, այն է՝

1. Նահապետական շրջանը մինչև Մովսէսի ժամանակները։

2. Աստուածպետութեան հիմնադրութեան և երկրի նուաճման շրջանն այդ պետական զօրավարների առաջնորդութեամբ, այսինքն՝ մինչև Սամուէլ։

3. Այդ աստուածպետութեան զարգացումն, քահանայութեան թագաւորութեան և մարգարէութեան կազմակերպութիւններն, որ կլինի մինչև գերութեան ժամանակը։ Վերջապէս՝

4. Անկման շրջանն օտար տիրապետութեան և օտար բարքերի և այդ նիւթական ու բարոյական աւերի ընթացքը գերութեան միջոցով մինչև վերջին ժամանակը։ [1]

Այս միայն ընդհանուր բաժանումն է, որ կապուած է իսկապէս այդ պատմութեան ընթացքի մեծագոյն դէպքերի հետ։ Պատմութեան այս գործում է՝ որ քննաբանութիւնն օգնութեան է հասնում, բնաւ չմոռանալով՝ որ իւրաքանչիւր շրջանում տարբեր զարգացման, տարբեր վիճակի հասունութեան տէր ժողովրդի պատմութեան հետ գործ ունի։ Ժողովրդի առասպելներն ու մանկութեան նկարագրութիւնը նոյնչափ հետաքննական են և սիրելի, որքան քաղցր է իւրաքանչիւրի համար այն դէպքերն և իրողութիւններն, որոնք սերտ կապուած են նորա մանկու-

---

1 Տես. Hagenbach. անդ էջ. 220

թեան քաղցր ժամերի հետ. միայն առտ անհատի մանկութիւնն է, իսկ անդ ժողովրդի, մանաւանդ որ Հայ ազգը չէ պահպանել իւր մանկութեան ժամանակի յիշատակները, մինչդեռ Իսրայէլացիք դրացի ազգ են և ըստ տեղին նոյնակենցաղ։ Այդ մանկութեան մէջ արտայայտում է նա իւր վեհ յոյսերն ու վսեմ զգացմունքներն, որոնք ընդհանուր են մարդկութեան։ Քա՜նի ուշագրաւ է տեսնել՝ թէ ինչպէս է վերաբերուել այդ ժողովուրդը իւր հաւակի զարգացման ընթացքում դէպի այն աստուածային յայտնութիւնն, որ գալիս էր նորան փրկելու իւր ժամաբոյց զբաղմունքներից։ Քա՜նի շահագրգռական է տեսնել թէ ի՞նչ օգուտ է կարենում ստանալ նա՝ այդ հզօր նպատից և օգնականից. երբ է երես դարձնում և խարխափում խաւարի մէջ, կամ երբ վերստին դառնում և փառաւորւում իւր էութեան աղգակից աստուածային շողերի տակ։

Ամբողջ պատմութեան մէջ ի նկատի պէտք է առնուի ժողովրդի պատկերացումների եղանակը։ Ծանօթ լինելով արևելեան ժողովուրդների ուժգին մտապահութեան, գիտենք որ ընդարձակ պատմութիւններ բերանացի աւանդւում են, այնպէս որ ազգերի սկզբնական ժամանակների կեանքը պատկերացնում են մեր առաջ, սակայն զրուցատրաբար նկարագրելով, պաճուճելով և զարդարելով։ Թէ պատմականը մնում է արժանիքի մէջ՝ լուրջ և հասուն քննաբանի աչքի առաջ՝ ակներև է։ Այստեղ միայն որոշելի է զրոյցը առասպելից (միւթոս). զրոյցը պատմութիւն է զարդարուած, առասպելը՝ գաղափար. զրոյցի մէջ իրողութիւնն է լրծակցուել բանաստեղծութեան հետ, առասպելի մէջ՝ երևակայութիւնը իրական պատկերների հետ։ Առաջինը պատմութեան աղբիւր է, երկրորդը աշխարհահայեցողութեան։ Վասնորոյ երկուսն ևս հաւասարապէս ուսումնասիրելի՞են՝ և կարևոր են ճանաչելու համար Իսրայէլացոց պատմական բաղմակողմանի կեանքը Յորդանանի գեղազուարթ հովտի շրջանում, որտեղ ամենայն ինչ ժպտում էր այդ ժողովրդի դիմաց և նորան գոհացնում իբրև բախտաւորութեան աւետեաց երկիր։ [1]

---

1. Այս պատմութեան աղբիւրներ են բացի ս. Գրքից և վերև Հնարա-

Քանի որ Հայոց հոգևոր դպրոցներում արդէն ստորին դասարաններից սկսեալ աւանդւում է սրբազան պատմութիւն, գուցէ նաև ուսումն ս. Գրոց, ուստի լաւագոյն է ջանալ հետզհետէ քննական հայեացք ձգել նոյնպէս և Իսրայէլացոց պատմութեան վրայ, որպէս զի վերջին դասարաններում կարևորութիւն չզգացուի վերստին աւանդելու գիտնական բանակարգով։ Այդ կյաջողուի անշուշտ Դ. և Ե. դասարաններում, այնպէս որ թէ պատմական խելամտութեան վարժութիւն կլինի և թէ ինքն ըստ ինքեան հետաքննական կդառնայ, մանաւանդ գրաւիչ դարձնելու համար վերոյիշեալ առարկաները։ Հարկաւ՝ դորա յաջողութիւնը կախուած կլինի գլխաւորապէս ուսուցչի յաջողակութիւնից ու հմտութիւնից։ Այս ընթացքի հիմունքը պէտք է կազմէ պատմական ժամանակագրութիւնն, ըստ որում ս. Գրքի տուեալներով իսկ որոշել թուականներն և այդ նախագծեալ ժամանակագրական ցանցի վրայ պատկերացնել պատմութիւնը՝ կունենայ առանձին օգուտներ։ Այս միակ պատմութիւնն է, որի աղբիւրները ժողովուած են ի մի այնքան ամփոփ կերպով, վառնորոյ և ամենալաւ յարմարութիւնն այստեղ է՝ սովրեցնել աշակերտին՝ օգտուելու աղբիւրներից, պատմութիւնը քաղելու, քննական հայեացք ձգելու և զարգարանքը որոշելու բուն պատմութիւնից։ Աւելացնելով դորա վրայ և քննարանութիւնը՝ կամ սրբազան մատենագրութիւնը՝ կտեսնենք, որ ս. Գիրքը կարէ անձնուէր ուսուցչի ձեռքում ամենալաւ միջոցը լինել վարժութիւնների ենթարկելու աշակերտին, որպէս զի վերջինս կարենայ ապագայում գիտնական գործունէութեան խելքի գալ ու հաստատութիւն բռնել։ Հայոց հոգևոր դպրոցները չու-

---

նութեան տակ յիշուածներից՝ նաև Տակիտոս (Տարեգրութիւնք Վենետիկ 1873), Յուստին, Եւսեբիոս իւր եկեղեցական պատմութեամբ (Վենետիկ 1877) և աւետարանական նախապատրաստութեամբ, և այլք։ Գիտնականների բազմաթիւ գրուածներից թերևս մատչելի լինին մեծամասնութեան L. Ménard, histoire des Israélites d'aprés l'exégése biblique· Paris 1883. և E. Ledrain, hist. d'Israël. Paris 1882. Ed. Montet, essai sur les origines des partis saducéen et phariséen et leur hist. jusgu'à la naissance de Iésus Christ. Paris 1888.

նին հրահանգարաններ (séminaire)։ եթէ այսպիսի մի վարժութիւն եւս չլինի։ այլ եւս հիմք չունինք յուսալու թէ ինքնուրոյն գործող շատ անձնաւորութիւններ կունենանք մեր մատաղ սերունդից։ Իսկ եթէ դպրոցը միայն պատրաստի նիւթ տայ։ կարտադրէ միմիայն կենդանի մեքենաներ՝ գերի այս ու այն գրքի։ կաշկանդուած այս ու այն այլանդակ գաղափարից։ որ ոչ մի նըշանակութիւն չի կարող ունենալ նորա գործունէութեան համար և ոչ մի օգտակար արդիւնք հասարակութեան մէջ։ Դպրոցի նըպատակը չէ նիւթ տալ աշակերտին։ պաշար մատակարարել։ այլ վարժեցնել նորա մտաւոր ընդունակութիւնները։ գործունէութեան հակումները։ բանալով նորա առաջ միանգամայն նոր ճանապարհ և մտածողութեան մշակուած շաւիղ։ բայց այդ ամենն անզգայաբար իւրը դարձնելով։։ Ուսումն արհեստ չէ՝ այլ կըրթութիւն։ Նորա տուած երջանկութիւնն ոչ թէ նորա արտաքին պտուղներն են։ այլ ծղել։ ծաղկել։ արդիւնաւորուիլը [1]։

---

1. 1789-ին։ այն է 18 դարի վերջին իւր ազգի անցողական ճգնաժամին՝ Շիլլերը՝ ճշմարտութեան համար այդ շնչողն՝ ասում էր նոր սերունդին։ որի ոյժերի թարմութեան զարգացման վրայ յոյս ունէր. «Այլ է ուսման ծրագիրն։ որ հացի ուսումնականն է (Brotgelehrte) իւր առաջ գնում։ այլ՝ որ փիլիսոփայական գլուխը։ Առաջինն։ որի ջանքերը միայն և եթէ ուղղուած են այն պայմաններն իրագործելու։ որոնցով նա մի պաշտօնի ընդունակութեան առաւելութեամբ մասնակից լինել կարենայ։ որ իւր Հոգու ոյժերը լարում է միայն նորա համար։ որպէս զի իւր զգայական վիճակը լաւացնէ և մի ստոր փառասիրութիւն բաւականացնէ։ այդպիսի մէկը ճեմարանական ուսման մէջ մնելով ոչ մի նշանաւոր հանգամանք չի գտնիլ։ բայց եթէ բաժնել բոլոր գիտութիւնք։ որոնք նա հացի ուսումն է կոչում։ բոլոր միւս գիտութիւններից։ որոնք Հոգուն՝ որպէս Հոգու՝ հաճոյք են պատճառում։։ Երբ հասնում է նպատակին։ այլ եւս պէտք չէ զգում գոցա. նա միայն ջանում է ապա «իւր յիշողութեան մէջ շեղջակուտած գանձերը ի ցոյց բերել և զգուշանալ՝ որ գոցա արժանիքը չընկնի։ Նորա հացի ուսման իւրաքանչիւր զարգացումն անհանգստացնում են նորան։ զի նոր աշխատանք են բերում նորա համար կամ անցածն անօգուտ անում....։ Իւրաքանչիւր լոյս։ որ վառւում է որևիցէ գիտութեան մէջ մի բախտաւոր հանճարի միջոցով։ տեսանելի է կացնում նորա չքաւորութիւնը...։ Ուստի չկայ աւելի անհաշտ թշնամի։ աւելի նախանձոտ պաշտօնակից։ աւելի

17.

ՎԱՐՔ ՔՐԻՍՏՈՍԻ։

Քրիստոնէութեան միջնակէտը լինելով Քրիստոս՝ մարդկութեան Փրկիչն՝ Աստուծոյ Որդին, հասկանալի է որ նորա անձնաւորութիւնը պէտքը ուսումնասիրութեան լիապէս էական առարկան դառնայ։ Նա «Գրքի ամբողջ պատմութեան բարձրագոյն լուսակէտն է, որի մէջ Աստուծոյ նախընթաց պատմական յայտնութիւնների ճառագայթները ժողովւում են և որից վերստին տարածւում են եկեղեցու պատմութեան մէջ»[1]։

Մարդկութեան պատմութեան մէջ չկայ մի այնպիսի վարք, որ այնքան կրթիչ բաղմակողմանի լինի, որպէս Քրիստոսի այդ երկնային կեանքն երկրիս վրայ։ Ամբողջ աստուածաբանութեան թէ բարոյական և թէ դաւանաբանական արմատներն դորա մէջ են գտնում իւրեանց հզօր սնունդը. այդ է մեզ տալիս ոչ միայն օրինակելի կենցաղավարութեան պատկերներ, այլ և գործունէու-

---

պատրաստակամ հերետիկոսացնող, քան թէ հացի ուսումնականը»։ Նա իւր արածը ճշմարտութեան պաշտամունք է համարում, թէև ոչինչ է անում, նա մեծ հատուցումն է պահանջում։

«Խղճալի՛ մարդ. որ բոլոր միջոցների ամենաազնիւից, գիտութիւնից և արուեստից ոչինչ աւելի բարձրագոյն չէ ուզում և առաջ բերում, քան օրավարձ մշակը ամենավատից։ Նա կատարեալ ազատութեան արքայութեան մէջ մի ստրկական հոգի է իւր հետ քաշքշում։— Բայց առաւել խղճալի է հանճարաւոր պատանին, որի բնական գեղեցիկ ընթացքը վընասակար ուսուցմամբ և օրինակներով այդ տխրալի ճանապարհի վրայ է ծուեցնում, որ թոյլ է տուել զինքը համոզելու՝ իւր ապագայ կոչման համար այդ ցաւալի ճշդութեամբ ժողովելու։ Շուտով կոչման գիտութիւնը իբրև մի կցկտուր գործ նորան կզզուեցնէ.... Այժմ նորան ամեն ինչ բեկոր է երևում, ինչ որ գործում է. նա նպատակ չէ տեսնում իւր գործելուն, բայց չէ կարենում տանել աննպատակութիւնը։ Դաժանագինը, նաևիրը նորա կոչման գործերի մէջ ճնշում է նորան, զի նա չէ կա-

[1] Hagenbach. անդ, էջ 232։ Քրիստոսի վարքը ներկայանում է մեզ ամբողջապէս երեք բաժնի՝ ժողովող, վաղապետող, և փրկող գործունէութեան՝ մէջ։

թեան շաւիղ, մանկավարժութեան նախագիծ, վարդապետական բարձրագոյն ուղեցոյց։ Սակայն բոլոր աւետարաններն ի միասին չեն տալիս մի որոշ բանակարգի մէջ կանոնաւոր պատմութիւն, վասնորոյ այս առարկայի նիւթն են դառնում յօրինուածօրէն մշակուելու։ Որչափ հասկանանք Քրիստոսի անձնաւորութեան վեհութիւնն, որչափ վառ լինի մեր մէջ մարդկային վսեմ զգացմունքը դէպի նա, որչափ ինքնագիտասա լինինք մեր էութեան, այնչափ կենդանի կներկայանայ մեզ այն կեանքն, այն կենցաղն, որի առաջ ծնրաչոգ երկիւղածութեամբ զօրութիւն պէտք հայցենք՝ անասնականի տիրապետութիւնից ազատ լինելու համար։ Այստեղ Քրիստոս է ներկայանում մեր առաջ՝ մարդկային թոյլ նկարագրութեան քողի տակ, այստեղ աստուածային մի անձնաւորութիւն է սաւառնում մեր երևակայութեան մէջ, այստեղ իդէալական մի իրականութիւն է պատկերանում մեզ համար, որում մարդկային կատարելական ձգտման ընդհանուր բաղձալին, այն է՝ ճշմարիտ ինքնագիտասատութիւնն իւր կատարելագոյն իրականացումը կենդրոնացրել է։ Այդ վեհութիւնն է կորզում մարդ լինել ուզող մարդի սրտից՝ այն հաւատքն, [1] որ

բենում զուարթ արիութիւն ունենալ դէպի այդ, որ միայն լուսաւոր հայեցողութեան, միայն յուսացած կատարելութեան է լինում ուղեկից։ Նա զգում է ինքեան կտրուած, ջոկուած իրերի կապակցութիւնից, զի նա զանց է արել իւր գործունէութիւնը աշխարհի մեծ ամբողջութեան յարակցելու։ Իրաւաբանին ցաւեցնում է նորա իրաւաբանութիւնը, հէնց որ լաւագոյն քաղաքակրթութեան նշոյլը բանում է նորա մերկութիւնը, փոխանակ ձգտելու այժմ մի նոր արարող լինել դորա և բացուած պակասութիւնը ներքին առատութիւնից բարւոքելու։ Բժիշկը պառակտում է իւր կոչումից, հէնց որ նշանաւոր սխալները ցոյց են տալիս իւր բանակարգի (սիստեմ) անվստահելիութիւնը։ Աստուածաբանը կորցնում է իւր յարգանքը դէպի իւրը, հէնց որ իւր հաւատը կաղում է իւր վարդապետութեան անսխալականութեան նկատմամբ»։

Տես. Was heisst und zu welchem Ende studiert man Universalgeschichte?. Պէտք է ամբողջը լաւ կարդալ 19. դարի այս պատմական ճգնաժամի մէջ...։

[1] «Հաւատքն է մի առանին, ծածուկ դրամագլուխ (Capital). որպէս կան

նորա երջանկութեան, խաղաղութեան և կատարելագործման հիմնաքարն է, թէ Քրիստոս է մեր Փրկիչն և նորա մէջ պէտք է որոնենք, ուրեմն և ստանանք մեր ճշմարիտ փրկութիւնը։ Այդ կենդանի համոզմունք կլինի մեր մէջ, եթէ միայն նայենք այն անձնաւորութեան, որի ամբողջ գործունէութիւնն ու կեանքը նուիրուած էր սիրած մարդկութեան, որ սիրելով սիրում էր այն վայրն ու ազգն, որին արժանի էր արել զինքն՝ որդի լինելու, բայց դորանով զարնում էր մարդկութեան փրկութեան լարը, դորանով աշխարհը շարժման մէջ ձգեց և իւր այդ գործունէութեան պսակը կապեց իւր անեման մահուան հետ։ Մեռաւ և մեռցրեց՝ մարդկութեան թունաւորող արմատները. յարեաւ և յարոյց՝ մարդկութեան խեղդուած աստուածային մարդկայնութիւնը։

Գրաւիչ է այդ կեանքն, որովհետև դորա մէջ ներկայանում են մեզ մարդկային իրական հանգամանքներն իւրեանց բոլոր մանրամասնութիւններով. ուշագրաւ է, վասն զի մարդը բարձրանում է այդտեղ մինչև իւր վեհութեան և վսեմութեան արփիները. բայց և աքանչելի է՝ որովհետև մարդկութեան հետ Աստուծոյ Որդին բակ է առնում և այն՝ որ մերն է՝ աստուածացնում։ Ասա է որ տեսնում ենք գերագոյն սիրոյ միութիւնը մեր և Աստուծոյ մէջ. «ոչ ոք բերէ յաշխարհի զնմանութիւն Աստուծոյ, բայց միայն մարդ. ոչ ումեք երևի Աստուած, բայց միայն մարդոյ, ոչ զոք սիրէ Աստուած յերկրէ, բայց միայն զմարդ. Աստուած միայն մարդասէր, և մարդ միայն աստուածասէր. վասն մարդոյ Աստուած մարդացեալ, և վասն Աստուծոյ մարդ աստուածացեալ.[1]

Բայց քանի աստանդական է մարդ, երբ պահ մի իւր ուշադրութիւնը դարձնում է[2] աստուածութեան և մարդկութեան այդ

հրապարակական՝ խնայելու և նպաստելու դրամարկղներ (Cassa), որտեղից կարօտութեան օրերում այս ու այն անձի կարիքները հոգւում է, (նոյնպէս և) այստեղ հաւատացողը վերցնում է մեղմով իւր տոկոսները»։ Goethe, Werke III, 102.

1 Եղիշէ. անդ՝ էջ 292։

2 Ցատակից բաժանուելն է գոգցես ազատամտութիւն համարում։ «եթէ

վեհ միութիւնից. նա այլ ևս «յամենայն հողմոյ շարժի» և չունի ոչ մի հաստատութիւն իւր գոյութեան. նորա ոտի տակ հողն անգամ դողում է. նա թռչում է իբր օճառային մի փամփուշտ, որ արեգակի շողերի տակ փայլում է մանուկներին ի զուարճութիւն, սակայն նա վաղանցուկ է. թռչում է այո՛, նա խաղում է օդի մէջ, ճախրում է. բայց ոպասէ քանի մի վայրկեան. ահա նա տրաքւում է... և ոչ մի ձայն չէ հանում: նա չէ թողնում և ոչ մի հետք:

Մանկավարժական կրթութեան էական հիմունք է կազմում նոր Կտակի Սրբազան պատմութիւնն, ուստի և կարելի է նոյն իսկ այդ որոշ բանակարգի մէջ միջին դասարաններում զարգացնելով, այնպէս յառաջ վարել, որ այլ ևս ճեմարանական վերստին ուսումնասիրութեան պէտք չառթէ: Քաղաքակրթութեան պատմութիւնը ցոյց է տալիս, որ կրթութեամբ միայն կարենք երջանկութիւն բերել հասարակութեան, այլ և իւրաքանչիւր անհատի համար: «Մարդս կարէ մարդ լինել՝ միայն կրթութեամբ», ասում է Կանտ: նա ոչինչ է, եթէ ոչ այն՝ ինչ որ կրթութիւնը նորան շինում է»: Վասնորոյ կրթութեան ամենաբարձր տեղ էր տալիս և Ֆրիդրիխ Մեծը: Կրթելով մանկան, ուրիշ ոչինչ չենք անում՝ եթէ ոչ՝ որ նորան միջոց ենք տալիս անցնելու այն ամբողջ ընթացքն, որից յետոյ հասել է մարդկութիւնն իւր այժմեան բարձրութեան. ուստեղն ապրում է ոչ միայն իւր տարի-

---

ես ազատամիտ գաղափարների (Idee) մասին խօսակցութիւն եմ լսում; միշտ զարմանում եմ; թէ ինչպէս մարդիկ բառերի դատարկ կեղևներից են կպչում: Գաղափարը չպէտք է ազատամիտ լինի, թո՛ղ զօրաւոր լինի, արիական, իւր մէջ ամփոփուած, որպէսզի իրագործէ աստուածային խնդիրը՝ արդիւնաբեր լինելու: Սակաւագոյն ևս ազատամիտ պէտք է լինի հասկացողութիւնը (Begriff), զի նա մի բոլորովին ուրիշ խնդիր ունի:—Ազատամտութիւնը պէտք է ոչ այլ ուրեք, եթէ ոչ համոզմունքների մէջ որոնել, և դրա են կենդանի հոգին. (Gemüth—սիրտ, ազնուամտութիւն): Սակայն համոզմունքները հազուադէպ են ազատամիտ, զի համոզմունքն անմիջապէս անձի մտագոյն վերաբերմունքներից և կարիքներից է ելնում:

Այլ ևս չենք շարունակում: թող այս չափին հետևեն՝ ինչ ևս որ ամեն օր լսում են»: Goethe, անդ՝ էջ. 108:

ների, այլ և մարդկութեան անցեալի մէջ. իսկ կրթեալը՝ խրատւում է այդ անցեալից։ Բայց ո՞րտեղ կարէ մարդ կրթուել իւր ապագայ կեանքի փորձով, եթէ ոչ այն անձի կեանքով, առ որի կատարելութիւնը պէտք է տանէ մեզ մեր ապագան։ [1]

18.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։

Աստուածաբանութեան պատմական բաժնի գլխաւոր առարկան եկեղեցական պատմութիւնն է։ Եկեղեցին այն համայնքն է, որ միացած ի մի վեմն և գլուխն անկեան Քրիստոս, հոգով նորա հետ է ապրում և գործով նորանից առաջնորդւում, փառնորոյ եկեղեցի է կոչւում այսինքն ժողով (ekklesia) հաւատացելոց՝ [2] տեսանելի և միանգամայն անտեսանելի։ Եկեղեցին սկսում է իւր գոյութիւնը նոյն իսկ հոգեգալուստից յետոյ և մասնաւորւում է զանազան ազգերի մէջ՝ իւրաքանչիւրի սեփական գառնալով և թերևս այնքան սեփական՝ որքան մի ժողովրդի հոգին տրամադիր է դէպի վերն, աստուածայինը։ Քաջայայտ է, որ Հայաս-

---

1 Մշակման օգտակար ձեռնարկ կարէ լինել՝ Գ. Վ. Այվազեանի կազմած «վարք Քրիստոսի...» Պարիզ 1854. օտար ձեռնարկների մէջ պէտք է ի նկատի ունենալ գրողի հայեցակէտից բղխած ուղղութիւնը։ Նշանաւոր է Фарраръ. Жизнь Іисуса Христа. Съ англ. Изд. 2-е, испр. и дополн. Москва 1887. ծեքումների և ենթակայական տեսակէտների լծակից է E. Renan, vie de Iésus. Paris. 1890.

Քրիստոսի վարքից կամ՝ Նոր Կտակի սրբազան պատմութիւնից յետոյ պէտք է ցոյց տրուի աստուածային վարդապետութեան պտղաբերութիւնն առաջին դարերում և առաքելոց անձնուէր գործունէութիւնն («Գործք առաքելոց»), որքան կարելի է հանել թղթերից և գործերից. այդ կաւանդուի Զ. դասարանում շաբաթական 3. ժամ։ Նպաստաւոր է՝ Фарраръ. Жизнь и труды св. апостола Павла. Спб. 1887.—Первые дни христянства. Спб. 1888. Դոքա բոլորը կարեն աւանդուել իբրև ուսումն ս. Գրոց, առաւել ուշ դարձնելով և Հին ու Նոր Կտակի վարդապետութեանց վրայ։ Ցիշեմ և Ստեփ. Նազարեան, վարդապետարան Կրօնի. Մոսկվայ. 1853.

2 «Եկեղեցի մեզ ո՛չ ցուցանէ պատուիրանն Աստուծոյ որ ի քարանց և ի փայտից է շինեալ, այլ զհաւատով շինեալ զաղգս մարդկան ի վերայ վիմին հաստատութեան»։ Ս. Սահակ. Սոփերք. Ա. 100.

տանեայց եկեղեցին իւր մասնաւորութեամբ հանդերձ ազգային գոլով՝ միանգամայն և ընդհանրական է, այսինքն քրիստոնէական է և շնորհ ունի իւրաքանչիւր ճշմարիտ փրկատենչի ընդունել իւր հովանու ներքոյ։ Նորա ընդհանրականութեան կենդանի ապացոյցն է՝ որ նորադարձին վերստին չէ մկրտուում, զի Քրիստոս ամենուրեք նոյն է և յանուն նորա են մկրտուում, 1 որ ճանաչում է միայն մի ընդհանուր գլուխ՝ Քրիստոս, 2 որ հիմնուած է առաքելոց քարոզութեան վրայ՝ հեռու աշխարհական ձգտումներից, և որ հաւատարապէս ամենքին մասնակից է անում Քրիստոսի մարմնի և արեան հաղորդութեան, կապելով իւրաքանչիւր անհատի Քրիստոսի հետ և եթ։ 3 Այս առաքելական տեսակէտից ևս հանում է և իւր եկեղեցապատմական հայեցողութիւնը։ 4

Եկեղեցու ամբողջ կեանքն ունի իւր ներքին և արտաքին կողմերը, վասնորոյ և հաւատարապէս նիւթ են ուսումնասիրութեան՝ լիովին տրամաբանական և յառաջավարութեան գծի տակ և ոչ թէ լոկ ըստ արտաքին հանգամանքների՝ տրոհմամբ։ Արդէն որ Քրիստոս իւր եկեղեցին խմորի նմանեցրեց, դորանով պարզապէս որոշեց նորա ապագայ անարգել ծաւալումը։ Միաժամանակ մարգարէացել էր Քրիստոս՝ որ հալածանքներ լինելու էին և եղան, սակայն դոքա միշտ արտաքին լինելով, բնաւ չկարեցան յաղթանակ տանել, այլ յաղթուեցան փառաւորապէս։ Եկեղեցին իւր ներքին զօրութեան մէջ միայն ունենալով իւր ոյժը՝ զարգացաւ՝

---

1 Յովհան Մանդակունի Ճառք. Վենետիկ 1860. էջ. 166.

2 Ագաթ. էջ. 436. Օձնեցի. էջ. 130—և այլք.

3 Ագաթ. էջ. 330.

4 Թէև բոլոր եկեղեցիք տեսութեամբ մերժումեն կրկնամկրտութիւնը, սակայն իրօք ոչ։ Նոյն իսկ գերմանական եկեղեցին խստիւ բողոքումէ Հռովմէական եկեղեցու հակաքրիստոնէական կրկնամկրտութեան դէմ, որ իրապէս կատարվումէ. տես. Witte, gegen römich-katholische Wiedertaufe. Leipzig 1890. Անցեալ դարերի Հայոց վարդապետներն ևս թունդ բողոքումեն Հռովմայ դէմ և մինչև անգամ լատին (ֆրանկ) քարոզիչներին չքրիստոնեայ համարելով՝ անունն ևս հակառակ են գրում՝ «ֆրանկ»։ Ուրիշ տեղ կխօսեմ այդ մասին, ձեռքիս թղթերը հրատարակելով։

յաղթելով բոլոր անհպատ հանգամանքները, կազմակերպուեց ապա և արտաքին վարչականով, ընդ նմին ընդլայնեց իւր վարդապետութիւնը, կեանքն ու բարոյքը։ Թէ ուսումն ու գրականութիւնն և թէ արուեստը անհդարար տեղ գտան նորա մէջ և իւրեանց առանձնայատուկ զարգացումն ստացան, այնպէս որ ամենայն ինչ որ քրիստոնէական էր, աղնիւ ու վեհ՝ հետզհետէ գերագասութիւն ստացաւ և մղեց հինը դէպի անյայտութիւն, զգալի դարձնելով նորա անպիտանութիւնը։ Հարկաւ այդ բոլորի ընթացքը կապուած էր ընդհանուր պատմութեան նիւթերի հետ, ըստ որում այդոքիկ եկեղեցական պատմութեան մէջ ուսումնասիրելով, պատումենք որոշ չափով ընդհանուր պատմութեան շրջանում։ Քրիստոնէական եկեղեցիների ընթացքը, կազմակերպութիւնը, պաշտամունքն ու կեանքը պատմութեան նիւթ դարձնելով, չենք կարող խոյս տալ և այն շեղումներից, որոնք պատահել են զանազան մնքառումների մէջ իւր այս ու այն հայրերի մոլորմամբ, վասնորոյ և ոմանց հոգեկան հիւանդութիւնից յառաջացած աղանդներն ու պառակտումները տեղ են բռնում եկեղեցական պատմութեան մէջ։

Եթէ եկեղեցական պատմութիւնը միայն դէպքերի կուտակումն գառնայ, շատ հեռացած կլինի իւր գիտնական նպատակից. այստեղ քննական հայեացքն, այսինքն միայն պատմական եղելութեանց առանձնայատկութեանց նշանակութիւնն՝ իւր ընթացքի համար՝ տեսութեան անհրաժեշտ նիւթ պէտք է լինի։ Որքան այդ հիմնական շաւղի յարաշարութիւնը յաջողուի, այնքան իրագործուած կլինի այդ առարկայի գիտնական նպատակը։ Մինչև անգամ այդ հանգամանքից ծագած շրջանների սրոհումը չպէտք է խանգարէ ամբողջ պատմութեան միայարութիւնն, այլ ելնելով նոյն իսկ պատմութեան արտաքին պարագաներից՝ ներքին միութիւնը պինդ պէտք է պահէ իւր տեսութեան ներքոյ։

Արդ՝ բաժանման հատատուն սկզբունք են միմիայն մեծամեծ դէպքերն, որոնք ամբողջ եկեղեցական պատմութեան համար աղդող նշանակութիւն ունին, ըստ որում և բնական դարագլուխներ ու շրջաններ են ձևակերպում։ Դոցանից միութիւնը չէ

խախտուում, զի չէ շեղուում ընդհանուր ընթացքից, այլ միայն որոշ կէտեր են, որոնք հանգոյցներ են կազմում դէպի մի այլ ուղղութիւն լուծուելու համար[1]։ Ըստ այդմ ընդհանուր եկեղեցական պատմութեան մի դարագլուխ պէտք է նկատուի նախ Կոստանդիանոս Մեծի դարձը՝ (325), որ ճշմարիտ այն ժամանակի հզօրագոյն պետութեան մի հարուածն էր հեթանոս աշխարհի անկման համար, թէև նորա այդ դարձը լոկ արտաքին քաղաքագիտական էր դեռ ևս։ Երկրորդ դարագլուխ կարէ լինել իրաւապէս Գրիգոր VII Հռովմայ (ԺԱ. դար), երրորդը՝ կրօնական յեղափոխութիւն և չորրորդ՝ դորանից մինչև առ մեզ։ Ի հարկէ այդ դարագլուխները կունենան և իւրեանց շրջաններն ևս ըստ նոյն հիմունքների։ Միայն առաջին բաժանման մէջ կարէ մեզ համար նշանաւոր կէտ կազմել և Հայոց Տրդատ թագաւորի և ամբողջ պետութեան դարձն (276—) ի քրիստոնէութիւն, ըստ որում Հայերն են առաջին քրիստոնեայ ազգն աշխարհի։[2] այդ եղելութեան մեծութիւնը մեզ համար խիստ զգալի կլինի, եթէ ի նկատ առնենք, որ Տրդատ մինչև անգամ պատերազմեց Հռովմայէցոյ դէմ՝ իւր քրիստոնէութիւնը պաշտպանելու համար՝ և յետ մղեց, որպէս գիտենք Եւսեբիոսի պատմութիւնից (թ. 8)։

Ուսումնասիրութեան համար պահանջւում է ոչ միայն անկողմնապահութեամբ յիրարկել աղբիւրներն և ուղղամտօրէն դատել պատմական տուեալներն ըստ իւրեանց պատճառականութեան, այլ և կենդանի շահ ունենալ առ քրիստոնէութիւնն՝ կրօնա-

1. «Մի շարք ժամանակակէտեր (moment), որոնց մէջ անընդհատ գերակշռում է խաղաղ զարգացումը, ներկայացնում է մի կարգաւոր դրութիւն և կազմում է մի պատմական շրջան. մի շարք շրջանների, որոնց մէջ յանկարծակի ծագումը գերակշռում է, ներկայացնում է յարաբերութեանց մի աւերող յեղաշրջումն և կազմում է մի պատմական դարագլուխ»։ Շլայէրմախեր առ Hagenbach-ի անդ. էջ. 258։

2. Տես և St. Martin, Lebeau, Hist. du bas-empire, I, 76. յաւելուածը. „Les Armeniens sont réellement la première nation qui ait adopté la foi chretienne...“ „Quoiqu'il en soit, on peut regarder comme constant que le christianisme devint, vers l'an 276, la religion du roi, des princes et des peuples de l'Arménie...“.

կան հայեցողութեան չափով վերաբերուիլ և առհասարակ հասկացողութիւն և լուրջ ուշադրութիւն դարձնել կրօնական ոգեւորութեամբ։ Պատմիչը պէտք է շնչակցէ իւր այդ պատմութեան։ Նա պէտք է եկեղեցու որդի լինի, բայց և ճշմարտասէր։ Հեթանոսը չի կարող եկեղեցական պատմութիւն ուսումնասիրել, զի քրիստոնէութիւնը բարձրագոյն զարգացման կրօն է, իսկ հրէայի կամ մահմեդականի և այլոց աչքերը բռնուած են իւրեանց սուտ կրօնի մթնութեամբ. մինչդեռ ճշմարիտ քրիստոնեան, եթէ նա ազատ է հեթանոսական մոլութիւնից, կարէ հաւասարապէս դատել ամենայն պատմութիւն՝ վեր մնալով բոլոր կուսակցութիւններից։ Քրիստոնէական ճշմարտասէր ոգին կենդանի պէտք է լինի գիտնականի մէջ։ Ում մէջ որ ներքին խոպանութիւն կայ և կրօնական զգածումը մարած է հոգևոր խեղումների ներքոյ, նորան աւելորդ է նոյն իսկ ամբողջ աստուածաբանութիւնն և պէտք է սպասէ դեռ, որ հոգևոր իրարանցման մէջ այդ հիւանդութիւնը դուրս ժայթքուի անհրաժեշտապէս։ Այս առաւել վերաբերում է նոցա, որոնց նպատակն է գիտնական ուսումնասիրութիւնը։

Աղբիւրների գործածութեան մէջ հարկաւ էական է քննաբանութիւնն, որի մասին արդէն վերև խօսուել է. սակայն կայ և պատմական քննաբանութիւն, որ ձգտում է իմանալ՝ թէ արդեօք այս ու այն պատմիչն արժանահաւատ անձնաւորութիւն է իւր դիրքով, բնաւորութեամբ, կոչմամբ ու զարգացմամբ, կամենո՞ւմ է ճշմարտութիւնն ասել և կամ կարէ՞ր ասել եթէ կամենար և ս, թէ կաշկանդուած էր բռնութեամբ կամ կանխակալ կարծիքներով ևն։ Դորանով որոշւում է և աղբիւրի արժանիքն և ապահովութիւնը։ Սակայն այս քննութեան մէջ պէտք է լաւ ճանաչած լինինք ժամանակն, որում ապրում էր հեղինակն և այդ ժամանակի յարաբերական չափով կշռագատենք, և ոչ թէ պահանջենք այն՝ ինչ որ մեր դարում գիտնականի պարտիքն է։

Բայց քննաբանելով և դէպքերն ու պատահարները շարելով ժամանակագիրների նման՝ չի կարելի տալ ճշմարիտ պատմութիւն, որի մէջ դէպքերը ծառայում են իսկապէս միայն պատմական հայեացք

ձեռք բերելուն, իսկ սոսկ իբրև դէպքեր՝ բնաւ պէտք և օգուտ չունին մեզ համար։ Քանի որ անցեալ բոլոր դարերը մի շղթայ են կազմում և իւրաքանչիւր յաջորդ շրջան՝ անցեալի պատկեր, իսկ ներկան բովանդակում է իւր մէջ ապագայի սաղմերը, պարզ է որ բոլոր անցքերը մի կապակցութեան մէջ պէտք է դիտուին, դատուին և պատմական հայեցողութեան նիւթ, ստաղծ դառնան։ Աւելացնելով դորա վրայ և տեղն ու բարեխառնութիւնը՝ կտեսնենք որ պատմութիւնը ներկայացնում է բարոյական և բնական աշխարհի՝ պատճառի և հետևանքի մի յարաշար շղթայ, որոնք կշռադատելով կարելի կլինի հասկանալ բարոյական պատճառական օրէնքները։ Մի խօսքով պատմութեան իմաստասիրութիւնը պէտք է գլխաւոր և առաջնորդող տեղ բռնէ։ Ընդ նմին պատճառն ու հետևանքներն ի նկատի ունենալով, չպէտք է մոռանալ որ իւրաքանչիւր պատճառ հետևանք է մի այլ պատճառի և այդ անթիւ պատճառների բացարձակ պատճառն է անպատճառ պատճառն, որ սկիզբն է ամենայնի։ Իւրաքանչիւր նիւթական հետևանք իւր անմիջական պատճառն է դուրս հանում, սակայն մոռապահ պէտք է լինել՝ որ իւրաքանչիւր անմիջական պատճառ միջնորդական պատճառ է իսկապէս յարահետև պատճառների կապակցութեան մէջ իւր յեղընթացին։ Պատմութիւնը միշտ միակողմանի կլինի, եթէ ջանանք միայն տեսանելի պատճառները նշանակել որոշ հետևանքների, ամենայն ինչ պատահականի և կամայականի հորիզոնի տակ խոթել, մեծագոյնը փոքրագոյնից, սկզբնականը եղականից, կեանքը մահից բացայայտել. այսինքն փակել աչքերն՝ իւր հորիզոնից դէնը չտեսնելու համար, եղականի կամ նիւթականի մէջ գործող զօրութիւն ըստ ինքեան նախադրել, իբր միայն անգիտանալով այդ և տեսանելի դէպքերը մի մի աստուածներ դարձնելով. այդ բռնաբարութիւն կլինի տրամաբանական կապակցեալ մտածողութեան, որ բացակայում է սահմանափակ հոգիների մէջ։ Չեմ ասում թէ իւրաքանչիւր պատմական բեկորի մէջ պէտք է միայն խորհրդականութիւն որոնել. այդ նոյնքան միակողմանի կլինի. այլ արտաքինը չպէտք է գերագասել. որպէս կեղևի վրայ ոստոստալով, չզուար-

ճանալ մրջիւնի նման՝ որ միջուկը չէ գտնում և ոչ ևս կեղևը չտեսնելով՝ միայն միջուկը ներքինը որոնել զրաֆաստակ։ Երկուքն ևս տուեալներ են և պէտք է հաւասարապէս յիրարկուին։

Վերև յիշուեցաւ՝ որ մեր դարը չպէտք է չափ դառնայ՝ նորանով ամենայն դէպք դատելու համար. մեր խելքն ևս օրինակ չպէտք է դրուի՝ պատմական գործիչների համեմատութեան համար. եթէ այդպէս անենք՝ չենք զարմանալ՝ երբ անցեալի իւրաքանչիւր անձնաւորութիւն յիմարների շարքը դասենք և կամ այն ժամանակի յիմարներին՝ մեր կարգը....։ Այդ մանկական խաղ կդառնայ պատմական անձերի պարկուճներով. նոցա գաղափարների ընդհարումները վէճերի մէջ՝ կհանդիսանան նոյն մանկական աչքերի տակ՝ մանկական խժլտոց։ Դորա միւս միակողմանիութիւնը կլինի՝ եթէ նայենք պատմական ընթացքին իբրև աստուածային մի ողբերգութեան վրայ, ամենայն մանրուք ևս կապելով բացարձակի անմիջական զօրութեան հետ։ Այլ այդ միակողմանիութիւնը խուսափելով, պէտք է սկիզբը կապել աստուածային յայտնութեան յառաջատար ներգործութեան հետ և ապա հետամուտ լինելով ընթացքի բոլոր ճիւղաւորութեանց, դիմել դէպի այն՝ որ վերստին միացնելու է դոցա ծայրերը։ Նոր կտակարանն է այն չափն, որին հետ պէտք է համեմատել իւրաքանչիւր դէպք քրիստոնէական եկեղեցում. քրիստոնէական սկզբունքը պէտք է արտափայլի ամենայն դէպքի մէջ, որ յարակցութիւն ունի նորա հետ և ըստ այդմ որոշելի է դորա արժէքը, կամ շեղուելուց յառաջացած հիւանդոտ վիճակի էութիւնը։ Հարկաւ հիւանդութեան պատճառը կոչմնակի ներգործութեան տակ շեղուիլն է, վասնորոյ և այդ կողմերն ևս դիտելով՝ հարկ է չմոռանալ, որ կարեն նորա հետևանքները դարեր շարունակ աճել և իսկական պատճառը քողարկել, որպէս զորօր. Հռոմայ պապութեան մէջ. այստեղ անհրաժեշտ է չափը ձեռքից չտալ և արտաքին հանգամանքները չմոռանալ։

Գալով այդ ընդարձակ պատմութեան մասերի համաչափութեան, չենք կարենալ մի այնպիսի շաւիղ (մեթոտ) բռնել, որ կարելի

լինի իւրաքանչիւր իրողութիւն հաւասարապէս ուշադրութեան առնել։ 1 Պատմութեան նպատակը մեզ համար որոշ լինելով, հասկանալի է՝ որ միայն այն մասերը պէտք է առանձին ընդարձակութիւն ստանան, որոնք գերագրական նշանակութիւն ունին ամբողջութեան համար և բովանդակում են իւրեանց մէջ մանրուքների էութիւնն և։ Մանրամասնութեանց ընդարձակութեան մէջ մտնել՝ մի և նոյն է թէ սուզուել առանց մի հայեացք ձեռք բերելու։ Չի կարելի նաև միայն մի ստուերագիծ կազմել և դորանով վերջացնել ամենայն ինչ. այլ պէտք է շատանալ միայն ամբողջութեան հետ կապ ունեցող խնդիրներով և միանգամայն պահպանել ընդհանուր ընթացքը։ Մեզ համար ուսումնասիրութեան էական շրջանն է առաջին հինգ դարերը, վասն զի այդ ժամանակ կազմակերպւում է Հայոց առանձնայատուկ և վեհասեմ եկեղեցին. այդ բաժինն առանձին ուշադրութեան առնելուց յետոյ, կարէ երկրորդ տեղը բռնել միջին դարերի հռոմէական և հակահռոմէական աշխարհն, որպէս զի առաջնում ձեռք բերած փսիմութիւնն այստեղ նկատենք և սքանչանանք Հայոց եկեղեցու ուղղափառութեան վրայ, այլ և ըմբռնենք քրիստոնէութեան արտաքին խեղումները։ Հարկաւ Հայաստանեայց եկեղեցու պատմութիւնն առանձին ուշադրութեան առարկայ է մեզ համար, որին պէտք է նպաստէ ընդհանուր եկեղեցական պատմութիւնը՝ համեմատական վայր ունենալու համար աւետարանի չափի հետ։ Նորա դարագլուխները պէտք է կազմեն ս. Սահակ (Ե. դար) Յովհան Իմաստասէրը, Գրիգոր Վկայասէր (ԺԱ. դար), և ս. Էջմիածնի վերահաստատութիւնը։ Պատմական հասկացողութիւնը պէտք է այստեղ ստանայ իւր ինքնագիտաստութեան արտայայտութիւնը։

---

1 Օրինակելի հետազօտութիւնք և պատմութիւնք խիստ բազմաթիւ են գերմաներէն։ Հռոմէական գրութիւնք չկարեն ինքնուրոյնաբար գործածուիլ։ Ռուսաց հոգևոր դպրոցներում (սեմինար) աւանդւում է ըստ Смирновъ ի История христ. церкви, Գ. Դ. և Ե. դասարաններում։ Գերմաներէն ամենից դիւրամատչելի է l. H. Kurtz, Lehrbuch der kirchengeschichte. Leipzig 1890. Ամենահին եկեղեցական պատմութիւնն է Եւսեբիոս Կեսարացունը։

Ընդհանուր եկեղեցական պատմութեան մէջ նշանաւոր տեղ պէտք է բռնեն հերձուածներն և աղանդներն, իւրեանց գլխաւոր ուղղութեանց մէջ, նոյնպէս հռչակաւոր անձնաւորութեանց ուսումնասիրութիւնն ամեն կողմից։ Այդ մեծ հանճարներն, անուանի հաստատութիւնները, մանաւանդ հաւատաքննութիւնը, (Inquisition) և արևմտեան վանականութիւն ևն չեն կորցնիլ բնաւ իւրեանց հետաքննական և կրթիչ զօրութիւնն ամենքի համար, համեմատուելով Հայաստանեայց եկեղեցու առաքելական հարազատութեան հետ։

Սակայն քանի որ անհրաժեշտ է նոր ժամանակն ուսումնասիրել և ճանաչել թէ ինչի դէմէ կռւում այժմ քրիստոնէական ձայնը, հասկանալի է որ ներկան մեծ տեղ է բռնում այդ պատմութեան մէջ։ Թէ Հռովմայ եղուիթական գործունէութիւնն, թէ իւր հակառակորդաց ընդդիմադրութիւնը, թէ Բողոքական անթիւ աղանդների խառնակ վիճակը, թէ այժմեան անբարոյականացուցիչ ընկերվարութիւնը (socialisme) թէ եկեղեցիների ձգտումը՝ վերադառնալու առ արևելեան եկեղեցեաց պարզութիւնը՝ հաւասարապէս հետաքրքրութեան գործեր են արժանապէս։ Այլ և Ռուսաց եկեղեցու այժմեան հզօր պատերազմը ոչնչականութեան դէմ, որի հոսանուտ հոսանքները հեղեղում են և գրաւիչ կողմերը։ Նորա տեսութեան մէջ մարդկային հոգին ստորանում է, արժանիքն իջնում, իդէալը ցնդում, մարդի ներքինը դատարկւում և այդպիսի մէկի համար մի ոչինչ անմիտ բան անպայման արժէք է ստանում։ Եւրոպայում անիշխանական է, ինչ ասա հոգեբանական հիւանդոտ ճգնաժամ է վարակուածի մէջ, զառանցանք և բանդագուշանք է կարճատեսութեան և սկզբունքի այլանդակութեան։ Նա ցնորք է հոգու անհաստատութեան, յորում կայ միայն մի «ես» և դորա շուրջ աշխարհը խաղ և խայտառակութիւն նորա եղծուած խեղուած հոգու հայելու մէջ։ Իդէալ, մարդկային էութեան բարձրութիւն, սէր, յոյս, կատարելագործումն, երախտագիտութիւն, պարտաճանաչութիւն, բարոյականութիւն ևն եղջերուաքաղ են դառնում, որոնք իբրև մոքերի բեկորներ՝ վայր ի վեր են

թռչկոտում նորա ամայի խելքի ճեղքուածների հողմերի տակ։[1] Այդ ուսումնասիրութիւնն[2] անհրաժեշտ է եկեղեցու համար իւր կենսագործական և բարոյակրթիչ ձեռքը գործօն պահելու և աշխարհն արծուի նման ի վերուստ վերագիտելու համար, որպէս իւր պաշտօնն և աստուածային սուրբ խնդիրն է մարդկութեան մէջ և այդ կէտում պարտ են բոլոր եկեղեցիք իրար գործակցել։

Ամբողջ եկեղեցական պատմութեան հիմնական ուսումնասիրութեան անհրաժեշտ նպատակներ են և տիեզերական, կրօնի, փիլիսոփայութեան, արուեստի, իրաւունքի նոյն իսկ բժշկութեան և գրեթէ ամբողջ քաղաքակրթութեան պատմութիւնք, եկեղեցական աշխարհագրութիւն, ժամանակագրութիւն, աղբիւր-

---

1 Այդ հոգևոր այլանդակութիւնն, որի ճարը միայն բժշկութիւնից է սպասելի, не имѣлъ никакой связи съ вѣковыми идеаламы народными, есть явленіе только болѣзненное есть нарывъ на живомъ и мощномъ тѣлѣ народномъ, есть вырожденіе тоски блуднаго сына, растратившаго свое душевное имущество съ блудницами и ложными друзьями, но не находящаго еще въ себѣ мужества чтобы вернуться въ отчій домъ. Вотъ почему нашъ нигилизмъ въ житейскомъ своемъ выраженіи есть явленіе отвратительное и грязное, въ принципіальномъ же своемъ выраженіи—явленіе, съ одной стороны, ужасное, съ другой—трагическое и трогательное. Въ своемъ выраженіи трагическомъ и трогательномъ нашъ нигилизмъ вовсе не есть результатъ какого нибудь логическаго вывода, онъ вовсе не есть стремленіе къ чему нибудь опредѣленному, къ какимъ нибудь политическимъ правамъ, къ тому или иному общественному переустройству—онъ есть просто душевное состояніе, результатъ какого то страннаго и мрачнаго отъединенія отъ жизни—отъ всей жизни, во всей ея совокупности Моск. Вѣд. № 62. 1893.

2. Էական է և այս որ այդպիսի հոգեկան վիճակի մարդկանց համար իրական աշխարհը կորչում է и пустота образовавшаяся на мѣстѣ этого изчезнувшаго міра населяется призраками и фантомами, безформенными и безсодержательными, но кажущимися чѣмъ то реальнымъ, съ чѣмъ можно и должно бороться. Նորա հոգեկան ճգնաժամը վերջանում է այնով, որ նա հուսկ ուրեմն բեկւում է, ընկնում է տիեզերքի վեհութեան առաջ և գիմելով՝ քրիստոնէական ձայնից լուծումն խնդրում և խաղաղում, եթէ միայն այդ բեկումը ժամանակին վրայ է հասնում։ Դոցա դիմաց Դոնքիշո-

ների հետաքննութիւն ևն. վասն զի այդ բոլորը յերիւրուած են և իւրեանց մեծ բաժինն ունին եկեղեցու պատմութեան ընթացքի մէջ։ Մինչև անգամ մահմետականութեան պատմութիւնը առնուազն՝ խաչակրաց արշաւանքների համար անհրաժեշտ է ճանաչել։ Այստեղից ինքն ըստ ինքեան հետևում է, որ հարկէ նաև հեթանոս աշխարհը բաւականաչափ ուսումնասիրել, որպէս զի կարենանք ըմբռնել քրիստոնէութեան այն վեհ բարձրութիւնն, որ անչափ անհրաժեշտ էր՝ մարդկութիւնը նքողումից զօրացնելու անմահարար զուլացմամբ։

19.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԴԱՒԱՆԱՆՔՆԵՐԻ։

Եկեղեցական պատմութեան ընթացքին և պատահարներին քննաբար հասու լինելու համար անհրաժեշտ նպաստ է դաւանանքների պատմութիւնը, վասն զի առաջնի նիւթը սերտ կապուած է դաւանանքների պատմական զարգացման հարցերի հետ։ Իսկապէս այդ առարկան մասն է եկեղեցական պատմութեան,

---

տրն անգամ արիութիւն և հոգու ամրութիւն ունի։ Տես. և Русск. Мысль. №. 2. Расказъ неизвѣстнаго человѣка.—Անդ Արլովի մասին ասուած է «Говорили о религіи—иронія, говорили о философіи, о смыслѣ и цѣляхъ жизни—иронія, поднималъ ли кто вопросъ о народѣ, его страданіяхъ, будущности—иронія..... Они съ ироніей говорили что Бога нѣтъ и со смертью личность изчезаетъ совершенно; безсмертные существуютъ только во французск. академіи. Истиннаго блага нѣтъ и не можетъ быть, т. к. наличность его обусловлена человѣческимъ совершенствомъ, а послѣднее есть логическая нелѣпость. (էջ. 163) Բարոյականութիւնը չկայ նոցա համար և պէտք էլ չէ. չկայ և սրբութիւն և աղնուութիւն. դոքա ցնորքներ են. նոցա համար կայ միայն «свое эгоистическое я, и съ точки зрѣнія этого я онъ обсуждаетъ всѣ вопросы міра и жизни. Нравственность здѣсь замѣнена понятіемъ нравственнаго комфорта и условныхъ приличій. Все что внѣ этого—сведено просто на физіологію. Любовь—физіологическое отправленіе, бракъ—условная форма общежитія, имѣющая только значеніе декораціи. Религія, государство семья—тоже декораціи, необходимыя въ житейскомъ обиходѣ. Народъ—грубая масса..... Որոնել պէտք չէ. դոքա երևումեն իւրեանց facies Hippocratica'ով. ցաւալի է միայն որ Un sot trouve toujours un plus sot qui l'admire. (Boilaeu).

որովհետև ներկայացնում է քրիստոնէական հաւատքի այն զարգացումն ու կազմակերպուիլն, որով կազմուել են հիմնական համոզմունքների որոշ արտայայտութիւններ կամ դաւանանքներ։ Հասկանալի է՝ որ այդ դաւանանքներն աւանդաբար անցել են մինչև առ մեզ զանազան դէպքերի հետ կապակցուած, ըստ օրում և ունին իւրեանց քննական պատմութիւնը՝ թէ ինչպիսի հանգամանքների հետ են ընթացել, յերիւրուել կամ ընդհարուել։

Յայտնի է՝ որ Քրիստոս ոչինչ չէ տուել գրաւոր. բերանացի է եղել Նորա աւանդածը. բերանացի—և առաքեալների քարոզածը։ Իսկ ինչ որ վերջիններս գրի են առել, այդ արել են միայն ի դէպ, երբ պէտք է զգացուել մի համառօտ ամփոփումն տալ այն քարոզութիւնների, որոնցով ջանացել էին երկնային վարդապետի երկրային կեանքն և ուսուցումը ներկայացնել մարդկանց աննման կրթութեան համար։ Հարկաւ քրիստոնէութեան էական սկզբունքները պէտք է ժողովրդին մատչելի դառնային միայն ժողովրդական լեզուով, ժողովրդական պատկերներով և ժամանակի արտայայտական եղանակով։ Վասնորոյ և իւրաքանչիւր առաքեալ՝ նայելով թէ ինչ շրջանի մէջ էր քարոզում՝ ըստ այնմ և ծաւալումն էր տալիս իւր նիւթին, առաւել առաջ տանելով այն գաղափարներն, որոնք պահանջւում էին, ուստի և այլ է Մատթէոսի աւանդած տիրական աւետարանն, այլ է Մարկոսինն ու Ղուկասինն իւրեանց հիմնական ծրագրով և այլ Յովհաննէսինը, որ առուծաբանում է «ի սկզբանէ»՝ սկսելով իւր քարոզութիւնը մարդացեալ Աստուծոյ Բանի մտածողական սկզբից։

Քրիստոնէական գաղափարները ժամանակի ընթացքում պահանջ յառաջացրին բանակարգական մշակման և այդ այնքան առաւել, որքան յառաջադիմում էր համայնքը. նոքա զարգացան՝ այո՝ Յովհաննէս և Պօղոս առաքեալների գործունէութեան շրջանում. սակայն երբ հրէական և հեթանոսական հայեցողութիւնները սպառնացին խառնուելու այդ աստուածային վարդապետութեան մէջ, զգալի եղաւ քրիստոնէական սկզբունքների դաւանական մի ամփոփումն. այդ տեղից ծագեց հաւատալիքի այն գեղեցիկ և հակիրճ հիւսուածքն, որ բաղմիցս կրկնում են իւրա-

քանչիւր հոգևորական և աշխարհական առաւել քան իբրև երդումն հաւատարմութեան Աստուծոյ՝ Հայաստանեայց ս. եկեղեցու, հայրապետի և խղճի առաջ։ Բայց քանի որ կային զանազան ուղղութիւններ ուսումնասիրական շրջաններում, որոնք միացուցիչ մի աղբիւր չունենալով, այդ սկզբունքների հասկացողութեան նկատմամբ տարաձայնում էին, յառաջացան վէճեր՝ ուրեմն և հարազատ տեսութիւնների հետամտութիւն։ Ահա այս հետամտութիւնը, որ քննական պարտ է լինել, ձգտում է գրանել ճշմարիտը, ճանաչել սխալն ու մոլարը, զատել հարազատն անհարազատից՝ և այս ամենը դաւանանքների պատմութեան խնդիրն է։ Այս պատմութիւնն է՝ որ ըմբռնել է տալիս դաւանանքների էութիւնն և գիտաստ կացնում նոցա, որպէս զի դոքա լոկ ղողանջիւն չդառնան դաւանողների խմացութեան մէջ, այլ բնորոշ հաստութեան հիմունքներ։ Այստեղ է որ հայ խուզակը կտեսնէ Հայաստանեայց եկեղեցու պատմութեան առաքելական այն սքանչելի պարզութիւնն ու հարազատութիւնն, որոնց պահպանութեան համար կռուել են Հայոց ազնուամիտ Հայրապետները Ե. դարից սկսեալ շարունակ, բայց և այնպէս կարճատեսների շրջանում չեն ճանաչուել և թշնամանուել են։ Այլ և ուսումնասիրելով այս պատմութիւնը կտեսնենք, թէ ինչպէս այն սկզբունքներն, որոնք մարդկային փրկութեան հիմունքներ են, կեանքի և մահուան խնդիրներ էին դարեր շարունակ։

Քրիստոնէական դաւանանքներն և սկզբունքները միմեանց հետ այնպէս յերիւրուած են, որ անհրաժեշտ է խոյս տալ այս ու այն կէտի զանցառութիւնից. ընաւ չի կարելի որոշել գլխաւորներ և երկրորդականներ, կամ էականներ և մասնաւորներ և ըստ այնմ ուսումնասիրել, վասն զի այն որ մասնաւոր է կամ երկրորդական մէկի բոպէական կարծիքով, մեծ նշանակութիւն է ունենում հիմնական դաւանանքների բացատրութեան համար, և առաջնի չլինելը կարէ երկրորդի մէջ բաց յառաջացնել և կամ կռուան տալ հակաճառական առարկութիւնների [1]։ Անյար-

1. Հին մոլորութիւնների ծանօթութիւնը խիստ անհրաժեշտ է, առանց որի անհնար է խուսափել անգիտաստական սխալներից։

մար է նաև պատմական տեսակէտով շրջանների բաժանել և իւրաքանչիւր շրջանի մէջ դաւանանքների պատմութիւնն առանձին ուշադրութեան առնել, զի այդ կցկտուր ամբողջութիւն կտայ։ Միակ շաւիղը (մեթոդ), որով կարելի է անսայթաք ընթանալ՝ այդ դաւանանքների դարաւոր կարգն է, որ պահպանուած է հէնց հաւատամքի մէջ. դոյն կարգի վերևից սկսել և ներքևից ելնել՝ համառօտութեան ամուր հիմնաքար կլինի։

Ս. Գիրքն և առաքելական հայրերի գրութիւնները վարսելով իբրև հաստատուն չափ և դորանով չափել հետակայ դարերի դաւանական վարդապետութիւններն իւրեանց պատմական հանգամանքներով — այս է դաւանագէտի հայեցակէտը։ Այդպէս կճանաչէ նա քրիստոնէութեան վեհ անցեալն և ապա այն «տխմարութիւններն», որոնց կատարելութիւնը պանծացաւ սխոլաստիկութեան մէջ և իւր հակադիր վերջին ծայրայեղութիւնը տուաւ Բողոքական աղանդների ոմանց ասպարիզում։ Թէ որքան հետաքրքրական է այս գիտութիւնը՝ նկատելի կլինի՝ եթէ յիշենք այն ընդհարումներն ու գործակցութիւնն, որոնք եղել են քրիստոնէական հայեցողութիւնների՝ և մարդկային յետադիմութեան ու յառաջադիմութեան գրեթէ բոլոր արդիւնքների հետ։ Իսկ սխոլաստիկութեան մթնոլորտը կտայ մեզ հաճոյք և կսկիծ, զի այդ է քրիստոնէութեան քողով ծածկուած Հռոմէական կատակերգութիւնը։

20.

ՀԱՑՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Եկեղեցու վարդապետութիւնն ուսումնասիրելու համար, որպէս տեսանք, անհրաժեշտ է դիմել առ եկեղեցական հայրերի գրուածներն, որպէս զի Ս. Գրքի և դոցա չափով որոշենք նաև սխալն ու մոլորը։ Այստեղից յառաջանում է կարիք մի առանձին բանակարգի, այն է հայրաբանութեան, որ Հայաստանեայց եկեղեցուն վերաբերեալ մասով կարէ լրացումն ստանալ նաև եկեղեցական մատենագրութեան մէջ, իսկ օտար եկեղեցիների շրջանը — ընդհանուր եկեղեցական պատմութեան մէջ։

Հայրաբանութիւնը զբաղւում է եկեղեցու հայրերով, իսկ եկեղեցական հայրեր կոչւում են այն եկեղեցականներն, որոնք ներգործական դեր են կատարել մի որոշ եկեղեցու սկզբնական զարգացման համար։ Դոցանից առաքելական հայրեր են կոչւում առաքեալների ժամանակակիցներն, որպէս Բարնաբաս, Իգնատիոս, Պոլիկարպոս, Հերմաս, Պապիաս և Կղեմէս Հռոմանոս*։ Հայրերից դուրս կան և եկեղեցական վարդապետներ և գրողներ։ Հարկաւ չի կարելի կորական բաժանումներ մտցնել դոցա մէջ. միայն թէ եկեղեցական գրողներ լինում են այնպէսներ, (զորօր. Օրիգինէս) որոնք իւրեանց գրուածքներով լիակատար չեն վատահելի։ Իսկ վարդապետներ են, որոնք հիմնուելով հայրերի վերայ, ուսուցել են և քարոզել եկեղեցու ճշմարտութիւնները։ Հայաստանեայց եկեղեցին հետեւելով իւր դարաւոր գործունէութեան պատմութեան՝ ունի իւր հայեցողութիւնն այդ նկատմամբ, որ տարբերւում է թէ Հռոմէական և թէ «Բողոքական» եկեղեցիներից։ Հռոմ հասցնում է իւր հայրերի շրջանը մինչև ԺԳ. իսկ «Բողոքական» եկեղեցիները մինչև Զ. դարը։ Հայաստանեայց եկեղեցու հայրերի անպայման շրջանն է մինչև Ե. դարի վերջը. իսկ այդ ժամանակից մինչև ԺԲ. դարը եկեղեցական հայրեր են միայն օրինաւոր ընդհանրական կաթուղիկոսներն և նոցա հովանաւորութեան տակ գործող եկեղեցականք. իսկ այնուհետև եկեղեցական հեղինակները սուրբ վարդապետներ են, որոնց ասածները պէտք է անպատճառ չափել ս. հայրերի համեմատութեամբ։ Այս վերջին շրջանում էս եղել են Հայաստանեայց եկեղեցուն ջերմ նախանձախնդիր և անձնուէր անձինք, որոնք կռուել են Հայոց ուղղափառութեան պաշտպանութեան համար և սրբոց կարգը դասուել. սակայն և այնպէս նոցա գրուածները չեն կարող ինքնուրոյն աղբիւր դառնալ եկեղեցու վարդապետութեան, այլ միայն ձեռք ձեռքի տուած ս. հայրերի հետ։ Այս տեսութեան մի պարզ և մեծաբարբառ ապացոյցն այն է, որ հայոց եկեղեցականները մինչև մեր օրերը նախ յենուում են Ս. Գրիգոր Լուսաւորչի և նորա ս. ժառանգ-

* Տես Hagenbach. անգ. էջ. 326։

ների, ապա գոյա յաջորդ ընդհանրական կաթուղիկոսների և Պահլաւունիների՝ հուսկ յետոյ ս. Ներսէս Շնորհալու վերայ և ապա թէ յիրարկում են մասամբ և վերջին շրջանի սրբերի գրուածները։ Քաջայայտ է որ հայրաբանական ուսումնասիրութեան մէջ պէտք է մանէ ոչ միայն ս. հայրերի կենսագրութիւնն, այլ և նոցա հիմնական վարդապետութիւնը, եթէ այդ մինչև անգամ եկեղեցական մատենագրութեան նիւթ դառնայ։[1] Իսկ թէ որքան մեծ տեղ պէտք է բռնեն այդ հոգեշունչ հայրերի վսեմաթռիչ և ազդու գրուածների ընթերցանութիւնն, այդ կղզայ իւրաքանչիւր ոք, եթէ միայն փոքր ինչ ծանօթանայ դոցա կենդանի պարզութեան հրաշալի վեհութեան և ուշագրաւ գեղեցկութեան[2]։ Հայաստանեայց ուղղափառ ս. եկեղեցին կարելի է միմիայն դոցանով ճանաչել և սիրել։

21.

ԴԱՒԱՆԱԴԻՏՈՒԹԻՒՆ։

Բաւ չէ գիտենալ եկեղեցիների անցեալ պատմութիւնը. հարկ է ճանաչել նաև նոցա այժմեան վիճակը՝ թէ կազմակերպական և թէ ծիսական կողմից. ահա այս առարկայ է դաւանագիտու-

---

1. Մենք չունինք Հայոց ս. հայրերի գրուածների կանոնաւոր հրատարակութիւն։ Յոյն և Լատին հայրերինը կայ գեղեցիկ հրատարակութեամբ J. P. Migne, patrologiae cursus completus.... Paris 1844—: և այլք։ Ցիշելի է և E. Fialon, les péres de l'église grecque: recueil de discours, de lettres et de poésies etc. Paris. 1882. Harnack և Gebhardt ևս հրատարակում են Texte und Uebersetzungen z. Gesch. der altchrist. Literat. Leipzig 1882—.

2. Հայոց դպրոցներում չեն կարող օտար եկեղեցիների հայրերը կանոնաւոր տեղ բռնել հայրաբանութեան մէջ. սակայն փափագելի է որ գոքա գոնէ մինչև Եփեսոսի առաջին ժողովը ուսումնասիրուեն լաւապէս դաւանանքների պատմութեան մէջ։ մանաւանդ որ կան հայերէն գեղեցիկ թարգմանութիւններ, թէև մեծ մասամբ անտիպ։ Հայոց մէջ աստուածաբանի նշանաբանը պէտք է լինի առհասարակ կարճ ժամանակում և սակաւ ժամերում շատ բան ամփոփել և առարկաների թիւն ըստ կարելւոյն չբազմացնել։

թեան և կամ ըստ օտար անուան (symbolik)[1] Հանգանակագրաութեան։ Հանգանակաբանութիւն է կոչուած, վասն զի սկզբնապէս զբաղուել է եկեղեցիների հաւատոյ հանգանակներով և հրապարակական հաւատագրութիւններով. մինչդեռ այժմ չէ սահմանափակւում միայն դոցանով, այլ գլխաւոր ուշադրութիւն է դարձնում եկեղեցիների դաւանական, վարչական, ծիսական, կենսական և վարդապետական առանձնայատկութիւնների վրայ, ամփոփելով նաև պատմութեան այն էական շրջաններն, որոնք հիմնական նշանակութիւն են ունեցել այս ու այն եկեղեցու բնորոշ զարգացման համար։ Հարկաւ սորա շրջանից դուրս չեն և այժմեան մանր մունր աղանդները։ Այսպիսով այս առարկան իւր ծրագրով լոկ պատմական է և անհրաժեշտ նպաստ ու նախադուռն Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանութեան։

Վերև տեսանք, որ հաւատոյ հանգանակը կամ հաւատամքն՝ դաւանանքների այն ամփոփումն է, որ խոստովանւում է մի եկեղեցու կամ համայնքի բոլոր անդամներից։ Ցոյց է որ այդ անհրաժեշտ է և հաւատամքը պէտք է կրօնի առաջին ուսուցման նիւթ լինի, քանի որ կան զանազան դաւանանքներ և մոլորութիւններ կամ հերետիկոսութիւններ. իսկ առանց դաւանանքի կամ օտարածին դաւանանքի պատկանող լինել՝ նոյն է թէ հոգով չպատկանել մի որոշ սրբագործուած ազգային համայնքի կամ եկեղեցու։

Հայաստանեայց եկեղեցին ունի մի նշանաւոր հաւատամք, որ իւր գեղեցիկ առանձնայատկութիւններով հանդերձ՝ մասամբ ծագումն է առել Երուսաղէմի և Ասորական հաւատամքների կապակցութեամբ. իւր վերջնական լրացումը ստացել է, որքան կարելի է հետամտել, Ե. դարի առաջին կէսում։ Միայն թէ հիմնական կէտերով համաձայն է Նիկիոյ մեծ ժողովի դաւանանքին, ուստի և կոչուել է Նիկիական։ Նորա արտայայտութիւնները գտնում ենք Հայոց ս. հայրերի գրուածներում, իսկ կտորներ՝ Զ. դարի (Կոմիտաս կաթուղիկոսի և այլոց) դեռ անտիպ թղթերի մէջ ևս։ Իսկ այդ հաւատամքի բոլորովին համառօտութիւնը

1. Symbolon յոյն բառից, որ է նշանակ, դաւանաձև։

մկրտութեան հաւատամքն է, որ յիրարկւումէ մկրտութեան ժամանակ *։

Առաւել ընդարձակ մի հաւատաբանութիւն ևս կայ ժամագրքում, որի մէջ Հայաստանեայց եկեղեցու դաւանանքները ճշգիւ մի առ մի և պարզ արտայայտուած են 1։

Ուրիշ քրիստոնէական եկեղեցիներից գրեթէ իւրաքանչիւրը ձրգատելով դէպի ինքնուրոյնութիւն՝ ունի իւր սեփական կամ սեփականացրած հաւատամքը։ Հռոմէական եկեղեցին ունի և առաքելական կոչուած մի հանգանակ, որ հաստատապէս Հռոմէական մի եկեղեցումէ հեղինակուել, մանաւանդ որ արևելեան եկեղեցիները դորա մասին տեղեկութիւն չունին։

Դաւանագիտութեան գործը չէ վերջանում այդ հաւատամքները հետազօտելով և ճանաչելով. նա ամփոփումէ և զանազան եկեղեցիների դաւանանքներն և համեմատութիւն անում դոցա մէջ։ Նա ներկայացնումէ և քրիստոնէական եկեղեցիների բարոյական կեանքը մանրամասնաբար. այլ և նոցա վանական, վարչական և ծիսական կազմակերպութիւնն՝ արտաքին և ներքին վիճակի և յարաբերութեան հետ միասին 2։ Հուսկ ապա՝ դաւանա-

---

*. Տես և իմ գրուածքը Die Armenische Kirche in ihren Beziehungen zur Byzantinischen, vom IV bis zum XIII Jahrh. Leipzig. Gustav Fock. 1892. էջ 21—28: Նիկիականի հին թարգմանութիւն կայ գրչագրների մէջ Նիկիոյ ժողովի կանոնների հետ, որ խիստ տարբեր է Հայոց հաւատամքից։

1. Ժամագիրք Հայաստանեայց ս. եկեղեցւոյ, արարեալ սրբոց թարգմանչացն մերոց՝ Սահակայ և Մեսրոպայ և երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ և Յովհ. Մանդակունւոյ և սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ. ս. Էջմիածին 1892, էջ, 1—3։

2. Առհասարակ բոլոր առարկաների և մանաւանդ քնքոյշ հարցերով զբաղուող ճիւղերի գիտական հետազօտութեան համար չի կարելի վերցնել միայն մի եկեղեցու պատկանող հիղինակի, այլ նաև հակառակորդների գրութիւնները։ Ամենանշանաւորներն են Հռոմէականների մէջ՝ Moehler, Symbolik 10. տիպ Mainz 1888 իսկ բողոքականների մէջ Dr. G. B. Winer, comparative Darstellung das Lehrbegriffs der verschiedenen christlichen Kirchen.... 4 տպագրը. Leipzig. 1882. Խիստ ընդարձակ է և դեռ կիսատ Kattenbusch, Lehrb. der Konfessionstkunde. Freiburg 1892.

գիտութիւնը պէտք է ուշադրութեան առնէ քրիստոնէական գլխաւոր եկեղեցիների ուսումնական կեանքը, թէ ինչ գործունէութիւն ունին նոցա հոգևոր դպրոցներն ու ճեմարանները. կամ եկեղեցականութիւնն ու ժողովուրդը, թէ որքա՞ն են կարենում դոքա աւետարանի լուսաւորութեան գրօշակը բարձր պահել, ձգտո՞ւմ են դոքա հաւատքով յառաջ վարել աշխարհի յառաջադիմութիւնն ու կատարելագործումն, որպէս պահանջում է աւետարանը, թէ հաւատքի ամրութիւնից զուրկ լինելով, չգիտեն ճշմարիտ լուսաւորութիւնն և ընդդիմադրում են նորան վախկոտաբար՝ որպէս խաւարի, և թէ արդեօք որքան են կարող կենդանութիւն տանալ աւետարանի աստուածային ձայնից, որպէս զի չպայթին լուսոյ տունկերից՝ իբրև տկար անօթներ։

Անշուշտ այս գիտական ուսումնասիրութիւնը լոկ վերացական չպէտք է լինի, այլ վիճակագրական տուեալների հիման վրայ. եկեղեցու աշխարհագրական ծաւալումն անգամ տեղ է բռնում այստեղ, նոյնպէս և ժողովրդի, թեմերի, հոգևորականների, դպրոցների և այլոց թիւը՝ հարկաւ և տարեկան յառաջադիմութիւնը։ Դորա համար և՛ անհրաժեշտ է կրթել երիտասարդի պատմական հասողութիւնն, որ կարենայ խելամուտ լինել չոր ու ցամաք տեղեկութիւնների էութեան և նշանակութեան և օգտուել լրագրական, ճանապարհորդական և պաշտօնական տեղեկութիւններից, մանաւանդ և որոշել վատահելին և անվստահելին, որոնք ամենուրեք խառնուում և շփոթուում են իրար հետ։ Այս վիճակագրական հմտութիւնը ցոյց կտայ դիւրաւ, որ գիտութեան, լուսաւորութեան և քրիստոնէական բարոյականութեան յառաջադիմութիւն ու զօրութիւնը բնաւ չեն կախուած ժողովրդի և երկրի մեծութիւնից ու ճոխութիւնից, այլ լիապէս ազգային հոգևոր կենդանութիւնից, որի անդեան արմատները խոր տեղաւորուած են աստուածային լոյսի կատակարանի մէջ։

Խիստ հետաքրքրական է մեզ համար ուրիշ եկեղեցիների դպրոցական կեանքը։ Զուիցարիայի նման փոքրիկ երկրում կան աստուածաբանութեան 6 համալսարանական ֆակուլտետներ (ի Բազէլ, Բերն, Ժընեվ, Լոզան և Ցիւրիխ), 2 ճեմարան (ի Նոյշատել և Ֆրիբուրգ) 3 ազատ մասնագիտարան-

ներ (Ժընեվ, Լոզան, Նոյշատել), և այլ դպրանոցներ։ Այդ 11 մասնագիտարաններում սովորել են անցեալ տարի 462 աստուածաբաններ և 18 լսողներ. Ցիւրիխում 20ի չափ աւարտած անձինք չեն կարեցել օգոստոսին տեղ գրտնել։

Ֆրանսիայում շուրջ 10,000 աշակերտ են եղել հոգևոր դպրանոցներում։ Գերմանիայում 20 համալսարանների աստուածաբանական բաժնում 150 բողոքական և 53 հռովմէական պրոֆեսորների դասախօսութեամբ սովորել են 3840 բողոքական աստուածաբաններ և 1080 հռովմէական, ընդ ամենը—4920։ Պրոֆեսորութիւն ստանալու համար պէտք է ունենալ գիտնականութեան ցենզ։

Ռուսաց եկեղեցին ունի 4 հոգևոր ճեմարաններ (ի Պետերբուրգ, Մոսկվա, Կազան և Կիեվ) 800 ուսանողներով, իսկ 60 դպրանոցներ 3,600 աշակերտներով։ Իտալիան, Սպանիան, Պորտուգալեան, Անգլեան առաւել ևս անցնում են այդ համեմատութիւնից։ Նոյն իսկ հիւսիսային Ամերիկայի եպիսկոպոսական եկեղեցին ունի 72 եպիսկոպոսներ, 3,865 քահանաներ, 313 սարկաւագներ, 582 թեկնածուներ, 1,806 ընթերցողներ, 549,250 դրոշմուողներ. սովորողներ կիրակնօրեայ դպրանոցներում 42,828. աշակերտներ 398,378 եկեղեցիներ 4,581, որբանոցներ 49. պատսպարաններ 62. ճեմարաններ 62. կոլէժներ 13. աստուածաբանական դպրոցներ 20. և այլն։ Վերջին 3 տարիներում աւելացել են 618 եկեղեցիներ. նուիրատուութիւններ հաշուում են 50 միլիոն դոլլար։ (Տես le catholique Français 1893 №.20. Revue internationale de Théologie, Berne 1893. №. 1 էջ. 89. Akademisches Taschenbuch f. Theologen. Berlin 1892. Приложеніе къ коленд. для учителей Ф. Гельбке 1893).

Ռուսաց հոգևոր դպրոցներում աւանդւում են. ուսումն ս. Գրոց 4. ժ առաջին դասարանում մինչև 2. Օրէնք։ Բ. դասարան 2 ժ մինչև Եզր։ Գ. դասարան 4 ժ. մինչև Սիրաք։ Դ. դաս. 3 ժ. մարգարէները։ Ե. դաս. 3։ ժ. մինչև Գործք առաք.։ Զ. դաս 3։ ժ. Թղթերն ու յայտնութիւնը։ Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կաակի 2 ժ. Բ. դաս.։ Ընդհ. եկեղեց. պատմութիւն՝ Գ. դաս. 2 ժ։ Դ. դաս. 3 ժ. մինչև կրօնական վերանորոգութիւն։ Ե դաս. 1 ժ։ Ռուսաց եկեղ. պատմ. Ե։ դաս 2 ժ։ Զ. դաս. 1 ժ. (1589—1700 թիւը)։ Աստուածաբանական ներածութիւն 3 ժ։ Ուսումն ռուս հերձուածի մասին (расколъ) 6 ժ. Ե. և Զ. դասարաններում։ Դաւանաբանութիւն Ե. և Զ. դաս. 6 ժ։ Հերքողական (обличительное) աստուածաբանութիւն. Զ. դաս. 1 ժ. Բարոյաբանութիւն։ Զ. դաս. 2 ժ։ Գործնական աստուածաբանութիւն Ե. դասարան 2 դաս. Զ. 2 դաս։ Ընդհ. ծիսագիտութիւն (литургика) Դ. 1 ժ։ Մասնաւոր ծիսագիտութիւն Ե. 2 ժ։ Տրամաբանութիւն։ Հոգեբանութիւն։ Համառօտ պատմութիւն փիլիսոփայութեան Բեմբասացութիւն. տարրական մանկավարժութիւն. Տեսութիւն

բանահիւսութեան Ա. դաս. 4 ժ։ Բ. դաս. 4 ժ։ Ընդհ. և Ռուսաց պատմութիւն Ա, Բ և Գ դաս. Ռուսաց գրականութիւն Բ. դաս. 4 ժ։ Տարրական հանրահաշիւ մինչև յառաջխաղութեան (прогресія) վերջը։ Տարրական երկրաչափութիւն։ Համառօտ տոմարագիտութիւն։ Բնաբանութիւն համառօտ։ Լատին յոյն և երրայեցերէն լեզուներ։ երգեցողութիւն։ Հոգևոր ճեմարանների վերատեսուչները հոգևորական են և ունին ոչ աւելի քան 2 ժամ աստուածաբանական դասախօսութիւն և հսկում են բարոյական և կրօնական ուղղութեան։ բոլոր կարգերի և դասախօսութիւնների վրայ։ Տեսուչը մի պրոֆեսոր է։ ըստ կարելոյն հոգևորական. նա դաստիարակ է և ունի երկու օգնականներ։ որոնք պէտք է լինին մագիստրոս կամ հոգևոր թեկնածուներ. դոքա կարեն դասեր ունենալ և կարգապահներ են։ Դասախօսները միայն ռուսագաւաններն են։ Աւանդւում են՝ աստուածաբանական ներածութիւն։ ս. Գիրք։ դաւանաբանութիւն։ բարոյաբանութիւն։ հովուական։ բեմբասացութիւն։ մանկավարժութիւն։ եկեղեցական իրաւաբանութիւն։ եկեղեց. պատմութիւն։ հայրաբանութիւն։ եկեղեց. հնաբանութիւն և ծիսագիտութիւն։ փիլիսոփայութիւն։ տրամաբանութիւն, հոգեբանութիւն, բնաղանցութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն. ապա գրականութիւն։ լեզուներ։ դաւանագիտութիւն։ Ուսումը տևում է 4 տարի. ընդունւում են քննութեամբ՝ գիշերօթիկ. իսկ երթևեկներ՝ միայն եթէ ծնողաց մօտ են ապրում. ազատ ունկնդիրներ—առաջնորդի թոյլտուութեամբ և եթ։ Մատենադարանի գրքերը։ լրագիրներն և ամսագիրները պէտք է ունենան առանձնապէս վերատեսչի թոյլտուութիւնը։ Տես. Уставъ и штатъ православныхъ дух. Академій Спб. 1884.

Դաւանագիտութեան այդ մանրամասնութեան մէջ նշանաւոր տեղ պէտք է բռնեն թէ Հռոմէական եկեղեցու հեթանոսական կարկատաններն ու սկզբունքները [1], թէ նորա գէմ բողոքող ուղղութեան բազմաթիւ հերձուածների բանապաշտական (rationaliste) կամայականութիւնների ծայրայեղութիւնները։ Թէ հեթանոսութիւնն ինչպէս մարմնացած է Հռոմ. եկեղեցում։ այդ կարելի է տեսնել նոյն իսկ այն պառակտումից՝ որ եղաւ նորա և «հին կաթոլիկ» համայնքի [2] մէջ. սա է որ ձգտում է դէպի արևելեան

1. „Rome, qui est une secte, la plus grande du monde, mais une secte, a faussé la nation de l'Eglise, qui est dévenue une vaste organisation ecclesiastique plutot qu' une institution divine". Le cathol. Français 1893 №. 19. Ուրեմն համարում է «աշխարհի ամենամեծ աղանդ»՝ Հռոմը։

2. Դոցանից զորօր. Պարիզի համայնքը՝ հայր Hyacinthe Lyoson հռչակա-

եկեղեցիների պարզութիւնը, յառաջ տանելով իւր գործունէութիւնը ամբողջ արևմուտքում։ Զևական ծիսականութիւնը, թողութիւնը ծախելը, հեթանոսական ճոխութիւնը, պապի անսխալականութիւնը, աշխարհական ձգտումներն և աշխարհականին պիղծ համարելը, դաւանական շեղջակուտումները, ամբարտաւան ինքնահաւանութիւնը, ազգերի ինքնուրոյնութեան և լեզուի թշնամութիւնն, միլիոնաւոր որբերի ստոուածավայել պաշտամունքները և նոցա պատկերների պաշտումը հրապարակներում և անտառներում, ևն ևն ևն երկնագոչ հեթանոսութիւններ են, որոնք սոսկեցնում են մտածող մարդուն իբրև քրիստոնէական խեղկատակութիւններ։ Իսկ «Բողոքականաց» անհամար աղանդները *, նոցա կամայական տեսութիւնները՝ յառաջացած Հռոմայ դէմ անպայ-

---

ւոր քարոզչի առանձնորդութեամբ պահանջում է ձգել պապի անսխալականութիւնը, եպիսկոպոսների ժողովրդական ընտրութիւն անել, պաշտամունքը ֆրանսերէն ազգային լեզուով կատարել, քահանաներին թոյլ տալ ամուսնանալ, եկեղեցիների ազատութիւն և բարոյականութիւն ներշնչել (1. Rejet de l'infallibilité du pape; 2. Election des évêques par le clergé et le peuple fidéle; 3. Celebration des offices liturgiques et lecture de la Bible dans la langue nationale; 4. Liberté du mariage pour les prêtres; 5. Liberté et moralité de la confession. Տես. Programme de la Réforme catholique Paris 1891.) Պապական անսխալականութիւնն այնպիսի մի սոսկալի գրութիւն է, որի հետ ոչ մի ազգ և ոչ մի պետութիւն չի կարող հաշտուել, զի պապը չէ ճանաչում որ և իցէ կայսր անգամ, եթէ նա չէ հնազանդւում իւր կամաց։

*. Զորօր. Լութերական, Արմինեան, Սոցինեան, Մենոնիտ, Բաբտիստ (Մկրտական) (4. տեսակ), Շաբաթականներ, Տունկեր (Tunkers), Կալվինեանք, Ցվինգլեանք, Օձամկրտականներ, Կամպբելիտք, Քրիստեանք, Նորամկրտեանք, Մեթոդիստներ, Վեսլէյանք, Վիտեֆիլտեանք, Ալբեխտեանք, Միացեալ եղբարք, Փրկազօրք (The salvation Army), Իրվինգեանք, Դարբիստներ, Մորմոններ, Տաճարականներ, Նազարականներ, Երերեաններ (Quäker), Շեկեր, Հիկցիտուեկներ, Պերզեկցիոնիստներ, Ներշնչեալներ, Սուէտաբորգեաններ, ևլն. ևլն.։ Հռչակաւոր Դեօլինգեր պատմագէտը համարում էր 70 բողոքական աղանդներ. իսկ այժմ Նիւ—Իօրկի իմ մի ծանօթ քահանայ Iohann Rockstroh ասում է՝ որ երկու անգամ 70 են դարձել։ Սակայն թէ Հռոմէական եկեղեցու և թէ դոցա մասին ժողոված նիւթերս հարկէ առանձին հրատարակել։

ման բողոքելուց, ինքնահաւանութեան նոյնանման սկզբունքները, մանաւանդ նոցա միսիոնարների այլանդակ քարոզչութիւնը նոյն իսկ քրիստոնեաների մէջ ևն ևն ևն. որոնց մասին ընդհանուր խօսք բանալ չի լինիլ, զի միանմանութիւն չունին, հակընդդէմ ծայրն են բռնում Հռովմայ դիմաց։ Որքան դոքա լաւ ճանաչուեն, նոյնքան և առաւել վեհ և ուշագրաւ կլինի Հայաստանեայց եկեղեցու ուղղափառ դաւանաբանութիւնը։

Գ.

ԲԱՆԱԿԱՐԳԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

22.

ԴԱՒԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ։

Բանակարգական աստուածաբանութիւնը բանում է մեր առաջ մի այնպիսի շրջան, որտեղ փայլում է Հայաստանեայց եկեղեցու վարդապետութիւնը դաւանական և բարոյական ճիւղաւորութեան մէջ։ Մեկնական և պատմական աստուածաբանութիւնը նախապատրաստութիւն են այս բաժնի. այնտեղ մանաւանդ պատմական բաժնի մէջ է՝ որ ձգտումն է յառաջանում ճանաչելու այն սկզբունքներն և դաւանանքներն, որոնցով ամրապնդուած է Հայաստանեայց եկեղեցու ամբողջ կեանքը, գործունէութիւնն ու յառաջադիմութիւնը։ Այստեղ է որ հանգոյց են կազմում աստուածաբանի ուսումնասիրութեան բոլոր արմատները. այստեղ է որ ստանում է նա իւր հոգևոր հաստատութիւնը, յենուելով Հայոց եկեղեցու սուրբ սկզբունքներին՝ իբրև կարծր և անշարժ ապառաժի. սա պէտք է ցոյց տայ հային այն աղբիւրներն, որոնցից միայն կարէ ստանալ նա իւր ծարաւի յագուրդը, կամ այն զինարաններն, որոնցից ստանում է իւր հոգևոր զէնքերը։

Անշուշտ դաւանաբանութեան հիմնաքարն է ս. Գիրքը. սակայն դաւանաբանութիւն Հայաստանեայց եկեղեցու լինելով, պրտրուում է տնհրաժեշտապէս պատմական դարաւոր այդ եկեղեցու շուրջ, որ 1600 տարի նայում է հայ ժողովրդի վերայ և

սնուցանում է նորան կենդանութեան սնունդով [1]։ Բայց նա այդ ս ո ս կ պատմական գիտութիւն չէ դարձնում. նորա աղբիւրը կենդանութիւն է, ուստի և չկարէ մեռելութեան բարեկամանալ. նորա նիւթը պատմական է՝ այո՛, ուստի և քննական է նորա դեկը պատմութեան այդ երկար ալիքների մէջ, սակայն նա նոր է և թարմ, կենդանի և վառ, վասնզի պէտք է մոռանենք նորա վերայ, որպէս զի մեր սեպհականը դարձնենք. դաւանանքը հաւատքի գործ է, այսինքն գիտենալու և զգալու. գիտենալ հաւատալ չէ. հաւատալ—զգալ չէ, այլ գիտենալ և զգալ միանգամայն։ Դաւանաբանին է ասուած՝ «քաջիմաց լեր, մանր քննեա՛, սրատես լեր մտօք առաւել քան աչօք»։ [2] Սակայն «հաւատք հասուցանեն ի ծանօթութիւն փառայն Աստուծոյ» [3], հաւատազուրկ լինելով՝ չի կարելի դաւանաբանութեան մէջ յառաջադիմել, վասն զի «առանց հաւատոյ անհնարին է զՍուրբ Հոգին ընդունել» [4]։ Այսինքն պէտք է զգալ հասկացողութեան հետ կապուած մի ձգտումն դէպի այն, առ որ դիմում՝ենք մեր ուսումնասիրութեան մէջ։

Պատմական է դաւանաբանութեան հիմունքն, այսինքն նորա նշանաբանն է Հայաստանեայց եկեղեցու գիտաստութիւնը, թէ պատմականապէս ուանդուել է նորան աստուածային յայտնութիւնը մարդկութեան փրկութեան համար։ Բայց աստուածայինը մնում է միշտ աստուածային և մարդկութեան մէջ մարդկաբար ըմբռնում՝ և հէնց այդ ըմբռնումներն են, որոնք գիտական մշակման պէտք է ենթարկուին, որպէս զի գիտաստական դառնան մշտապէս։ Հաւատքը համոզմունքի ամրութիւն պէտք է ունենայ.

---

1. «Բողոքականութեան» սկզբնական ձգտումը լինելով դառնալ Հռոմէական հեթանոսութիւնից դէպի քրիստոնէութիւն, նորա մի սիւնը՝ Մելանխտոն ասում է. «չպէտք է ընդունել և ոչ մի վարդապետութիւն, որ վկայութիւն չունի հին սուրբ եկեղեցուց, և դիւրահասկանալի է՝ որ հին եկեղեցիներն պարտ են ունենալ հաւատոյ բոլոր մասերը, այսինքն ամեն ինչ որ անհրաժեշտ է երջանկութեան»։

2. Եղիշէ, անդ. էջ. 319։ 3. Ցաճախ. էջ. 152։ 4. Եղիշէ. անդ. էջ. 313։

համոզմունքը գաղափար է, սակայն գաղափար, որ այլ է տգէտի մէջ և այլ նորա մէջ՝ որ մտածելով է սեփականել մի համոզմունք։ Տգէտի համոզմունքը խախուտ է, երերուն է. ջրեցիր թէ չէ, կոնդուի և տեղը տորիչելեան դատարկութիւն կը-գոյանայ[1]։ Մինչդեռ խոհականի համոզմունքը սեւեռուած է նորա մէջ անբաժան։ Միայն այն է համոզմունք, որի վրայ մտածել ենք. մտածել՝ նոյն է թէ իւրացնել. իսկ այն ամենն, որի վրայ չես մտածել և ունիս, չ'ունիս կամ թուխակաբար ունիս։

Այսպիսով այն որ ստացել է դաւանաբանը մեկնութիւնից և պատմական բաժնից, ձգում է մտածողական իմաստասիրական բովը, մշակում և ներկայացնում կանոնաւոր բանակարգի մէջ։ Դաւանաբանը պարտ է ճանաչել ոչ միայն եկեղեցու անցեալն, այլ և ներկան, որպէս զի հասարակութեան զորգացման դիւրըմբռնելի կացնէ իւր պաշտած պատմական հաւատալիքները։ Վասնորոյ այս ամբողջ թէ ուսման թէ ուսուցման գործում թէ ուսուցողի թէ ուսանողի հոգու մէջ հաւատքը նախընթաց է և յետընթաց։ Նախընթաց՝—զի հաւատալու տրամադրութիւն է պէտք. յետընթաց՝—զի մտածելով կլինի ամուր հաւատք։ Բայց վայ նորան՝ որ կոյր է և տեսնել է ուզում լոյսը, խուլ՝ և լսել է ուզում ձայնը. կամ աչքերը ծածկում է, վախենալով լոյսից կուրանալուց, և կամ աչքով լսել է ուզում, ականջով տեսնել և հակառակում է աստուածային ձայնին[2], կարծելով թէ կկարե-

---

1. Այս է սոսկալի անհաւատութիւնը, Փոքր ի շատէ կրթուած մարդը, որ առանց հիմնովին մտածելու և ուսումնասիրելու մի հարց, չէ կարենում եզրակացութիւն անել, բնաւ չի մտնիլ տգէտի անհաւատութեան մէջ. եթէ նա այդ անհաւատութիւնն իբրև նախապաշարմունք ինչ չէ ժառանգել տգիտութեան ժամանակից։ Ուստի խիստ վտանգաւոր խելակորոյս այլանդակութիւններ են անխոհական և տգէտ անհաւատները։ Դոքա են հասարակութեան զզուելի վէրքերը։ Դոքա ոչ գիտուն են ոչ տգէտ. «տրխամարներն և խելօք մարդիկ հաւասարապէս անվտանգ են։ Միմիայն կիսախամաններն ու կիսագիտուններն են (Halbnarren und Halbweisen), որ վտանգաւոր են։ Göthe. անդ. էջ 123։

2. Այդպիսիների համար է ասում Քրիստոս «Ամենայն մեղք և հայհո-

նայ իւր գլխով ընկոյզ կոտրել։ Հաւատալեաց մէջ անհրաժեշտ է բանալ միայն հոգու աչքերն և եթ։

Դաւանաբանութիւնը ներկայացնում է քրիստոնէական վարդապետութիւնը կամ հաւատալիքն իբրև աստուածային ճշմարտութիւն Հայաստանեայց եկեղեցու մէջ։ Այստեղից հետևում է պարզապէս, որ ջատագովական հանդէս է նորա ընթացքը պատմական և թէ իմաստասիրական բանավարութեան մէջ։ Իսկ ջատագովութիւնը (Apologetik) չի կարող միայնակ ընթանալ, վասն զի նորա դէմ է ելնում հակառակութիւն, որ բանում է նորա առաջ մաքառման հանդէս եւս։ Ահա նորան գործակցում է այստեղ և բանակռիւը կամ մարտաբանութիւնը (Polemik)։ «Երկուսն եւս պատկանում են դաւանաբանութեան, որոնք նորա զգայարանքներն են, զոցանով նա հասկանալի է դառնում։ Նոցա մէջ է դաւանաբանական կեանքի զարկերակը։ Դոքա երկու առանցքներն են, որոնցից մէկով դրականապէս, միւսով բացասականապէս արձակւում է դաւանաբանութեան միջով անցնող ելեքտրական հոսանքը»[1]։ Քայլ առ քայլ յառաջ գնալով, դաւանաբանութիւնը պարտաւոր է իւր հաւատալիքները պաշտպանել հակառակորդների դէմ[2], լինին դոքա հեթանոս թէ քրիստոնեայ։ Նա պէտք է շանթահարէ իւրաքանչիւր մոլորութիւն և բռնաբռնումն։ Այսպիսով ջատագովութիւնն ու բանակռիւը կեդրոնանում է լիովին դաւանաբանութեան մէջ, թէև մեկնու-

---

յութիւնք թողին մարդկան. բայց զՀոգւոյն Հայհոյութիւն մի թողցի» Մատթ. ԺԲ, 31։

1. Hagenbach, անդ. էջ. 361։

2. Հայոց եկեղեցու ս. Հայրերի գրեթէ բոլոր գրուածները ջատագովական բանակռուական են։ Իբրև զուտ ջատագովութիւն յայտնի է գեղեցկարան Եղնիկ Կողբացու «Եղծ աղանդոց», որ յաճախ տպագրուել է։ Քրիստոնէական բազմաթիւ նոր ջատագովութիւններից յիշեմ գոնէ Guizot, méditations sur l'essence de la réligion chrétienne. Paris 1864. կայ և ռուսերէն Спб. 1871. Լայպցիգի համալսարանի պրոֆ. Լութարդի Апологія Христіанства։ Նորերս լոյս տեսաւ և Христіанская Апологетика проф. Н, П. Рождественскаго Спб. 1893.

թիւնն ու եկեղեցական պատմութիւնը նոյնպէս յերիւրուած պէտք է լինին միշտ դոցա հետ։ Իսկ դաւանաբանութեան մէջ ջատագովութիւնը յենւում է պատմութեան վրայ և իմաստասիրաբար ցոյց տալիս, որ քրիստոնէութիւնն է ճշմարիտ կրօնը, մարդկութեան կրօնը։ Հարկաւ այստեղ որոշ չափով տեղ կբռնէ և կրօնի փիլիսոփայութիւնն, որի հետազօտութիւնը, ցոյց տալով որ քրիստոնէութիւնն է կատարելագոյն կրօնը, քրիստոնէութեան ուսումնասիրութեամբ կհետևցնէ՝ որ նա ամփոփում է իւր մէջ ամենայն ինչ, որ պահանջւում է և պահանջուել կարէ կատարեալ կրօնից։ Բաղայայտ է որ քրիստոնէութիւնն առանձնայատուկ կրօն է, աստուածային յայտնութիւն, ըստ որում մարդկանց համար է, ուստի և մարդկային միանգամայն. վասնորոյ և անհրաժեշտ է ակներև կացնել՝ որ հէնց այդ է մարդկային որոշման պահանջածն, այդ է իւրաքանչիւրի հոգեկիցն, և իւրաքանչիւրը դորա մէջ միայն պէտք է գտնէ մարդկութեան բաղձալի փրկութիւնը։

Բայց քանի որ մեր դաւանաբանութիւնը վերաբերում է Հայաստանեայց ուղղափառ եկեղեցուն, որին մենք պատկանում ենք սրտով, ուստի դաւանաբանական բանակռիւն ևս պէտք է անբաժան լինի նորանից։ Հայաստանեայց առաքելական եկեղեցին գիտէ համբերատար լինել դէպի ուրիշ քրիստոնեաները, ճանաչելով նոցա ևս քրիստոնեայ, սակայն դաւանական կամ հիմնաբանական սկզբունքների մէջ չի կարող իւր հակառակորդին դէմ չելնել և միանգամայն ուղղափառ համարուել։ Նա պարտաւոր է հերքել հակառակ դաւանանքները, վասն զի այդ ուղղութիւնն անմիջական հետևանք է ճշմարիտ և անկեղծաւոր հաւատքի ու համոզմունքի[1]։ Աստուածաբանն և հաւատացեալը չեն կարող հան-

---

1. „L'homme n'est point un système, qui se dévide comme un fil jusqúá son dernier bout. Il n'est point une force mécanique, qui se prolonge en ligne droite à l'infini... Le fanatisme en toutes choses est la réduction de l'intelligence par la passion sous le joug d'une idée exclusive". այս որոշ չափով ճշմարտութիւն է ամենուրեք. Rémusat, de la Réforme et du Protestautisme, էջ. 52. (առ Hagenbach). Բողոքականները ծաղրում էին Հռոմայ հեթանոսական հայ-

գիտա խիղճ ունենալ և մի և նոյն ժամանակ կեղծաւորուել, շողոքորթել այլոց, չեն կարող «երկուց տէրանց ծառայել», այլ պարտաւոր են, տալ «զկայսերն կայսեր և զԱստուծոյն Աստուծոյ»։ աստուածաբանը չի կարող հաշտուել ճշմարտութեան թշնամու և մոլորութեան հետ, եթէ նա հաւատք ունի, այսինքն իրաւ՝ աստուածաբան է...։ Թէքել և ծեքել եկեղեցու դաւանանքը՝ հաշտեցնելու համար այլոց հետ՝ ոչ միայն կատարեալ կեղծաւորութիւն է և անարի անազնուութիւն, այլ և չարափառութիւն ու վատի թուլութիւն։ Ոչ Հռոմէական և ոչ «բողոքական» դաւանանքը չի կարող գոհացնել Հային. ըստ որում նա պարտաւոր է միշտ զգուշանալ դոցա գրականական ուռկաններից։ Քրիստոնէական ոգին հակառակ է կեղծաւորութեան և պահանջում է անկեղծաւոր հաւատք և դորա համար ամրապինդ դինուորութիւն։ Այդ անարգանք չէ և ոչ մի եկեղեցու համար, եթէ միայն գիտական և քրիստոնէական հիմունքները չեն խախտւում։

Մեր նախնիք ևս հաստատուելով ս. Գրիգոր Լուսաւորչի բազմիցս շեշտած սկզբունքի վրայ, թէ «ամենայն որ կարդասցէ զանուն Տեառն կեցցէ, որ զյոյսն խնդրէ ի Քրիստոս Յիսուս», բնաւ չեն զանկուել կրօնամոլութեան մէջ, սակայն և չեն սիրել մեռելութիւն, այլ միշտ կենդանութեամբ յարձակուելեն հակառակորդների սխալ

եացքը թէ «արտաքոյ Հռոմէական եկեղեցւոյ չիք փրկութիւն»։ սակայն իւրեանց մի կոնսիստորիան մի քանի տարի առաջ շրջաբերականով գոչում էր. «արտաքոյ բողոքական եկեղեցւոյ չիք փրկութիւն»...։ Բայց այդ մասին՝—ուրիշ տեղ։

1. «Հաւատք ծածկեալ կամ կեղծաւորեալ՝ ո՛չ է հեռի յանհաւատութենէ»։ գրում է ս. Ներսէս Շնորհալին առ Մանուէլ կայսրն, երբ սիրուած էր իւր բանակռիւը յառաջ մղելու երես առ երես։ Սակայն այժմ ևս կարդում ենք յաճախ կեղծաւորութիւններ, որով ջանում են Հայերից ոմանք օտարաց դիւր գալ և ձգտում են այս ու այն դաւանանքը այլոց նմանեցնել (տես գրոր. Deutscher Merkur 1892. № 44). թէև առաւել ևս նոցա առաջ ատելի են դառնում։ «մի՞թէ իրերի սովորական ընթացքը չէ, որ նա՝ ով մի երրորդի օգտին համար իւր հաւատարմութեան դրժում է, հաւատարիմ չէ մնում նաև նորան»։ ասում է Ռանկէ։

վարդապետութիւնների վրայ 1։ Եւ ճշմարիտ՝ եթէ կեանք կայ մի եկեղեցու մէջ, նա չի կարող անտարբեր գանուիլ դէպի մոլորութիւնները կամ իւր հակառակութիւնները, վասն զի «կեանքն է՝ փոխադարձ գործունէութիւն ոյժերի, որոնք ընդիմադրում են մեռելութեան 2», ուրեմն ինչպէս կարեն իրապէս կենդանութեան աղբիւրից՝ այն է հաւատքից բղխած ոյժերը մնալ անտարբեր դէպի այն իրողութիւններն, որոնք հետևաբար հակառակ են հաւատքին, ուրեմն և մեռելութիւն են. ճահճային ջուրը կհոտի. անհրաժեշտ է հոսանք և շարժումն հունի ուղղութեամբ։ Իսկ մեռելութիւնն այնտեղ է տիրում, որտեղ հոգևորն անշարժութեան դատապարտուելով, տեղի է տալիս արտաքին սոսկական ձևապաշտութեան։ Ահա գործ, գործունէութիւն և հաւատք այնքան վառ էին Հայաստանեայց եկեղեցու ս. հայրերի մէջ, որ դար չկայ, երբ տասնեակ ջատագովութիւններ և բակռիւներ մղած չլինին ճշմարտութեան համար 3. դոյա անհրաժեշտու-

---

1. Տես. զորօր. Խաչիկ կաթողիկոսի գեղեցկահիւս թուղթը (Ասողիք. էջ. 203). «Մենք ոչ թշնամութեան բանս հակառակ թշնամանացն ձերոց գրեմք, զի ո՛չ մեք և ո՛չ եկեղեցիքն Աստուծոյ ունիմք այնպիսի սովորութիւն». սակայն «ի վերայ լերին բարձու հրամայեցաւ բարձրացուցանել զբարբառն հաւատոյ, և ի Տեառնէ հրամայեցաւ՝ զ'ի յունկանէ լուեալն ի վերայ տանեաց բարձրութեան ասել և քարոզել»։ Կամ Անանիայ վարդապետ... «ոչ առ յօգուտ ինչ նոցայն ընդդիմութեան, այլ առ ի հաստատութիւն մերոյս ճշմարիտ հաւատոց»։

2. La vie c'est lensemble des forces, qui résistent á la mort. Bichat.

3. Ե. դարի բոլոր եկեղեցական գրուածներն, որոնք ըստ առթին յիշատակումեմ շարունակ, գրեթէ ամենքը բանակռուական բովանդակութիւն ևս ունին։ Մինչև դարիս սկզբներն այդպիսի գրուածներ անպակաս են եղել։ Բազմաթիւ գրուածներ կան, որոնք դեռ հրատարակուած չեն դրժբախտաբար. յիշենք միայն մի մի հատ քանի մի շրջաններից։ Է. դարում յայտնի է Խոսրովիկ, ժամանակակից Եզր կաթուղիկոսի, որ իւր մի գեղեցիկ գրուածով մաքառում է երկու բնութեան և այլ հակառակութիւնների դէմ։ Բագրատունեաց ժամանակ «Անանիայ վարդապետի Հայոց բան հակաճառութեան ընդդէմ երկաբնակաց, զոր գրեաց ի խնդրոյ տեառն Պետրոսի Հայոց վերագիտողի»։ ապա Սարկաւագ վարդապետի մի նման գրութիւն. կայ տպուած ի Կ. Պոլիս Պօղոս Տարօնեցու հրաշալի գրութիւնն

թիւնն եւս միշտ եղել է և կայ ու կլինի։ Հայաստանեայց եկեղեցին պարտաւոր է բնաւ դադար չտալ կենդանութեան հոսանքին, որի տակ պէտք է այրել թէ մոլորութիւնն, թէ ձեւապաշտութիւնը։

Դաւանաբանութեան ուսումնասիրութեան համար չունինք մշակուած ձեռնարկներ. սակայն զանազան հարցերի վրայ գրութիւններ անպակաս են, ըստ որում անհրաժեշտ է նախապատրաստութիւն, որպէս զի բազմատարբեր նիւթերում չմոլորուի հետամտողն, որպէս չինական բաւիղի (լաբիրինթ) մէջ։ Արդարև պէտք է զգուշանալ օտար եկեղեցիների պատկանող հեղինակների գրութիւններից գրեթէ ամբողջ ստուգաբանութեան մէջ*. այսու հանդերձ առաւել եւս զգուշութեան կարօտ են այն գրուածներն, որոնց հայերէն լեզուն գրաւում է բարեմիտ հային։ ԺԴ. դարից սկսած Հայոց գրականութիւնը բռնահարուել է ունիթոռներից՝ Հռոմէական մարդոց մունետիկներից, որոնց յիշատակները գրչագրների մէջ գտնուած ոչ սակաւաթիւ կեղծումներն են. դոցա գրուածներն անշուշտ մերժելի են անպայման։ Սակայն եղել են հեղինակներ եւս, որոնք այսպէս թէ այնպէս օգտուել են այդ գրուածներից և կամ նոցա հետ պայքարների մէջ մտուել են դէպի խորթ հայեցողութիւններ. ուստի դոքա եւս անգործածելի են։ Առաջին կարգին են

ընդդէմ Թէոփիստեայ Հռոմ փիլիսոփայի», են են, որոնց մասին երկար կլինէր խօսել։

*. Բանակռուական գրուածներ այլ և այլ եկեղեցիների վերաբերմամբ կան և ռուսերէն Бенескриптовъ. О западныхъ вѣроисповѣданіяхъ и сектахъ протестантскихъ. Спб.—Востоковъ, объ отношеніяхъ римск. церкви къ другимъ христ. церквамъ и ко всему человѣческому роду Спб. 1864. Іеремія, патріархъ Константиноп. Отвѣты лютеранамъ. 1866. Мейрикъ. Главенство папы предъ судомъ древней церкви; перев. съ англ. Спб. 1866. Михайловскій, Англиканская церковь и ея отношеніе къ провословію. Спб. 1864.—Нынѣшніе Несторіане, ихъ ученіе и богослуженіе Харьковъ 1865. Петровъ, Восточныя христ. Общества. Спб. 1869. Римскій католицизмъ въ Россіи. Спб. 1877. Успенскій, Вѣроученіе, богослуженіе .... Коптовъ, Спб. 1865. Кутеповъ. Секты хлыстовъ и скопцовъ. Казань 1883. Ушинскій, о причинахъ появленія раціоналист. ученій штунды.... Кіевъ. 1884. Городковъ, Догматическ. богословіе по сочиненіямъ Филарета ... Казань. 1887.

պահանում և Վենետիկի տպագրութիւններն և առ հասարակ Հռոմէական եղուիթական դպրոցից լոյս տեսած բոլոր գրութիւնները, մանաւանդ նորա, որոնք առերևոյթ պաշտպան են ելնում Հայաստանեայց ս. եկեղեցուն։ Ցարաձուում են նոյնպէս ամերիկական հրատարակութիւններ, յաճախ խմբուած այնպիսի հայեացքներով ևս, որոնք նոյն իսկ իւրեանց մէջ հաստատութիւն և ընդհանրութիւն չունին։ Վասնորոյ Հայաստանեայց ս. եկեղեցու դաւանաբանութեան աղբիւրները պէտք է անպատճառ մի միայն նորա ս. հայրերի գրութիւնները լինին իւրեանց պատմական տուեալներով։ Դոքա պէտք է բանակարգի (սիստեմ) մէջ յօրինուեն՝ իմաստասիրական մշակման ենթարկուելով։ Հասկանալի է յայտնապէս, որ դաւանաբանութիւնը պարտաւոր է մաքառելու և իւր եկեղեցու շուրջ շեղջակուտուած այդ գրականութեան այլ և այն հայեացքների դէմ, որոնք պատահարար մուտք են գործել նաև կեանքի մէջ։ Նա պարտաւոր է զտել և մատնացոյց անել գոցանից իւրաքանչիւրի վրա, որպէս զի ամեն հաւատարիմ հայի աչքի առաջ բարձրանայ միայն Հայաստանեայց եկեղեցու հարազատ ս. հայրերի հեղինակութիւնն և եթ *։ Մեր հայրն է աւետարանն և մեր մայրը՝ Հայաստանեայց կաթուղիկէ առաքելական եկեղեցին 2 — այս է հայի սուրբ նշանաբանը դարերից ի վեր։

---

*. Ցիշատակենք քանի մի հայերէն գրուածներ ևս. Քանի մի խօսք Հռոմ. եկեղեցու գլխաւորութեան մասին, թարգմ. Մ. Զոհրապեանի. Թիֆլիս. 1861. Ճշմարիտ նշանակութիւն կաթուղիկէութեան. կամ գիրք վիճաբանութեան. Գէորք վարդապետի Կ. Պոլսեցւոյ. Կ. Պոլիս 1749. Ձրի բաշխեալ։ Ճրագ ճշմարտութեան. շարագրեալ ի Յակոբոս Պատրիարքէ. տպեցեալ հարկադրութեամբ Տեառն Իսահակայ երկրորդ պարթևի ծայրագոյն Պատրիարքի և Հայրապետի ամենայն Հայոց. և Կաթուղիկոսի ս. մծբն եկեղեցեաց Հայաստ. Աստուածաբէջ գահին Ս. Էջմիածնի 1755.

Թէ ինչպէս Հռոմ. եկեղեցին ոչ ևս է կաթուղիկէ եկեղեցի. պրոֆ. Միշոյի Փարիզեցւոյ. թարգմ. Գ. արքեպ. Այվազեանի. Վաղարշապատ. 1878. Նոյն թարգմանչի՝ Յանոսի յաղագս պապին և ժողովոյ նորա. 1871. (կայ և ռուսերէն Спб. 1871):

2. Եղիշէ, անդ էջ 51.

23.

ԴԱՒԱՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՇԱՒԻՂԸ։

Իւրաքանչիւր առարկայի շաւիղը գլխաւոր տեղ է բռնում նրա մշակման մէջ. այս առաւել ևս շեշտելի է տեսական գիտութիւնների նկատմամբ։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մի առանձին հայեացք ձգել դաւանաբանութեան շաւղի (մեթոդի) և ընթացքի վրայ, քանի որ այդ գիտութիւնը խիստ նուրբ հիմնաքար և ճանապարհ ունի, մանաւանդ որ սովորաբար դաւանաբանութիւնն են հասկանում աստուածաբանութեան տակ։

Հարկ է նկատել որ դաւանաբանութեան բանակարգական ուսումնասիրութեան համար անհրաժեշտ է ունենալ որամաբանական սուր մտածողութիւն, Հայաստանեայց եկեղեցու ոգու և դաւանանքների հաստատուն ճանաչողութիւն։ Սակայն ոչ թէ պատահաբար բեռնաւորուած գլուխներ են պէտք սորա համար, այլ իմաստասիրաբար կրթուած։ Դաւանաբանութեան ընթացքն անհասկանալի կլինի թէ նոցա, որոնց հաւատքն որպէս հեթանոսի մէջ՝ խախտուած է և թէ նոցա, որոնք հրէական ձևականութեամբ երևումեն թունդ հաւատացողներ, բայց ներքուստ նման են «գերեզմանաց բռելոց, որ արտաքոյ երևին գեղեցիկ, և ի ներքոյ լի են ոսկերօք մեռելոց և ամենայն պղծութեամբ». դոքա են, որոնք այս ու այն գրքից գաղափարներ պոկելով՝ մի օր հռոմէական կդառնան, միւս օրը բողոքական, առանց գիտենալու՝ որ հերետիկոսութեան մէջ են ճախրում։ Քանի դիպող կլինին ս. Յուսիկի խօսքերը դէպի դոցա ուղղուելով. «զարթիր ի թմբրութենէդ՝ որ ոչ է ի քնոյ. սթափեաց յարբեցութենէդ՝ որ ոչ է ի գինւոյ, այլ վայի արժանի»։

Մեր առաջնորդողները պէտք է լինին, որպէս յիշուեցաւ, Հայոց եկեղեցու պանծալի հայրերը. դոցա հետևելով միայն կըստանանք Հայաստանեայց եկեղեցու դաւանաբանութիւնն իմաստասիրական մշակման մէջ։ Արդ՝ ի նկատի ունենալով Հայոց հաւատամքը, մենք ուրիշ բաժանումներ չենք յառաջացնիլ՝ բացի նորա մէջ արտայայտուած կէտերը. սակայն նախապատրաստական մասն ևս աւելացնելով՝ կստանանք հետևեալը.

Ա. Նախապատրաստական մաս՝ գաւանաբանութեան էութեան, կրօնի, կրօնների, դոցա պատմական տեսութեան, յայտնութեան, եկեղեցու, ս. Գրքի, նոյնպէս և Հայաստանեայց եկեղեցու գաւանական աղբիւրների և այլ դոցա յարակից նիւթերի վրայ։

Բ. Աստուած և նորա յարաբերութիւնն առ մարդիկ և առ աշխարհը։

Գ. Մարդն իւր յարաբերութեամբ դէպի Աստուած և դէպի աշխարհը։

Դ. Քրիստոս Աստուածամարդն և նորա փրկագործութիւնը. նոյնպէս և ս. Երրորդութեան անձանց յարաբերութիւնները։

Ե. Մարդն և քրիստոնէական համայնքն (եկեղեցի) իւրեանց փոխադարձութեամբ, ընդ նմին և յարաբերութեամբ թէ առ Փրկիչն և թէ նորանով դէպի աշխարհը։

Որպէս աստուածային յայտնութիւնը մարդկանց համար է և մարդկապէս է ստանում իւր արտայայտութիւնն[1], այնպէս էլ պարտ է յառաջադրուիլ ըստ մարդկային հոգևոր զարգացման[2]։ Դաւանանքը ձևական կդառնայ, եթէ դաւանողը յառաջադիմէ իւր կարողութիւններով և թողնէ հոգևոր այդ վեհ շրջանը. վասն զի զարգանալով ընդլայնում ենք մեր հայեցողութիւնները, մշակում ենք մեր պատկերացումներն և այն ժամանակ բաժանում ենք առաջուայ տեսութիւններից և չենք հասկանում մեր դաւանանքների տակ այն՝ ինչ որ մեր պանծալի նախնիք են հասկացել։ Այդպէս է լինում, որ դաւանանքը, վեհ հայեցողութիւններն ու գաղափարները կորցնում են իւրեանց նշանակութիւնը՝ չհասկացուելու դատապարտուելով։ Թող օրինակ լինի հէնց այն, որ մարդ ստեղծուել է ըստ պատկերին Աստուծոյ,

---

1. «Ուր խոնարհութեամբ խօսի Աստուած ընդ արարածս, զմարդասիրութիւնն իւր յայտնէ. եթէ որպէս էրն՝ և յայտնէր զինքն, եղեալքս յապականութիւն դառնային առաջի նորա»։ Եղիշէ, անդ. էջ. 225։

2. «Զմարդ սիրէ քան զբոլոր արարածս. և կամի ի ձեռն նշանացն՝ զի զանեղ բնութիւնն ծանիցեն, և ի ճանաչելոյ անտի լիցի սիրոյ բարեկամութիւն. և դարձեալ ևս վերագոյնս ձգիցէ, որպէս թէ իւր իսկ առնիցէ գահակից»։ Եղիշէ. անդ. էջ. 227։

սակայն ամբոխը կարծում է թէ Աստուած մարմնաւոր կերպարանք ունի. այդ յառաջանում է գիտնական մշակումից զուրկ բառեր և միայն բառեր ձեւապէս դաւանելուց։ Այսպիսի շեղումներից ազատ լինելու համար է հարկաւոր կանոնաւոր մշակումն։ Մենք պէտք է ձգտենք, որ առաջին դարերի քրիստոնեաներին հասկանալի եղած գաղափարները մեր զարգացման մատչելի համոզմունքներ դառնան։

Աստուծոյ մասին մեր ճանաչողութիւնն արտայայտելու համար գործ ենք ածում մեր բառերն, որոնց տակ իսկապէս շատ առաւել բարձր բան ենք հասկանում, քան սովորաբար, վասն զի «զնորա զանունն ոչ ոք գիտաց, զի չէր և ս անդր քան զնա ոք՝ որ անտի և այսր անուանեսցէ, այլ «վասն առաւել սիրոյն իւրոյ անանունն յանուն գայ»[1] Որեմն բոլորն՝ ինչ որ ասում ենք մեր դաւանածն որոշելու համար՝ մարդկային է, որի տակ պէտք է ջանանք ճշմարիտ աստուածայինը հասկանալու. քանի որ «զնմանութեան ըստ ի կարծիս առեալ զմերոյ բնութեանս, նմանութիւնք ցուցանեմք աներևութին վասն մերոյ անհասութեան», ասում է ս. Գրիգոր Լուսաւորիչը[2], բայց և այնպէս «ոչ ոք կարէ ասել զարժանն զնորա զամենազօր մեծութենէն»։ Քրիստոնէական Աստուածը մարդկային Աստուած է և մարդկապէս է տալիս իւր յայտնութիւնն, որպէս զի հասկանանք Նորան. «անբաւ է մարդոյ տեսանել զԱստուած գոյիւ իւրով, իբրև մոմոյ զհուր. բայց իբրև ինքնակամ կամաք բարերարութեամբ իւրով զինքն ցուցանէր, ի կերպարանս մարդոյ երևէր...»։ Վասնորոյ մարդկային մտաւոր[3] զէնքերը պէտք է գործադրենք՝ մեր ճանաչողութիւնը Նորան մօտեցնելու համար։ Այդ զէնքերից կարասափի միայն նա, որ համոզմունքի ամրութիւն չունի։ Այդ է այն շաւիղն,

---

1. Ագաթանգեղոս. էջ. 209, Ցաճախապ. էջ. 12։

2. Ագաթ. էջ. 209, Սակայն բնաւ չպէտք է մոռանալ Գեօթէի նշանաւոր խօսքերը թէ «Իւրաքանչիւր մեծ գաղափար, որ ինչպէս մի աւետարան աշխարհ է գալիս, գայթակղութիւն կերևի թանձրամիտ իմաստակ ժողովրդին, իսկ շատ՝ բայց թեթև զարգացածներին—յիմարութիւն»։ Տես. և 1 Կորնթ. Ա, 23. և Հռ. Թ. 33. 1. Պետր. բ. 8։

որով պէտք է հասկանանք թէ Աստուծոյ և թէ նորա արարչութեան և նախախնամութեան մասին վարդապետութիւնը։

Թէ տիեզերքն և թէ մարդը պէտք է նաև ըստ արտաքին գիտուների ճանաչուած լինին, որպէս զի մոնեն քրիստոնէական հայեացքի ներքոյ, որով միայն ստանում են նոքա իւրեանց վերջնական պարզութիւնը։ Կսխալուի ընագէտն, եթէ միայն իւրին ոյժ տայ, առանց մարդկային էութեան ամբողջութեան ուշ դարձնելու. կսխալուի աստուածաբանն, եթէ ժխտէ արտաքինը, մարմնաւորն և միայն իւրը ճանաչէ. դոքա երկուսն էլ իրարից անբաժան են, որպէս հոգի և մարմին կենդանի մարդի մէջ [1]։ Ուսումնասիրելով հոգևոր և մարմնաւոր աշխարհը, մարդի ներկայ և անցեալ սկզբնական վիճակը, պարզ կտեսնենք թէ որքան կարօտ էր մարդկութիւնն երկնաւոր փրկութեան, վասն զի բաժնուելով Աստուածանից՝ նեռուում էր դէպի խորխորատ։ Ահա այդ ուղղում է մեր աչքերը դէպի մարդկութեան երկնաւոր Փրկիչը։

Բայց և Քրիստոսի վերաբերմամբ անհրաժեշտ է չշեղուիլ վարդապետութեան մէջ. նա մարդացեալ Աստուածն է, մարդկութեան Փրկիչն, որ ունի ամենայն ինչ որ մարդկային է՝ «բաց ի մեղաց»։ Նա մի է բնութեամբ, կամքով և ներգործութեամբ, սակայն կատարեալ Աստուած է և միանգամայն կատարեալ մարդ։ Նորա մէջ է հռչակուում տիեզերական միութեան գաղափարն, որ ամենայն ինչ ըստ աստուածային տնօրինութեան պէտք է ընթանայ՝ իւր երջանկութեան հասնելու համար։ Այստեղ ամենից պարզ տեսանելի է, որ ամենայն ինչ հարկ է աստուածմարդկային լինել. այդ միութեան պարտէ ձգտել իւրաքանչիւր մարդ թէ հաւատքով և թէ գործով։ Եւ դորանում է Քրիստոսի փրկագործութեամբ երջանկանալու ճանապարհը։ Հաւատալ Փրկչին և Սուրբ Հոգով դիմել դէպի Նա՝ ահա աւետարանի պահանջը։ Նորա բարձրագոյն սէրը պէտք է կապէ մեզ Աստուծոյ հետ. Նորա մահը

---

1. «Կեպլերն ասում էր. «իմ բարձրագոյն բաղձանքն է, Աստուծոյ, որին ես ամենուրեք գտնում եմ, նաև ներքուստ, իմ մէջ նոյնպէս գիտասա («գիտակից») լինել»։ Այդ աղնիւ մարդը ինքեան չէր գիտակցում, որ հէնց այն ակնթարթում իւր մէջ աստուածայինը տիեզերքի աստուածայինին հետ ամենաճիշդ կապակցութիւնն ունէր»։ Գեօթէ անդ էջ. 140։

կմեռցնէ մեզ մեղքերի համար և յարութիւնը կյարուցանէ առ կենդանութիւն. միայն այսպէս լսած կլինինք առաքեալի խօսքը «նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց», իսկ այդ կլինի հաւատով, մկրտութեամբ և հաղորդութեամբ, զղջմամբ և ապաշխարութեամբ։ Բայց միշտ հիմունք է կենդանի, գործունեայ հաւատն. այդ է եղել մեր նախնիքների անսասան սկզբունքն [1]. ոչ թէ հաւատալ և անգործ նստել, այլ հաւատալ և գործել եռանդով և փառքի պսակը պատրաստ է։

Դոցանով մտնում է դաւանաբանութիւնն համայնքի շրջանի մէջ, ըստ որում և նորա զբաղմունքի նիւթ է դառնում Հայաստանեայց տեսանելի և միանգամայն անտեսանելի, ազգային և ընդհանրական եկեղեցին իւր բոլոր կեանքի էութեամբ։ Դաւանաբանութեան գուռը բանում է եկեղեցին և տանելով մինչև վերջ՝ իւրմով վերստին փակում։ Նա որ դաւանում է Հայաստանեայց եկեղեցու դաւանական և բարոյական վարդապետութիւնն և նորանով որոնում իւր փրկութիւնը՝ նա ունի և իրաւունք իւր եկեղեցու շնորհները վայելելու կամ նորա մէջ իւր երջանկութիւնը գտնելու կամ նորա համար աշխատելու։ Նորա մէջ հաւատացեալը միայն կարող կլինի գտնել իւր վերջին սփոփանքն ու միւս կեանքի անմահութիւնը։ Բայց եկեղեցին միմիայն նեղ

---

1. Այդ ամփոփուած է գեղեցկապէս Վահան Մամիկոնեանի մէկ թանգագին երգի մէջ. (Թումք. Արծրունի. Պետերբուրգ. 1887. էջ. 84).

«Հապա՝ քաջք,
Վառեալ ի զէն
Ի յասպազէն,
Արիաբար մարտիցուք.
Մի՛ երկիցուք
Ի բազմութենէ զօրաց նոցա.
Տէր խորտակէ
Զպատերազմողսն,
Տեառն է պատերազմ,
Տէր տկար առնէ
Զհակառակողսն,
Տէր է յոյս մեր»։

օրերի փախստական կամ պատսպարան չէ. այդպէս կարծողների համար եկեղեցու դուռը կփակուի և «ոչ յանուն քո մարգարէացաք» ասող՝ «ոչ երբէք գիտէի զձեզ՝ ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք գործէիք զանօրէնութիւն.[1] կլսի իւր խղճի մէջ։

Այս է դաւանաբանութեան պարզ սառուերագիծն՝ որչափ առ այժմ կարելի է ընդհանրապէս խօսել նորա վրայ։ Յայտնութեան և իմաստասիրական աշխարհը պէտք է բացուի նորա մէջ և ծաւալուի՝ որպէս զի կարենայ լուսաւորել ուսումնասէրների խղճալի մտքերը։ «Ամենայն սուրբք առանց բանի պատմութեան խօսին ընդ Աստուծոյ՝ և առանց ձայնի արձակելոյ ի վերուստ՝ լսեն կամաց նորա. և զոր ասեն և զոր լսեն՝ ընդ գրով արկանել ոչ կարեն... Եւ յորժամ զայսպիսի զօրութիւն յոգիս մեր հեռազօտեմք՝ կարեմք զծածուկս Բանին Աստուծոյ ծածկապէս իմանալ՝ և զտուչութիւն պարգևին որ շնորհեաց մեզ՝ արտաբերեմք բարբառով. զի և յայլոց լսելիս ազդիցէ հնչումն երկնաւոր»[2], ամփոփումէ՝ ինչ որ պէտք է ասուէր՝ Հայաստանեայց եկեղեցու քաջ ախոյեանը։ Սակայն նորա հետ հարկ է կրկնել նաև թէ՝ «մի փութասցուք մարմնաւոր աչօք տեսանել զԱստուած՝ զի մի ծախիցիմք տարաժամ.»[3]։

24.

ԲԱՐՈՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ.

Հաւատքի վեմի վրայ ամուր համոզմունք կազմելով՝ մնում

---

1. Մատթ. Է՝ 23.

2. Եղիշէ՝ անդ. էջ. 233.

3. Եղիշէ՝ անդ. էջ. 203. Դաւանաբանական նուրբ տեսութիւններ ունի՝ յիշատակուածներից զատ՝ Եղնիկ՝ որի «Գիրք Ընդդիմութեանց»-ի վերջին տպագրութիւնն է Կ. Պոլիս՝ Արամեան տպարան. 1869։ Սա կրուում է գլխաւորապէս հեթանոսական մոլորութիւնների դէմ։ Քրիստոնէական աշխարհի մոլորութիւնների մասին՝ բացի յիշուածներից նշանաւոր է քրիստոնէական ամենաէական սկզբունքի հակառակորդների դէմ։ La papauté schismatique ou Rome dans les rapports avec l'église orientale, par M. l'Abbé Guettée. Paris 1863.

ենք բարոյական հանգէսի մէջ։ Բարոյական հանգէսն էս ամրացնում է մեր հաւատքը, քանի առաւել փորձով տեսնում ենք՝ թէ հաւատքի հեռանքների կամ բարոյական կեանքի մէջ ենք գըտնում մեր երջանկութիւնը։ Վ. ասնորոյ և ս. Գրիգոր Լուսաւորիչ ասում է. «որպէս անդամնք կանգնի հասակ, այսպէս բարի գործովք կանգնին հաւատք, և հաւատով սուգի յոյս և յուսովն հանդէսք»։ Կամ բոլորովին կարճ ասելով հաւատքն ամփոփում է իւր մէջ թէ յոյս թէ սէր և թէ բարի գործ։ Հաւատքն է՝ որ հալածում է թէ այլանդակուած սանձարձակութիւնն և թէ կեղծաւոր փարիսեցիութիւնը[1]։

Ահա Հայաստանեայց եկեղեցու բարոյաբանութիւնը տալիս է ճշմարիտ տեսութիւն բարոյական կամքի մասին, որ պէտք է բըղխի ճշմարիտ հաւատացողի կամքից և ծաւալուի նորա բոլոր գործունէութեան մէջ։ Մի և նոյն արմատից աճում են գուսանաբանութիւնն ու բարոյաբանութիւնը, սակայն գուսանաբանութիւնն է տալիս բարոյաբանութեան հիմունքներն և երկուսն էս գրեթէ մի և նոյն շաւղով են ընթանում, այն է՝ քրիստոնէականն ու իմաստասիրականը կապելով իրար հետ։ Եւ այդ հասկանալի է, վասն զի կրօնն և իմաստասիրութիւնը ծագում են լիապէս մարդկային հոգուց և այն՝ ինչ որ հրամայում է մարդկային բանականութիւնից բարոյականութեան նկատմամբ, բնաւ չի կարող մերժուիլ քրիստոնէութիւնից, որ նոյնն է պահանջում։ Հարկաւ քրիստոնէական և իմաստասիրական բարոյաբանութեան

---

1. Առհասարակ բոլոր անբարոյականութիւնները անձնական թուլութիւնից են յառաջանում. «բնաւորութիւնները յաճախ օրէնք են դարձնում թուլութիւնը...։ Թոյլ մարդիկ ունենում են յաճախ յեղափոխական համոզմունքներ. նոքա կարծում են թէ իւրեանց համար լաւ կլինի, եթէ չկառավարուէին, և չեն զգում՝ թէ ինքեանք ո՛չ ինքեանց և ո՛չ այլոց կարող են կառավարել։ Գեօթէ։ Նոյն իսկ ամբարտաւանութիւնն ու նախանձը՝ մեր հասարակութեան յառաջադիմութիւնն սպանող ախտերը՝ թոյլերի մէջ են վառում։ Հոգով հարուստ կամ առաւելութիւն ունեցող անձինք չեն նախանձում, այլ ուրախանում են ընկերի առաւելութեան վրայ։

մէջ կայ մէկ որոշ տարբերութիւն, տակայն այդ տարբերութիւնն ոչ թէ սկզբունքի վերաբերմամբ է, այլ շաւղի, բանակարգի, վասն զի առաջինը հետևցնում է իւր տեսութիւնները մի որոշ քրիստոնէական, իսկ երկրորդը լոկ մարդկային՝ գիտաստութիւնից։ Քրիստոնէական բարոյ վարդապետութեան ճանապարհը ուղղում է դէպի իւր բարձրագոյն տիպարը՝ Քրիստոս, մինչդեռ իմաստասիրականը — դէպի սոսկ բարոյականութիւնն, որ մարդի որոշմունքն է. սա թէև զարգացել է քրիստոնէական շրջանում այնով հանդերձ ամէն մարդի համար է, մինչդեռ նա միմիայն քրիստոնեային է վերաբերում։ Իմաստասիրականի մէջ առաջնորդողը մարդկային բարոյական ինքնորոշումն է, իսկ քրիստոնէականի մէջ աստուածային Հոգու յայտնութիւնն, որ տանում է մեզ դէպի առաքինութիւն[1]։ Այլ և պարտիքը ծագում է առաջնի մէջ աշխարհի հետ ունեցած յարաբերութիւնից, իսկ երկրորդն դէպի աստուածային արքայութիւնն ունեցած վերաբերմունքից։

Սակայն երկուսն էլ իրարից չեն տարաձայնում, վասն զի երկուսի նպատակն է տալ ճշմարիտ մարդի բարոյական տիպարը. դոքա իրար չեն կարող հակասել, միայն թէ քրիստոնէականի մէջ կրօնը կամ կամակցութիւնն Աստուծոյ հետ՝ արմատն է բարոյականութեան, իսկ իմաստասիրականի մէջ պտուկը, մէկում բղխող է՝ միւսում բղխուող։ Իմաստասիրականը քաղում է իւր տիպարը քրիստոնէականից, իսկ քրիստոնէականը պատրաստ ունի յայտնութեան տուած տիպարը, միայն թէ բանավարում է և իմաստասիրական տեսութիւնները։ Քրիստոնէական սէրը բըղ-

---

1. Տես, և А. Гусевъ. Зависимость морали отъ религіозной или философской метафизики. По поводу исповѣди графа Л. Толстого. Моск. 1886. Проф. К. Ярошъ. Вопросы современной морали. Харьковъ. 1887. Этика Аристотеля. Пер. Радлова. Спб. 1887. Эпиктетъ. Настольныя замѣтки стоическ. морали. Пер. Зайцева. Казань. 1883. Оболенскій. Л. Толстой, его философск. и нравст. идеи. Кратич. этюдъ. 2-е изд. Спб. 1887. К. Д. Кавелинъ. Задачи Этики. Изд. 2-е Спб. 1887. Հայերէն կան միայն խրատական ժողովածուներ, որպէս՝ Թանգարան խրատու, յօրինեալ ի Պօղոս արքեպ. Անդրիանուպօլսեցւոյ . . . . յՕրթագիւղ 1824. ԼՆ։

խում է Քրիստոսից համայնական եղբայրութեան մէջ և ապա ծաւալւում և դէպի մարդկութիւնն, իսկ իմաստասիրական բարոյաբանութեան մէջ մարդկային պատուի յարգումը բարձրագոյն օրէնքը է և նորանից ճիւղաւորւում է արդարութիւն և սէր դէպի կեանքի բոլոր կողմերը։ Այստեղից արդէն պարզապէս երեւում է քրիստոնէական բարոյաբանութեան անհամեմատ բարձրութիւնն ու զօրութիւնն, որ ոչ միայն մարդկային բնութիւնից է ծագում, այլ գլխաւորապէս հաղորդւում է նորան իբրև աստուածային ճշմարտութիւն։ Աստուածային շնորհն և փրկարար ներգործութիւնը հիմնական տեղ են բռնում այստեղ։ Նա պահանջում է քրիստոնէական համոզմունք, որից և ձգտումն դէպի կատարելութիւն. նա ոչ թէ հատ հատ պատուիրաններ է տալիս, այլ այդքի առաջ դնելով Քրիստոսի անձնաւորութիւնն իբրև տիպար և գիտնականապէս զարգացնելով իւր բոլոր տեսութիւնները թէ իմաստասիրական տեսակէտից և թէ Քրիստոսի վարդապետութիւնից, տալիս է մի հիմնական պատուիրան. «եղերուք կատարեալ, որպէս և Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է»։

Բարոյաբանութիւնը պարտիք ունի նոյնպէս՝ մաքառելու բոլոր մոլորութիւնների և անբարոյական տեսութիւնների, որպէս եղուիթութեան, կեղծ բարեպաշտութեան և կեղծ կամ ձևական ճգնութեան[1], ցուցամոլ բարոյականութեան, անբարոյականու-

---

1. Եւ յորժամ պահիցէք՝ մի լինիք իբրև զկեղծաւորսն տրտմեալք՝ որ ապականեն զերեսս իւրեանց՝ որպէս զի երևեսցին մարդկան թէ պահիցեն. ամէն ասեմ ձեզ՝ այն իսկ են վարձք նոցա։ Այլ դու յորժամ պահիցես՝ օծ զգլուխ քո և լուա զերեսս քո՝ զի մի երևեսցիս մարդկան իբրև զպահող՝ այլ Հօրն քում ի ծածուկ.... Մատ. Զ. 16։ Այդ կլինի միայն այն ժամանակ՝ երբ իւրաքանչիւրը գիտենայ իւր ամեն գործի էութիւնը՝ զորօր. թէ ինչո՞ւ համար է բարիք գործում՝ աղօթում՝ յարգում ուրիշի պատիւը՝ պաս պահում ևն ևն։ Բայց այդ կլինի կրթելով երիտասարդին և ինքնուրոյն գիրք տալով նորան իւր բոլոր գործերի մէջ՝ և ոչ թէ մեքենայ ստրուկ դարձնելով նորան այս ու այն հեղինակութեան հրամաններին։

թեան և այլ հասարակական ախտերի դէմ։ Նա պէտք է կռուէ, որպէս զի միջոցը նպատակ չդառնայ ժողովրդի մէջ, նիւթը չըտիրէ նորա հոգու վրայ, և չխոպանացնէ նորա աստուածային շնորհն և հիմնական չարիք դառնայ հասարակութեան։ Նա պէտք է ձգտէ ներշնչել իւրաքանչիւրի մէջ գիտասուութիւն, թէ ի՞նչ է ինքն, ի՞նչ պակասութիւն ունի և ի՞նչ պէտք է լինի։ Եւ երբ բարոյականութիւնն կճանանչուի իբրև ձգտումն, այն ժամանակ կվերանայ այն ամբարտաւանութիւնն, որ տգէտի և պակասաւորի մէջ մարմնացած է, և կյարգուի ընկերի արժանիքը յառաջադիմութեան ճանապարհ բացուելով։

Բարոյաբանութիւնն ունի երկու մաս. անհատական բարոյաբանութիւն, որզբաղւում է սկզբունքներով, որոշում է մարդի հակումները, բարոյ և չարի գաղափարները, մեղքն, ազատութիւնը, ձգտումների նպատակն, առաքինութիւն, պարտիքներ և լն. ընկերաբանական բարոյաբանութիւն, որ գործ ունի արդէն բարոյական կեանքի զանազան երևոյթների, ընտանիքի, հասարակութեան, գեղարուեստի, գպրոցի, պետութեան, եկեղեցու և այլ հասարակական յարաբերութիւնների հետ։ Ահա ուրեմն որքան անհրաժեշտ է նաև հետևել ժողովրդի կեանքին, ծանօթ լինել նորա բոլոր հանգամանքներին, որպէս զի բարոյաբանութեան մէջ կարելի լինի որոշել թէ յանձնառականը թէ հրաժարականը։ Հարկաւ այդ ամենի մէջ կրթութեան տեսակէտը պէտք է զարգանայ, պէտք է իւրաքանչիւր գործի էութիւնն ու նշանակութիւնը ճանաչուի և գիտասուական լինի, որպէս զի այն՝ որ հոգու այս և այն կարողութեան կրթելուն է ծառայում, արժէք ունենայ ոչ թէ ինքն ըստ ինքեան, այլ բարոյական նպատակի համար։ Միմիայն բարոյաբանութեան այսպիսի զարթուցիչ ազդեցութիւնից կարենք

2. Տես. և М. Аврелинъ. Секретъ творчества. Вопросы философіи и Психологіи 1893. Որի հիմնական գաղափարն է. И на основаніи всѣхъ этихъ наблюденій я вывель приведенное выше заключеніе, что паденіе талантовъ и творчества въ наше время объясняется всецѣло царящимъ въ наши дни матеріалистическимъ міросозерцаніемъ,—взглядомъ на человѣка какъ на высшее животное, безъ души, безсмертія, свободы воли и божественной сущности.

ապասել մեր երիտասարդութեան կրթութիւնն, որ անչափ մեծ տեղ է բռնում ժողովրդի յառաջադիմութեան գործում, բայց մեր մէջ խիստ յետ է մնացած։

Խիստ յետ է մնացած, որովհետև մեր կրթողները սիրում են բռնանալ պատանիների վրայ, կոյր հնազանդներ դուրս բերել, ստրուկներ և ոչ թէ ազատ մտածող և գործողներ տալ, որպէս զի հեղինակութիւն մնան միշտ դոցա վերայ։ Այդպիսով փչացնում են ատուածային այն նշոյլի գիտաստութիւնն, որ կայ իւրաքանչիւր մարդի մէջ, այդպէս և անասնացնում են նոցա։ Տուէք նորան կրթութիւն, հասկացրէք ամէն պարտիքի և բարոյականութեան էութիւնը, յարգեցէք նորա արժանիքը, գտէք նորա անհատական առանձնայատկութիւնները, շարժեցէք նորա ինքնուրոյն մտածողութիւնը բարոյական կեանքի նկատմամբ և, աշխատեցէք ուղղել նորա պակասութիւնն՝ որպէս քո անձնականդ, անձի տէր դարձրէք նորան,—և դուք կունենաք կրթուած մարդ, որ կձգտի ինքն և՛ աշխատել ձեր երախտիքը հատուցանել մի ուրիշ պատանու։ Մեզ հարկաւոր են ազատ և ազնիւ մտածող գործողներ, և ոչ թէ ստրուկներ, որոնք հետևանք են կոյր հնազանդութեան և ձևական նմանողութեան։ Ժլատ մարդիկ, որոնք պատահաբար կամ մեքենայաբար են այս և այն գիտութեան հետևում, չեն տալիս իւրեանց «գանձն» ուրիշին. կրթողը չպէտք է ժլատ լինի, այլ պէտք է տայ պատանուն գանձեր [1], որպէս զի նա հարստանայ և զօրաւոր լինի հոգու լուսաւորութեամբ,

---

1. Զի նախ ի միտն գանձին հնարք արուեստիցն, և ապա յիշատակք իրացն վարդապետին ի զգայութիւնսն։ Ս. Գրիգոր լուսաւորիչ. յաճախ էջ 40.

Սիրողները (diletante) և մեքենայական գիտոսակներն են միայն տնաւերներ, վասն զի երկուսն և՛ պատրաստ են իւրեանց «մասնագիտութիւնը» թողնելու, հէնց որ հացի լաւ ճանապարհ տեսնեն. նոքա գիտութիւնն են ինքեանց ծառայեցնում և ոչ թէ ինքեանք են գիտութեան ծառայում։ «Երջանութեամբ գործադրուած սիրողութիւնը (diletantisme) և մեքենայաբար յառաջ տարուող գիտութիւնը դառնում են իմաստակութիւններ», ասում է Գեօթէ։ Դորանից է՝ որ կօշկակարի տեղ հացթուխ է նստում։

սակայն չպէտք է մոռանալ, որ Հայ ժողովուրդը շատ ունի հոգևոր գանձեր և ինչ որ տանք, նորա ունեցած գանձը բեղմնաւորելու համար է։ Այդպէս պէտք է տալ և այն ժամանակ նա կպտղաբերէ ինքնուրոյնաբար մէկին տասը, մէկին հարիւր, մէկին հազար։

Ահա բարոյաբանութեան մանկավարժական դրօշակի նշանաբանը։

Բայց Հայաստանեայց եկեղեցու բարոյաբանութիւնը պէտք է կազդուրէ իւրաքանչիւրին՝ նորա Հայրերի և առ հասարակ նախնեաց բարոյական գաղափարներով և առաքինական սկզբունքներով [1]։ Քրիստոսի աւետարանի այդ պատմական մնունդը հզօրագոյն աճեցուցիչ միջոցն է Հայ պատանու և Հայ ժողովրդի զուարթ հոգու համար։

25

Դ. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ։

Արդէն մնում ենք այն շրջանն, որտեղ աստուածաբանը գործունէութեամբ պէտք է փայլի։ Ո՛րքան նորա գործնական տեսութիւնները ճիշդ և որոշ լինին իւր համար, այնքան յաջող կլինին նորա գործերը։ Քանի որ նորա առպարէզը եկեղեցին է, հասկանալի է որ նախընթաց բոլոր առարկաները պէտք է անցած իւրացրած լինի և ապա թէ օրինաւոր գործունէութիւն վարէ։ Միայն այդպիսի նախապատրաստութեամբ կարող է նա

---

1. «Կրթութիւնն է մտածողութեան մի եղանակ, որ ամբողջ հոգևոր և բարոյական ձգտման ճանաչողութիւնից և զգացմունքից ներդաշնակաբար սփռւում է զգայութեան և մտքերի վրայ», ասում է Վիլհելմ ֆոն Հումբոլդ։

Օգտակար ձեռնարկ կարէ լինել բարոյաբանութեան համար Мартенсенъ, Христіанское ученіе о нравственности, որ հոլլանդացի նշանաւոր պրոֆեսոր եպիսկոպոսի հեղինակութիւնն է՝ լութերական եկեղեցու ուղղութեամբ։ Ցիշելի է և Вудтъ, Этика. Изслѣдованіе фактовъ и законовъ нравств. жизни. Спб. 1887. К, Г. Дебальскій, О высшемъ благѣ или о верховной цѣли нравственной дѣятельности. Спб, 1886. О. Тернеръ, христіанск. воззрѣніе на жизнь Спб. 1879.

«մշակ լինել այգւոյն ճշմարտութեան», ջանալով իրականացնել Աստուծոյ արքայութիւնն, որ նորա միակ խնդիրն է։

Գործնական աստուածաբանութիւնն ունի և իւր տեսութիւնը, թէ ինչպէս պէտք է վարել գործնական այս ու այն շրջանը։ Հարկաւ աստուածաբանական բոլոր առարկաների նպատակը գործն է և այդ առարկաների տուածները գանձերեն, որոնք գործի մէջ պէտք է սերմանուին, սակայն գործնականի մէջ տեսութիւնն ևս միմիայն գործերի վրայ է. նա տալիս է գործունէութեան արուեստը, որ բխում է ամբողջ աստուածաբանութեան հիմունքներից։ Վասնորոյ աստուածաբանութեան պսակն ու ծաղիկը գործնական աստուածաբանութիւնն է. նա ստանում է իւր անման սնունդը նախընթաց գիտութիւններից։ Ուրեմն գործնական աստուածաբանութիւնը գործելու գիտելութիւն է. առանց գիտենալու՝ թէ ինչպէս պէտք է գործել, չի կարելի գործել. գիտենալ և կարենալ՝ միասին պէտք է լինեն։ Գիտենալու նպատակը կարենալն է. բայց կարենալու աղբիւրը գիտենալն է։ Այն ի՞նչ քարոզ կլինի, եթէ քարոզիչը չհանած լինի իւր բոլոր ասելիքները կանոնաւոր նախապատրաստութիւնից և մտածողութիւնից. այն ի՞նչ պաշտամունք, եթէ հոգևորականը չհասկանայ իւր արածի, աղօթքի էութիւնը. այն ի՞նչ հովւութիւն կլինի, եթէ հովիւը չգիտենայ թէ ինչպէս գործէ, որպէս զի իւր հօտի մի գառն անգամ չըվնասուի. ի՞նչ ուսուցչութիւն՝ եթէ կրօնուսոյցը համոզմունք չունենայ և չկարենայ իւրաքանչիւր խօսք բարի սերմ դարձնել։ Եւ մի՞թէ կարէ ոք շարունակել Հայաստանեայց եկեղեցու յառաջադիմութեան ճանապարհն, եթէ նա հոգով և մարմնով միուած չէ նորա պատմական կեանքի մէջ։ Կամ կա՞յ փրկութիւն ժողովրդին, եթէ նա ս. Գրքի մէջ չէ գտնում իւր հոգևոր արօտը։ Կարո՞ղ ես ժողովրդի վարդապետը լինել, առանց Հայաստանեայց եկեղեցու քրիստոնէական դաւանաբանութեան և բարոյաբանութեան ուսումնասիրութեան. կարո՞ղ ես հովուել քո հօտն, առանց գիտենալու՝ թէ որ անկիւնում կայ խորխորատ կամ ո՞ր ծմակում գայլ գիշատիչ։ Եւ կամ կկարենա՞ս ժողովրդի վէրքերը բուժել՝ առանց ճանաչելու նորա կեանքը կամ առանց

աստուածային սպեղանիք ունենալու պատրաստի։ Ո՛չ ոչ, խղճուկ հովիւ. նախ պէտք է արածես և ապա արածացնելու փարժուիս։ Միմիայն պաշտամունք կատարելը չէ հովուելը. պաշտամունքը ձեւականութիւն դարձնելով՝ ծաղրական է դառնում և հովուի դերը. գիտացիր ի՞նչ է արածդ և ինչի՞ համար. թող գիտաստութիւնից բղխի բոլոր արածներդ՝ որպէս զի զգաս և զգացածդ զգայ և ժողովուրդդ. թող համոզմունքից ելնէ խօսքդ՝ որպէս զի հասկանաս և հասկացածդ ըմբռնէ լսողդ։ Ապա թէ ոչ՝ հովիւ չես լինիլ հօտը դէպի Հայաստանեայց եկեղեցու սփարախը տանող՝ այլ աճպարար՝ ժողովուրդն անատպատի և գահավիժութիւնների փրայ ցրուող։

Ի՞նչպէս կվարէ եկեղեցու կառավարչական գեկը ձեւապաշտ՝ բայց գործի էութեան անխելամուտ անձը. միթէ կցաւեցնեն նորան ժողովրդի վերքերն՝ երբ նա միայն ձեւականութեան է պաշտող և հոգեւոր վարիչ չէ։ Այդպիսի առաջնորդութիւնը կլինի ոչ թէ քրիստոնէութիւն՝ այլ հրէութիւն՝ պահանջող ձեւականութեան՝ բայց ոչ հոգեւոր ուղղութեան՝ ձեւական աստուածպաշտութեամբ՝ բայց ոչ «հոգով և ճշմարտութեամբ»։ Այստեղ կհնչի Քրիստոսի զարհուրեցուցիչ խօսքը. «առաջնորդք կոյրք՝ որ զմժղուկս քամէք և զուղտս կլանէք»։

Դու կրթիչ՝ քեզ նայող մատաղ սերնդի՝ դու հովիւ քեզ հաւատացած գառներին՝ դու առաջնորդ Հայաստանեայց եկեղեցու հօտին. սոսկա ժողովրդի կորստեան պատճառ լինելուց՝ պատրաստ պահէ սպեղանիք և վիրակապ ժողովրդի վերքերի համար. ճանապէ նորա ցաւերն ու վշտերը՝ մխիթարիչ և փարատիչ լինելու համար. սովորէ բժիշկ լինել նորան՝ վարիչ լինել նորա կեանքի. գանձ ժողովէ աստուածային գանձարանից՝ կարօտ ժողովրդիդ բաժնելու համար։ Ժողովրդի արցունքը քեզ թող վշտացնէ՝ ցաւը—քեզ կսկծեցնէ. բայց լալկան մի դառնար նորա համար՝ այլ սփոփիչ՝ բուժող՝ օգնական՝ կրթիչ՝ խրատիչ և կերակրող՝ գիտացիր՝ որ «համարս տալոց»[1] ես՝ քեզ հաւատացած ժողովրդի մասին ամենքի Հօր առաջ։

---

1. Եբր. Գ. 37։

Ահա թէ ինչի համար է աշխատեցնում և կրթում գործնական աստուածաբանութիւնը։

Գործնական աստուածաբանութիւնը զարգանում է նոյն իսկ եկեղեցու կեանքի մէջ նորա անցեալից, և ցոյց է տալիս այն ճանապարհներն, որոնցով կարող կլինի հովիւը հոգալ իւր հօտի համար, այն պակասութիւններն, որոնք պարտէ լրացնել, կամ այն թերութիւններն ու վէրքերն, որոնք պէտք է ուղղել և բժշկել։

Ամբողջ գործնական աստուածաբանութիւնն ունի երեք որոշ շրջաններ. մէկ կրօնուսուցչութիւն, որ պէտք է կրթէ երեխաներին Հայաստանեայց եկեղեցու ճշմարիտ որդիք լինելու, մէկ պաշտօնակատարութիւն եկեղեցու մէջ, այն է պաշտամունք և քարոզ, և նորա շուրջ՝ համայնքի մէջ, այն է՝ հովուական գործունէութիւն, և մէկ գործունէութիւն եկեղեցական կառավարչութեան վերաբերմամբ, այն է եկեղեցու իրաւաբանական և քաղաքագիտական շրջանի մէջ, որ է ընդհանուր առաջնորդութիւնը։ Տեսնում ենք ուրեմն որ գործնական աստուածաբանութեան մէջ երեք ճիւղեր կարեն նկատուել՝ պաշտամական, վարդապետական և վարչական, սակայն իրարից չեն կարող կտրուած զատուիլ, զի բնոյթով յերիւրումեն միմեանց հետ։ Երեքն էլ անհրաժեշտ նախապատրաստութիւններ են իւրաքանչիւր հոգևորականի համար և մէկը միւսից գերադասուել չի կարող։ Որչափ ժամանակ գոյութիւն ունի եկեղեցին՝ դրա էական են համարուել, որպէս տեսնում ենք թէ առաքեալների թղթերից, թէ ուրիշ և թէ Հայաստանեայց եկեղեցու ս. Հայրերի գրուածներից։ Սակայն ուսումնասիրութեան ենթարկելով՝ պէտք է ունենանք ոչ թէ լոկ խրատների ժողովածու, այլ գիտնական պատճառաբանական բանակարգ՝ կապակցուած կեանքի բազմակողմանի փորձերի հետ։ Միայն այդպիսի գիտնական ուսումնասիրութեամբ կարող է հովիւը հասկանալ իւր խնդիրն և համոզմունք դարձել իւր համար թէ՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»։

Հայրերէն կայ միայն նորերս հրատարակուած Հովուական աստուածաբանութիւն՝ Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեանի. Կ. Պոլիս. 1892։ Տես և A. Vinet, théologie pastorale ou théorie du ministére évangélique. Paris 1850.

25.

ԿՐՕՆՈՒՍՈՒՑՉՈՒԹԻՒՆ։

Կրօնուսուցչութիւն բառից արդէն երևում է, որ այդ առարկան գործնական աստուածաբանութեան մէջ առաջին տեղն է բռնում, ըստ որում և հովուի սկզբնական պարտաւորութիւնն է ուսուցանել և հաւատացեալ ժողովուրդ պատրաստել՝ իւր եկեղեցում մկրտուելիւն վայելած երեխաներից։ Բաւական է որ երեխան մկրտուեց՝ նա արդէն մտնում է քահանայի ուսուցչական շրջանն և պէտք է եօթ տարեկան դառնալուց յետոյ իւր կրթութիւնն եկեղեցու հովուից ստանայ [1]։ Դորա համար են Հայոց եկեղեցական ծխական ուսումնարաններն, որոնք կազմում են Հայաստանեայց եկեղեցու ս. գաւիթներն, որտեղ երեխան՝ նախքան որևիցէ ուսումն պէտք է անպատճառ հայերէն լեզուին և դորանով Հայաստանեայց եկեղեցու քրիստոնէական կրթութեան ընդելանայ։ Այստեղ ուսումը ձրի է և ուրեմն մատչելի է բոլոր խաւերին. իսկ եթէ ոմանք ուրիշ մասնաւոր ուսումնարանների են տրւում, այնտեղ էլ Հայոց եկեղեցու քահանան պարտաւոր է Հայոց կրօն և դորա համար Հայոց լեզու աւանդել և երեխային այնքան կրթել, որ նա զգայ թէ ինքը Հայ է և Հայոց եկեղեցուն է պատկանում հաւատքով և համոզմունքով։ Քահանան ի հարկէ պարտաւոր է լաւ ծանօթ լինել մանկավարժական շաւղին և երդուեալ մշակ լինել Հայաստանեայց եկեղեցու, այլ և ձգտէ գրաւել երեխաներին հայրական սիրով և քաջալերական նուէրներով. նա պէտք է և յաճախելով ընտանիքները՝ հովուական ազդեցութիւն ունենայ երեխայի դաստիարակութեան յառաջադիմութեան վրայ։ Այս կրօնուսուցչութիւնն արդէն անկասելի իրաւունքն է իւրաքանչիւր քրիստոնէական եկեղեցու։

Բացի երեխաներից, քահանան կրօնուսուցիչ է նոյնպէս նորա-

---

1 Արևմտեան եկեղեցիներում այս կրթութիւնը տրւում է մինչև 14 տարեկանն և ապա դրոշմում։ ուսուցումը լինում է յաճախ նոյն իսկ եկեղեցու մէջ, եթէ ոչ քահանայի տանը։

դարձներին (եկամուտ՝ proselyte) և նորահաւատներին (convertite) այսինքն՝ քրիստոնէութիւնը նոր ընդունածներին և ուրիշ եկեղեցուց դարձածներին։ Հայոց եկեղեցու քահանան պարտաւոր է գոցա ուսուցանել Հայաստանեայց եկեղեցու քրիստոնէական վարդապետութիւնն՝ որպէս զի հաւատարիմ անդամներ լինեն Հայ հօտին՝ և ապա ընդունել իւր ս. փարախի մէջ։

Բայց սորանով չէ վերջանում քահանայի գործը. նա պարտաւոր է յետոյ ևս հսկել իւր աշակերտածներին՝ որպէս զի դոքա փոքր ի շատէ շարունակեն իւրեանց ստացածը բեղմնաւորել։ Նա պարտաւոր է յորդորել ընտանիքներին՝ որ ուսումնարան ուղարկեն իւրեանց որդիներին՝ իսկ եթէ կան անուսումն երիտասարդներ՝ կիրակնօրեայ ժամերին ժողովել նոցա և անհրաժեշտ ծանօթութիւններ տալ։

Կրօնուսոյցը պէտք է հոգեբանական հասողութեամբ ջանայ կրթել երեխայի հոգին՝ ներշնչել նորան քրիստոնէական ոգի՝ իսկ այդ կլինի մանկավարժական դաստիարակութեամբ. սակայն այդ ամենը պէտք է այնպիսի շաւղով ընթանայ՝ որ ապա առաջնորդէ երեխային դէպի Հայաստանեայց եկեղեցին։ Կրօնուսուցչութիւնը խրատական արուեստ չէ՝ այլ վարժողական՝ կրթական սնունդ. նա պէտք է միայն զարգացնէ այն կայծն՝ որ դրուած է Աստուածանից իւրաքանչիւրի սրտում՝ և աճեցնէ այն սերմն՝ որ հայութեան մի մանրաշխարհ է ամեն մէկի մէջ[1]։ Ցալ հետզ. հետէ՝ գրգռել երեխայի հոգին՝ գնել նորա առաջ օրինակելի տիպարներ՝ բանալ նորա աչքի առջև կրօնական նշանաւոր իրողութիւնների տեսարաններ՝ Քրիստոսի կեանքից հանգէսներ՝ Հայաստանեայց եկեղեցու անցեալ պատմութիւնից սխրագործութիւններ և նուիրական անձերի կենսագրութիւններ՝ սակայն միշտ էական նշանակութիւնը պարզելով՝ այս է կրօնուսուցչութեան հիմնական սկզբունքների ամփոփումն։

---

1. Ինկատի ունենալով հոգևոր ժառանգականութիւնը՝ կկարենանք յառաջադէմ և շնորհալի սերունդ ունենալ՝ միմիայն կրթուած ծնողներ պատրաստելով. ուստի կրթութիւն է պէտք և ոչ պաշարաւորութիւն։

Գործնական աստուածաբանութեան կրօնուսուցչութիւնն իսկապէս մանկավարժութեան է պատկանում և ձգտում է սովորցնել թէ ինչպէս պէտք է ուսուցանել ամենից հեշտ կերպով նպատակի հասնելու համար։ Այս խիստ նշանաւոր է Հայոց դպրոցների համար մանաւանդ այն պատճառով որ մինչև այժմ հին հարց ու պատասխանի մեքենայականութիւնը դեռ մնում է, որ բթացնում է երեխային՝ առանց մի օգուտ տալու։ Այդ պէտք է բոլորովին թողնուի և աստիճանաբար ուսուցումը մշտական նշանակութիւն ստանայ։ Բաւական է որ առաջին տարին շարժուի երեխայի կրօնական տրամադրութիւնը ս. Գրքի հասարակ և պարզ պատումներով, գեղեցիկ և կարճ ասացուածների սերտելով, երգելով, աղօթելով և կարդալով, նա կկրթուի, իսկ ապա կյեռևին կապակցեալ պատմութիւններ և ուղղակի վարդապետական ուսուցումներն, և վերջապէս նախապատրաստութիւն կարուի պատանուն կամաց կամաց համայնական կեանքի մէջ մտնելու, հաղորդութեան խորհուրդը հասկանալու իւր բոլոր պահանջներով և թէ ս. Գրքի և պաշտամունքի էութեան խելամուտ լինելու։ Երեխան մայրենի բարի սովորութեամբ արդէն վայելում է սկզբից աստուածային այդ բարիքները Հայաստանեայց ս. եկեղեցու ծոցում, սակայն գիտակցական վայելումը լինում է որոշ հասակում և դորա համար պէտք է աշխատի քահանան տալ նախապատրաստութիւն և ապա առաջնորդել նորա ուշադրութիւնը նաև եկեղեցում [1]։ Այս դէպքում անհրաժեշտ է և երեխաների համար յատկապէս քարոզ խօսել, առաւել լաւ հէնց ծխական երկդասեան դպրոցի աւարտումից յետոյ, խրատելով նոցա՝ որ լինին երկիւղած և ջանասէր անդամներ հասարակութեան, հնազանդ որդիներ և սիրալիր եղբայրներ։

---

1. Արևմտքում կարգաւորուած՝ մանկական պաշտամունք ևս կայ, որ մանկավարժական մեծ պահանջ է մանկական կրթութեան գործում։ Մանուկների համար պէտք է դարձնել մանաւանդ Քրիստոսի ծննդեան տօնն և քարոզի նիւթ անել նորածին Փրկչին, Նոյնպէս և Տրդատի և ս. Գրիգոր Լուսաւորչի (մանուկ հասակում փախուստը), երեք մանկանց և այլ նման տօնները։

Դժուար է այս ուսուցումը, ոակայն հասարակութեան ամենանշանաւոր հիմունքն է և եկեղեցու կրթական բարձրագոյն խնդիրը։ Քահանային անհրաժեշտ է շատ վարժութիւն՝ այդ գործը վարելու համար և այս պարտիքը ծանրանում է թեմական դպրոցների և մանաւանդ ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի վրայ։ Ժողովրդի յառաջադիմութեան յոյսն երեխաների վրայ է և «այդպիսեացդ է արքայութիւն երկնից»։ Վա՜յ նորան, ով որ գայթակղեցնում և մոլոր ընթացքի վրայ է դնում մատաղ սերունդի ուղղութիւնը. նա չի արդարանալ ոչ մարդկանց, ոչ խղճի և ոչ Աստուծոյ առաջ։ Բայց և երա՜նի այն հոգուին, որ կարող է պարզերես ասել. «Ահաւասիկ ես և մանկունք իմ, զոր ետ ինձ Աստուած»[2]։

27.

ՊԱՇՏՕՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՄ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ։

Գործնական աստուածաբանութեան մի նշանաւոր ճիւղն է պաշտօնի կամ պաշտամունքի կամ աստուածպաշտութեան գիտնական տեսութիւնը (Liturgie, Литургика), որ և կարող ենք ազատօրէն պաշտօնաբանութիւն կոչել։

Պաշտամունքը մի հոգեբանական իրողութիւն է, այսինքն բղխում է մարդկային հոգուց, ըստ որում թէ որքան անհրաժեշտ է այդ, ապացուցում են թէ բարոյաբանութիւնն և թէ կրօնի փիլիսոփայութիւնը։ Այն անզգայ զգացմունքն, որով յաճախ կատարում են պաշտամունքները, պատճառ են լինում, որ դոքա շատերի աչքում լոկ ծէս են դառնում։ Այդպիսի տրամադրութեամբ գատել պաշտամունքը՝ նոյն է թէ ունենալ խիստ միակողմանի տեսութիւն։ Եթէ Հեգելը կոչում է պաշտամունքը «մարդ-

---

1. Թերևս կարենան ձեռնհաս անձինք կիրակնօրեայ դասախօսութիւններ անել այդ մասին կրօնուսոյցների, ծնողների և դաստիարակների համար։

2. Եսայ. 6, 18. Եբր. Բ. 13։

կային հոգու բարձրագոյն գործ», միւս կողմից ճշմարիտ պաշտամունքը քրիստոնէական հին եկեղեցու մէջ է գտել իւր կատարելութիւնը։ Այստեղ պաշտամունքը պատահարար և կամայականօրէն չէ ծագել, այլ անհրաժեշտութեամբ նոյն իսկ քրիստոնէութեան էութիւնից. այստեղ իւրաքանչիւր արարողութիւն ունի իւր հոգեբանական բարոյական - կրօնական իմաստը, իսկ այդ ամենը ցոյց է տալիս պաշտօնաբանութիւնը։ Աւելացնենք դորա վրայ և այն մեծ կապն, որ ունի պաշտամունքը գեղարուեստի հետ, մենք կտեսնենք թէ որքան սխալւում են այն ազանդաւորները, որոնք կարծում են թէ ամբողջ պաշտամունքը պէտք է ամփոփուի միմիայն քարոզութեան մէջ. բաւ է յիշել որ դոցա դէմ խիստ բողոքում են բողոքական մեծ եկեղեցիների ներկայացուցիչ գիտնականները[1]։ «Պաշտամունքը համայնքի միաբանական մի գործն է, որով նորա կրօնական ամբողջ կեանքն արտայայտւում է բարեպաշտութեան մէջ։ Եւ այդ կատարւում է մասամբ իսօքերով, մասամբ նշանակական ծէսերով»։ Ինչպէս որ աղօթքը ճշմարիտ մարդի զգացմունքների բերանացի արտայայտութիւն է, նոյնպէս և պաշտամունքի ծիսական կողմերը՝ մարմնաւոր համերաշխութիւններ են հոգու հետ, եթէ միայն չափազանցութեան և ցուցամոլութեան չեն հասնում։

Պաշտամունքի մէջ պէտք է շատ զգուշանալ, որ սոսկական ձևականութիւնը չհաստատուի՝ փարիսեցիութիւն դառնալու չափ. բայց և չենք կարող ուրանալ, որ այս ու այն պաշտամունքը կամ ծէսն անձնական — անհատական զգացմունքներով դատել և քննա-

---

1. Տես. զորօր. Hagenbach, անդ էջ. 445. Գործնական աստուածաբանութեան մի հռչակաւոր հեղինակ Պալմեր ևս ասում է. «Ծօնակատարութեան մէջ ներկայանում է եկեղեցին իւր հարսնական զարդի մէջ. այստեղ պէտք է մեր մէջ ամենից առաջ ուրախութիւն, վսեմ զգացմունք վառուի, որ մի վեհ ինչ է եկեղեցուն պատկանելը, նորա հետ և նորա մէջ ապրելը»։ Խիստ ընդհանրացած են այսպիսի կարծիքներ և տեսութիւններ գերման գիտնականների մէջ և որքան մշակուած է պաշտամունքի տեսութիւնը, նոյնքան ըղձում է զորօր. հէնց Հագենբախ, (էջ. 447) որ այդ շուտով կատարելապէս իրագործուի բողոքական բոլոր եկեղեցիներում։

գտտել առնուազն (եթէ չուզենանք խիստ խօսել) ամբարտաւանութիւն է։ Պաշտամունքի մէջ մի օրէնք, մի կանոնաւոր յօրինուածութիւն, խորհուրդ կայ, որ ներգործում է հաւատացողի վրայ, տօնական կերպարանք է տալիս համայնական ամենավսեմ զգացմունքներին, զարթեցնում է խոսքան սրտեր և հոգով թռցնում է միասին դէպի ամենիս Հայրը։ Քանի որ պաշտամունքի էութիւնը իւր համայնականութեան մէջ է, հասկանալի է որ նա պատմական պէտք է լինի, ժողովրդի հետ ծնուած և զարգացած, նորա սեփականը, հոգեկիցն և ոչ թէ եկամուտ ինչ։ Այդ լաւ գիտէին եկեղեցու հին հիմնադիրներն, ուստի և հեթանոսական պաշտամունքը զտում և ընդունում էին եկեղեցու մէջ։ Դորա մշտական վերհուութիւն չէին ունենալ, եթէ անհատական կարգադրութիւններ լինէին և կամ անհասկանալի ձևականութիւններ գառնային։ Ուստի և Հայերի համար անպայման բարձրութիւն ունի Հայաստանեայց ս. եկեղեցու հին, անպաճոյճ, ազգային հոգերուղիս պաշտամունքը։ Սակայն զգուշանալով թէ ձևականութիւնից և թէ չոր ու ցամաքութիւնից, պարտ է թոյլ չտալ, որպէս զի պաշտամունքն և ժողովրդի հոգատարութիւնը միաժամանակ և հաւասարապէս զբաղեցնեն հոգևորականին և մէկը միւսի տեղը չբռնէ։ Այդ նկատմամբ աստուածաբանութիւնը մեծ խնդիր ունի իրագործելու համար. նա պէտք է այդ ճիւղի ուսումնասիրութիւնն առաջ տանէ [1] որքան կարելի է, զի այդ ևս խիստ յետ ընկած վիճակի մէջ է։ Հայոց եկեղեցին չունի մեռեալ ծէսեր, քրիստոնէութեան խորթ արարողութիւններ, ուստի և եթէ նորա պաշտամունքն ուսումնասիրուի և իւրաքանչիւր ոք խելամուտ լինի նորա էութեան, բազմապատիկ առաւելութեամբ կգրաւէ մեզ և կքաղցրանայ մեր

---

1. Գեղեցիկ ձեռնարկ է նախնեաց գրուածներից «Գիրք որ կոչի մեկնութիւն աղօթից. արարեալ երանելւոյն Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և այլ ս. վարդապետաց. և հաւաքեալ ըստ կարգի ի միում տփի ի Մովսիսէ աշխատասէր վարդապետէ (ի խնդրոյ Թէոդորէ եղբօր)»։ Կ. Պոլիս. ի Հայրապետութեան լուսակառոյց ս. գահին Էջմիածնի Տ. Աբրահամու երիցս երանելւոյ Սրբազան Կաթուղիկոսին Ամենայն Հայոց։

մէջ։ Ինչի՞ նման է այն մարդն, որ մարմնական բոլոր ձևականութիւնները կատարում է առանց իւր հոգու ներգաշնակութեան։ այդպիսիները հեռու են հասարակական կենդանութիւնից։ Նոյնը կասենք և պաշտամունքի վերաբերմամբ։ պաշտամունքը կապուած է մեր մարմնի հետ և եթէ հոգով չենք միանում նորա ոգու հետ, կապկանումենք, փարիսեցիներ ենք դառնում, ծաղր և ծանակ քրիստոնէութեան։ Այդ չի պատահիլ, եթէ պաշտամունքը լիապէս ուսումնասիրուած լինի ժողովրդի մէջ։ Այն ժամանակ պաշտամունքն արհեստ (փեշակ) չի դառնալ, կ ո ռ չի լինիլ, այլ հոգևոր աստուածպաշտութիւն, որով ժողովուրդը համայնաբար միանալով՝ դիմում է առ ամենի Հայրն և բարոյական սկզբունքներով ներշնչուում։ Եւ առաւել կենդանանում են մեր հոգիներն, երբ այդ պաշտամունքը նոյն զգացմունքներն է յառաջացնում մեր մէջ, ինչ զգացմունքներով կցորդուում էին դորա հետ մեր արի նախնիքը։ Նոցա հետ ենք միանում մենք՝ Հայաստանեայց ս. եկեղեցու քաղցրալուր և քաղցրատես պաշտամունքի միջոցին՝ Հայրենի եկեղեցու վեհ կամարների տակ։

Քանի գեղեցիկ է այդ պաշտամունքը, նկատելով որ ժողովուրդը պէտք է քահանաների և դպիրների հետ միասին երգէ առ Աստուած. քանի գրաւիչ և ոգևորիչ – պատարագի արարողութիւնն, որում ժողովուրդը դպիրների հետ միասին փոխարինում է իւր աղօթքները պատարագչի հետ հարց ու պատասխաններով, հրամաններով և արձագանքներով։ Բայց դորա հետ միասին ժողովուրդն աղօթում է բարձրաձայն և քահանան մեղմով և լռիկ ձայնակցում է նորան։ Հայոց ամբողջ պաշտամունքը կապում է իրար հետ այդպիսի փոխադարձ կապակցութեամբ իւր բոլոր մասնակցողներին և սլացնում դէպի վեր։ Ափսո՜ս որ ժողովուրդը ժամանակի հանգամանքների պատճառով չունի գեղարուեստական, երգեցողական ներգաշնակութեան և կարգապահութեան կրթութիւն, որպէս զի պաշտամունքը չդառնար միմիայն քահանաների և դպիրների գործ[1]։ Վասնորոյ անհրաժեշտ է (և այդ

---

1. Գաւառների շատ եկեղեցիներում դեռ կան կրթուած անձինք ժողովրդի մէջ, որոնք միշտ երգակցում են դպիրներին՝ գեղեցիկ սովորու-

կկատարուի, երբ պաշտամունքի էութեան հասկացողութիւնն ընդհանրանայ), որ իւրաքանչիւրն առնէ ժամագիրք իւր հետ և նորանով մասնակցէ համայնական այդ վեհ աստուածպաշտութեան։

Զգտելով դէպի այդ, քահանաներն ու դպիրները պարտաւոր են աշխատել պարզ և որոշ կարդալ և երգել, որպէս զի հասկանալի և նկատելի լինի ժողովրդին, և ոչ թէ միայն ձայներ հանել, կամ աւետարանը քմահաճ ելևէջներով զգեստաւորել. թող ոչ որ չկարծէ թէ իւր երգական եղանակն աւելի զօրաւոր կլինի քան աստուածային աւետարանը։ Եկեղեցու մէջ ապօթքն ու աւետարանն այլ ազդեցութիւն է թողնում մարդի վրայ ։, քան ատանը կարդացածն, ուստի չպէտք է կարծել թէ նոցա միայն եղանակն է պէտք և բովանդակութիւնը գիտենալ, մանաւանդ որ շատերը գրագէտ չեն և կարօտ են լսելու աստուածային խօսքը միմիայն եկեղեցում, որտեղ երաշխիք ունին թէ չեն խաբուիլ։ Ուրիշ է երգերի նկատմամբ, որոնք, մանաւանդ բանաստեղծականները, զգացմունքներ են շարժում և ոգևորում են և ամրացնում։ Դոյանով հարուստ է Հայոց եկեղեցին։

Իսկ եկեղեցական փրկչական և սրբերի տօները կրթական մեծ նշանակութիւն ունին, եթէ միայն հասկացուի դոցա էութիւնը։ Քանի՞ վեհ խորհուրդ կայ տանալուայի մէջ. հովուապետը խոնարհում* լուանում է իւր տորագրեալների և ժողովրդի ոտները. քանի՞ վսեմ է Քրիստոսի ծնունդը. խանձարուրի մէջ է փոքրամարմնուած աշխարհի փրկիչը . . . . ։ Քանի՞ զգացնող են Ս. Գրիգոր Լուսաւորչի, Տրդատի, Ս. Սահակի և բոլոր ազգային նահատակների տօներն, եթէ դոքա լոկ ծէսեր չդառնան։ Մանկավարժութեան վէմն դոցա մէջ է և եթէ . . . ։

Ուստի յարաժամ պէտք է անմոռաց պահենք Քրիստոսի խօսքը.

թեամբ։ Դորան նպաստելու համար պէտք է իւրաքանչիւրն ունենայ գրպանի ժամագիրք ևս աշխարհաբար թարգմանութեամբ միասին։ Կ. Պոլսեցիք այդ ունին Հ. Մկրեանի գեղեցիկ ջանքով։ Միւս առձեռն ժամագիրքն ևս դորա համար է եղել նախնեաց մէջ։

1. Այս խոստովանում են մինչև անգամ գիտականներն հէնց իւրեանց վերաբերմամբ։

Հոգի է Աստուած, և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութեամբ պարտ է երկիր պագանել[1]։

Պաշտամունքի վարժութիւնը շատ է պահանջւում մեր հոգեւորականների մէջ և այդ ուրախալի է, սակայն այդ դեռ բաւ չէ ճշմարիտ հոգևոր երկրպագութեան իրականացման համար։ Անհրաժեշտ է ճիշտ ուսումնասիրութիւն ոչ միայն արարողութիւնների, այլ և քրիստոնէական գեղարուեստի, հին կարգերի, սարքերի ևն։ Դորա համար անհրաժեշտ շրջան է քրիստոնէական հնաբանութիւնն և գեղարուեստն, որոնք թերևս ընդհանուր եկեղեցական պատմութեան մէջ լրանան։ Ապա թէ գիտաստական («գիտակցական») կդառնայ Հայաստանեայց եկեղեցու կարգ ու սարքերի ուսումնասիրութիւնը։ Բնաւ չպէտք է մոռանալ, որ եթէ պաշտօնեան չհասկանայ մինչև անգամ զանգակի, քշոցի և բուրվառ տալու վսեմ նշանակութիւնն, եթէ նա չգիտենայ թէ ինչ վեհ խորհուրդ է կատարւում պատարագի արարողութեան մէջ, նա ոչ երկիւղածութեամբ վարուելու ազնուութիւն կունենայ և ոչ զգացմունք։ Այդպիսին չի շարժիլ ժողովրդի ամենափափուկ սիրտն անգամ։ Մի պարզ նշանակ է նշխարը, սակայն այդ պէտք է համայնքի մէջ մի գիտաստութիւն ներշնչէ քրիստոնէական հա-

---

1. Յովհ Դ. 24.

—Ընդ Աստուծոյ և վասն Աստուծոյ խօսելով, ամենայն արթնութեամբ պարտիմք միտ դնել բանիցն ասացելոց. զի մի ընդունայն կամ թէ ի դատապարտութիւն մեզ ասացեալքն լինիցին։ Զի թէ ընդ մեր նման մարդոյ ոչ դանդաղեալ մտօք խօսիմք, այլ իմացուածովք զբանն բերեմք և յօդաւոր ասիւք պատշաճեմք. և մանաւանդ յորժամ ընդ աւագաց ունիցիմք խօսիլ երկիւղալից մտօք՝ բանիցն հոգ տանիմք։ Ապա ո՞րչափ անզբաս խորհրդովք ընդ Աստուծոյ և ընդ Աստուածայինսն պարտիմք խօսիլ, և ամենայն երկիւղիւ ընդ նմա և վասն նորա բանաւոր իմացուածովք աւարտել զբանսն։ Զի յաղագս այսորիկ եմք բանաւորք և ոչ յաղագս ա՛յլ իրիք։ Ապա թէ ոչ, մարթէաք զմարմնաւոր պէտսն ամրանութեամբ հարկել որպէս անասնոցն ամենեցուն ջոկք։ Խոսրով Անձևացի անդ. էջ. 5. (Ցառաջաբան)։ Իսկ էջ. 7. . . . . Մի՛ լինիցիմք որպէս ընդ օգս խօսեցեալքն, և կամ ոչ գիտելով զզօրութիւն ձայնին, լինիցիմք ասօղքս խուժ, և լսօղքն դուժ . . .։

ւասարութեան, եղբայրութեան և ազատութեան բարձր սկզբունքների 1. իսկ այդ ամենը կլինի միմիայն պաշտօնեաների հաստոյական երկիւղած պաշտօնավարութեամբ։ Այդ է, որի պակասութիւնը կարող է վայր ձգել թէ ազգ և թէ գիտնական հոգևորականի վարկն և նորա անաղնւութեան ապացոյց լինել։

Ձայնագիտութիւն ևս պահանջւում է հոգևորականից իրաւապէս, սակայն այդ ևս բաւական չէ. անհրաժեշտ է լաւ հասկանալ աղօթքների և երգերի միտքը, մի առ մի կարդացած ըմբռնած լինել այդպէս և ոչ թէ անզգայմունք երգեհոն դառնալ, առանց նորա գրաւիչ ձայնն ունենալու, որ իսկապէս արտայայտութիւն է զգայմունքի։ Ուստի ձայնագիտութեան մէջ առաջին տեղը պէտք է բռնէ երգերի և շարականների ուսումնասիրութիւնը։ Նախ զգալ է պէտք՝ երգի բովանդակութեամբ վառուելով՝ և ապա զգալ տալ և վառել առկայծեալ հոգիները։

Այս անհրաժեշտ ուսումնասիրութիւնները պէտք է լինին անպատճառ համաձայն Հայոց ս. Հայրերի գրուածներին, ըստ որում՝ և շատ հետաքրքրական են պատմական հետազօտութիւնները Հայոց եկեղեցու պաշտամունքի անցեալի նկատմամբ. մի գործ՝ որ շատ յետ է մնացել մեր մէջ, այն ևս գլխաւորապէս գրչագրների անտիպ մնալու պատճառով։ Հետազօտութեամբ երևան կելնեն Հայոց պաշտամունքի գեղեցիկ առանձնայատկութիւններն և կճանաչուին և կսիրուին իրրև վառաւոր ժառան-

1. Եկեղեցական արարողութեան կարգերի բացատրութիւն ունի Յովհան Իմաստասէրը, տպուած իւր մատենագրութեան մէջ։ Նշանաւոր է և «Երանելւոյն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի արարեալ յաղագս եկեղեցեաց կարգաց, թէ զինչ է խորհուրդն» (վէմն անտաշ և անկոփ, եդեալ ի հիմունս . . .)։ որ դեռ գրչագրների մէջ է (№ 246. Բ. Ս. Էջմիածնի մատենադարան)։ Օգտակար գրուածք է Կիւրեղ Աղեքսանդրացու Կոչումն ընծայութեան և դորա հետ Գրիգոր Արշարունու մեկնութիւն ընթերցուածոց. Կ. Պոլիս. 1727։ Պատարագի արարողութեան մեկնութիւն ունին Խոսրով Անձևացին և Ներսէս Լամբրոնեցին։ Դոցանից հանուած գեղեցիկ ամփոփած է և յարմար ձեռնարկ՝ Յովհան վ. Արճիշեցունը. Ս. Էջմիածին 1860։ Այդ մեկնութիւնների մէջ պէտք է և պատմական հետազօտութիւն անել պաշտամունքի հին յիշատակների վրայ։

գութիւններ, որոնք սակայն մեռեալ և ձանձրացուցիչ կ՚անդրադառնան տգէտ գիտասակների աչքում։

Ահա ուրեմն պաշտօնաբանութիւնը պէտք է անխուսափելի ուսուցումն դառնայ Հայոց բոլոր հոգևոր դպրոցներում առանձին առարկայի տեղ բռնելով գոնէ 2. դասարանում։ Իսկ ձայնագրութեան ուսուցչին պէտք է օգնէ եկեղեցական մատենագրութեան ուսուցիչը, վերլուծելով և բացատրելով աշակերտների հետ միասին այն բոլոր շարականներն ու երգերն, որոնք հետզհետէ նիւթ են դառնում երգեցողութեան 1։ Մեկնութեան դասերն ևս կզբաղուեն գոնէ գլխաւոր ընթերցուածները մեկնելով, այնպէս որ պաշտօնաբանութեան նիւթը կթեթևանայ՝ կեդրոնանալով միայն աղօթքների և պաշտամունքների վրայ։

Այսպիսի ուսումնասիրութեամբ միայն կվերանայ սասկական ձևապաշտութիւն և անտարբեր երկրպագութիւնն, որոնք անչափ տեսելի են Աստուծոյ տաճարում։

28.

ԲԵՄԲԱՍԱՅՈՒԹԻՒՆ։

Պաշտամունքի և փրկարար խօսքի հասողութիւնն տարածելու համար է ծառայում քարոզն, որ քրիստոնէական եկեղեցում սկզբից ի վեր անհրաժեշտ գործօն է եղել։ Քարոզով են մատչելի դառնում Քրիստոսի խօսքերը համայնքին, քարոզով է բարոյական կրթութիւն ստանում հասարակութիւնը, քարոզով է միացնում ժողովուրդն՝ Աստուծոյ միատիրա երկրպագունները լինելու։ Բայց քարոզելն ամեն մարդի գործ չէ և գլուխ չի գալ առանց նախապատրաստական վարժութեան. ահա այդ կրթական

1. Զգուշութեամբ կարելի է օգտուել Հ. Գ. Ալեքսիքեանի «Բացատրութիւն շարականաց» գրքից. Վենետիկ 1814։

Տես. և ծխական դպրոցների ծրագիրը. «Արարատ». 1876. էջ. 385. «Կրօնուսոյց վարժապետին պարտք են ի տօնական աւուրս յառաջ քան զպատարագն բացատրել աշակերտաց զխորհուրդ տօնին, որպէս և զիմաստ աւետարանի այնր աւուր»։ «Յորժամ աղօթես, ծանիր թէ ընդ ում խօսիս, կամ զինչ խնդրես, և զխորհուրդդ ի քեզ հաւաքեա»։ Եղնիկ։

խնդիր է բեմբասացութեան (Homeletique Гомилетика)։ Այդ ամփոփում է հովուական գործունէութեան ամենաէական մասը, մանաւանդ՝ երբ ի նկատի ունինք, որ ամբողջ քրիստոնէութիւնը կենդանի խօսքով է տարածուել ազգերի մէջ և նորանով պէտք է տարածուի։

Որքան բազմատեսակ է հովուի գործունէութիւնն, նոյնքան բազմատեսակ է և նորա քարոզութիւնն. այլ է քարոզն եկեղեցու մէջ սովորաբար, այլ է քարոզը հեթանոսների մէջ և այլ են զանազան տօների, հանդէսների, դիպուածների, հարսանիքի, մկրտութիւնների, թաղումների, ձեռնադրութիւնների, ժողովների և նման դէպքերի վերաբերեալ քարոզներն, որոնցից իւրաքանչիւրը պահանջում է առանձին պատրաստութիւն։ Այսպէս քարոզներ են ոչ միայն զանազան գաղափարների բանախօսութիւններն, այլ և Ս. Գրքի քարոզական մեկնութիւնները զանազան ժամանակ[1]։

Քրիստոնէական քարոզների էութիւնն այն է որ իւրեանց սկզբունքներով հիմնուած են Ս. Գրքի վրայ։ Եթէ քարոզի բնաբանը Ս. Գրքից (թերևս և ս. Հայրերի գրուածներից) չէ, այդ քարոզ չի լինիլ, այլ միայն բանախօսութիւն։ Ամբողջ քարոզը պէտք է բղխի և ճիւղաւորուի այդ բնաբանից, ըստ որում և քարոզիչը կփայլի թէ իւր ճարտարախօսութեամբ և թէ մեկնողական և բաղմակողմանի բացատրութեան հմտութեամբ։ Մեկնութիւնները քաղելով մեկնական աստուածաբանութիւնից դեռ չենք ունենալ կանոնաւոր քարոզ. անհրաժեշտ է և թէ հմտութիւն և թէ ճարտարախօսական փայլ, որոնք այնքան կրթութեան հետևանք են, որքան չկայ բնական ձիրք։ Այսպէս որքան և առաջնակարգ տեղ է բռնում ճարտարախօսութիւնն, այնով հանդերձ չի կարելի յուսալ, թէ միայն այդ կարէ բաւականութիւն տալ։ Ճարտարախօսութեան պէտք է համապատասխանէ և բովանդակութիւնը։ Բովանդակութիւնն

---

1. Մեթոդիստներն ունին փողոցային և հրապարակային քարոզներ ևս։ Քարոզութեան է պատկանում և օգտակար գրքեր տարածելը։ Տես և Г. Дьяченко, Объ изданіи народныхъ книгъ религіознонравственнаго содержанія. Харьковъ. 1885.

արժանի է առանձին ուշադրութեան, որ չգառնայ լոկ բնախօսութիւն կամ դասախօսութիւն, նպատակ ունենալով լսողին միմիայն համոզել, մի նոր գաղափար տալ, մտածողութիւնն ընդլայնել։ Քարոզը պէտք է գոցանից զատ աշխատէ լսողի կեանքն ուղղելու, և նորա քաջալերելու կամ զարկ տալու դէպի ճշմարիտ և արդար գործունէութիւն հասարակութեան մէջ։ Քարոզը պէտք է պահանջէ, որ գաղափարներն ու մտքերը կենդանի լինեն և ոչ թէ մեռեալ. նա պէտք է միշտ այդ ուղղութիւնն ունենայ։ Արդարև՝ անհնար է նպատակի հասնել առանց ներգործելու մարդկանց մտքերի վրայ. սակայն այդ միայն միջոց պէտք է լինի և ոչ նպատակ։

Լինում են ժամեր, որոնցում քարոզիչը պարտաւոր է մի ակընթարթում ոգևորել հասարակութեան՝ մի գործ ձեռնարկելու որ և իցէ հասարակական անհրաժեշտութեան մէջ, որպէս հին յունական հարտարախօսները։ Նման դէպքերում Կիկերոն Խոկրատէս, Դեմոսթենէս և այլք կարեն օրինակելի լինել, սակայն ոչ սովորական քարոզների մէջ։ Քարոզն ոչ լոկ զգայմունք պէտք է յառաջացնէ, ոչ սոսկ մտածողութիւններ անէ և ոչ բարեպաշտական բացականչութիւններով պաշտամունք սարքէ։ Քարոզիչը պէտք է զգայ ժողովրդի հետ միասին. շնչէ և ոգևորուի նորա հետ. կասկածներ յարուցանէ, ջրէ, հաստատէ նորա կողմից։ Ոչ թէ մեծախօսութիւն պէտք է անէ, այլ հարցնէ և պատասխանէ, առարկէ և հերքէ, ժխտէ և հաստատէ, ընդդիմադրէ և յաղթանակէ։ Նա պէտք է համոզմունք ներշնչէ, զգացմունքներ լարէ և ապա վճռական զարկ տայ դէպի գործունէութիւն։ Ամբողջ մայրը պէտք է քարոզչին զբաղեցնէ և ոչ թէ նորա հոգեկան որ և իցէ կողմը կամ տրամադրութիւնը։ Թէ նորա մարմնաւոր և թէ հոգևոր կեանքը պէտք է հաւասարապէս շօշափուին և մի ուղղութիւն ստանան դէպի ճշմարիտ գործունէութիւն։ Քարոզը պէտք է զօրացնէ մարդկանց Քրիստոսի անձնաւորութեամբ և պատկերացնէ նորա առաջ Քրիստոսի կեանքը թէ կենդանացուցիչ և թէ առաջնորդող տալու համար։

Բայց այս ամենը կիրագործէ քարոզիչը միայն եթէ նախ մտա-

ծած լինի իւր ասելիքի վրայ և այդ պարզապէս ինքեան պատակերացրած։ Նա պէտք է համոզմունք դարձրած լինի իւր մտքերն և դոցանով ոգևորուի և կենդանութիւն ցոլացնէ, այլ և հեռու կենայ ենթակայական կամ մասնաւոր կարծիքներ արտայայտելուց. այդ ժամանակ միայն կարէ նա համոզող և ոգևորող հոսանքներ առաքել դէպի լսողի սիրտը, կենդանացնել նորան և առաջնորդել։ Իսկ եթէ քարոզիչն ինքը չէ ոգևորւում իւր ասելիքն պարզ և որոշ չէ հասկանում և համոզմունքով չէ խօսում թող հաւատացած լինի որ նա բնաւ չի կարող ազդել ամենաթոյլ լսողի վրայ անգամ։

Քարոզութեան ժամանակ պէտք է նաև միշտ ի նկատի ունենալ, որ հոգևոր է բոլոր ասելիքն և թէ քարոզը պատկանում է նոյն իսկ պաշտամունքին և նորա անհրաժեշտ մասը կազմում։ Հայաստանեայց եկեղեցին երբէք չէ մնացել առանց ներքին և արտաքին առաքելութեան և քարոզների. ամենահին ժամանակներից ունինք այն հոգեհրաշ մեկնական քարոզներն, որոնց ընթերցանութիւնն այժմ անգամ մեր վրայ թունդ ներգործում է և մեզ անչափ գրաւում։ Իսկ միջին դարերից սկսած ապացոյցներ ունինք, որ քարոզն անհրաժեշտ է նկատուել, ըստ որում և ունինք քարոզների ահագին հատորներ գրչագրների մէջ. յիշենք հէնց Ս. Գրիգոր Տաթևացու ամրան և ձմրան քարոզները։ Հայոց միայնակեացները պարտք ունէին միշտ ելնելու իւրեանց վանքերից և գաւառները շրջելով՝ քարոզելու, որով ցոյց էին տալիս իւրեանց հոգատարութիւնը ժողովրդի համար։ Եւ այդ միշտ յաջող էր և ընդունելի, զի հին ժամանակ բարձր զարգացման և ուսման տէր էին միմիայն հոգևորականներն, որոնք և ժողովրդի բարեկեցութեան վրայ էին մտածում, մինչդեռ այժմ քահանայութիւնն ա ր հ ե ս տ է դարձել և տգիտագոյններն են մտածում քահանայ դառնալով ապրուստ գտնելու . . . .։ Ուրեմն աղգային այդ բարձր պաշտօնը բռնաբարւում է։ Իսկ մեր յոյսը դարձեալ ուսման ընդհանրացման և ժողովրդի կրթութեան վրայ է որով կվերանայ այդ չարիքը Ս. Էջմիածնի շողերի տակ և քահանայ դարձողը նախ կմտածէ թէ արդեօք ինքը ուսմամբ բարձր

է իւր հովուելու համայնքից, և ապա կհամարձակուի այդ պաշտօնի մէջ մտնելու։

Քարոզի մշակման մէջ նկատելի են երեք հիմնական աշխատանքներ. նախ նիւթը գտնել, ապա դասաւորել և ապա մշակելով բանաւորել։ Հարկաւ նիւթը պէտք է լինի, որպէս ասուեցաւ, Ս. Գիրքն և քրիստոնէական կեանքն իւր բոլոր մասերով, քանի որ քարոզի միակ նպատակն է՝ կատարելագործել քրիստոնէական կեանքը, բարեզարդել և բարձրացնել։ Հաւատք և բարոյական գործունէութիւն — այս է քարոզի նիւթը, սակայն միշտ յիշելով որ իւրաքանչիւր կողմն առանձին դէպք է պահանջում[1]։ Նայելով թէ օրուայ պաշտամունքը հաւատքի հետ առաւել կապ ունի (զոր. Քրիստոսի ծնունդը, յարութիւնը և լն) թէ բարոյականութեան, ըստ այնմ և պէտք է առաջինը կամ երկրորդը գերակշռէ քարոզի մէջ։ Դժուարութիւնն ընտրութեան մէջ է և այդտեղ կօգնէ միշտ օրուայ ընթերցուածքն, որից կհանուին գեղեցիկ բնաբաններ։ Եթէ քարոզիչը լաւ ճանաչում է Ս. գիրքը նա կարէ յարմարագոյն կտոր ընտրել, որով գրեթէ կիսով չափ յաջողեցրած կլինի իւր քարոզը։ Իսկ թէ որքան ազդու է Ս. Գրքից հանած համառօտ բնաբանը, կնկատէ ամենայն ոք, ով որ ապրել է ժողովրդի մէջ։ Ուրեմն Ս. Գիրք և օրուայ եկեղեցական հանդէսը կարեն միշտ նիւթ մատակարարել նոյն իսկ քրիստոնէական կեանքի, համայնական բարեկեցութեան վերաբերմամբ, վասնորոյ և անհրաժեշտ է լաւ ուսումնասիրած լինել նաև ազգային պատմութիւնն, որ լիքն է ամենագրաւիչ և բազմաբովանդակ նիւթերով։ Սակայն գոյա լրացնողն է ժողովրդական կեանքն, այնպէս որ քարոզիչը պէտք է սրտով ապրի ժո-

---

1. Գրչագրաց մէջ կան «անտառ քարոզից», որոնք ժողովածու են զանազան բնաբաններից։ Այդպիսի մի ձեռնարկ կարէ լինել և ասերէն. Соколовъ, Первоначальное пособіе для проповедниковъ, или собраніе темъ для проповѣдей и назидательныхъ мыслей извлеченныхъ изъ евангелскихъ чтеній . . . . Спб. 1858. Ձեռնարկ ևս կայ ասերէն. Н. Ѳаворовъ. Руководство къ церковному собесѣдованію или гомилетика. Изд. 7-е Кіевъ. 1886.

զոլրդի (համայնքի) մէջ, որպէս զի նորա քարոզները վերացական կամ անդէպ չլինին։

Ապա դասաւորութիւնը կայաղուի հեշտութեամբ, եթէ քարոզիչը, ցոյց տալով իւր բնաբանի կապակցութիւնը նախընթացի հետ, բաժանէ մասերի, վերլուծէ նորա բովանդակութիւնը բազմակողմանի կերպով և տանէ լսողներին. դէպի մի եզրակացութիւն։ Փոքր ինչ դժուար է, եթէ բնաբանը միայն հիմունք դառնայ և նորանոր մտքեր ու նիւթեր գան լրացնեն այդ։ Այս կլինի բաղադրական շաւիղ. երկուսն ևս հաւասարապէս լաւ են, միայն եթէ մի կարգ և մասերի հաւասարաչափութիւն պահպանուի ընթացքի մէջ։ Քարոզի մասերը պէտք է ծագեն բնաբանի բովանդակութեան մասերից. դորա պէտք է լաւ կապակցուած լինին և ոչ մի տեղ բաց չունենան, այլ իրարից բնականաբար հեռևեն, այսինքն ոչ միայն ճարտառանական օրէնքների համաձայն, այլ և տրամաբանական ճշտութեամբ։ Իսկ բանավարութիւնն այնքան չոր ու ցամաք կլինի, որքան չոր լինին հետևութիւններն և առանց լրացուցիչ և զարդարիչ բազմակողմանի բացատրութիւնների։ Քարոզի բուն ընթացքը պէտք է աչքի ընկնի, սակայն ոչ ծառի չորացած գոսացած ճիւղերի նման, որ բնաւ չէ գրաւում տեսնողին *։ Մի խօսքով բնաբանից անհրաժեշտապէս՝ և ոչ կարկատանի նման՝ պէտք է ելնեն թէ ճիւղերն և թէ գորա զարդարիչ մասերը, մի և նոյն ժամանակ իրար հետ կապակցուելով։

Եթէ քարոզիչը շատախօսում է կամ լոկ խրատում է, նա շուտով ձանձրացնում է լսողներին. ուստի պէտք է ամենայն խօսք իւր տեղն ասէ և ոչ առանց նպատակի։ Բաւական է միայն մտքերը պարզ ունենալ և համոզուած լինել և այն ժամանակ արտայայտութիւնները կելնեն՝ որպէս աղբիւրից։ Լեզուն ևս պէտք է փայլի բնական գեղեցկութեամբ և ոչ արուեստական պաճոյճներով կամ անհասկանալի բառերով և կամ ամբոխային արտայայտութիւններով։ Փափաքելի է նոյնպէս, որ բարեպաշտական աւելորդ ցոյցերը չքանան, ինչպէս իւրաքանչիւր խօսքի սկզբում

* Քարոզի մէջ պատճառաբանական միութիւն պահպանելը մի օգուտ ևս ունի, այն է՝ որ լսողներն այլ ևս չեն մոռանալ ամբողջն և նորա էութիւնը։

«Տէրն մեր Յիսուս Քրիստոս . . . . կրկնելն՝ որ բոլորովին անհնարաւակ է և ուրեմն տաղտկալի։ Իսկ սահմանն ընթացքով քարոզելու համար պէտք է կամ գրել և մտածելով մտապահել և կամ գոնէ մի ծրագիր կազմել. այս ի հարկէ կախուած է իւրաքանչիւր քարոզչի ընդունակութիւնից՝ ըստ որում և նա պարտ է վարուել։ Լինում են նաև քարոզիչներ՝ որոնք տանջանքներով են ամեն մի միտք արտադրում։ Ահա դոքա են՝ որ պէտք ունին նախապէս գրելու՝ եթէ սովորած են անպատճառ քարոզելու։ Որքան դժբախտ է քարոզիչն՝ եթէ լեզուական թլուատութիւն կամ թոթով կամ կակազել ունի. այդպիսին զրկուած է ճարտարախօսական կամ ատենաբանական ամբիոնից։ Վասնորոյ և լաւ քարոզիչը պէտք է լաւ նայէ՝ թէ ինչպէս կլսուի իւր քարոզը [1]։ Երբ քարոզիչը համոզուած է իւր քարոզի մտաւոր և լեզուական բարձրութեան՝ այն ժամանակ նա չի շփոթուիլ և հանդարտ և քաղցր ձայնով կխօսէ իւր ժողովրդի առաջ և նորա սիրան ու հոգին կտիրապետէ։ Ահա թէ ինչի համար պէտք է յաճախ քարոզել բարձր ձայնով և վարժուիլ ազատ ժամանակ կամ դպրոցական կեանքում։ Մարդկային հոգին միմիայն յաճախ արդիւնաբերելով է՝ որ կարող է անսպառ աղբիւր դառնալ ժամանակի ընթացքում։ այս չպէտք է մոռանայ իւրաքանչիւր երիտասարդ՝ եթէ ուզում է իւր մտաւոր մարգերը բեղմնաւորել։ Հողը խոպանանում է՝ եթէ շարունակ չէ արդիւնաբերում։ աղբիւրը կցամաքի՝ եթէ արգելենք նորա հոսանքը։ [2]։

Սակայն այդ ամենը կյաջողուի քարոզչին՝ եթէ նա ոչ միայն

---

1. Գեղեցիկ գիտողութիւններով լի է մանաւանդ A. Yinet, homilétique ou théorie de la prédication. Paris. 1853.

Քարոզութեան հետ սերտ կապուած է և առաքելութիւնը (mission)՝ որ դժբախտաբար մեր մէջ բոլորովին չկայ. այդ աններելի է քրիստոնէական եկեղեցուն։ Այդ ի հարկէ մի և նոյն է թէ ներքին քարոզութիւնն ու հովուութիւնը՝ սակայն պէտք է և փորձնական ուսումնասիրութիւն քարոզելի ազգի և նորա տեղական հանգամանքների։

2. «Զոր ինչ Աստուած քեզ շնորհ տայ՝ ի պէտս կարօտելոցն սպասաւորեա՝ զի շնորհքն աղբիւրասցին՝ և դու փառաւորեսցիս»։ Եղնիկ։

իւրաքանչիւր քարոզի համար է նախապատրաստւում; այլ առ հասարակ կրթւում է լաւ քարոզիչ լինելու։ Այդ կրթութիւնը կլինի Ա։ Գրքի ընթերցանութեամբ, քարոզների նիւթեր ժողովելով յուշատետրի մէջ, բանախօսութիւններ անելով, տեսակ տեսակ քարոզներ լսելով և կարդալով [1], ժողովրդի ճաշակն ուսումնասիրելով և ն։ Այդ վարժութիւնների մեծ մասն ինքնակրթութիւններ են. իսկ խօսելու վարժութիւնը պէտք է անպատճառ դպրոցը տայ։ Հարկաւ ընկերական շրջաններում ևս կարող է և պէտք է երիտասարդը խօսի և վարժուի, սակայն այլ է դպրոցի բեմբասացական դասն, որում աշակերտը ստիպուած է զանազան առաջադրութիւնների վրայ խօսելու, կամ ճառ պատրաստելու. այստեղ նա ունի կրթուած և ճանաչուած լսողներ, որոնցից և քննւում է և նորա իւրաքանչիւր խօսքը պահանջւում է գիտատական, պարզ և որոշ լինելու։ Իսկ ապա իրրև վերջնական վարժութիւն պէտք է աշակերտը քարոզէ մի եկեղեցում կամ նոյն իսկ իւր շրջանի մարդկանց համար և կամ հէնց մի հասարակութեան համար. այդ վարժութիւնը պէտք է անեն արդէն նոքա, որոնք հանդերձեալ են հոգևորական դառնալու։ Նկատելի է և այս, որ բեմբասացական վարժութիւնն անհրաժեշտ է ամեն մէկ մարդի, որ ուզում է փոքր ի շատէ հասարակական գործիչ լինելու և կամ փոքր ինչ վայելուչ խօսել կարենալու համար։ Այս վարժութեան պակասութիւնը շատ զգալի է Հայոց մէջ. Կ. Պոլ.

---

1. Հարկ է և ճանաչել նշանաւոր քարոզիչներին, մանաւանդ Գերմանականներին. Renoux, les prédicateurs célèbres de l'Allemagne, leur vie, leurs oeuvres. Paris. 1881։ Գեղեցիկ են Բօսուէի († 1704) garnier Frères սիրուն տպագրութեամբ, և Մասիլիոնի († 1742) քարոզները (նոյն հրատարակութիւն Paris 1875)։ Տես. և A. Hurel, les orateurs sacrés à la cour de Louis XIY. Paris. 1873. Ատենաբանութեան վրայ ունի տեսութիւն Ֆենելոն Dialogues sur l'éloquence. բեմբասացութեան վրայ. J. S. Maury, Essai sur l'éloquence de la chaire. Paris. 1877։ Շատ օգտակար ընթերցանութիւն կլինին Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանի գեղեցիկ թարգմանութիւնները, «Բարոյական-կրօնական խորհրդածութիւններ». Ա—Ե հատոր. Ս. Էջմիածին. 1887—1889։

սեցիք վարժ են խօսելու, սակայն այնտեղ ևս ընդհանրապէս մոռածողութիւնն է կազում։ Մոռածողութիւն և խօսք պէտք է յարակից ընթանան և մէկը միւսից յետ չմնայ։ Օգուտ չկայ լաւ մոքերիցդ, եթէ դոքա հաղորդել չգիտես և կամ խօսքով գրաւիչ չես դարձնում։ Օգուտ չկայ և խօսքիցդ, եթէ ոչինչ ես ասում և կամ արամաբանօրէն համոզել չուզիս։ Երկու դէպքերում ևս չես կարող հասարակական դարիչ լինել . . . . . Քարոզն է միակ միջոցն, որով կարող ենք արագապէս ընդհանրացնել ժողովրդի մէջ թէ փրկական և բարոյական համոզմունք և թէ տնտեսական, առողջապահական, գիտնական, ազգային և այլ ծանօթութիւններ, որոնք խիստ պակասաւոր են հասարակ ժողովրդի մէջ և բայի եկեղեցուց ուրիշ արտաքսաւ օգնող չկայ նորա համար։

29.

ՀՈՎՈՒՍԲԱՆՈՒԹԻՒՆ.

Թէև ամբողջ գործնական աստուածաբանութիւնը զբաղումէ հովուական գործունէութեամբ, այնով հանդերձ կայ նորա մէջ մի բաժին, որ նեղ մոքով հովուաբանութիւն է կոչւում (théologie pastorale, пастырское богословіе)։ Սորա նիւթն է համայնական և մասնաւոր կեանքի հոգացողութիւնն, որ կատարւում է հովիւը թէ պաշտօնական հաւատարիմ գործունէութեամբ և թէ մասնաւոր անձնական սիրով։

Թէև այս մասի վրայ ս ռանձին ենք խօսում, սակայն հովուական աստուածաբանութիւնն ևս միութիւն է կազմում Լրօնուսուցչութեան և բեմքաջացութեան հետ։ Վասնորոյ կարեն դոքա նաև իրրև մի առարկայ, այսինքն՝ գործնական աստուածաբանութիւն համարուիլ՝ ի մի ամփոփուելով։ Բայց եթէ կրօնուսուցչութիւնն, սառնայիր լրացումը մանկավարժութեան մէջ, կմնան բեմքաջացութիւնն ու հովուաբանութիւնն առանձին զբաղմունքի առարկաներ։ Սոցա միութեան իրաւացիութիւնն ակներև է, եթէ չմոռանանք՝ որ հովիւը չի կարող առանց կրօնուսուցչական, քարոզչական և

հոմուական հմտութեան լինել։ Եթէ ուրեմն այդ երեքը մէկ շրջանի մէջ ամփոփենք, այն ժամանակ երեք բաժանումներ կունենանք ամբողջի մէջ, որոնցից իւրաքանչիւրը կարօտ է առանձին տեսութեան։

Արդէն բարոյաբանութիւնն առլիս է այն սկզբունքներն, որոնք անհրաժեշտ են հոմուին, քանի որ հոմուի և աշխարհականի համար չկան ուրոյն ուրոյն բարոյականութիւններ։ Սակայն այդ սկզբունքները պէտք է գարձնենք հոմուի կոչման, ճանաչելով որ հոմուին ունի առանձին պարտականութիւններ թէ պաշտօնի թէ իւր եկեղեցական դիրքի պատճառով։ Հոմուին այստեղ պէտք է ուշադրութեան առնէ թէ այն պարտիքներն, որոնք նա ունի դէպի իւր համայնքի բոլոր խաւերն, և թէ այն պահանջներն, որոնց իրագործումը սպասում է նոցանից։ Հարկաւ այս պարտիքներն ու պահանջները մասամբ բարոյաբանական են և մասամբ իրաւաբանական, ուստի և այդ երկու առարկաները լրացուցիչ են հոմուի գործունէութեան ճանաչողութեան մէջ։ Ուրեմն դոքա պէտք է առանձնապէս պարզեն իւրեանց սկզբունքները հոմուի պաշտօնն ինչպէս ունենալով, թէ ծանօթութիւններ տան և թէ կրթեն ու փարժեն նորան։ Թէ այդ ծանօթութիւններն և թէ կրթութիւնն ոչ թէ ինքեանք ըստ ինքեանց օգտակար կլի ին, այլ անհրաժեշտ է որ հոմուին գիտենայ և ճանաչէ իւր համայնքի բոլոր հանգամանքներն ու դրութիւններն, որպէս զի իւր գիտեցածը գործադրէ ըստ տեղւոյն և ոչ թէ պատահարար և անտեղի։ Ուստի և գործնական ատաուածաբանութեան աւանդողը պէտք է լինի փորձուած, համայնական կեանքին ծանօթ անձնաւորութիւն, որ նորա ուսուցածն ոչ թէ միայն տեսութիւններ լինին՝ այլ և կապուին փորձի հետ։ Միմիայն տե-

---

1. Հոմուին, նոյնպէս և ուսուցիչը, պէտք է և գործով օրինակելի լինին. ճշմարիտ է, հիւանդը չէ նայում բժշկի առողջութեան, երբ նորանից դեղ է խնդրում, սակայն այն նոյն չէ եկեղեցական և բարոյական գործի մէջ. այստեղ պարտ է՝ «նախ առնել և ապա ուսուցանել», ըստ Քրիստոսի։ Բարոյականութեան դէմ մեղանչողը չի կարող ոչ հոմուին և ոչ ուսուցիչ լինել։

ռականապէս կրթուած և գործնականապէս փորձուած հովիւը կարէ յաջողակ լինել ճշմարիտ գործունէութեան մէջ։

Հովուական գործունէութիւնը վերաբերում է ամբողջապէս համայնքին և դորա կենսական յառաջադիմութեան։ Նա է որ պէտք է ներգործէ քրիստոնէական կեանքի զարգացման, երկիւղածութեան և կրօնական կրթութեան յառաջադիմութեան։ Հովիւը՝ լինի նա քահանայ թէ վարդապետ՝ ձգտում է մի և նոյն նպատակին, միշտ ջանալով իրաւապէս կառավարել իւր համայնքն և հայրական սիրով խնամել նորան և հոգալ նորա բարեբաղդութեան և եղբայրական միաբանութեան համար։ Վանորոյ և հովիւը պէտք է հոգայ ժողովրդի մատաղ սերնդի կրթութեան համար, պէտք է յառաջ տանէ եկեղեցական դպրոցների բարեզարգութիւնն և ուսման տարածումը տորին խաւերի մէջ։ Նա պէտք է և կիրակնօրեայ դասախօսութիւններ անէ հասակաւորների համար, եկեղեցական երգեցողութեամբ զարգացնէ ժողովրդի ճաշակն և համայնական ու դպրոցական կամ կրօնական, բարոյական կրթութեան վերաբերեալ հարցերի համար ժողովներ կազմէ ևն։ Այդպէս նա թէ գործը յառաջ կտանէ և թէ օգնած կլինի եկեղեցական իշխանութեան ձգտումներին, տեղեկատու օժանդակիչ լինելով նորա վարիչներին 1։

Հովուական խնամածութեան մի ասպարէզ է և ապքատների ու անտանկների վիճակը։ Դոցա համար հոգալը հովուի պարտքն է, որ կիրագործուի ոչ միայն գանձանակով, այլ և մխիթարիչ և կրթիչ ազդեցութիւն ունենալով անօգնականների վրայ։ Այդտեղ պէտք է օգնէ հովուին և տիրակինն, ինքն ևս աշխատելով իւր շրջանի մէջ։ Հովուական այս գործունէութեան մէջ պատկաւոր արգիւնքը պէտք է լինին որբանոցների և ապքատանոցների հիմնարկութիւններն, որոնք բոլորովին պակասում են մեր մէջ։

Հովիւն ունի այս կրթական և խնամածական գործունէու-

---

1. Հայոց եկեղեցու համայնական կեանքը բնաւ չէ գարձած ուսումնասիրութեան նիւթ. թերևս այդ լինի պատճառ, որ հովուութիւնն անչափ յետ է մնացած։

թիւնից զատ՝ նաև յարաբերութիւն տեղական եկեղեցական վարչութիւնների հետ։ վասնորոյ և այստեղ անհրաժեշտ է նախապատրաստական ճանաչողութիւն, զի այս շրջանում հովիւն ունի իրաւաբանական պարտաւորութիւններ, որոնք կարելի է կատարել միայն որոշ սահմանների համաձայն ճշտութեամբ և ոչ ըստ անձնական հայեցողութեան։

Այս ամբողջ գործունէութեան մէջ հովիւն այնքան յաջողութիւն կունենայ, որքան նա կարենայ հայրական սէր տածել դէպի ընտանիքները, նոցա մկրտութիւններին, պսակներին, թաղումներին և այլ դէպքերին հանդիսաւոր կերպարանք տալ և առիթ առնելով՝ բարոյական յուշարար լինել կամ անհրաժեշտ տեղեկութիւններ ու խրատներ տալ ապագայի համար ևլն։ Հարկաւ այս յարաբերութիւնները միմիայն այդպիսի պաշտօնական դէպքերի պատճառով չպէտք է լինին, այլ նաև հիւանդութիւնների, դժբաղդութիւնների և այլ կարօտութիւնների ժամանակ հովիւը պարտաւոր է միսիթարական դարձնել իւր այցելութիւնները [1]։ Այս առաւել հեշտ կլինի հովուի համար, որքան բարձր է ընտանիքն և բարոյապէս կրթուած. սակայն ստորին ընտանիքները չպէտք է այքաթող առնուին։ Նորա գործը յաջողակ կլինի, եթէ նա կուսակցական չլինի, այլ վայելուչ բարեկամ։ Նա լաւ պէտք է դիտէ իւր շուրջն և տեսնէ թէ ընտանիքներն ի՞նչ օգնութեան են կարօտ և կամ նոցա այս ու այն անդամն ի՞նչ խնամքից է զուրկ, որ կարելի լինի իսկոյն օգնութեան ձեռք կարկառել։ Ահա այս ամենն անելու համար անհրաժեշտ է լաւ ուսումնասիրութիւն թէ օգնութեան միջոցների և թէ համայնքի զանազան հանգամանքների և յարաբերութիւնների, դիրքի և վիճակի։

Տեսական ուսումից և ժողովրդական կեանքի միտաբերեալ ըն-

---

1) Հովուի պարտականութիւնն է այցելել նաև բանդարկեալներին, քարոզել նոցա աւետարանը, յորդորել՝ դառնալ այն ճանապարհից, որ դատապարտելի է և պատճառ է եղել բանդարկութեան։ Նա պէտք է ջանայ ուղղել նոցա, միսիթարել և զղջալ տալ և երջանկութեան ճանապարհը մատնացոյց անել։

թերցանութիւնից որքան էս օգուտներ ունենայ հոգևորականացուն, այնով հանդերձ անհրաժեշտ է ապա և փորձ։ Փորձի համար չունինք վարժութեան միջոցներ. դոքա կարեն ամենից լաւ միայն գործնական ասպարիզում ձեռք բերուիլ։ Այդ անհնար է ունենալ հոգևոր դպրոցներում, ուստի և „արմաքագոյն է նշանակել հոգևորականացուին մէկ եկեղեցում իբրև օգնական մի փորձուած կրթուած բարեմիտ քահանայի, որ և կառաջնորդէ նորան համայնքի զանազան յարաբերութիւնների մէջ վարժուելու։ Իսկ ապա, երբ կվարժուի երիտասարդը (սարկաւագը) հովուական գործունէութեան և պաշտօնակատարութեան, այն ժամանակ կձեռնադրուի քահանայ։ Մինչդեռ կուսակրօնների համար միակ վարժարանը պէտք է լինի մէկ կազմակերպուած վանք կամ լաւ էս միայն Ս. Էջմիածինն, որտեղ մանուղները պէտք է լինին ազատ ունկնդիրներ Հոգևոր ճեմարանի ասուածաբանական դասերին (եթէ թերի են դորանից) և վարժուողներ թէ պաշտօնի և թէ կառավարչական գործունէութեան մէջ, այդ էս փորձուած եպիսկոպոսների կամ վարդապետների առաջնորդութեան տակ 1։ Այդ վարժութեան համար պէտք է ուղարկել նոցա երբեմն երբեմն քարոզելու գաւառներում և մօտակայ գիւղերում, այլ և վարչական մանր մունր յանձնարարութիւններ կատարելու։ Իսկ առաջնորդական կամ յաջորդական պաշտօնի համար լաւ կլինէր՝ եթէ առ ժամանակ իւրաքանչիւրը մնար փորձուած առաջնորդների մօտ իբրև օգնական աբեղայ։ Միմիայն այդպէս կունենանք իւրեանց գործն ուսումնասիրած. դորա համար փորձուած և համոզմունքով 2 հոգևորականներ։

---

1. «Մանուկ կրօնաւոր, որ ոչ է առ ոտս ծերոց, աննշան որս է սատանայի». Եզնիկ։

2. Համոզմունքով եմ ասում, այսինքն՝ որ ներքինն և արտաքինը, մտածողութիւնն ու գործն իրար համապատասխան լինին և ճշմարիտ։ Ապա թէ ոչ, կարդարանայ Եզնիկի խօսքը թէ. «զմիս անասնոց ոչ ուտեն, և զեղբայրն անյագաբար ուտեն. գինի ոչ ըմպեն, և զհոգին արեամբ շաղախեն . . . . Շրթամբք սրբեմք զԱստուած, և ի զուր աշխատիմք»։ Իսկ

Ուրեմն ուսումն և գործունէութեան ու պաշտօնի փորձ — ահա են, որոնք պահանջւում են հոգևորականից։ Տեսանք թէ ինչպիսի փորձ է հարկաւոր, սակայն պէտք է պարզ լինի մեզ համար և այս՝ թէ ինչ ուսում է պէտք նորան։ արդեօք բաւական է առհասարակ ուսեալ լինել, թէ հոգևորականի ուսման պահանջն այլ է։

Այո՛, հոգևորականութեան ուսման պահանջն ոչ միայն այլ է, այլ և առաւել է։

Որ աստուածաբանական բոլոր առարկաներին ծանօթ պէտք է լինի և լաւ ուսումնասիրած ս. Գիրքը, պաշտամունքն, Հայաստանեայց ս. եկեղեցու գաւանաբանութիւնն ու բարոյաբանութիւնն, — այդ հասկանալի է։ ինչպէս վերև արդէն բացատրուած է։ Մանկավարժութեան, փիլիսոփայութեան և ուրիշ օժանդակ գիտութիւնների մասին ևս ասուած է։ Սակայն այդ դեռ բաւական չէ։ լաւ հովիւ լինելու համար անհրաժեշտ է գիտենալ նաև բժշկութիւն և գիւղատնտեսութիւն, որոնց կարօտութիւնը զգացւում է մանաւանդ գիւղերում։ Իւրաքանչիւր անհատի հոգևոր ուղղութիւնը խնամելու համար՝ չի կարող հովիւը յաջողակ լինել, առանց հոգևոր և մարմնաւոր հիւանդութիւններին ծանօթ լինելու և բժշկական օգնութիւն հասցնել կարենալու։ մանաւանդ որ յաճախ մարմնաւորից է կախուած և հոգևորը։ Իսկ թէ որքան անհրաժեշտ է հովուին կարենալը բժշկական օգնութիւններ հասցնել, կզգայ իւրաքանչիւր ոք։ երբ ի նկատի ունենայ, որ շատ տեղեր բժիշկներ չկան և կամ հեռու են և միայն քահանան է՝ որ ամենից մօտիկ է ընտանիքներին և արտաքուս։ ժողովրդի առողջապահութեան նպաստելու հ գը ընկնում է հովուի վրայ։ Նա պէտք է ոչ միայն բժշկէ, այլ առողջապահական ամեն տեսակ խորհուրդներ և խրատներ տայ թէ մեծերին, թէ փոքրերին, թէ արանց և թէ կանանց։

այդ բոլորը կվերանայ, երբ հոգևորականացուն նախ ուսումնասիրէ պաշտօնի պահանջածն, ապա ձգտումն զգայ դէպի այդ կոչումն և ապա մտնի այդ պաշտօնի մէջ։

Դորա հետ անհրաժեշտ է գիտենալ և տնտեսութիւն, որի պակասութիւնից վտանգւում է նաև ժողովրդի մարմնաւոր առողջութիւնն՝ ապա ուրեմն և հոգևորը կ՚նասուի։ Միմիայն դորա մէջ գտնել նորա փրկութիւնը՝ մեծ սխալ կլինի և կնշանակէ կորստեան մատնել նորա հոգին և զրկել մարդկանց իւրեանց արժանիքից և մի քանի տասնեակ տարիներով յետ գնալ քաղաքակրթութիւնից։ Մանաւանդ որ մարդ միմիայն մարմնաւորով չէ բաղդաւոր և առողջ. նա հոգևոր պահանջ ևս ունի, որի չբաւցնելը կոտանէ նորան դէպի անգիտ կորուստ, բարոյական անկումն, անասնական կեանք, նիւթապաշտութիւն, որոնք սոսկալի են ամենայն ազգի և ժողովրդի համար։

Որպէս զի հովիւը կարենայ յաջողապէս հոգալ ժողովրդի հոգևոր կարիքները, նա պէտք է ահա և մարմնաւորն ոչ բաթող չառնէ, ուրեմն և բայի բժշկութիւնից անտեսութիւն գիտենայ, հմուտ լինի վար ու ցանքի և գիւղատնտեսութեան բոլոր հանգամանքներին, այլ և սրհեստի, արդիւնաբերութեան և այլ ժողովրդական պարապմունքներին, որ կարենայ զարկ տալ երկրի յառաջադիմութեան թէ իւր խորհուրդներով ու քաջալերութեամբ և թէ կիրակնօրեայ դասախօսութիւններ ունէ կամ մասնաւոր շրջաններում հաղորդէ քաղաքակրթուած աշխարհի նորանոր յառաջադիմութիւնները։ Այդ գիտութեան պէտքը զգայւում է նաև, երբ հովիւը խօսակցում է կենսական այդ պարագաների մասին. եթէ նա անտեղեակ լինի դոցա, նա ձանձրալի և ծաղրալի կդառնայ իւր ժողովրդի առաջ և կամ կօտարանայ, չկարենալով մասնակցել ժողովրդին զբաղեցնող խօսակցութեան և օգտ չլինել նորան[2]։

---

1. Այս գործնական հմտութիւնները շատ անհրաժեշտ են հէնց քարոզչութեան և հովուութեան յաջողութեան համար. բժիշկ և անտես քահանան կամ քարոզիչն մուտք կունենայ ամենայն տեղ։ Ուստի Գերմանիայում լաւ քահանայացուները յաճախում են ազատ ժամերին նաև հիւանդանոցները՝ հիւանդութիւնները գործնականապէս ճանաչելու համար։

2. Հովուի համար կան ռուսերէն շատ ձեռնարկներ. որոնք կարեն օգտա-

Բոլոր եկեղեցական դպրոցներում այս առարկաներն, որոնք անպայման պահանջ են հովուի յառաջադիմութեան, ուստի և անպատճառ պէտք է մտցնուին Հայոց Հոգ. Ճեմարանում և թեմական դպրոցներում։ Բժիշկների բժիշկ էր և անտեսների անտես՝ մարդկութեան փրկիչն, եկեղեցու հիմնադիրը, վանորոյ և նորան պէտք է հետևեն եկեղեցու հովիւներն, որպէս հետևեցան Նորան առաքեալներն և յաջողութիւն ունեցան անարգել։ «Զհիւանդս բժշկեցէք, զբորոտս սրբեցէք», ոմն միջական հրամանն է Քրիստոսի։

Քանի որ Հայաստանեայց եկեղեցու ձգտումն է՝ իրականացնել ժողովրդի բարեկեցութիւնն և զարկ տալ նորա յառաջադիմութեան, ակներև է՝ որ պէտք է հմուտ և կրթուած պաշտօնեաներ ունենայ, երկիւղած գործողներ և աւետարանի հաւատարիմներ, ճանաչող ժողովրդի ցաւերը, կրթող և մի և նոյն ժամանակ օգնող նորա մարմնաւոր կարօտութիւնները լրացնելու։ Ուստի և ս. Սահակ պահանջելով, որ հոգևորականներն անպատճառ ուսեալ և կրթուած անձինք լինին, ասում է. «քանզի յորժամ ուխտն՝ որ գլուխն է եկեղեցւոյ՝ ընտիրք և պիտանիք լինիցին, և ս առաւել ժողովուրդն. և թէ եղիցի որք ի ժողովրդենէն ծղլ վարուք առաքինութեան՝ դիւրագոյն լիցի ածել յուղղութիւն. . . .»[1]։

կար լինել А. Струдза. Письма о должностяхъ свящ. сана.—Забѣлинъ. Права и обязанности пресвитеровъ.—Пѣвницкій, священникъ. Приготовленіе къ священству и жизнь священника.—Прот. Чижевскій. О церковномъ хозяйствѣ и церк. письмоводствѣ.—Архим. Іаковъ. Пастырь въ отношеніи къ себѣ и своей паствѣ.—Прот. Ѳ. Гиляровскій. Что можетъ сдѣлать священникъ для благосостоянія своего прихода? Ան. Ան. Տես և. Поповъ. Объ усердіи къ миссіонерскому дѣлу. Пермь. 1874. Քարոզել աւետարանը հեթանոս ազգերի մէջ և բարձրացնել նոցա, այդ ոչ միայն Քրիստոսի հրամանն է, այլ և քաղաքակրթութեան պահանջը։ Աւետարանով պէտք է ընտելանան աւազակաբարոյ ժողովուրդները։

1. Տես. և Յովհան Մանդակունու կանոնը. «Արդ ես զայս ըստ իմում գիտելոյ ասեմ։ Թէ որ զմանուկ տգէտ և զտխմար՝ որ ոչ կարէ կարդալ զաւե-

իսկ ապա հոգևորականի պարտիքն է՝ լինել հեզ և եղբայրասէր, ճշմարտութեան անպայման երկրպագու, չարի և վատի յանդիմանող հայրաբար և քրիստոնէական ոգւոյ հեւանոց։ մի խօսքով՝ նա պէտք է ունենայ հաւատք, յոյս և սէր, կամ թէ հաւատք և գործ, և կամ կարճ՝ կենդանի հաւատք։

30.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԻՐԱՒԱՒԱՆՈՒԹԻՒՆ։

Հայաստանեայց ս. եկեղեցին ունի իւր կառավարական շրջանը թէ իւր ներքին կեանքում և թէ արտաքինների հետ ունեցած յարաբերութեան մէջ։ Այդ կառավարական գործունէութիւնը կարող է կատարուիլ միմիայն Հայաստանեայց եկեղեցու աւանդական կանոնների և սկզբունքների համաձայն, որոնք չեն կարող բնաւ խախտուիլ՝ առանց այդ ս. եկեղեցու իրաւունքներն ու արդարութիւնը շօշափելու։ Ահա դոյա օրինաւոր

տարան իբեմի ի լուր ժողովրդոց, և զբոլոր ուսումն կարգի քահանային ոչ է ուսեալ, զպատիժ քահանայանալոյ նորա՝ նա կրէ՝ որ ձեռնադրեացն զնա. զի զհասնոցն և զուսելոցն զմեղաց համարս անձինք իւրեանց տան։ Այլ օրէն է առաւել զգիտունն և զհասակաւ կատարեալն արժանացուցանել այսմ շնորհի, որ կարող են ապրեցուցանել զանձինս և առաջնորդել ժողովրդեանն. . . . Վասն որոյ պատուիրեմ առաջնորդաց եկեղեցւոյ՝ զգուշանալ ի ձեռնադրութենէ տգիտաց, և մի կաշառօք արծաթոյ զոք յառաջ մատուցանել յեպիսկոպոսութիւն, կամ յերիցութիւն, կամ ի սարկաւագութիւն, կամ յայլ աստիճան. այլ որպէս ի ս. աւետարանին Փըրկիչն ասէ առ ս. աշակերտսն թէ՝ «ձրի առէք, և ձրի տուք»։

Նոյնպէս և վարքով ու մարմնով պակասաւորներին արգելուած է ընդունել հոգևորական աստիճանի մէջ։

1. «Հնազանդեա՛ սիրով, աղօթեա՛ յուսով, աշխատեա՛ հաւատով, և պայծառասցիս յերկնային հարսանիսն»։ «Լաւագոյն է զձեռսն համբառնալ առ Աստուած, յորժամ աղօթեսցէ. բայց առաւել կարևոր է, որ ի պէտս եղբարցն սպասաւորեսցէ»։

«Եթէ ամենայն եղբարցն հիւանդութիւնն քեզ ոչ ցաւէ, մի լինիր առաջնորդ»։ «Եթէ զանարժանն ըստ պիտոյից ոչ յանդիմանես, մի լինիր վարդապետ»։ Եղնիկ։

պահպանութեան համար անհրաժեշտ է հիմնաւոր ուսումնասիրութիւն, որ և եկեղեցական իրաւարանութեան նիւթն է *։ (Droit canonique, церковное право).

Եկեղեցական իրաւարանութեան մէջ առաջին տեղը բռնում է Հայաստանեայց եկեղեցու կազմակերպութեան ուսումնասիրութիւնը, թէ ինչ քաղաքական և հասարակական ձևակերպութիւն է ստացել իւր պատմական կեանքում, ինչ դիրք ունի գէպի պետութիւնները, և ինչ իրաւունքներ ունի դոցա նրկատմամբ ներկայումս։ Եթէ այդ ամենը ճշտիւ որոշուած չլինի եկեղեցականի համար, նա չկարէ ճանաչել իւր եկեղեցու իրաւական սահմաններն և պարել նորա արտաքին յարաբերութիւնները հաւատարմութեամբ և պահպանութեամբ։ Քանի որ եկեղեցին աստուածային հաստատութիւն և ուրեմն բարեբար օգնական է պետութեան, իսկ պետութիւնը հիմնելով իւր գոյութիւնը քրիստոնէական սկզբունքի վրայ, պարտաւոր է պաշտպանել և յարգել նորա աստուածային անկախութիւնն և իրաւունքները, հասկանալի է որ դոքա պէտք է ուղիղ յարաբերութիւն պահեն միայն իրաւարանական ուղղամտութեամբ։ Հայաստանեայց եկեղեցին հեռու է հռոմէական աշխարհակալական ձգտումներից, բայց և մի և նոյն ժամանակ անկախ է իւր եկեղեցական էութեամբ, ներքին կեանքով և իրաւունքներով։ Որպէս ազատ է հաւատքն և աստուածպաշտութիւնը, նոյնպէս և ազատ է Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցին։ Նա ոչ ենթարկուել է իւր թագաւորներին և ոչ ստորադրել նոցա։ Նա այդպէս ճանաչել է միշտ իւր քրիստոնէական սահմանն ու շրջանը։ Գիտէ պետութիւնն, որ եկեղեցական գործն իւր իրաւունքներից դուրս է, թէ նա քրիստոնէական բարեպաշտութիւն ունի։ գիտէ և եկեղեցին, որ ինքը չի կարող պետութեան տեղը բռնել և մի և նոյն ժամանակ քրիստոնէական ճշմարիտ եկեղեցի մնալ։ և ահա այս բաւական է, որ երկուսն էլ կարենան հաշտ

*) Այս գիտութիւնը նոյնքան զգուշալի է, որքան և դաւանաբանութիւնը, վասնորոյ և դորա ուսումնասիրութիւնը աստուածաբան ուսումնականի գործն է։

իւրեանց գործերը յառաջ տանել, առանց իրար խանգարելու։ Սակայն իւրաքանչիւրն եւս մանաւանդ եկեղեցին քաղաքագիտութեամբ պէտք է խիստ զգոյշ լինի, որ իւր սահմանները չըխախտուին։

Հայաստանեայց եկեղեցին ճանաչելով իւր դիրքը, կեդրոնացնում է իւր գործունէութիւնն իւր ներքին կեանքի, այն է՝ վարչութեան և եկեղեցական դատաստարակութեան մէջ։ Իբրև վարչութիւն պէտք է որոշած ունենայ իւր հաւատացիքների սահմանը, պաշտամունքի, եկեղեցական կարգերի, կրթական գրքերի, աստուածաբանական հրատարակութիւնների կանոնաւորութիւնն, և այլ այսպիսի անօրինութիւններ անէ։ Իսկ դատաստարակութեան մէջ պարտ է որոշած ունենալ ժողովրդի յարաբերութիւնը դէպի եկեղեցին, եկեղեցականների պարտիքը թէ եկեղեցու և թէ ժողովրդի նկատմամբ։ Նոյնպէս և պատկի, ապաշխարութեան, ընտրութիւնների և այլ նման գործերի որոշմունքը պահանջում է եկեղեցուց, որում պետութիւնները պարտաւոր են աջակցել նորան։ Եկեղեցական ուսուցման, հոգևորականների ընտրութեան և ընդունելութեան, եկեղեցիների և դպրոցների շինութեան, կայքերի պահպանութեան, եկամուտների հաշուի, դոցա կանոնաւորման և այլ այսպիսի գործերի բարձրագոյն վարիչներն են եկեղեցականները՝ միացած համայնքից ընտրուած օգնականների հետ[1]։

Եկեղեցական կառավարչութեան մի մեծ գործն է նաև դատաստարակութիւնն, ըստ որում պէտք է ջանայ իրագործել այն ամենն, ինչ որ տեսանք մինչև այժմ, որ պահանջում է Հայաստանեայց եկեղեցու յառաջադիմութեան զարկ տալու համար, այն է՝ ուսման, հոգևորական հոգատարութեան, եկեղեցական կրթութեան և ժողովրդի բարեկեցութեան զարգացման գործում։ Նա պէտք է հետևի իւր միակ գլուխ Քրիստոսի աւետարանին և

---

1. Եկեղեցական իրաւաբանութեան վրայ ասէրէն օժանդակ գրքեր. Проф. Н. Соколова. Церковное право.—Прот. А. Луканинъ. Руководство къ производству дознаній и слѣдствій по проступкамъ и преступленіямъ священно-и-церковнослужителей.

միշտ կենդանի պահէ նորա խօսքերը թէ գործով և թէ գործունէութեամբ։

Այս բոլորի համար անհրաժեշտ է և ուսումնասիրել Հայաստանեայց եկեղեցու վարչական կազմակերպութիւնը, նորա նուիրապետութիւնը, ընդհանրական Կաթուղիկոսի իրաւունքները բոլոր եկեղեցու վրայ, միայն համաձայն Հայաստանեայց եկեղեցու ս. հայրերի վարդապետութեան, եպիսկոպոսների, առաջնորդների, յաջորդների, վարդապետների, աբեղաների և քահանաների ու սարկաւագների գործունէութեան իրաւասութիւնը, նոյնպէս և կոնսիստորիաների կազմակերպութիւնն և սահմաններն առաջնորդի հսկողութեան տակ։ Դորա հետ պէտք է ուսումնասիրուին և Հայաստանեայց եկեղեցու կանոնական իրաւունքն, այսինքն՝ այն կանոններն, որոնք ընդունուել են նորա մէջ Հայոց եկեղեցական ժողովների հեղինակութեամբ կամ որոշմամբ կամ վաւերացմամբ, քանի որ Հայոց եկեղեցական ժողովներն են Հայաստանեայց եկեղեցու բարձրագոյն հեղինակութիւնները։ Դոցա մէջ և ս Հայոց ս. հայրերի ժամանակ գումարուած ժողովները չափ են յետագաների, եթէ հարցը կայ ուն Հայոց եկեղեցու մի որ և իցէ սկզբունքի հետ, զոր. պաշտամունքի, նուիրապետութեան և այլ ինդիրներում։ Իսկ դաւանանքների նկատմամբ մի արդէն յիշուել է վերև, որ Հայոց ս. հայրերն անպայման հեղինակութիւններ են, որոնցից շեղուել անհնարին է։

Արդ՝ Հայաստանեայցս ս. եկեղեցու կանոնական իրաւունքը բովանդակուած է հետևեալ կանոնադրութիւնների մէջ, որոնք են.

1. Ս. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութեան մէջ տեղ տեղ յիշուածներն ու նորա երեսուն կանոնները։

2. Ս. Ներսէսի և ս. Սահակի կանոնները։

3. Ե. դարի ս. հայրերի մէջ ցրուածները. (Ե. իշ. Յովհան Մանդակունու, Եղնիկի և այլոց։)

4. Շահապիվանի ժողովի կանոններն, որոնց հետ և առաքելականը [1], Թադէոս առաքեալինը և Նիկիոյ ժողովինը։

---

1. Առաքելական կանոնները հնագոյնն են քրիստոնէական եկեղեցու մէջ։

5· Դենոյ Ա· ժողովինը (551 թուին)։
6· Ներսէս Գ·-ի կանոնները։
7· Սահակ երրորդինը։
8· Յովհան Իմաստասէրի (Մանազկերտի 726 թուի) կանոնները։
9· Սիոն Կաթուղիկոսինը։
10· Սոյ ժողովինը Դաւիթ կաթուղիկոսի օրով։
11· Կոստանդին Ա· կաթուղիկոսինը։
12· Երուսաղէմի ժողովում 1651 թուին Փիլիպպոս կաթուղիկոսի հրամանով և Սոյ Ներսէս կաթուղիկոսի կամակցութեամբ որոշուած ԺԴ· կանոններ։

Գեղեցիկ ձեռնարկ է Մխիթար Գոշի դատաստանագիրքը [1], ուր կայն տեղ տեղ յէ հիմնուած ազգային ժողովների սկզբունքների վրայ, վաստորոյ և վաւերացման կարօտ է։ Այդ մի թանկագին գանձ է մեր մատենագրութեան մէջ, որ և նախընթաց կանոնների հետ միայն կարող է իրրև հիմք ծառայել մի կանոնական ձեռնարկ յօրինելու· այսոնք են Հայոց եկեղեցու իրաւարանութեան ուսումնասիրութեան աղբիւրները։ Իսկ ուղղութիւնը պէտք է լինի՝ ջանալ նոյն սկզբունքների վրայ յարմարցնել մեր ժամանակի հանգամանքներն և երբ դորա մի ամիսի ժողովածու կազմեն, այն ժամանակ կարենք ապահով լինել թէ կիրառման անկարգութիւններն, ապօրինութիւններն ու ոտնձգութիւնները։ Մինչդեռ առայժմ Գոշի դատաստանագիրքը կարէ յիրարկուել միմիայն համեմատուելով մշտապէս վերոյիշեալ կանոնադրութիւնների հետ, եթէ նորա այս ու այն որոշումը պարզապէս չէ հիմնուած Հա-

---

Ցունական եկեղեցում յայտնի կանոնական ժողովածուներն են Codex Theodosianus Ե· դարից և—Iustinianus Զ· դարից։ Սոյն դարում ժողովածու կազմեց Յովհաննէս Սխոլաստիկոսը։ Հռովմէական եկեղեցում յայտնի է Իսիդոր Հիսպալիսեցուն († 636)· որի տեղը բռնեցին Թ· դարում սուտ Իսիդորեան վճիռները· սոցանով յառաջ տարին պապերն իւրեանց հակաւետարանական ձգտումները։

[1]· Տպուած է ի Ս· Էջմիածին 1880· Վահան Վ· Բաստամեանի գիտնական և բազմահմուտ աշխատութեամբ։ Այդ գեղեցիկ գիրքը մեծ օգուտներ կտայ իւրաքանչիւր ընթերցողի։

յաստանեայց եկեղեցու ժողովական վճիռների և ս. Հայրերի վարդապետութիւնների վրայ։ Ինչ օրէնք և կանոն որ զոցա հակառակ է, չի կարող բնաւ մշտական իրաւատութիւն ստանալ Հայաստանեայց ս. եկեղեցու գաւթում[1]։ Վասնորոյ և սնապատման անհրաժեշտ է ստուգաբանական, իրաւաբանական և քաղաքագիտական հանճար և կրթութիւն, որպէս զի նորը հարցերի թեթև սիալով մեծամեծ վատ հետևանքներ չյառաջանան, քանի որ եկեղեցական խնդիրներում ոչ մի կերպ ներողամտութիւն, բարեժամանակ եղանակ (opportunistisch) և կոմպրոմիսներ թոյլատրելի չեն[2]։

31.

ԱՄՓՈՓՈՒՄՆ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ։

Այժմ ունինք մի քանի այն բոլոր առարկաներն, որոնք կազմում են ստուգաբանական գիտութիւնների շարքը չորս բաժանմունքների մէջ։ Տեսանք որ ուսման հիմք է կազմում մեկնական ստուգաբանութիւնը, զորան հետևում է պատմականն, ապա բանակարգականն և ի վերջոյ զոյգ արդիւնաւորումը գործնական ստուգաբանութեան մէջ։ Այսպէս ասելով չպէտք է հասկանալ թէ իւրաքանչիւրի համար առանձին ժամանակ է պէտք, այլ ամեն մէկի բաժնից գանէ գլխաւորները պարտ է դպրոցական դասընթացքով անցնել։ Ուսման ընթացքում ի հարկէ՝ անհրաժեշտ է լինում շարունակ ուսումնասիրել նաև միւս բաժինները, որ զոցա սերտ կապ ունեն իրար հետ։ Նոյնը կարելի է ասել լեզուների մասին. զոյգ համար 2—3 ամիս բաւ է հիմ-

1. «Արդ եթէ ոք անհնազանդեալ կանոնիս, նորոգաձևել կամեսցի զկարգեալ սահմանագրութիւնս մի ընկալցի մասն և վիճակ ժառանգութեան Քրիստոսի և Աստուծոյ։ Եւ որ ոք միաբանեալ կատարեսցէ՝ ընկալցի զօրհնութիւն ի Տեառնէ, հաղորդելով պարգևացն և անվաղճան հանգըստեանն երջանիկն Գրիգորի և հօրն մերոյ Սահակայ և նոցին հետևելոց ճշմարիտ ուղղափառութեան . . . Տես. «Կանոնք ս. Սահակայ»։

2. Տես. Արարատ. 1892. ԺԱ. էջ. 961։

նական տեսութիւն ձեռք բերելու և յետոյ ս. Գրքի (կամ պատմական և դաւանական աղբիւրների) ուսումնասիրութեան ժամանակ կունենայ ուսանողն ամենագեղեցիկ վարժութիւն և կատարելագործումն[1]։ Իսկ եթէ կամենայ որ իւրաքանչիւր առարկայ մի ժամանակի մէջ սովորել և վերջացնել, նա տասնեակ տարիներ պէտք է նուիրէ։ Սակայն ուսումն ոչ թէ լոկ սովորելու մէջ է կատարելագործուում, այլ գործադրութեան, ուսումնասիրութեան մէջ։ Առարկայով պէտք է վարժուել, կրթուել, նորա էութիւնն ու սկզբունքներն իւրացնել և ոչ թէ նորանից նիւթ ժողովել և գերի դառնալ պատրաստի տուածների։

Գլխաւոր առարկաները սովորելուց յետոյ ուսանողը պէտք է մասնաւոր աշխատանք գործ դնէ թէ կատարելագործուելու և թէ մնացած առարկաներն ևս ուսումնասիրելու, որպէս զի գիտեցածը թերի չլինի։ Նա, որ այդ սկզբունքն աչքից ձգում է, չի կարող ինքնուրոյնութիւն ձեռք բերել գիտութեան մէջ և թերակատարութեամբ մէկ հարցի մասին գաղափարութիւն տալով, կարէ մեծամեծ սխալների մէջ ընկնել դորա հետ կապակցուած ուրիշ խնդիրների մէջ։

Ատուած աբանական առարկաները դարձնելով երեք տարուայ ընթացք, ինչպէս գերմանական շատ համալսարաններում ընդունուած է, և յարմարցնելով Հայոց դպրոցներին, կունենանք հետևեալը.

---

1. Կրթութեան գործը լաւ յառաջ տանելու և ժողովրդի կեանքի անյարմարութիւնների մէջ խանգարելուց և փչանալուց պահպանելու համար էր, որ որոշուած էր միայն քանի մի տարին միանգամ Ճեմարանի աշակերտին՝ ևս լաւագոյներին՝ տուն թողնել 2 ամսով. «Ժամանակ ամառնային աւուրց հանգստեան անցուցանեն աշակերտք ի Ճեմարանի ասա կամ յամարանոցի սորա, պարապելով ի թեթևագոյն վարժս ուսմանց և ընթերցանութեան։—Միայն աշակերտաց Դ. դասարանին, որք գովութեամբ աւարտեցին ի նմին զուսմունս՝ հրաման լինի չուել ի Հայրենիս իւրեանց յետ տարեկան հարցաքննութեանց երկամսեայ ժամանակաւ . . . . .»։ Արարատ. 1877. էջ. 195.

Ա· ՏԱՐԻ·

1· Աստուածաբանական գիտութիւններն իրև նախագուռն ուսման, (Введеніе въ кругъ богословскихъ наукъ)·

2· Սրբազան մատենագրութիւն կամ Հին և Նոր Կտակարանի գրքերի պատմութիւն, որ կարէ ուսումն ս· Գրոցի մէջ և ս լրանալ·

3· Հին Կտակարանի մեկնութիւններ·

4· Նոր Կտակարանի մեկնութիւններ· (Համատեսակ աւետարանները՝ Մատթէոսի, Մարկոսի և Ղուկասու· Հեռն և Յովհաննու)·

5· Ընդհանուր եկեղեցական պատմութիւն մինչև միջին դարերը· (3· ժամ)·

6· Հնաբանութիւն, ս· Գրոց ուսմունքի մէջ։

Բ· ՏԱՐԻ·

1· Քրիստոսի կեանքը·

2· Ընդհանուր եկեղեցական պատմութիւն· (վերջը)·

3· Դաւանաբանութիւն Հայաստանեայց եկեղեցու (կամ տեսական աստուածաբանութիւն)·

4· Բարոյաբանութիւն· (կամ բարոյական աստուածաբանութիւն)·

5· Մեկնութիւններ։

Գ· ՏԱՐԻ·

1· Դաւանանքների պատմութիւն, որ կարելի է նաև եկեղեցական պատմութեան ու դաւանաբանութեան մէջ լրացնել·

2· Կրօնի փիլիսոփայութիւն·

3· Դաւանագիտութիւն· (կամ բաղդատական աստուածաբանութիւն)·

4· Գործնական աստուածաբանութիւն·

5· Իրաւաբանութիւն։

բեմբասացութիւնը կարէ ընդհանուր դաս լինել [1]։

Դոցա հետ պէտք է աւանդուին նաև ընդհանուր պատմութիւն, ընդհանուր և ազգային մատենագրութիւն, փիլիսոփայական և մանկավարժական բոլոր առարկաները, բնական գիտութիւններ և ուսողութիւն, հոմուական բժշկութիւն, գիւղատնտեսութիւն և լեզուաբանական, պատմական, աստուածաբանական, սակայն մատենագրական՝ գլխաւորապէս ազգային շրջանին վերաբերեալ աշխատանքներով։

Դպրոցներում այդ առարկաները կաւանդուին հետևեալ կարգով.

Առաջին ս Դրոց (Բ. դասարանից մինչև Զ.), Արքազան պատմութիւն, ընդհանուր եկեղեցական պատմութիւն (Գ.—Ե. դասարան), Հայոց եկեղեցական պատմութիւն (Ե. դասարան), Հայոց պատմութիւն (Ա.—Դ. դասարան), աստուածաբանական գիտութիւնները, (2—5 ժամ), Դաւանաբանութիւն (Ե—Զ. դասարան 2 և 4 ժամ), բարոյաբանութիւն (Զ. դասարան), գործնական աստուածաբանութիւն (Ե—Զ.) և հոգեբանութիւն, փիլիսոփայութեան պատմութիւն, տարրական մանկավարժութիւն, տեսութիւն բանահիւսութեան, գրականութիւն, պատմութիւններ, լեզուներ, երկրաչափութիւն, բնական գիտութիւններ, ուսողութիւն, արտաքինութիւն, ատամբաբգիտութիւն, բժշկութիւն և անատեսութիւն։

Իսկ հոգևոր ճեմարանի լսարանական դասընթացքը պէտք է լինի յիշեալ առարկաներից հիմնականոնների մանրամասնին ուսումնասիրութիւնը։

Այդ ընդհանուր ցուցակին նայելով, տեսնում ենք որ հոգևոր դպրոցների պահանջը մեծ է և ընդարձակ [2]։ Աստուածաբանա-

---

1. Ստորև գրուած է և ճեմարանի սկզբնական ծրագիրն, որի մէջ յիշուած առարկաները գրեթէ նոյն են, ինչ որ մինչև այժմ տեսել ենք, միայն անունների փոփոխութեամբ։

2. Առ հասարակ ամեն դպրոցի տեսուչ պէտք է լինի մանկավարժ։ Անկարելի է ոչ մանկավարժներին տեսուչ նշանակել մի դպրոցի։ Իսկ Հոգևոր դպրոցների տեսուչներն ու վերատեսուչներն, ինչպէս ընդունուած

կան ուսումը պահանջում է տալ նաև բոլոր գիտութիւնների էականը։ Ոչ մի դպրոց այնքան բազմակողմանի ուսումն չէ տալիս, որքան հոգևոր դպրոցն ու ճեմարանը, վասն զի հոգևորականը կոչուած է առաջնորդելու իւր ժողովուրդը, վասնորոյ և լաւ պէտք է ծանօթ լինի ամեն գիտութեան, հարկաւ՝ ոչ թէ մասնագիտաբար, այլ բազմակողմանի կրթութեամբ։ Այդ պահանջւում է հոգևորականից և այն պատճառով, որ նա ժողովրդի ամենապիտանի անդամն և կրթիչը պէտք է լինի, ուրեմն կարող թէ գործելու և թէ խօսակցելու և խորհրդակցելու բոլոր խաւերում։ Թէ գիտական և թէ գեղարուեստի զարգացումը պէտք է անպակաս լինի լաւ հոգևորականի մէջ։ Հոգևորականի գեղարուեստական (երգեցողութեան, նկարչութեան և այլն) զարգացումը, կարգապահութիւնը, վայելուչ կեանքը, խելացի խօսակցութիւնն, հեղահամբոյր վարուողութիւնն ևլն. պէտք է օրինակելի լինին ժողովրդի մէջ։ Իսկ այդ ամեն կրթութիւնը պէտք է տան Հայոց դպրոցները։ Միմիայն կրթուած հոգևորականներ տալով՝ կարող ենք յուսալ, որ Հայաստանեայց ո. եկեղեցու գաւթում կլինին պատուական բարձրագիր հովիւներ, որոնց շուրջը զարգացած խմբեր կկազմուին Հայ ժողովրդից [1]։ Մինչև որ հովիւը բարձր չլինի իւր հօտից, նա չի կարող դաստիարակ, առաջնորդ, մխիթարիչ, բժիշկ, օգնական, խրատիչ բարեկամ լինել։ Նորան։ Հայաստանեայց եկեղեցին իւր ամբողջ կեանքում ունեցել է ժողովրդից շատ բարձր հոգևորականներ. ուսումը կեդրոնացած է եղել նոցա ձեռքում։ ուստի և յառաջադիմութեան վարիչներ էին։ Նոյն իսկ Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը միշտ ժողովրդից շատ առաւել ուսեալ հովիւներ և աշխարհականներ է տուել։ Ս. Էջմիածնի նուիրակ-

---

է, աստուածաբաններ պէտք է լինին, որպէս զի չդաւաճանեն դպրոցի նպատակին և ուղղութեան։ Իսկ ուսուցիչները պէտք է Հայաստանեայց եկեղեցուն հաւատարիմ և բարոյական անձնաւորութիւններ լինին, որ չփչացնեն ժողովուրդն ու երիտասարդութիւնը վատ օրինակով։

1. Տես և Ղ. Աղայեանի գրութիւնը ճեմարանի առթիւ. Արարատ. 1869. էջ 31—32.

ներն ամեն տեղ իբրև հրեշտակներ են ընդունուել [1]։ Իսկ երբ ժամանակի հանգամանքները փոխեցին այդ դրութիւնը, Ներսէս Ե. ջանացաւ օգնել և աղատել հոգևորականներին իւրեանց անկումից, ըստ որում և հիմնեց Ներսիսեան դպրոցը։ Գէորգ Դ. դեռ կամեցաւ վանական դպրոցներ բարեզարդել՝ քահանաներ պատրաստելու համար [2], ուստի և ուսումնական յանձնաժողովին կանոններ մշակել տուաւ [3]։ Նա զարկ տուաւ թեմական դպրոցների յառաջադիմութեան, տալով նոցա նաև կանոններ ու ծրագիր [4]։ Սակայն նա չբաւականացաւ դոցանով և հիմնեց Ս. Էջմիածնի ճեմարանն, որ և բանալով 1875 թուին, որոշեց նորա ծրագիրն ու նպատակն ասելով.

«Նպատակ ճեմարանի Ս. Էջմիածնի է՝ պատրաստել զկուսակրօն եկեղեցականս բարեկիրթս և քաջահմուտս եկեղեցական և աստուածաբանական ուսմանց և արտաքին կարևոր և կենցաղօգուտ գիտութեանց և լեզուաց ի պէտս Հայաստանեայց եկեղեցւոյ»։ Եւ «ուսումնաւարտ աշակերտք ճեմարանի պարտին ընդունել յատկապէս զաստիճան վարդապետութեան և առհասարակ եկեղեցականութեան, և իբրև բացառութիւն՝ (կարգին) յուսուցչութիւն յազգային ուսումնարանս» [5]։

---

1. Տես զորօր. երեք նուիրակների (1506 թուին) գլխատման վրայ տաղը. Արարատ. 1869. էջ 223.

Ով որ տեսաւ զնոսա լման,
Իբր հրեշտակ ընդունեցան.
Մեծն Յովհաննէս՝ սրբոց նման,
Եպիսկոպոս ազնուական,
Վանք 'ւ անապատք ուրախացան,
Յորժամ տեսին ըզերեսեան,
Զտէր Սարգիս եպիսկոպոսն,
Եւ զԴաւիթ կոյս աբեղայն.
Անուանք նոցա համբաւեցան. և լն.

2. Տես նորա կոնդակն առ Սինոդը. Արարատ 1872. էջ 35.

3. Արարատ. 1869. 4.

4. Արարատ. 1869. էջ. 141. Տես և կանոնք ծխական դպրոցաց. Արարատ. 1876. էջ. 381. 1873. էջ 457.

5. Արարատ. 1874. էջ. 263. Աւանդելի առարկաներ են նշանակուած.

Իսկ կոնդակի մէջ բացատրելով եկեղեցականների ուսման մեծ նշանակութիւնը, շեշտում է. «յաջողեցաք վերջապէս յաւարտ ածել այսօր զհոյակապ շինութիւնն զայն. զոր և կազմեցաք ձեմարան ժառանգաւորաց Սրբոյ Էջմիածնի, ի մտի եդեալ պատրաստել ի նմա զարժանաւոր կուսակրօն եկեղեցականս» . . . . «որք զարդարեալք բարձրագոյն ուսմամբք կրօնական գիտելեաց և կարևորացն աշխարհականաց լեզուաց և գիտութեանց, կրթիցին և զարգանայցեն ամենայն Աստուածահաճոյ վարուք և հաւատոյ վայելչութեամբք լցեալք՝ պատրաստեալք և ամենայնիւ՝ և յաւարտ ուսմանցն ելանիցեն ի հանդէս Ազգային հոգևոր դատաւորութեան առ ի սերմանել և տարածել առատօրէն զճշմարիտ վարդապետութիւնս Հայկազեան Աստուածատուրս կրօնի և դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, արմատաքի քանցելով հանելով յազգային անդատանէ զորոմունս նորահնար եկամուտ վնասակար մոլութեանց և սոփորութեանց*, առ ի բանալ հետզհետէ զազգային դպրոցս և յաւելուլ յԱզգիս մերում զթիւ հոգևոր դատաւորաց, բանիրուն քարոզչաց, քաղցրուսոյց վարդապետաց, բարեսէր դպրապետաց, արիասիրտ

---

1. Կրօնագիտութիւն ընդարձակ. 2. Պատմութիւն Հայ. եկեղեցու. 3. Ընդհ. եկեղ. պատմ. 4. Գիտութիւն և մեկնութիւն ս. Գրոց. 5. Աստուածաբանութիւն տեսական, գործնական, բարոյական և բաղդատական. 6. Տոմարագիտութիւն եկեղեցական և հմտութիւն ժամակարգութեան. 7. Կրթութիւն եկեղեցական բեմբասացութեան. 8. Վարք ս. Հարց. 9. Եկեղեց. իրաւաբանութիւն. 10. Ազգային և Ընդ. դիցաբանութիւն. 11. Փիլիսոփայութիւն (հոգեբան. տրամաբանութիւն) և պատմութիւն փիլիսոփայութեան. 12. Ազգային պատմութիւն և աշխարհագրութիւն. 13. Ընդհ. և Ռուսաց պատմ. և աշխարհագրութիւն. 14. Թուաբանութիւն, բնաբանութիւն և տիեզերագրութիւն. 15. բնական պատմութիւն. 16. Հայկաբանութիւն և մատենագրութիւն Հայոց. 17. Ռուսաց լեզու. 18. Գաղիերէն. 19. Լատիներէն. 20 Գուներէն. 21. Եբրայեցերէն. 22. Գծագրութիւն և նկարչութիւն (առաւելապէս եկեղեցական). 23. Ձայնագրութիւն Հայոց.

*) Կամ կռուել Հայաստ. եկեղեցու ներքին և արտաքին թշնամեաց դէմ. տես Արարատ. 1875. էջ 355.

հովուաց, մեծարգոյ իմաստասիրաց, համառօտ ասել՝ ի բարեպաշտ վարս կրթեալ և կարևոր ուսմամբք պերճացեալ եկեղեցականաց և ուսուցիչ վարժապետաց։ Այսոքիկ ահա լինելոց են պարտք աշակերտելոցն ի ճեմարանիս առ սիրեցեալ Ազգն մեր...»

1874 թուին 28 սեպտեմբերի կատարուեց ճեմարանի բացման հանդէսն, որում վերստին արտայայտուեցան թէ Հայրապետից և թէ աշակերտներից և հանդիսականներից նոյն յոյսերը [1]։

Արդէն միւս տարին ճեմարանի վերատեսուչը գրում է իւր ճառի մէջ. «Արդ ի տես և ի լուր այսքանոյ յուսապատառ խընդութեան ընդ արգասիս օրհնութեան վեհիդ և աղօթից ս. Ուխտիս միաբանութեան, որպէս և անդուլ ջանից վարժապետացն մերոց և աշակերտաց, ներեսցէ ինձ Ձերդ Վեհափառութիւն թուիչս արձակել առ վայր մի մատցս թևօք, և վերասլացեալ ի լուսափայլ գագաթն մեծի լերինդ Մասեաց, ի Հայկաղեանդ ասեմ Ողիմպոս, շուրջ յածել զականոպիս ի կոյս և ի կոյս արևելից և արևմտից, հիւսիսոյ և հարաւոյ, և իբր ի պատկերի մեծի զԳէորգեանս ճեմարան մատնանիշ ցուցանելով որդւոց Հայաստանի՝ որ ի սփիւռս իցեն՝ քարոզ կարդալ առ նոսա և ասել. Մանկունք Հայաստանի, որդիք սիրասուն Վեհափառ Հայրապետիս մերոյ Գէորգայ Դ., զարթիք ի ձերմէ մահահանդոյն թմրութենէդ յուսահատութեան, յոր ընկղմեալ կայք յամաց բազմաց հետէ, մուռացօնս գործեցէք վայրիկ մի աղե-

---

1. Տես, Արարատ. 1874. էջ 342—353. Տես. և երկրորդ հանդէսի մէջ ճեմարանի վերատեսուչ հանգուցեալ Գ. Արքեպիսկ. Այվազեանի ճառը (Արարատ. 1876. էջ 340), որով յիշում է և Գէորգ Դ.ի մատդրութիւնը «զընտրելագոյնսն ըստ ամենայն գլխոց յուսումնաւարտ աշակերտաց Զ. դասարանին առաքել ի դէպ ժամուն ի համալսարանս Եւրոպիոյ Ծախիւք ճեմարանիս, որպէս զի անդանօր զամս երկուս կամ երիս կատարելագործեալք ի պէսպէս մակացութիւնս և ի հմտութիւնս՝ դարձ այսրէն առնիցեն, եթէ հնար է՝ մէն մի Խորենացիք և Եղիշայք և Եզնիկք և Ղազարիկք . . . . . », Եթէ ճեմարանը կանոնաւոր պահուի, ճշմարիտ որ 2 տարին բաւ է ուսման այդ կատարելագործման համար։

տիցն մեծաց զորս կրեցէքն և սպառեցէք. սրբեցէք զարտասուս յաչաց ձերոց, և տեսէք զակնկալութեանցն ձերոց նշոլս պայծառապէս փայլատակեալ առ տեղեաքն՝ յորս կոխեցին լուսաշաւիղ ոտք Նահապետին Նոյի և Լուսաւորչին ազգիս Գրիգորի Պարթևի և Ներսիսի Մեծի, և Սահակեանցն և Մեսրոպեանցն....»:

Ահա այսպիսի վիճակում և այսպիսի տրամադրութեանց տակ են բացուել Հայոց դպրոցներն ու ճեմարանն, ինչպէս նկատւում է բազմաթիւ ճառերի և ուղերձների միջից բերուած այդ քանի մի վկայութիւններից: Վասնորոյ այսօր ևս առանց դուրս գալու նախս գծուած շաւղից, կարենք հոգևոր ուսումն յառաջ տանել, ինչպէս ընդունուած է քաղաքակրթուած աշխարհի դպրոցներում և համալսարաններում: Մենք յարմարութիւններ չունինք պահանջելու աստուածաբանական ուսման այն ընդարձակութիւնն, որ տիրապետող է Եւրոպայում: սակայն անհրաժեշտն ևս աչքաթող անելն՝ ապաշնորհութիւն է, թէ չասեմ անազնուութիւն և չարագործութիւն: Բոլոր առարկաներն ևս կարող են շատ գեղեցիկ կերպով դասաւորուիլ, միայն թէ ոչ մի ամբողջական առարկայ չդարձնել երկու երեք տարուց աւելի դասընթացք և ոչ մի առարկայի չտալ բաւականից աւելի ժամեր 1: Եթէ եկեղեցական պատմութիւն կամ հանրահաշիւ կամ ուրիշ առարկաները 3 – 4 տարի անցնենք, տասը տասնուհինգ տարիներ անգամ չեն բաւականանալ՝ ուսումը վերջացնելու համար: Արդ՝ սակաւ, բայց լաւ, այս է մանկավարժութեան սիրելի սկզբունքը: Ընդ ամին ուսուցման և կարգապահութեան մանկավարժական սկզբունքները պէտք է անպայման իրագործուին դպրոցներում և մանաւանդ հոգ. դպրոցներում:

---

1. Դպրոցների ծրագիրը փչանում է, երբ մի ուսուցչի չլինելու պատճառով նորա առարկայի ժամերն աւելացնում են մի ուրիշ ուսուցչի առարկայի վրայ, որ իրը թէ բաց չյառաջանայ. դորանով խախտում են ուսման մանկավարժական սկզբունքը, ձանձրացնում աշակերտին և ժամանակի ընթացքում սովորութեամբ փոխւում է ծրագիրը: Հոգևոր դպրոցների ծրագիրն ամեն տեղ գրեթէ նոյն է, որին և պէտք է հետևել. Տես. օր. ռուսաց հոգևոր դպրոցների ծրագիրը, վերև § 21:

իսկ դորա համար հարկաւոր են մանկամարժներ և ոչ թէ մարձականներ։ Դաւանանել այդ գիտութեան սկզբունքներին՝ մի և նոյն է թէ մի ձեռքով շինածը միւս ձեռքով քանդել . . . . :

32։

ԳԻՏՈՒԹԵԱՆ ՊԱՀԱՆՋԸ։

Ով որ գիտութիւնը սովորում է՝ ճանաչելով նորա բարձրութիւնն ու բարերար ազդեցութիւնը մարդկային ազգի կատարելագործման համար, նա երբէք չէ վերջացնում իւր ուսումը։ Դպրոցի դասընթացքն աւարտելով, նա շարունակում է կեանքի մէջ ևս իւր ուսումն՝ թէ իւր առարկան և թէ նոյն իսկ կեանքն ուսումնասիրելով։ Հետևել գիտութեան և սանաւանդ սեփական մասնագիտութեան, կարդալ գիտնական գրքեր և թերթեր, որտակցել գիտութեամբ զբաղուողներին օրըստօրէ յառաջադիմելով զարկ տալ ճշմարտութեան յաղթանակին հասարակութեան մէջ, ըստ որում և ճշմարտութեամբ մասնակցել ժողովրդի գործերին և գործել նորա համար թէ խօսքով, թէ գրչով և թէ գործով, ահա այս է ուսուցչի ճանապարհը։

Վերջացնել ուսումն և միայն պաշտօնի ծառայել, նոյն է թէ չհասկանալ իւր բարձրութիւնն և ապերախտ վաշխառու լինել գիտութեան ու լուսաւորութեան. յանուն գիտութեան և քաղաքակրթութեան խօսել, դաւանան լինելով նորա դրօշակի դէմ կամ թէ գիտութեան դրօշակիր հանդարուել, գիտութիւնը մասնաւոր շահերի ծառայեցնելով հանդերձ, այդ ստորաքարշ սարքութիւն է։ Ճշմարիտ ասուցչաբան ուսումնականի սկզբունքն ու նշանաբանը պէտք է լինի գիտութեան ճշմարտութիւնը կամ ասուցչային լոյսի յաղթանակն և ոչ թէ հացն, որ ամենատգէտն անգամ տեսնում է * :

---

*) «Զհաց աւուրն քրտամբք հրամայեաց քեզ ուտել, և դու զկեանս յաւիտենից քնով կամիս ժառանգել։ Եօթանասուն ամէ կարգեալ զկենաց քոց, և զայն ցաւօք և հեծութեամբ. դու զհազարամեայ օրն առանց ցաւոց կամիս ժառանգել»։ Եզնիկ։

Սակայն յանուն գիտութեան և նոյն իսկ յանուն սրբի գրքի խօսողը պէտք է նախ երկրպագու ծառայող և ուսումնասիրող լինի նոցա. նա՝ որ չէ ուզուած մի գիտութեան մէջ, նա՝ որի առաջեայ զբաղմունքը չէ գիտութիւնն, նա իրաւունք չունի գիտնական դատողութիւն տալու, ապա ուրեմն և չի կարող ներգործական գիրք բռնել. նա միայն ընդունող է։ Գիտութեան դրօշակիրները պէտք է մասնագէտներ, հաւատարիմներ լինին, որոնք երբէք հայի համար չեն փոխիլ իւրեանց մասնագիտութիւնն մի այլ մասնագիտութեան պատկանած պաշտօնի հետ և միշտ կծառայեն նորան։ Իսկ երբ իւրաքանչիւր գիտութիւն ունենայ իւր ճշմարիտ պաշտօնեան, միայն այն ժամանակ կարող ենք ճանաչել ուսումնականի յարգը, միայն այն ժամանակ արժէք կունենայ մասնագէտի կարծիքը, միայն այն ժամանակ կհաւատայ հասարակութիւնն իւր գործիչին և ճշմարիտ յառաջադիմութիւն կլինի *։ Այն ժամանակ վարպետը կճանաչէ իւր գործն և գործը կճանաչէ իւր վարպետին, ապա թէ կարող կլինի ասել. «գուլի քնար, այլ ի ձեռն քնարահարի»։

Աստուածաբանութիւնը պահանջում է հաւատարիմ պաշտօնեաներ, որպէս և ամեն գիտութիւն, ըստ որում աստուածաբանի անխոցելի ուխտն Աստուծոյ առաջ է, ուստի և նա է ժողովրդի յառաջադիմութեան երդուեալ առաջնորդողը։ Այդ պաշտօնեաները պէտք է ելնեն Հոգևոր դպրոցներից, ուսանելով այդ գիտութեան պահանջածը հոգով և սրտով։ Հաւատարմութիւն դէպի Հայաստանեայց սրբ. եկեղեցու սրբ. Հայրերի սկզբունքներն ու վարդապետութիւնն — այդ է աստուածաբանի անպայման ուխտը։ Եկեղեցի, ուրեմն և ազգ — դրբա են, որոնց դիմաց ունի Հայոց դպրոցի ուսանողն անխուսափելի պարտիք։ Այդ

*) Ոչ ոքի չի կարելի մի պաշտօն յանձնել, որի համար նա չունի գիտութեան պահանջածը։ Իւրաքանչիւր պաշտօնի համար անհրաժեշտ է և որոշ գիտութեան որոշ «ցենդ», առանց որի թէ պաշտօն տուողն և թէ ընդունողը հաւատարտէս մեղանչում են արդարութեան դէմ։ Մանաւանդ առանձին և մեծագոյն ուշադրութիւն պէտք է դարձնել դաստիարակների վրայ, որոնք պարտ են ուսեալ, մանկավարժ և բարոյական մարդիկ լինել։

*

ուխտի հիման վրայ պէտք է նա ուսանէ ԺԹ. դարի գիտութիւնները, կրթուի, զարգանայ և ապա Հայաստանեայց ս. եկեղեցու անշէջ ջահի անվեհեր կրողը լինել Հայ ազգի մէջ։

Սակայն այդ ամենը կիրագործէ նա, որի մէջ կենդանի է լոյս հաւատն և պարտիքի վսեմ նշանակութեան ճանաչողութիւնն և որ՝ իւր ուսումն աւարտելով հանդերձ՝ նաև կեանքում ուսման մէջ է յարաժամ։

Վերջ։

ՎՐԻՊԱԿՆԵՐ.

Էջ.	Տող.		Սխալ.	Ուղիղ.
8	6	Ներքևից.	ուղղութեան.	Ուղղութիւն.
27	2	»	S'entends.	J'entends.
49	6	»	ունեցել։	ունեցել.“ ասումէ.“
57	4	»	Անձրևացի,	Անձևացի։
66	8	»	Ջ.	Ե.
83	3	»	das.	des
84	2	»	Բերն,	երկուան ի Բերն.
94	14	վերևից.	բակռիներ,	բանակռիներ,
96	14	»	այն	այլ.
102	6	Ներք.	1869.	1879.
122	10	»	միացնում	միացնուում։
124	1	վեր.	ընախօսութիւն.	բանախօսութիւն.
134	5	»	արմարագոյն	յարմարագոյն
137	1	»	որոնք անպայման.	անպայման
146	15	»	(2—5 ժամ)	(2—3 ժամ)

Bucheinband von
JOSEF ERDMANN
BONN, Dottendorferstr. 144